Գայանե ԱՆՏՈՆՅԱՆ

# Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, Հայաստանի Հանրապետության պետական եւ ազգային տոներ եւ հիշատակի օրեր

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
20004

## Տոներ

*Մարդկության պատմության սկզբնական ժամանակներից տոներն ու տոնախմբությունները մեծ տեղ են ունեցել հասարակությունների կյանքում՝ մեծարելով ակնառու անձանց, արժ-որելով ժողովրդի - պետության կյանքում կար-որ դեպքերի ու իրադարձությունների հիշատակությունները: Այդօրինակ հանդիսություններն ու արարողությունները իրենց ամփոփած խորհուրդներով սահմանվում են որպես տոն:*

*Համաձայն Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի»՝«տոն» նշանակում է «հասարակաց հանդես, հանդիսավոր օր»: Այն բնիկ հայկական բառ է - ծագում է հնդեվրոպական նախալեզվի dapni ձ-ից, որը նշանակում է «զոհ»: Սկիզբ է առել դարձյալ հնդեվրոպական նախալեզվի dap, dep՝ բաժանել, բաշխել արմատից: Հետագայում այն ձ-ափոխվել - դարձել է tafn (տաւնտոն)՝ ստանալով «զոհ, զոհի անասուն, ողջակեզ» իմաստը: Նույն ծագումն ունեն լատիներեն daps, dapes՝ «աստվածներին նվիրված զոհ, նվիրական խնջույք, հացկերույթ», dapino՝ «առատ խնջույք տալ», հունարեն δετπνον՝ «ճաշ, նախաճաշ, ընթրիք» բառերը[1]:*

*Տոների նպատակը աշխատանքից ազատ լինելը - տարբեր հանդիսություններ ու արարողություններ կատարելը չէ, այլ այդ ամենով՝ իբր- արտաքին արտահայտություն տոնի բովանդակության ու խորհրդի, տոնի*

---

[1] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Դ հատոր, Երևան, 1979, էջ 442: Նույն տեղում Հր. Աճառյանը գրում է. «Հներից Տաթեւ. ամ. 654, սխալ է մեկնում՝ իբր օտար բառ. «Տօն թարգմանի ուրախութիւն եւ պայծառութիւն… քանզի անունս այս ոչ է ի մեր լեզուէ, այլ յօտար ազգաց. զի նոքա զուրախութեան կամ զհարսանեաց տօն անուանեն եւ զպայծառ հանդէս՝ տօն կոչեն»:

*խորհրդով ապրելն ու առաջնորդվելը: Տոները սերունդների հոգիներում նորոգում – դաստիարակում են հոգ–որ – ազգային արժեքները՝ որոշակի իմաստ հաղորդելով հասարակական կյանքին ու դառնալով գործոն մարդկային տվյալ հավաքականության շարունակականության ու հարատ–ության համար: Յուրաքանչյուր տոն կենդանի է այն մարդկանցով, ովքեր պահպանում են դրա խորհուրդները – կատարում համապատասխան ծեսերն ու արարողությունները՝ հավատալով դրանց հոգ–որ զորությանը – վերափոխող ուժին: Այս փոխկապվածությամբ՝ ինչպես տոնը պահպանում են դրա խորհուրդներն ընդունողներն ու կրողները, այնպես էլ տոնն է իր հերթին պահպանում իր խորհուրդները կրողներին, ամրապնդելով նրանց էթնիկ առանձնահատկություններն ու ազգային ինքնությունը:*

*Առաջիններից մեկը ունկնդիր լինելով Քրիստոսի Ավետարանի քարոզությանը, լինելով առաքյալների կողմից 1-ին դարում հաստատված հնագույն քրիստոնեական եկեղեցիներից մեկը – առաջինը 301 թ. պետական կրոն հռչակելով քրիստոնեությունը, հայ ժողովուրդը շատ վաղուց իր ինքնությունը արտահայտել է քրիստոնեական ճանաչողությամբ ու արժեքներով: Արդեն 5-րդ դարում, քրիստոնեության պետականորեն ճանաչումից ընդամենը 150 տարի անց Եղիշեն Վարդան Մամիկոնյանի խոսքով հնչեցնում է այդ իրողության ճշմարիտ բնորոշումը՝ այն, որ հայ ժողովուրդը քրիստոնեությունը ունի իբր– մաշկի գույն: Բնականաբար, քրիստոնյա ժողովրդի հոգ–որ կյանքի անբաժան մասն են նրա եկեղեցական տոները, որոնցում արտահայտվում է նրա հավատը, աստվածճանաչողությունն ու աստվածպաշտության կերպը, մշակույթը: Ավելի վաղ անցյալից պահպանված տոնական սովորությունները քրիստոնեական կյանքում*

*ծեռք են բերում նոր բովանդակություն, վերարժ-որվում քրիստոնեական ճանաչողությամբ: Այսպես, Տեառնընդառաջին խարույկ վառելը համահունչ է Տիրոջն ընդառաջ գնալու խորհրդին, քանզի Քրիստոսին ճանաչում ենք իբր- Լույս Աշխարհի: Պայծառակերպության տոնին միմյանց վրա ջուր ցողելը հիշատակությունն է ջրհեղեղից Նոյի փրկության - հարազատ է մեղքով ապականված աշխարհի ջրով սրբվելու - արդար մարդով մարդկության նոր կենսագրության սկսվելու գաղափարին: Խաղողօրհնեքը հարազատ է Սուրբ Աստվածածնի՝ աշխարհին պարգ-ած ազնվագույն - օրհնյալ պտղի՝ Աշխարհի Փրկչի - մեր Տեր Հիսուս Քրիստոսի փառաբանությանը - հաց ու գինով նրա հետ հաղորդության խորհրդին: Մատաղի սովորությունը կուռքերին մատուցվող զոհաբերության իմաստից քրիստոնեական կյանքում վերաճել է կարիքավորին օգնելու, իր ունեցածից մերձավորին բաժին տալու վսեմ բովանդակության, որը համահունչ է ողորմած լինելու քրիստոնեական պատվիրանին:*

*Հետ-աբար, շատ կար-որ է ճանաչելը տոների խորհուրդն ու սովորությունների իմաստը, որպեսզի կյանքում անհրաժեշտ տեղում լինեն - կյանքը առաջնորդեն այն արժեքները, որոնք այդ տոների - սովորությունների հիմքում են: Ճանաչելով ու ընդունելով է, որ պիտի սիրելի լինեն այդ արժեքները, պահպանվեն ու հարատ-են՝ միշտ մնալով հայրենասիրության ու ազգասիրության անբաժան մասը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ինչ է տոնը, «տոն» բառի բացատրությունը:

-Տոների նպատակը, նշանակությունն ու կար-ո-րությունը ժողովուրդների, հասարակությունների, մարդ-կանց կյանքում:

-Հայոց եկեղեցական տոների հետ հնագույն ազգա-յին սովորությունների միաձուլումն ու դրանցում արտա-հայտվող խորհրդի նույնությունը:

-Ազգային - եկեղեցական տոների հանդեպ հե-տաքրքրության ու սիրո ձ-ավորման անհրաժեշտությու-նը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Տոները պատմության դեռ-ս հնագույն ժամանա-կաշրջանից կազմել են մարդկանց կյանքի անբաժան մա-սը: Տարբեր ժամանակներում տոնվել են տվյալ ժամանա-կաշրջանի համար շեշտված կար-որություն ունեցող դեպ-քերի, իրադարձությունների, նշանավոր մարդկանց հիշա-տակները - մանավանդ, արտահայտել են ժամանակի աստվածճանաչողությունն ու աշխարհընկալումը:

Հնագույն քաղաքակրթություն - մշակույթ ներկայացնող հայ ժողովուրդը նույնպես տոներ է հաստատել, հիշատակներ նշել: Քրիստոնեությունը ընդունելուց հետո՝ իբր- Հայ առաքելական Եկեղեցի, հայ ժողովուրդը հաստատել ու տոնախմբել է քրիստոնեական ճանաչողությունից ու ապրումից բխող տոներ: Պահպանվել են նա- նախաքրիստոնեական սովորություններ՝ վերարժ-որվելով քրիստոնեական բովանդակությամբ:

Մեծ կար-որություն ունի տոնի խորհրդի ներկայացումն ու բացատրությունը, որով մատուցվում է նրանով արտահայտվող մնայուն արժեքը, պատմությունը կապվում է ներկայի հետ ու գալիքի:

## Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տոներ, դրանց դասակարգումը

*Հայաստանյայց Եկեղեցին, իբր- հոգ-որ, ազգային - մշակութային արժեքները կրող ու փոխանցող ավանդական կառույց, տարվա մեջ պատվում է առանձնակի օրեր՝ նվիրված Տերունական հիշատակների, հոգ-որ արժեքների ճանաչողության, եր-ելի ու սրբակյաց անձանց, եկեղեցական ու ազգային կյանքի նշանակալի իրադարձությունների: Տոները, տեղաբաշխվելով տարվա օրերի վրա, ընդգրկվել են օրացույցներում՝ կազմելով տոնացույցներ: Տոնացույցը Եկեղեցում գործածվող գրքերից մեկն է, որն ընդգրկում է տարվա ընթացքում Եկեղեցու տոների կատարման կարգը[2]:*

*Քրիստոնեությունը սկզբնավորման պահից ձ-ավորվեց որպես հավաքականություն, որը համախումբ է մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով՝ Նրա վարդապետության շուրջ: Հավաքական այդ ամբողջությունը կոչվեց «Եկեղեցի», որը նախնական իմաստով նշանակում է ժողովրդի համախմբություն: Այդ բառը Հիսուսն Ինքը գործածեց Իր իսկ հիմնած հաստատության համար (Մատթ., ԺԶ(16), 18): Այսինքն՝ Ինքը հիմնեց Իր Եկեղեցին, որը Նրա ներկայությունն է այս աշխարհում - շարունակում է Տիրոջ փրկագործությունը: Քրիստոսի Համբարձումից հետո Նրա աշակերտների համախմբությունը նույն անունով հայտնի դարձավ (Գործք, Ը, 1, ԺԲ(12), 1), որը տարածվեց նա- հավաքականության առանձին մասերի վրա (Ա Թես., Ա, 1, Գաղ., Ա, 2, Ա Կորնթ., Ա, 2, Հռոմ., ԺԶ(16), 1): Աստիճանաբար «Եկե-*

2 Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ծիսական բառարան, Երևան, 1991, էջ 124:

*դեցի» անունը քրիստոնեության հետ նույնացվեց, իսկ քրիստոնեական Եկեղեցին հետզհետե ընդլայնվեց – կազմակերպվեց, որոշարկվեցին իրենց դավանաբանական – ծիսական, նվիրապետական կառույցների – այլ բնորոշիչ առանձնահատկություններով տարբերվող մասնավոր եկեղեցիները: «Եկեղեցի» բառի հաջորդ մասնավոր իմաստը տրվում է այն շինությանը, ուր կատարվում է պաշտամունք:*

*Հաստատման առաջին օրերից քրիստոնեական Եկեղեցին ձ-ավորեց պաշտամունքային յուրահատուկ ծեսեր ու արարողություններ, ինչպես նա- հաստատեց քրիստոնեական տոներ: Նախապես քրիստոնեական տոները նվիրվել են մեր Տեր Հիսուս Քրիստոսին, ս. Աստվածածնին, ս. Խաչին, Եկեղեցու սրբերին, իսկ կիրակին ընդհանրապես նվիրվել է Քրիստոսի Հարությանը – մշտապես համարվել ու համարվում է հանգստյան օր:*

*Քրիստոսի Համբարձումից հետո Նրա առաքյալները մեկնեցին տարբեր երկրներ՝ քարոզելու բարի լուրը՝ Փրկչի հայտնության, խաչի վրա մարդկային մեղքը քավելու – հարություն առնելու մասին, որով մարդու համար կարելի է դարձը դեպի Աստված: Առաքյալները տարբեր երկրներում կազմակերպեցին քրիստոնեական համայնքներ, հիմնեցին եպիսկոպոսական աթոռներ: Նույն կերպ – Հայաստանում ս. Թադեոս – ս. Բարդուղիմեոս առաքյալները առաջին եպիսկոպոսական աթոռների հաստատմամբ հիմնեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:*

*Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, իբր- անբաժան մաս Ընդհանրական Եկեղեցու, նախապես տոնել է Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցում*

*հաստատված տոները: Տիեզերական Եկեղեցու ավանդությունը իշխող էր նա– Հայաստանյայց Ս. Եկեղեցում՝ հատկապես առաջին հինգ դարերում: Սակայն ժամանակի ընթացքում, ինչպես – մյուս Եկեղեցիները, Հայաստանյայց Ս. Եկեղեցին նույնպես իր տոնացույցը հարստացրեց ազգային տոներով ու հայազգի սրբերի հիշատակությունների օրերով՝ ազգային առանձնահատուկ տեսք ու բովանդակություն հաղորդելով դրան: Որպես առաջին – վառ օրինակ ս. Վրթանես Ա Պարթ–կաթողիկոսի (333ՎՆ341 թթ.) տնօրինությունն է՝ տոնելու 337 թ. Պարսից տերության ներխուժման դեմ մղվող պատերազմում նահատակված Վաչե Մամիկոնյան հայոց սպարապետի – նրա զինակիցների հիշատակը. «…մշտական կարգ սահմանենք ամբողջ մեր աշխարհում, որ ամեն ոք անխափան կատարի սրանց քաջության հիշատակը՝ ինչպես Քրիստոսի նահատակների: Իսկ մենք տոն կատարենք – ուրախ լինենք, որ Աստված սրանցով մեզ հետ հաշտ լինի – այսուհետ– խաղաղություն շնորհի»: Եվ Վրթանես մեծ քահանայապետը օրենք սահմանեց (մեր) աշխարհում՝ տարեց տարի նրանց հիշատակը կատարել, ինչպես – նրանց, որոնք նույն կերպով աշխարհի փրկության համար կմեռնեն»[3]: Այսպիսով, ս. Վրթանես Ա կաթողիկոսը առաջինն է, ով հայոց տոնացույցում ազգային նահատակների տոն է հաստատել: Հաջորդ՝ 5-րդ դարում Վաչեյանների այս տոնը միավորվեց հայ ժողովրդի քրիստոնյա ինքնության հաստատման – ազատության ձգտումի առավել մեծ հնչողություն ունեցող հիշատակին՝ Վարդանանց պատերազմի նահատակների տոնին – Վարդանանց ա-*

---

[3] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 46-47:

*նունով է հատկանշվում որպես եկեղեցական-ազգային տոն[4]:*

*Բնական է, որ Հայ Եկեղեցու տոնակարգը դարերի ընթացքում զարգացում է ապրել: Սակայն հայկական տոնական տարվա մասին եղած սկզբնաղբյուրները հիմնականում թվագրված չեն, ինչը – դժվարացնում է հայոց Տոնացույցի ծագման – զարգացման խնդիրների ուսումնասիրությունը: Սրբերի տոների, կենսագրության, վարքագրության – այլ հարցերի մասին տեղեկություններ ստանում ենք Հայ Եկեղեցու ծիսաարարողական զանազան հավաքածուներից, որոնք հայտնի են «Տոնացույց», «Տոնական», «Տոնամակ», «Ճաշոց», «Տոնապատճառ», «Ճառընտիր», «Հայսմավուրք» անուններով: «Տոնականը» տերունի տոների առթիվ գրված ճառերի – սրբերի տոների հավաքածու է, առանց վարքագրության: «Ճառընտիր» ժողովածուն ընդգրկում է տերունական տոների առթիվ եկեղեցական Հայրերի գրած ճառերը – կազմված է տերունական տոների կարգով: «Տոնապատճառը», ինչպես – անունն է հուշում՝ տոների պատճառները՝ ծագումն ու խորհուրդը բացատրող, մեկնաբանող ճառընտիր է: «Հայսմավուրքը» արարողական օրացույցի ժողովածու է, որը յուրաքանչյուր օրվա տոնը նշելուց բացի, պարունակում է նա– սրբերի կենսագրականներ ու սրբախոսություններ: «Հայսմավուրք» բառն առաջացել է գրաբարյան «յայսմ աւուր» բառակապակցությունից, որը նշանակում է «այս օրը»:*

*Նշված ժողովածուները փոփոխություններ են կրել դարերի ընթացքում – ունեցել են իրենց բազմաթիվ խմբագրությունները: Ըստ Ռ. Վարդանյանի՝ հայոց*

---

[4] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, էջ 141:

*հնագույն տոնացույցը կոչվել է «Կանոնք ընթերցուածոց»: Տոնացույցում ընդգրկվել են տերունական տոները, առաքյալների, սրբերի, մարգարեների, քրիստոնեասեր թագավորների հիշատակի – քառասնօրյա Մեծ պահքի օրերը, նշվել են նա– արարողության կատարման վայրերը, ժամերը, կարգը, Հին – Նոր Կտակարաններից ընթերցվածները*[5]*: 8-րդ դարում Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը խմբագրել է «Կանոնք ընթերցուածոց»-ը՝ այն ըստ էության դարձնելով ազգային ճաշոցտոնացույց, որը հետագայում անվանվել է «Տաւնացոյց ըստ շաբաթուց»: «Կանոնք ընթերցուածոց»-ը տարբեր անուններով՝ «Գիր ընթերցուածոց», «Գիրք ընթերցուածոց», մի քանի հարյուրամյակ շարունակել է օգտագործվել, սակայն հայոց Տոնացույցի հետագա խմբագրություններն ունեցել են այլ անուններ՝ «Ճաշոց», «Տօնական», «Հոռոմադիր», «Տօնանամակ», «Տօնացոյց ըստ շաբաթուց» – այլն:*

*8-րդ դարում Սողոմոն Մաքենացի վարդապետի (մատենագիր, մանկավարժ, Մաքենյաց վանքի առաջնորդ) կողմից կազմվել է հայ առաջին սրբախոսականարարողական ժողովածուն՝ «Տօնականը»: 9-րդ դարում Զաքարիա Ա Ձագեցի կաթողիկոսը (855ՎՆ876 թթ.) խմբագրում է «Տոնապատճառ» ժողովածուն, որի ակունքները հասնում են մինչ– ս. Արիստակես Ա Պարթ– Հայրապետ (325ՎՆ333 թթ.), իսկ 9-րդ դարի վերջերին կամ 10-րդ դարի սկզբներին Ատոմա վանքի վանահայր Գագիկը կազմում է մի նոր ժողովածու, որը հայտնի է «Ատոմադիր» անունով:*

*12-րդ դարում վերախմբավորվում – իր վերջնական տեսքն է ստանում «Վարք սրբոց հարանց» ժողո-*

[5] Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երևան, 1999, էջ 25-26:

*վածուն: Հատկապես նշանակալի է Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի (1066ՎՆ1105 թթ.) կատարած մեծածավալ աշխատանքը սրբախոսական-արարողական ժողովածուների վերախմբագրման, ամբողջականացման գործում: Նա վերակազմավորում է «Տօնանամակ» ժողովածուն՝ տոնակարգը հարստացնելով սրբերի հիշատակներին նվիրված բազմաթիվ ընթերցվածներով ու տոներով: Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը ոչ միայն փոփոխություններ է մտցնում հայոց «Ճաշոցում» ու «Տոնանամակում», այլ- հարստացնում դրանք հայկական տոներով՝ հայացնելով Տոնացույցը – ըստ էության, հիմք դնելով հայոց «Հայսմավուրքին»:*

*13-րդ արում «Հայսմավուրքը» խմբագրվում է Կիրակոս Գանձակեցու, իսկ ավելի ուշ՝ Գրիգոր Է Անավարզեցի կաթողիկոսի (1293ՎՆ1307 թթ.) կողմից: «Հայսմավուրքի» ամբողջական խմբագրման վերջնական պատիվը պատկանում է Գրիգոր Խլաթեցի Ծերենց Վկայասեր վարդապետին (1349-1425 թթ, մատենագիր, մանկավարժ, բանաստեղծ, երաժիշտ, հասարակական գործիչ, րաբունապետ): 1401 թ. կատարած նրա մեծածավալ աշխատանքը համարվում է լավագույններից – հետագայում ունեցել է բազմաթիվ ընդօրինակություններ: Գրիգոր Խլաթեցին «Հայսմավուրքի» խմբագրությամբ զբաղվել է մոտ հիսուն տարի՝ այն ժողովրդականացնելով, մատչելի դարձնելով – այնտեղ ներմուծելով հասարակ ժողովրդի ծոցից դուրս եկած նահատակների անուններ: Պատահական չէ, որ հենց Ծերենցի՛ «Հայսմավուրքն» է տպագրվել առաջին անգամ (1706 թ., Կ. Պոլիս):*

*1774 թ. Սիմեոն Ա Եր-անցի կաթողիկոսը (1763ՎՆ1780 թթ.) ձեռնարկում է «հասուն – կատա-*

*րեալ»[6] նոր Տոնացույցի կազմմանը: Դրա անհրաժեշտությունը թելադրված էր նրանով, որ Հայ Եկեղեցու տոնակարգը, հիմնված լինելով յոթնօրյակների կամ շաբաթվա օրերի վրա, բացառում էր նույն տոնի ամենամյա կատարումը ամսվա նույն օրը, ինչպես Կաթոլիկ Եկեղեցում է: Դա պատճառ էր դառնում յուրաքանչյուր տարվա համար տոների մասնավոր դասավորություն կազմելիս Հայաստանի տարբեր շրջաններում, ինչպես նա- նրանից դուրս թեմերում նույն տոնը տարբեր օրեր տոնելու, ինչը խառնաշփոթ էր բերում, ինչի մասին վկայում է նա- ինքը՝ Սիմեոն Եր-անցին[7]: Նա խմբագրության է ենթարկում նախորդ տոնացույցների - ճաշոցների տոնական կարգը, Տոնացույց ներմուծում հայ սրբերի նոր տոներ, կատարում զանազան տեղափոխություններ՝ նախապատվություն տալով ազգային տոներին: Սիմեոն Եր-անցու Տոնացույցն ունի նա- երկրորդ հատոր, որտեղ տրված են տոների տարեկան դասավորության բոլոր տարբերակները, որոնք կարող են պատահել՝ կապված Զատկի տոնի օրը որոշելու հետ: Դրանով ապահովվում է հայոց բոլոր եկեղեցիներում նույն տոնը միասնաբար տոնելու հնարավորությունը: Սիմեոն Եր-անցու Տոնացույցը գործում է մինչ այժմ, որտեղ ավելացվել են որոշ նոր տոներ[8]:*

---

[6] Սիմեոն Ա. Երեւանցի, Տօնացոյց նախապէս կարգեալ և սահմանեալ Սրբոյն Սահակայ Պարթեւի Հայրապետին Հայոց ըստ աւանդութեան Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1906:

[7] Սիմեոն Ա. Երեւանցի, Տօնացոյց նախապէս կարգեալ և սահմանեալ Սրբոյն Սահակայ Պարթեւի Հայրապետին Հայոց ըստ աւանդութեան Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցւոյ, Վաղարշապատ, Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1906:

[8] Հայոց Տոնացույցի և դրա՝ տարբեր դարերում կրած փոփոխություն- ների ու բարեկարգումների մասին մանրամասն տես՝ Մաղաքիա արքե-

*Ինչպես արդեն նշվեց, քրիստոնեական մյուս Եկեղեցիներն իրենց տոների օրերը հիմնականում հաստատել են ամսվա օրերի վրա, այսինքն՝ յուրաքանչյուր տոն ամեն տարի անփոփոխ կատարվում է մի-նույն ամսվա նույն օրը, մնալով անշարժ: Եվ միայն Հարության տոնը՝ Զատիկն ու նրա հետ կապված որոշ տոներն են շարժական*[9]*: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր տոների համար որպես հիմք ընդունել է ոչ թե ամսվա, այլ շաբաթվա օրերը – ունի միայն իրեն հատուկ յոթնօրյակային տոմար: Ըստ այդմ Հայ Եկեղեցու տոները լինում են –՛շարժական, –՛անշարժ:*

*ԱՆՇԱՐԺ տոներն են՝ Ս. Ծնունդ – Աստվածհայտնություն, Տյառնընդառաջ, Հղություն Աննայի, Ծնունդ ս. Աստվածածնի, ս. Աստվածածնի ընծայումը տաճարին, Ավետում ս. Աստվածածնի:*

*ՇԱՐԺԱԿԱՆ են այն տոները, որոնք հիմնականում կախված են Հարության տոնի՝ Զատիկի – դրա փոփոխությունների հետ: Շարժական տոների ժամանակը հաշվելու համար գլխավոր – հիմնական ելակետը Հարության տոնի օրն է: Այս տոները որքան էլ շարժական, նույնքան էլ կանոնավորվում են իրենց փոփոխման հերթականությամբ – ունեն որոշակի կարգ:*

---

պիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Ս. Էջմիածին, 2001, Ռ. Վարդանյան, Հայոց տոնացույցը, Երևան, 1999, Գ. Բրուտեան, Օրացոյց հայոց, Ս. Էջմիածին, 1997, Ք. Տեր-Դավթյան, XI-XV դարերի հայ վարքագրությունը, Երևան, 1980, Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճեան, Հայոց Եկեղեցու սուրբերն ու սրբոց տոները (հոդված), Հայոց սրբերը և սրբավայրերը (հոդվածների ժողովածու), Երևան, 2001:

[9] 325 թ. Նիկիայի տիեզերական ժողովի որոշումով քրիստոնեական բոլոր եկեղեցիները Քրիստոսի Հարության տոնը կամ Զատիկը տոնում են գարնանային գիշերահավասարին (21 մարտ) հաջորդող լիալուսնի հաջորդ կիրակի: Հետևաբար, Զատիկը կարող է տոնվել ամենաշուտը մարտի 22-ին, իսկ ամենաուշը՝ ապրիլի 25-ին:

*Օրինակ՝ Զատկից հիսուն օր առաջ Բուն բարեկենդան է, իսկ քառասուն օր հետո՝ Համբարձում, վերջինից տասը օր հետո՝ Հոգեգալուստ – այլն: Այս ընդհանուր կանոնից շեղվում են միայն մի քանի տոներ, որոնք նույնպես ըստ Զատկի տոնի են շարժվում, այն տարբերությամբ միայն, որ տեղափոխվում են Զատկից առաջ կամ հետո: Դրանք են՝ Ս. Ծնունդից հետո նշվող տասնմեկ տոները, Պայծառակերպության – ս. Աստվածածնի վերափոխման տոների միջ- նշվող երկու շաբաթվա, ինչպես նա- ս. Աստվածածնի վերափոխման տոնից հետո չորրորդ շաբաթվա երկու տոները:*

*Հայոց Եկեղեցում ընդունված յոթնօրյա տոնակարգի համաձայն՝ շաբաթվա յուրաքանչյուր օր ունի հատուկ բնույթ. կիրակին զուտ տերունական օր է, – այդ օրը կարող է տոնվել միայն տերունական տոն: Չորեքշաբթին – ուրբաթը պահքի օրեր են: Սրբերի հիշատակության տոները կատարվում են միայն երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի – շաբաթ:*

*Հայ Եկեղեցու տոները դասակարգվում են երեք խմբերում՝* տերունական տոներ, սրբերի հիշատակություններ, պահքի օրեր*:*

*Եկեղեցական գլխավոր տերունական տոները կոչվում են* ՏԱՂԱՎԱՐ*: Շնորհք պատրիարք Գալուստյանի մեկնաբանությամբ՝ ըստ Հովհաննեսի Ավետարանի՝ հին հրեաների կար-որ տոներից մեկը կոչվում էր Տաղավարահարաց – տ-ում էր մեկ շաբաթ: Սրա նմանությամբ էլ մեր Եկեղեցում մեկ օրից ավելի տ-ողություն ունեցող տոները սկսեցին կոչվել «Տաղավարահարաց»: Հետագայում այս բառը կրճատվեց – դարձավ «տաղավար»[10]:* Տաղավար տոները 5-ն են՝

---

[10] Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, Տաղաւար տօներ, Երուսաղէմ, 1976:

Ս. Ծնունդ – Աստվածհայտնություն, Ս. Հարություն, Պայծառակերպություն, Վերափոխում ս. Աստվածածնի, Խաչվերաց:

*Տաղավար բոլոր տոներին բնորոշ են հետ-յալ առանձնահատկությունները՝ բոլորն ունեն երկար կամ կարճ պահքի շրջան, տոնի նախօրյակին կատարվում է նավակատիք – նախատոնակ, տոնի նախօրյակի գիշերը՝ հսկում, տոնի հաջորդ օրը ննջեցյալների հիշատակի օր է (մեռելոց), ինչպես նա- Տաղավար բոլոր տոները տ-ում են երեք – ավելի օր, իսկ տոնի բուն օրը կարող է լինել միայն կիրակի, բացառությամբ Ս. Ծննդյան – Աստվածհայտնության տոնի, որն անշարժ է:*

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ *տոները կատարվում են ի պատիվ մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Սուրբ Հոգու, սուրբ Աստվածածնի, սուրբ Խաչի – սուրբ Եկեղեցու: Այս բոլոր տոները նվիրված են Փրկչի փառաբանությանը –, իհարկե, առավել նախապատվելի են, քանի որ Քրիստոսը, Նրա տնօրինությունները, Տիրամայրը, Քրիստոսի Խաչը – Եկեղեցին փրկագործության առանցքն են: Հասարակ կիրակիները նույնպես նվիրված են Փրկչին – խորհրդանշում են Նրա Հարության հիշատակը:*

*Հայ Եկեղեցում Տերունական տոներն ընդունված է բաժանել երեք խմբի՝* Քրիստոսի տնօրինական տոներ, ս. Աստվածածնի տոներ, Տերունական հիշատակություններ*:*

*ՔՐԻՍՏՈՍԻ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ ՏՈՆԵՐՆ ԵՆ՝* Ս. Ծնունդ – Աստվածհայտնություն, Տյառնընդառաջ, Ծաղկազարդ, Հարություն, Համբարձում, Հոգեգալուստ, Պայծառակերպություն*:*

*Ս. ԱՍՏՎԱԾԱԾՆԻ ՏՈՆԵՐՆ ԵՆ՝* Ս. Աստվածածնի՝ Աննայից ու Հովակիմից հղացումը, Ս. Աստվածածնի ծնունդը, Ս. Աստվածածնի ընծայումը տաճարին, Ա-

վետում ս. Աստվածածնի, Ս. Աստվածածնի վերափոխումը, Ս. Աստվածածնի գոտու գյուտը, Ս. Աստվածածնի տուփի գյուտը*:*

*ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԸ նվիրված են* ս. Եկեղեցուն – ս. Խաչին*: Ս. Եկեղեցուն նվիրված տոներն են՝* Նոր կիրակի, Աշխարհամատրան կիրակի, Հիշատակ հին Տապանակի – նոր Եկեղեցու, Տոն կաթողիկե Ս. Էջմիածնի, Տոն Շողակաթի*: Ս. Խաչին նվիրված տոներն են՝* Խաչի գյուտ, Խաչվերաց, Խաչի եր–ման, Վարագա խաչի*:*

*ՆԱԽԱՏՈՆԱԿ: Եկեղեցական կար–որ տոների նախօրյակին կատարվում է հանդիսավոր արարողություն, որը կոչվում է* նախատոնակ*: Ինչպես բառն է հուշում, «նախատոնակ» նշանակում է տոնի նախորդ օրը, տոնից առաջ, նախքան տոնը, տվյալ դեպքում՝ բուն տոնի հանդիսակատարության առաջին երեկոն: Նախատոնակ կատարվում է տերունական – սրբերի տոների նախօրյակին՝ եկեղեցու ատյանում, մեծ հանդիսավորությամբ:*

*ՆԱՎԱԿԱՏԻՔ: Եկեղեցական օրացույցում հաճախակի գործածվում է* «նավակատիք» *բառը: Հրաչյա Աճառյանի «Հայերենի արմատական բառարանի» համաձայն՝ «նավակատիք» նշանակում է բացման հանդես, տարեդարձ: Կազմված է «նավա» – «կատիք» բառերից: «Նավա»-ն՝ զենդերեն՝ nava, պահլավերեն՝ navak, պարսկերեն՝ nav, «նոր» բառն է, իսկ երկրորդ բաղադրիչը ստույգ մեկնություն դեռ չունի: Տոնականներում, Տոնապատճառներում, Տոնանամակներում «նավակատիքը» թարգմանվում է որպես նորոգություն կամ ուրախություն: Ս. Գր. Տաթ–ացին նույնպես «Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատորի» ՃԼԴ գլխում «նավակատիքը» թարգմանում է «նորոգություն»: «Նոր*

*բառգիրք հայկազեան լեզուի» գրքում (Վենետիկ, 1836 թ.) այն բացատրվում է՝ «նորակերտիք, նոր կերտել»*[11]*: Նավակատիքը նոր տան, հիմնարկության, շինության բացման արարողությունն է, ինչպես նա– թագադրության, պսակադրության տարեդարձների առիթներով կատարվող հանդիսություններն են: Հնագույն ժողովուրդները՝ ինչպես եգիպտացիները, հույները, հռոմեացիները, սովորություն են ունեցել հանդիսավորությամբ նշելու որ–է նոր հաստատության կամ կառույցի բացումը – այդ առիթով կազմակերպել ուրախ տոնախմբություններ: Հրեաների մոտ նավակատիքն արդեն մեծ – կար–որ տոնի էր վերածվել: Հին Կտակարանում Սողոմոն Իմաստունը տաճարի շինությունն ավարտելուց հետո ողջակեզներով ու զոհերով յոթ օր նավակատիք է կատարում (Գ Թագ., Ը, 62Վ66):*

*Քրիստոնյաներին այդ ավանդույթն անցել է հավանաբար 4-րդ դարում՝ հետագայում դառնալով կրոնական արարողությունների մաս: Ի տարբերություն հրեաների՝ քրիստոնյաները եկեղեցու նավակատիք կատարում էին ութ օր պատարագ մատուցելով: Առաջին դարերում նավակատիք էին կատարում նա– եկեղեցիների օրհնության տարեդարձներին:*

«ՆԱՎԱԿԱՏԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ» *նշանակում է օծմանը պատրաստ նորակերտ եկեղեցու պաշտոնական նվիրագործումը: Արարողությունը կատարվում է եկեղեցու օծման նախորդ օրը՝ իբ– վկայություն եկեղեցու՝ օծմանը պատրաստ լինելու իրողության: Նավակատիք կարելի է նկատել նա– եկեցու խորանի, սրբազան մասունքների, խաչերի, եկեղեցական սպասքի օրհնությունը: Առաքելական ժամանակների սովորություններից*

[11] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Ա հատոր, 1971, էջ 59, Գ հատոր, 1977, էջ 434:

*են եղել նա- նավակատիքի սեղանները: Հավատացյալները հաղորդությունից հետո միասին ճաշել են եկեղեցում՝ հրավիրելով ճաշին բոլոր աղքատներին. այս երեկոները կոչվում էին սիրո երեկոներ, սիրո ճաշ, ագապ (Ա Կորնթ., ԺԱ(11), 20, 21): Դրանք ննջեցյալների հարազատների կողմից հատուկ պատրաստված սեղաններ էին՝ եկեղեցում հավատացյալների հետ միասին ճաշելու նպատակով: Հետագայում այս սովորությունը փոխարինվել է հոգեհաց տալու սովորությամբ:*

*Ինչպես վեր-ում արդեն նշվել է, «նավակատիք» բառը եկեղեցական օրացույցներում օգտագործվում է նա- եկեղեցական Տաղավար տոների պահքերի համար:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ինչ է եկեղեցին, «եկեղեցի» բառի մասնավոր իմաստները: Հայաստանյայց Եկեղեցին իբր- հնագույն քրիստոնեական եկեղեցի - հոգ-որ ու մշակութային արժեքների կրող:

-Եկեղեցական տոների հիմնական բովանդակությունը: Ազգային հնչողություն ունեցող տոների մուտքը հայոց Տոնացույց: Տոների տեղաբաշխումը տարվա օրերի վրա, ինչ է Տոնացույցը:

-Հայ Եկեղեցու տոնակարգի փոփոխությունները տարբեր դարերում՝ «Տոնացույց», «Տոնական», «Տոնամակ», «Ճաշոց», «Տոնապատճառ», «Ճառընտիր», «Հայսմավուրք», ժողովածուները:

-Հայ Եկեղեցու տոների դասակարգումը՝ տերունական տոներ, սրբերի հիշատակություններ, պահքի օրեր, անշարժ - շարժական տոներ: Հայ Եկեղեցում ընդունված յոթնօրյա տոնակարգը:

-Նավակատիք, նավակատիք եկեղեցու, նախատոնակ, դրանց բացատրությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Եկեղեցին իր հիմնադրի՝ Քրիստոսի ներկայությունն է այս աշխարհում – ունի իշխանություն շարունակելու Տիրոջ փրկագործությունը՝ ազատելով մարդուն մեղքի կապանքներից – առաջնորդելով դեպի Աստված տանող ինքնամաքրումի ճանապարհով: «Եկեղեցի» նախ – առաջ նշանակում է Քրիստոսի անունով համախմբված ժողովուրդ, հաջորդ իմաստով եկեղեցի են այդ հավաքականության առանձին մասերը՝ իրենց դավանաբանական, ծիսական ու կառույցի առանձնահատկություններով, եկեղեցի կոչում ենք նա– շինությունը, ուր կատարվում է արարողություն – պաշտամունք:

Նախապես քրիստոնեական տոները նվիրվել են մեր Տեր Հիսուս Քրիստոսին, ս. Աստվածածնին, ս. Խաչին, Եկեղեցու սրբերին, իսկ կիրակին ընդհանրապես նվիրվել է Քրիստոսի Հարությանը – մշտապես համարվել ու համարվում է հանգստյան օր: Կիրակին կամ կյուրակին հունարենով բացատրվում է տերունական օր՝ երբ հարություն առավ Քրիստոսը:

Հայ Եկեղեցին հաստատել են ս. Թադեոս – ս. Բարդուղիմեոս առաքյալները: Նրանց Հայաստանում քարոզելու – նահատակվելու մասին պատմում են հայ – օտար աղբյուրները:

Ս. Վրթանես Ա Պարթ– կաթողիկոսի տնօրինությամբ՝ տոնելու 337 թ. Պարսից տերության դեմ պատերազմում նահատակված Վաչե Մամիկոնյան հայոց սպարապետի – նրա զինակիցների հիշատակը, հայոց Տոնացույցում սկիզբ են առնում ազգային-եկեղեցական

տոները: Մեծարելով ու ոգեկոչելով հիշատակը Հայ Եկեղեցու սրբերի, նշանավոր գործիչների, փառավորելով նրանց գործերը, այդ տոնրը դարերով կրթում - ձ-ավորում են հայ քրիստոնյային, նրա ու- րույն դիմագիծն ու հոգ-որ աշխարհը:

Սրբերի հիշատակություններ

*Հայաստանյայց Ս. Եկեղեցին, իբր- անքաժան մաս Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու, իր պաշտա- մունքում նույնպես մեծ տեղ է հատկացրել սրբերին ու սրբակենցաղ անձանց: Սրբերը, ինչպես - հրեշտակնե- րը, Աստծու ամենահավատարիմ ծառաներն են, ովքեր իրենց կյանքի օրինակով, սրբակենցաղ վարքով - հա- ճախ նա- իրենց արյան վկայությամբ՝ նահատակվելով ու մարտիրոսվելով, արժանացել են հավատացյալների - առհասարակ Եկեղեցու սիրուն ու հարգանքին:*

*Սրբությունն Աստծու ստորոգելիներից է: Սրբութ- յան աղբյուրը Սուրբ Երրորդությունն է՝ Հայրը, Որդին, Սուրբ Հոգին: Աստված Իր սրբությամբ է հայտնվում մարդկանց, - մարդը միայն սրբությամբ կարող է մոտե- նալ ու միանալ Աստծուն: Հիսուս Քրիստոսով մարմին առավ ու աշխարհ մտավ կատարյալ սրբությունը, ինչ- պես նա- սուրբ են Նրա Եկեղեցին, Աստծու խոսքը՝ Աստվածաշունչը: Որ-է մարդ չի կարող սուրբ կոչվել ըստ մարդկային չափանիշների, այլ մարդու սրբությու- նը Աստծու սրբության արտացոլումն է նրանում, - մարդը սուրբ կարող է լինել միայն Աստծու հետ իր հա- րաբերությամբ: Մարդու սրբագործումը կատարվում է Սուրբ Հոգու շնորհներով:*

*Քրիստոնեության դեռ-ս վաղ շրջանում Եկեղե- ցում սկսեցին հիշել - հարգել նրանց հիշատակը, ովքեր*

*քրիստոնյաների դեմ հալածանքների ժամանակ, անտեսելով բոլոր տանջանքներն ու զրկանքները, հավատարիմ էին մնացել քրիստոնեական հավատին – չէին ուրացել այն: Առաջին դարերում եկեղեցիներ կառուցում էին նրանց նահատակության վայրերում – եկեղեցու հիմքում դնում էին սրբերի մասունքներից, ինչով – պայմանավորվեց հետագայում մասունքների բաժանումը: Եկեղեցու կողմից սրբացվեցին անձինք, ովքեր ապրել էին քրիստոնեական անբասիր կյանքով, հավատով ու ապաշխարությամբ, ընդունել էին Սուրբ Հոգու շնորհները – իրենց մեջ կրում էին Աստծու ներգործությունը: Սրբերի տոների կատարումը Եկեղեցում սկիզբ առավ նրանց մարտիրոսական մահվան տարեդարձների նշումով, որոնք սգահանդեսներ չէին, այլ սկզբից -եթ պաշտամունքային գոհաբանական – հաղթական արարողություններ, քանզի նրանք հանուն հավատի զոհել էին իրենց երկրային անցավոր կյանքը, սակայն ձեռք էին բերել անհամեմատ երջանիկ ու հավերժական կյանք՝ Աստծու թագավորությունում: Ժամանակի ընթացքում Եկեղեցին հարստացրեց իր տոնելի – հիշատակելի սրբերի ցանկը նոր նահատակներով, վկաներով ու խոստովանողներով, ովքեր իրենց առաքինի վարքով օրինակ են սերունդների համար:*

*«Սուրբ» նշանակում է «մաքուր», որ-է առարկայի կամ իրի համար օգտագործելիս էլ ասում ենք «սրբել, մաքրել»՝ նկատի ունենալով դրա զուտ նյութապես մաքրությունը: Հետագայում ֆիզիկական մաքրության իմաստը իր վրա առավ բարոյական մաքրագործումի հոգ-որ իմաստ, – «սուրբ» սկսեցին կոչել Աստծու պատվիրաններով, արդար, մաքուր կյանքով ապրող մարդկանց, ինչպես նա- նրանց, ովքեր նահատակության գնով վկայեցին ու խոստովանեցին ճշմա-*

*րիտ Աստծուն: Հոգ-որ մաքրության այս գաղափարին զուգորդվում է նա- որ-է առարկայի կամ անձի՝ իր տեսակից զատված, բաժանված, անջատված - նվիրական նպատակի նվիրված լինելու իմաստը: Սրբության գաղափարը տարածվեց նա- այն վայրերի վրա, որտեղ զգալի կերպով արտահայտված է Աստծու ներկայությունը: Շնորհք պատրիարք Գալուստյանի հիանալի ձ-ակերպմամբ՝ «Սուրբ է այն, ինչ որ զատուած է իր տեսակներուն մէջէն - ընծայուած աստուածային նպատակի մը, որուն համար օրհնութիւն ստացած է ուղղակի Աստուծմէ կամ Իր պաշտօնեաներէն՝ յանուն Աստուծո: Ու վերջապէս սուրբ է ամէն ինչ, որ Աստուծո ներկայութեան զգալի նշաններն ունի իր մէջ»[12]: Ըստ այդմ բոլոր սրբերին հատուկ են այս հատկանիշները, որովհետ- կյանքի ընթացքում նրանք մաքրվել են մարդուն պղծող բոլոր մեղքերից՝ վերականգնելով Աստծու պատկերով արարչագործված իրական մարդուն: Պատմությունը լավագույն ուսուցիչն է, - աստվածային փրկագործության նպատակը երկրի վրա իրագործելու համար նախատակված ու առաքինացված սրբերի վարքերը, նրանց կյանքի օրինակը՝ լավագույն ուղեցույցները Աստծու - սրբության ու արդարության կողմում կանգնելու, հավատի ճանապարհով անսայթաք ընթանալու՝ պատրաստ զոհելու ժամանակավոր, անարժեք ու չնչին ամեն բան:*

*Հայ Եկեղեցու Տոնացույց անցած սրբերը բաժանվում են երեք խմբի՝* աստվածաշնչյան, համաքրիստոնեական - Հայ Եկեղեցու*: Աստվածաշնչական սրբերն իրենց հերթին բաժանվում են* Հին Կտակարանի - Նոր Կտակարանի *սրբերի: Առաջին խումբը կազմում են*

[12] Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, Աստուածաշնչական սուրբեր, Գանձասար, Երևան, 1997:

*նախքան Քրիստոս ճշմարիտ աստվածպաշտության հետ-ողները, պահպանողներն ու ջերմեռանդ պաշտպանները: Իսկ երկրորդ խումբն ընդգրկում է քրիստոնեության առաջին հետ-որդներին, տարածողներին ու իրենց գործով, խոսքով ու արյունով քրիստոնեական ճշմարտությունները վկայողներին ու պահպանողներին:*

*Նա-՝ Հայ Եկեղեցում սրբերն ունեն երկու աստիճան՝* տոնելի - հիշատակելի*: Տոնելի սրբերը իրենց հիշատակը նշելու օրը ժամերգության - ս. Պատարագի ժամանակ հիշատակվում - օրհներգվում են: Հիշատակելի սրբերի կյանքի ու մահվան պատմությունը կարդացվում է միայն «Հայսմավուրքի» միջոցով՝ ասելով. «Հայսմ ավուր», այսինքն՝ այսօր օրն է...» - նշելով տվյալ սրբի անունը, որի հիշատակը կատարվում է այդ օրը:*

*Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու տոնակարգի հիմքը եկեղեցական ավանդությունն է: Ընդհանրական Եկեղեցու սրբերը հայոց Տոնացույց են անցել 5-րդ դարի կեսերից առաջ - հավասարապես ընդունելի են բոլոր Եկեղեցիների կողմից՝ իբր- Քրիստոսի մեկ Եկեղեցու սրբեր: Հայազգի սրբերը մեր Տոնացույց են անցել 5-րդ դարից հետո:*

*Տիեզերական Եկեղեցում սրբերի տոները նախապես նշվում էին նրանց նահատակության տարեդարձների օրերին: Սակայն Հայոց Եկեղեցին շեղվեց Ընդհանրական Եկեղեցու այդ կարգից - սրբերի տոները զատեց Տերունական տոներից ու պահքերից, որպեսզի Տերունական տոները շեշտված առանձնանան, իսկ պահքի օրերին, որոնք զղջման ու ապաշխարանքի համար են, ուրախության տոնախմբություններ չկատարվեն: Պահքին - Տերունական տոներին հատկացված օ-*

*րերը բացառելով՝ սրբերի հիշատակություններ կատարելու համար տարվա մեջ թույլատրելի մնում է 115 օր, ինչը – պատճառ է դարձել նույն օրը մեկից ավելի սրբերի հիշատակներ տոնելու:*

*Որ–է սրբի հիշատակության օրը կազմակերպվում են ուխտագնացություններ տվյալ սրբի գերեզման կամ նրա անունը կրող եկեղեցիներ, կամ այդ սրբի հետ որ–է կերպով առնչվող վայրեր: Սրբի անունը կրող եկեղեցու համար սրբի տոնը անվանակոչության օր է, կամ այդ եկեղեցու տոն: Այդ օրը անվանակոչության օր է համարվում նաև տվյալ սրբի անունը կրող մարդկանց համար:*

## Հայաստանի Հանրապետության տոներ եւ հիշատակի օրեր

*Միայն 20-րդ դարում հայոց կյանքում ծնունդ առան պետական տոները: Մինչ այդ, երբ կանգուն է եղել հայկական պետությունը, միասնական է եղել Հայ Եկեղեցու հետ, – չի եղել անհրաժեշտությունը առանձին տոների:*

*Հայաստանի առաջին Հանրապետությունը 1919 թ. հունվարի 17-ին ընդունում է տոների մասին օրենքը, որով պետական տոներ էին հաստատվել՝ Նոր տարի, Ս. Ծնունդ ու մկրտություն, Մեռելոց, Տյառնընդառաջ, Վարդանանց ու Բարեկենդան, Լուսավորչի մուտն ի վիրապ, Ս. Զատիկ, Համբարձման – Թարգմանչաց տոները: Նույն օրենքով սահմանվում են նաև Հայաստանի տարածքում բնակվող ռուսների ու մահմեդականների տոները:*

*Հայաստանի երկրորդ Հանրապետությունը, լինելով Խորհրդային Միության կազմում, որպես պետականորեն նշվող տոներ հիմնականում ընդունել է ԽՍՀՄ տոները՝ ավելացնելով միայն Հայաստանի խորհրդայնացման հետ կապված տոները:*

*Հայաստանի երրորդ Հանրապետությունը նույնպես սահմանել է իր տոնակարգը: Ներկայումս ՀՀ տարածքում գործում է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2001 թ. հուլիսի 24-ին ընդունված - 2001 թ. օգոստոսի 20-ից ուժի մեջ մտած «ՀՀ տոների - հիշատակի օրերի մասին» օրենքը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-«Սուրբ» բառի ստուգաբանությունն ու իմաստը:

-Ովքե՞ր են սրբերը - ինչո՞ւ են արժանացել հավատացյալների սիրուն ու հարգանքին: Ինչո՞ւ են Քրիստոսի Եկեցում նրանք առանձնակի պատվվում:

-Ի՞նչ է սրբությունը: Մարդու սրբությունը իբրնրանում Աստծու սրբության արտացոլում, Սուրբ Հոգու շնորհ:

-Ինչո՞ւ նախապես Քրիստոսի Եկեղեցում նշվող նահատակների հիշատակը, ովքեր հալածանքների շրջանում, իրենց կյանքի գնով, չուրացան Քրիստոսին ու Նրա վկաները եղան, նշվում էր նրա նահատակության օրը, - ինչո՞ւ դրանք երբեք չվերածվեցին սգահանդեսի, այլ տոնվում էին ուրախ ու հանդիսավոր արարողություններով:

-Հետագա դարերում քրիստոնեկան Եկեղեցիներում, ինչպես նա- Հայ Եկեղեցում, տոնակարգի հարստացումը: Հայ Եկեղեցում հայտնի առաջին ազգային նահատակներին նվիրված տոնի հաստատումը:

-Սրբերի դասակարգումը համաքրիստոնեական, աստվածաշնչական – հայազգի սրբերի: Աստվածաշնչական սրբերի՝ իրենց հերթին բաժանումը հինկտակարանյան – նորկտակարանյան սրբերի:

- Տոնելի – հիշատակելի սրբերը Հայ Եկեղեցում:

- Հայ Եկեղեցուն հատուկ յոթնօրյա տոնակարգը: Այն պայմանավորող հանգամանքները:

-Պետական տոների հաստատումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Սրբերը Աստծու սիրելիներն են, ովքեր այդ սերը վաստակել են իրենց մաքրակենցաղ ու սրբակրոն վարքով ու կյանքով, հաճախ նա–՝ նահատակությամբ ու մարտիրոսացմամբ: Նրանց կյանքը բոլոր ժամանակներում ցանկալի օրինակ է՝ եղբայրսիրության, որը վերջին հաշվով հայրենասիրությունն է, անձնազոհության՝ հանուն ճշմարիտ արժեքների, հանուն հավատի, որը մարդկային կյանքի իմաստության սկիզբն է: Պատվելով ու հարգելով սրբերին, նրանց հիշատակը տոնելով՝ նորից ու նորից հաստատում ենք այն վսեմ արժեքները, որոնցով Աստված պատվիրեց ապրել, – որոնք իմաստ են հաղորդում մեր կյանքին:

Հայ Եկեղեցին պատմական տարբեր հանգամանքների պատճառով դարեր շարունակ եղել է հոգ–որ-ազգային արժեքների կրող, ձ–ավորող, պահպանող ու շարունակող, ինչպես նա– պետականության կորստի պայմաններում՝ ազգային կյանքի կազմակերպման խնդիրները իրականացնող կառույց: Դարեր շարունակ հայ եկեղեցասիրություն ու հայրենասիրություն, ինչպես նա– հայ ու քրիստոնյա հասկացությունները նույնացվել են: Եվ պատահական չէ, որ Հայ Եկեղեցու Տոնացույց անցած շատ սրբերի տոներ

ունեն ազգային շեշտված հնչողություն, իսկ հայ հասարակության համար հատուկ կար-որություն ունեցող դեպքերն ու իրադարձությունները արտահայտվել են Հայ Եկեղեցու տոնակարգում:

Չնայած տարբեր ժամանակներում տոնակարգի փոփոխությանը, տոների որոշակի խումբ, անկախ ժամանակի թելադրանքներից, հայ ժողովրդի համար մշտապես պահպանել է իր առանձնահատուկ կար-որությունը:

ՀՈՒՆՎԱՐ

## Նոր տարի կամ՝ Կաղանդ

*Քրիստոնյա ողջ աշխարհը* Տարեմուտը *կամ* Նոր տարին *տոնում է հունվարի 1-ին:*

*Նախկինում տարբեր ժողովուրդներ տարեմուտը տոնում էին տարբեր ամիսների՝ կապելով իրենց համար կար-որ իրադարձության հետ: Հայերը տարեմուտը տոնում էին նավասարդի 1-ին՝ Հայկի - Բելի ճակատամարտի օրը: Ըստ ավանդության, Հայկ նահապետը սպանում է իրեն հետապնդող Բելին - իր ժողովրդով ապրում ազատ: Ճակատամարտը ենթադրվում է, որ տեղի է ունեցել Ք. ա. 2492 թ. նավասարդի 1-ին՝ (օգոստոսի 11): Այդ օրվանից հայերը Նոր տարին սկսել են տոնել նավասարդի 1-ին:*

*Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» համաձայն՝ «նավասարդ» բառը ծագում է իրանական navasard-ից, որը կազմված է nava՝ նոր - sard՝ տարի բառերից[13]:*

*Հրեաների համար տարեմուտն սկսվում էր Նիսան (ապրիլ) ամսվա 1-ին, որովհետ- նրանք այդ ամ-*

[13] Հրաչյա Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Գ հատոր, Երևան, 1977, էջ 434-435: Հր. Աճառյանը նույն տեղում բերում է նաև ս. Գր. Տաթևացու «Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատորի» Ա գլխում «նավասարդ» բառին տված «նոր, այսինքն սկիզբն տարւոյ» բացատրությունը, ինչպես նաև «նաւարկութիւն» իմաստը՝ հիշատակ նրա, երբ «Աստծու Հոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդ., Ա, 2): «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» գրքում (Վենետիկ, 1836 թ.) «նավասարդ» բառը բացատրվում է որպես «նաւաստ աւարտ», այսինքն՝ նավարկությունն ավարտվեց՝ ի հիշատակ ջրհեղեղի ավարտի (Ծննդ., Ը, 13), երբ ջրերը նվազեցին, և Նոյը բացեց տապանը: Այդ օրը դարձավ նոր տարվա սկիզբը, որի հիշատակը պահպանվեց հայոց մեջ նաև հետագայում:

*սին ազատվեցին եգիպտական գերությունից – առաջնորդվեցին Ավետյաց երկիր:*

*Քրիստոսի՝ աշխարհ գալուց հետո քրիստոնյաների համար տարվա առաջին ամիս դարձավ հունվարը, որովհետ– այս ամսին ծնվեց Փրկիչն աշխարհի: Հունվարի 1-ին՝ Նոր տարվա առաջին օրը եկեղեցիներում մատուցվում է Ս. Պատարագ, իսկ մարդիկ միմյանց շնորհավորելով՝ գոհություն են հայտնում Աստծուն – հայցում, որ պարգ–ի խաղաղ տարի:*

*18-րդ դարում Սիմեոն Ա Եր–անցի կաթողիկոսի Տոնացույցով հունվարի 1-ը հայերի համար նույնպես ընդունվեց որպես Նոր տարվա սկիզբ:*

*Նոր տարվա առաջին օրը կոչվում է նա– Ամանոր կամ Կաղանդ: «Ամանորը» բուն հայկական բառ է – նշանակում է «նոր տարի» (ամ՝ տարի), իսկ «կաղանդ» նշանակում է ամսագլուխ կամ ամսվա առաջին օր: Կաղանդից ունենք նա– «կաղանդչեք» բառը, որը կաղանդի առիթով տրված նվերն է: Կաղանդչեքի՝ միմյանց նվերներ մատուցելու սովորությունը գալիս է դրախտի պարտեզի հասկացությունից. այստեղ Ադամը ամեն ինչ նվեր ստացավ՝ կյանք, բանականություն, ընտանիք, արարչաստեղծ աշխարհի իշխանը լինելու շնորհ:*

*Ամանորի տոների կապակցությամբ ժողովուրդը զարդարում է տոնածառ, որը խորհրդանշում է դրախտի Կենաց ծառը, իսկ տոնածառի գլխին ամրացվող աստղը՝ Բեթղեհեմյան աստղը: Եվ ինչպես մոգերը երկրպագեցին ու իրենց ընծաները մատուցեցին Մանուկ Հիսուսին, անպես էլ մարդիկ իրենց ընծաներն են բերում Կենաց ծառին՝ զարդարելով այն: Ամանորի գիշերը երեխաներին նվերներ բերող Ձմեռ պապի նախատիպը Զմյուռնիայի մետրոպոլիտ ս. Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետն է, ով հայտնի է եղել իր բարե-*

*գործություններով ու հրաշագործություններով. նրա աղոթքներով բխել են ցամաքած աղբյուրներ, բժշկվել բազմաթիվ մարդիկ, բազմացել է հացը: Ս. Նիկողայոսը ծնվել է 280 թ., Փոքր Ասիայի Լիկիա նահանգում: Նա 325 թ. Նիկիայում հրավիրված Առաջին տիեզերական ժողովի 318 հայրապետներից է, ում հիշատակը մեր Եկեղեցին տոնում է Ս. Խաչի տոնի տասներորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը: Ս. Նիկողայոսի, եվրոպացիների անվանումով՝ Սանտա Կլաուսի մահից հետո էլ մարդիկ շարունակել են դիմել նրա բարեխոսությանը – օգնություն ստացել: Նա համարվում է նա– երեխաների հովանավոր:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Տարբեր ժողովուրդների կողմից տարեմուտի՝ տարբեր օրերով նշելու պատճառը:

-Նավասարդը հին հայոց առաջին ամիս: «Նավասարդ» բառի նշանակությունը:

-Քրիստոսի Ծննդյան հետ կապված՝ քրիստոնեական աշխարհում տարեմուտը հունվարին նշելու կարգը: 18-րդ ադրում Սիմեոն Եր–անցի կաթողիկոսի Տոնացույցով հայերի համար հունվարի 1-ը որպես տարվա սկիզբ հաստատելու տնօրինությունը:

-«Կաղանդ», «կաղանդչեք» – «Ամանոր» բառերի նշանակությունը:

-Տոնածառ զարդարելու, միմյանց նվերներ մատուցելու սովորությունը – դրանց խորհուրդը:

-Ս. Նիկողայոս Հայրապետը որպես Սանտա Կլաուսի նախատիպ:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Հնագույն ժամանակներից ի վեր բոլոր ժողովուրդների համար տարեմուտը նշելու ժամանակը կապված է եղել նրանց կյանքում առանձնակի կարևորության իրադարձությունների հետ:

Սակայն Քրիստոսի Ծնունդը, Նրա աշխարհ գալը ողջ մարդկության համար ամենակարևոր ու նշանակալի իրադարձությունն է: Այն փոխեց ողջ մարդկության և՛ ուղին, և՛ պատկերացումները, և՛ կյանքը՝ այն տանելով իմաստի ու նպատակի ճշմարիտ ճանաչման ուղիով: Եվ այդ է պատճառը, որ քրիստոնեություն ընդունած ժողովուրդների համար հունվարի 1-ը դարձավ տարվա առաջին օր:

Աստծու, տիեզերքի, տիեզերքում մարդու դերի, կյանքի ու դրա իմաստի մասին մարդկության նոր պատկերացումների հետ-անքով, բնականաբար, փոխվեցին նա- մարդկանց ու ժողովուրդների՝ տարեմուտը նշելու սովորույթները, իսկ հնուց մնացածները նոր իմաստ ու ձ- ստացան: Կուռքերին նվիրված մեծահանդես տոնախմբություններն ու մրցումները - կենդանական զոհերը փոխարինվեցին եկեղեցիներում ս. Պատարագի արարողություններով ու Աստծու մոտ սրբերի բարեխոսությունը խնդրելով՝ պայմանավորված ճշմարիտ աստվածճանաչողությամբ:

Սուրբ Ծնունդ եւ Աստվածհայտնություն

*Սուրբ Ծննդյան ու Աստվածհայտնության տոնը մեր Տեր ու Փրկիչ Հիսուս Քրիստոսի՝ աշխարհ գալու - մարդկությանը Հայտնվելու տոնն է: Աստված ծնունդով հայտնվեց և՛ երկնայիններին՝ հրեշտակներին, և՛ երկրայիններին՝ հովիվներին ու մոգերին, - արարածները տեսան իրենց Արարչին:*

*Մարդկությունը երկարատ- ժամանակաշրջան նախապատրաստվում էր իր պատմության համար առանցքային իրադարձությանը՝ Քրիստոսի Ծննդին: Հոգ-որ ու կրոնական այդ նախապատրաստությունը կատարվեց նախ Հին Կտակարանի միջոցով: Աստված հատուկ միջամտությամբ, որին «Հայտնություն» ենք ասում, մարդկանց հանձնեց աստվածճանաչողության ու հավատի հիմունքներն ու սկզբունքները, կրոնական կյանքի օրենքները՝ ցույց տալով, որ Տիեզերքի անսահմանություններից դուրս գոյություն ունի միակ ճշմարիտ Աստված, Ով Արարիչն է երկնքի ու երկրի, Ով Իր նմանությամբ ու պատկերով է ստեղծել մարդուն: Սակայն եկավ մի ժամանակ, երբ մարդկությունը այնքան էր զանցառել աստվածադիր օրենքները - բարոյական անկման այնպիսի անմխիթար վիճակում էր, որ չուներ ոչ ուժ - ոչ միջոց այդ կործանարար դրությունից դուրս գալու: Մարդը Աստծու օգնության կարիքն էր զգում մեղքի մահացու աքցանից դուրս գալու, Աստծու պատկերն իր մեջ նորոգելու համար:*

*Եվ Աստված Ինքը մարդկանց ընդառաջ եկավ՝ «եկեք դեպի Ինձ» հրավերով՝ բերելով հաշտություն ու խաղաղություն, որին ունկնդիր՝ մարդը կարող է գտնել փրկության, երկնքի արքայության ու անմահության ուղին: Այսպիսով, անհնազանդությամբ Աստծուց հեռացած մարդը Աստծու ողորմությամբ շարունակեց մնալ Նրա խնամքի ներքո:*

*Հին Կտարանում բազմաթիվ են մարգարեությունները Մեսիայի՝ Փրկչի գալստյան մասին: Հին Ուխտի մարգարեները Քրիստոսի Ծննդից մի քանի հարյուրամյակ առաջ հստակորեն նախագուշակել են Նրա Ծննդյան ժամանակը - տեղը. «Ահա կույսը պիտի հղիանա - որդի ծնի, - Նրա անունը պիտի լինի Էմմա-*

*նուել» (Եսայի, Է, 14), «Եվ դու, Բեթղեհե՛մ, ...քեզնից պիտի ելնի Ինձ համար Իսրայելի մի Իշխան, - Նրա ծագումը աշխարհի սկզբի օրերից է» (Միք., Ե, 2), «Հեսսեի արմատից գավազան պիտի ընձյուղվի, ծաղիկ պիտի բուսնի այդ արմատից, Նրա վրա պիտի իջնի Աստծու Հոգին» (Եսայի, ԺԱ(11), 1-2): Այս - բազմաթիվ այլ նախագուշակություններ խոսում են Փրկչի Հայտնության մասին, - դրանցից որոշ ընթերցվածներ կարդացվում են Ս. Ծննդյան ճրագալույցի պատարագի ընթացքում:*

*Հրեա ժողովուրդը դարեր շարունակ սպասում էր Մեսիային, Ով պետք է ազատեր նրան օտարների իշխանությունից, փրկություն բերեր բոլոր դժվարություններից ու հալածանքներից: Սակայն Մեսիան՝ Քրիստոսը, եկավ ոչ միայն հրեաների, այլ ողջ մարդկության փրկության համար:*

*Աստված Գաբրիել հրեշտակապետին ուղարկում է Գալիլիայի Նազարեթ քաղաքը՝ Մարիամ անունով կույսի մոտ, ով նշանված էր Հովսեփի հետ՝ Դավթի սերնդից: Հրեշտակը Մարիամին ավետում է. «Ուրախացիր, ով շնորհընկալ, Տերը քեզ հետ է... ահա դու կհղիանաս - կծնես մի որդի ու նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի - Բարձրյալի Որդի կկոչվի... Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, ու Նրա թագավորությունը վախճան չի ունենա» (Ղուկ., Ա, 26-33): Հրեշտակը երազում նա- Հովսեփին է հայտնում Հիսուսի Ծննդյան մասին (Մատթ., Ա, 18-25):*

*Հիսուսը ծնվեց Հրեաստանի Բեթղեհեմ քաղաքում, Հերովդես թագավորի օրոք: Այդ օրերին Օգոստոս կայսեր հրամանով Հռոմեական ողջ կայսրությունում մարդահամար էր անցկացվում: Հրեաստանը կայսրության կազմում էր, - հաշվառվելու համար Հովսեփին ու*

*Մարիամը Գալիլիայի Նազարեթ քաղաքից գնում են Բեթղեհեմ: Սակայն մարդահամարի պատճառով քաղաքի հյուրատներում տեղ չգտնելով՝ ստիպված են լինում գիշերել քաղաքի մոտակա քարայրում, որն անձր–ային ու ցուրտ եղանակներին հովիվների համար որպես նախրատուն էր ծառայում[14]: Այստեղ էլ՝ Բեթղեհեմի քարայրում, ծնվում է Հիսուս Քրիստոսը՝ Փրկիչն Աշխարհի:*

*Աստվածորդին աշխարհ եկավ ամենախոնարհ պայմաններում՝ ենթակա ժողովրդի հասարակ զավակների, աղքատ հյուսնի ընտանիքում, պարզ մսուրի մեջ՝ գլխիվայր շրջելով մեծության, փառքի ու իշխանության մասին մինչ այդ տիրող պատկերացումները, ցույց տալով ու սովորեցնելով, որ մեծությունը՝ հարստության – իշխանությունը՝ տիրելու մեջ չէ, այլ ծառայելու: Եվ ըստ այդմ Աստծու Որդուն առաջինը ողջունելու պատիվն ու բերկրանքը վիճակված էր խոնարհ ու հասարակ մարդկանց՝ հովիվներին, ովքեր մոտակայքում իրենց հոտերի գիշերային պահպանությունն էին կատարում (Ղուկ., Բ, 8-11): Առաջինը հովիվներին է հայտնվում, որովհետ–որպես Նոր Ադամ՝ գալիս է փնտրելու – գտնելու հին՝ կորած Ադամին, ինչպես Կորած ոչխարի առակում (Ղուկ., ԺԵ(15), 4) քաջ հովիվը 99 ոչխարները թողնում է անապատում՝ (երկնքում, որը չարից մաքուր անապատ է) – գնում փնտրելու մոլորված մեկ ոչխարին (մարդկային ցեղը): Բանավոր հոտի քաջ Հովիվը նախ հայտն-*

---

[14] Սեմը՝ Նոյի որդին, իր հետ տապան վերցնելով Ադամի ու Եվայի ոսկորները, ջրհեղեղից հետո մարգարեաբար այս քարայրում է թաղում Եվայի ոսկորները, իսկ Ադամինը՝ Գողգոթայում: Ըստ այսմ էլ ս. Աստվածածնով կենդանանում է Եվան, և օրհնությամբ է փոխվում նախամոր վրա ընկած Աստծու անեծքը, իսկ Խաչով կենդանանում է Ադամը և ազատվում դժոխքից (Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Քրիստոսի Ծննդյան մասին, Գանձասար, Երևան, 1995):

*վում է անբան ոչխարների հոտի հովիվներին, որովհետ- նախկինում մարգարեներին հովիվներից ընտրեց՝ Մովսեսին, Դավթին - այլն, - այժմ էլ նախ հովիվներին հայտնվեց, որպեսզի ցույց տա, որ նույն Աստվածն է, Ով այժմ մարմնով ծնվեց ս. Կույսից: Նա-՝ հովիվները, հեռու ապրելով մարդկանցից, աննենգ ու աննախանձ էին, հետ-աբար, առաջինը նրանց է հայտնվում, որպեսզի ցույց տա, որ ովքեր մաքուր են հոգով՝ նրանք կտեսնեն Աստծուն: Բացի այդ, հովիվները անօթ-ան էին, ինչը խորհրդանշում է աշխարհիկ կյանքը թողնելը, նա-՝ զգոն էին, անքուն պահպանում էին իրենց հոտը, ինչը խորհրդանշում է, որ ով առաքինային չհամարի մարնականն ու նյութականը, կզորանա հոգով - կտեսնի Աստծուն: Եվ որովհետ- հովիվները պարզամիտ ու անգետ էին, ցույց է տալիս, որ ով կամենում է իմաստուն լինել Քրիստոսով, այս աշխարհի հիմարը թող լինի, քանզի «Աստծու հիմարն ավելի իմաստուն է, քան մարդկային իմաստությունը, - Աստծու տկարն ավելի զորեղ է, քան մարդկային զորությունը» (Ա Կորնթ., Ա, 25): Այսինքն՝ նրանք, ովքեր «...սրտով աննախանձ լինեն - վարքով՝ առաքինի...», կարժանանան Աստվածորդու տեսությանը[15]: Հովիվները նա- առաջինը նվերներ մատուցեցին Աստվածորդուն. գառ, իբր- խորհրդանիշ քահանայության, ինչպես նա- ապագայում Քրիստոսի անմեղ զոհաբերության, այնուհետ-՝ կաթ, իբր- նորածին Մանկան, - փառաբանեցին Նրան իբր- Աստծու:*

*Քրիստոսը ծնվեց, - մարդկանց եր-աց լույսն ու փառքը Աստծու. «Այդ լույսն էր ճշմարիտ լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ» (Հովհ.,*

[15] Ս. Գրիգոր Տաթեւացի, Քարոզ Քրիստոսի Ծննդյան մասին, Գանձասար, Երեւան, 1995:

*Ա, 9)։ Ի սեր մարդկության Նա, Ով «Աստծու կերպարանքով էր, Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ Իր Անձը ունայնացրեց՝ ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով - մարդու կերպարանքով խոնարհեցրեց Ինքն Իրեն՝ հնազանդ լինելով մինչ- մահ - այն էլ մահվան՝ խաչի վրա» (Փիլիպ., Բ, 6-8)։ Նա մարդացավ, որպեսզի Աստծու ու մարդու միջ- հաշտություն հաստատի, լուսավորի մարդկանց միտքը, ամոքի մեղքից վիրավոր հոգին, հեռացնի նրանցից հուսահատությունը - փրկության ճանապարհը ցույց տա։ Աստծու որդին մարդու որդի եղավ, որպեսզի մեզ Աստծու որդի դարձնի, փրկի մարդկանց սատանայի ծառայությունից։ Նա ծնվեց մարմնով, որպեսզի մենք ծնվենք Հոգով, որովհետ- ս. ավազանի մկրտությամբ վերստին ծնվելով՝ շնորհով Աստծու որդի ու Քրիստոսին ժառանգակից ենք դառնում։ «Եվ մեր Քրիստոս Աստծու Ծննդյան ու Հայտնության այս տոնը սկիզբն ու հիմքն է բոլոր բարիքների ու փառավոր շնորհների։ Եվ ոչ միայն այս, այլ- Աստվածորդու բոլոր տնօրինական տոների ու բոլոր մյուս տոների ու հոգ-որ ուրախությունների սկիզբը, հիմքն ու գլուխն է»[16]։*

*Հիսուսի Ծննդյան ժամանակ Ար-ելքից եկող երեք մոգերը Նրան երկրպագեցին. «Ո՞ւր է հրեաների արքան, որ ծնվեց, որովհետ- Նրա աստղը տեսանք Ար-ելքում - եկանք Նրան երկրպագելու» (Մատթ., Բ, 1-3)։ Հիսուսի Ծննդյան մասին նրանց հայտնել էր Աստված։ Բեթղեհեմյան լուսավոր աստղի առաջնորդությամբ, որը լույսով ու փայլով փառավոր էր, սքանչելի - զարմանալի, մոգերը գտնում են քարայրը, որտեղ - տեսնում*

[16] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Քրիստոսի Ծննդյան մասին, Գանձասար, Երևան, 1995։

*են Մանկանը՝ խանձարուրի մեջ փաթաթված ու մսուրում պառկած, տեսնում են ճշմարիտ Աստծուն – երկրպագելով Նրան՝ հանձնում իրենց նվերները. ոսկի, որը Մանկան՝ Թագավոր լինելու խորհուրդն էր ամփոփում, կնդրուկը՝ Աստվածության – զմուռսը՝ ապագայում Նրա փրկչարար ու քավչարար մահվան:*

*Այսպիսով՝ Փրկչի առաջ խոնարհվում են մարդկային իմաստությունը՝ հանձինս մոգերի – անմեղությունն ու պարզությունը՝ հանձինս հովիվների: Այսինքն՝ չկա մի վիճակ, կոչում կամ կարգ, որն արգելք լինի Աստծուն ճանաչելու – դեպի Նա ընթանալու:*

*Ծննդյան ութերորդ օրը, համաձայն Հին Ուխտի օրենքի (Ծննդ., ԺԷ(17), 12, Ղ-տ., ԺԲ(12), 3), Հովսեփն ու Մարիամը, որպես բարեպաշտ հրեաներ, Մանկանը տանում են տաճար, թլփատում – անունը դնում Հիսուս: Մանկանն այս անունով կոչել նրանց պատվիրել էր հրեշտակը (Մատթ., Ա, 21): Հիսուս անունը հրեական Հեսու կամ Հովսե անունների հունականացված տարբերակն է – նշանակում է «Փրկիչ», որովհետ- Նա պետք է մարդկանց փրկեր մեղքերից – երկնային թագավորության ճանապարհը ցույց տար: Հիսուսի համար օգտագործվող Քրիստոս անունն էլ հրեական Մեսիայի հունական տարբերակն է. երկուսն էլ նշանակում են «Օծյալ», այսինքն՝ աստվածային իշխանությամբ լիազորված, օժտված անձ: Ըստ այսմ Հիսուս Քրիստոս նշանակում է «Օծյալ Փրկիչ»: Եսային Նրան անվանում է նա- Էմմանուել, որը նշանակում է «Աստված մեզ հետ է» (Եսայի, Է, 14 , Մատթ., Ա, 23-24):*

*Հերովդես թագավորը, մոգերից լսելով հրաշալի Մանկան Ծննդյան մասին, բնականաբար, տառացիորեն է հասկանում «հրեաների թագավոր» բառերը – վախենալով իր գահի համար՝ հրամայում է ողջ երկ-*

*րում սպանել մինչ- երկու տարեկան բոլոր մանուկներին: Աստված երազում Հովսեփին զգուշացնում է - պատվիրում հեռանալ Եգիպտոս (Մատթ., Բ, 13-14): Այնտեղից Հովսեփը Ս. Կույս Մարիամի ու մանուկ Հիսուսի հետ վերադառնում է Նազարեթ միայն Հերովդեսի մահից հետո:*

*Հայ Առաքելական Ս. Եկեղեցին Կաթողիկե Ս. Էջմիածնի տոնի հաջորդ երկուշաբթի մարտիրոսների մեկ այլ խմբի հետ միասին տոնում է* Բեթղեհեմյան մանուկների հիշատակը, *ովքեր առաջին անմեղ նահատակները եղան - իրենց արյունը թափեցին Քրիստոսի համար:*

*Երբ լրանում է Հիսուսի 30 տարին, Նա Նազարեթից գալիս է Հորդանան, որտեղ այդ օրերին ժողովրդի հոծ բազմություն էր հավաքվել, որպեսզի Հովհաննեսը նրանց մկրտի ու մեղքերից մաքրի: Շատերը կարծում էին, որ Հովհաննեսն է Մեսիան, ում նրանք այդքան երկար սպասում էին, սակայն Հովհաննեսն իր մասին ասում էր. «Ես ձեզ մկրտում եմ ջրով, բայց գալիս է ինձնից ավելի զորավորը, որի կոշիկները հանելու արժանի չեմ ես, Նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով - հրով» (Ղուկ., Գ, 16): Երբ նա տեսնում է մկրտվելու համար իրեն մոտեցող Հիսուսին, ընդդիմանում է, որովհետ- իրեն անարժան է համարում Նրան մկրտելու. «Ինձ պետք է, որ Քեզնից մկրտվեմ, Դու ի՞նձ մոտ ես գալիս»: Հիսուսն ասում է. «Թույլ տուր հիմա, որովհետ- այսպես վայել է, որ մենք կատարենք Աստծու ամեն արդարություն» (Մատթ., Գ): Այդտեղ հավաքված հոծ բազմության աչքի առաջ Հիսուսը մկրտվում է, իսկ երբ դուրս է գալիս Հորդանանի ջրերից, երկինքը բացվում է - աղավնակերպ Սուրբ Հոգին իջնում է Նրա վրա, մի-նույն ժամանակ լսվում է Բարձրյալի ձայնը. «Դա է Իմ սիրելի Որդին, որն ունի Իմ ամբողջ բարեհաճությունը» (Մատթ., Գ,*

*17): Այսպիսով՝ Մկրտության ժամանակ Հիսուսը մարդկանց հայտնում է Իր Աստվածային Ինքնությունը, Հայր Աստված վկայում է Նրան որպես Իր սիրելի Որդի – Սուրբ Հոգին իջնում է Աստծու Որդու վրա: Ինչպես Հիսուսի Ս. Ծնունդով, այնպես էլ մկրտությամբ մարդկանց հայտնվեց Աստված՝ Սուրբ Երրորդությունը՝ Հայրը, Որդին – Սուրբ Հոգին:*

*Իր մկրտությամբ Հիսուսը նա– օրինակ տվեց մկրտվելու – սրբագործեց ու օրհնեց այն ջուրը, որով պետք է մկրտվեին մարդիկ:*

*Քրիստոնեության սկզբնական շրջանում Քրիստոսի Ծննդյան տոնը հայտնի էր միայն «Աստվածհայտնություն» անունով: Երկրորդ դարի կեսերից այն կատարվում էր հունվարի 6-ին:*

*Աստվածհայտնության տոնը նախապես հավաքական բնույթ ուներ – ընդգրկում էր տնօրինական մի շարք հիշատակություններ՝ ավետումը, Ծնունդը, թլփատությունը – անվանակոչությունը, քառասուն օրական Մանկան՝ տաճարին ընծայումը, մկրտությունը Հորդանանում, անապատում փորձությունը, Հովհաննես Մկրտչի կողմից վկայվելը, Կանայի հարսանիքը – այլն: Տնախմբությունների այս բույլը հանդիսավորաբար կատարվում էր հունվարի 5-13-ն ընկած ժամանակամիջոցում՝ «Աստվածհայտնության տոն» ընդհանուր անունով, որի բուն օրը հունվարի 6-ն էր:*

*Մինչ– 5-րդ դար քրիստոնեական բոլոր Եկեղեցիները միասնաբար Հիսուսի Ծննդյան տոնը նշում էին հունվարի 6-ին: Սակայն 451 թ. Քաղկեդոնի ժողովից հետո Հռոմեական Եկեղեցին սկսեց Հիսուս Քրիստոսի Ծննդյան տոնը կատարել դեկտեմբերի 25-ին՝ մոռացնել տալու համար այդ օրերին (ձմեռային ար–ադարձին) նշվող ար–ի աստծուն նվիրված հեթանոսական տոնը՝*

այն փոխարինելով ճշմարիտ Արեգակի, իմանալի Լույսի՝ Քրիստոսի Հայտնության տոնով: Հունվարի 6-ին սկսեցին առանձին տոնել Մկրտությունը: Այս սովորույթը հետզհետե անցավ նա- ար-եւյան որոշ եկեղեցիների, հատկապես ընդունվեց Երուսաղեմում՝ կապված նույն օրը Ծնունդը՝ Բեթղեհեմում, իսկ Մկրտությունը՝ Հորդանանում կատարելու դժվարության հետ: Աստվածհայտնության տոնի մյուս բաղադրիչները -ս ժամանակի հետ տեղափոխվեցին այլ օրեր. Ավետումը՝ ապրիլի 7-ին (մյուս եկեղեցիներում՝ մարտի 25-ին), ընծայումը տաճարին՝ Ծննդից 40 օր հետո՝ փետրվարի 14-ին (մյուս եկեղեցիներում՝ փետրվարի 2-ին), թլփատությունը - անվանակոչությունը՝ Ս. Ծննդյան 8-րդ օրը՝ հունվարի 13-ին (մյուս եկեղեցիներում՝ հունվարի 1-ին) - այլն:

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին հավատարիմ մնաց Հիսուսի Ծնունդը - Մկրտությունը հունվարի 6-ին տոնելու առաքելադիր կարգին[17]:

ՃՐԱԳԱԼՈՒՅՑ: Հայաստանյայց Ս. Եկեղեցում Ս. Ծննդյան - Ս. Հարության տոների նախորդ օրերը կոչվում են ճրագալույց: «Ճրագալույց» նշանակում է ճրագ, մոմ վառել (լուցանել՝ վառել): Այդ օրը հավատացյալները եկեղեցու կանթեղներից մոմ կամ ճրագ են վառում - տանում իրենց տները լուսավորելու: Դա խորհրդանիշն է Բեթղեհեմի պայծառ աստղի, որը առավել էր, քան արեգակը, քանզի ցերեկով էլ էր եր-ում - որը մոգերին առաջնորդեց դեպի ճշմարիտ Լույսը՝ դեպի Մանուկ Հիսուսը:

[17] Կանոնագիրք Հայոց, Սահմանք և կանոնք զոր եդին աշակերտքն Քրիստոսի Եկեղեցւոյ սրբոյ յետ վերանալոյ Տեառն, ԼԴ, 1964, հ. Ա, էջ 32:

*Հայ Եկեղեցում տարվա մեջ միայն երկու տոների՝ Ս. Ծննդյան - Ս. Հարության (Ս. Զատկի) նախորդ երեկոներին է մատուցվում ճրագալույցի Պատարագ: Այդ օրը երեկոյան ժամերգությունից հետո եկեղեցում կատարվում են սուրբգրային ընթերցվածներ, որից հետո սկսվում է ս. Պատարագի արարողությունը: Դրա ավարտից հետո կատարվում է հաջորդ օրվա տոնի նախատոնակը: Ճրագալույցի երեկոն կոչվում է նախթում, որը հավանաբար առաջացել է «խթել» (կաթնեղեն, յուղ, պանիր գործածել) բայից: Ճրագալույցին թույլատրելի է օգտագործել ձկնեղեն - կթեղեն (ձու):*

*Ըստ ս. Գրիգոր Տաթ-ացու՝ ս. Պատարագ է մատուցվում երկու անգամ՝ երեկոյան - առավոտյան, որովհետ- Քրիստոսի Ծնունդը կեսգիշերին եղավ, իսկ Մկրտությունը՝ կեսօրին, ըստ այսմ ճրագալույցի Պատարագը Ծննդյան խորհրդով է, իսկ առավոտյանը՝ Մկրտության: Նա-՝ որովհետ- Քրիստոսը երկու Ծնունդ ունի: Առաջինը Հորից է՝ հավիտյաններից առաջ, ժամանակից դուրս, հրեշտակներից ու մարդկանցից ծածկված - անիմանալի, ինչը երեկոյան Պատարագի խորհուրդն է: Քրիստոսի երկրորդ Ծնունդը մորից է՝ ժամանակի մեջ, մարդկանց - հրեշտակներին հայտնի, ինչը առավոտյան Պատարագի խորհուրդն է*[18]*:*

*Հունվարի 6-ի առավոտյան հայոց եկեղեցիներում մատուցվող ս. Պատարագից անմիջապես հետո կատարվում է* ջրօրհնեքի արարողություն, *որը խորհրդանշում է Հորդանան գետում Հիսուսի մկրտությունը Հովհաննես Մկրտչի կողմից: Աղոթքներով ու շարականների երգեցողությամբ ջուրն օրհնվում է ս. Ավետարանով, Տիրոջ ս. Խաչով - սրբագործվում ս. մյուռոնով: Ի*

[18] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Քրիստոսի Ծննդյան մասին, Գանձասար, Երևան, 1995:

*հիշատակ Տիրոջ՝ ջուրը մտնելու, ս. Խաչն իջեցվում է ջուրը, որով Աստծուց հայցում ենք, որ ինչպես այն ժամանակ Ս. Հոգին իջավ Տիրոջ վրա, նույնպես - իջնի՝ օրհնելով ու սրբելով ջուրը - այն ընդունակ դարձնելով մեղքերից մաքրելու ու հիվանդներին բժշկելու: Արարողությունից հետո հավատացյալները օրհնված ջուրը սրվակներով տանում են տուն:*

*Ինչպես արդեն նշվել է, հինգ Տաղավար տոների, այդ թվում նա-՝ Ս. Ծննդյան տոնի հաջորդ օրը՝* երկուշաբթի, ննջեցյալների հիշատակի օր *է: Քրիստոսի Հարությամբ իրական դարձավ մահացածների հարության հույսը: Մեռելոցի օրը ննջեցյալների համար կատարվող աղոթքը, հոգեհանգստի Պատարագն ու գերեզմանների օրհնությունը հարգանքի արտահայտություն լինելով նրանց հիշատակին, առավել ամփոփում են նրանց՝ վերստին նորոգման՝ հարության խորհուրդը:*

Տնօրհնեք

*Սուրբ Ծննդյան տոնակատարությունների մաս է նա- տնօրհնեքի արարողությունը: Ս. Գրիգոր Տաթ-ացու վկայությամբ՝ այն հիմնադրվել է հարուցյալ Փրկչի կողմից, երբ Նա Հարությունից հետո մտնում է Վերնատուն - օրհնում Իր աշակերտներին (Մարկ., ԺԶ(16), 14-18, Ղուկ., ԻԴ(24), 36-49, Հովh., Ի(20), 19-23): Տնօրհնեքի արարողությունը գալիս է դեռ-ս առաքելական ժամանակներից, երբ առաքյալները Տիրոջ Համբարձումից հետո, Նրա օրինակով, շրջում էին տները՝ բոլորին տանելով Քրիստոսի Ծննդյան ու Հարության ավետիսը: Նույն կերպ - առաքյալների հետ-որդները՝ քահանաները, տարվա մեջ երկու անգամ՝ Ս. Ծննդյան ութօրյակին (հունվարի 6-13) - Ս. Հարությունից մինչ- Հոգեգա-*

*լույս, այցելում են իրենց վիճակված համայնքների հավատացյալների տները – օրհնում նրանց բնակարաններն ու ընտանիքի անդամներին: Քահանայի այցելության իմաստը սովորական օրհնությունից առավել Քրիստոսի Ծննդյան ավետիսը որպես լույս ընտանիքներում սփռելն է:*

*Հայ Եկեղեցին սահմանել է տնօրհնեքի արարողության երեք կարգ՝* Ս. Ծննդյան. Ս. Հարության – նորակառույց տան կամ հաստատության օրհնություն:

Ս. Ծննդյան տնօրհնեքի *ժամանակ քահանան, տուն մտնելով, տալիս է Փրկչի Ծննդյան ավետիսը, երգում Մովսես Խորենացու՝ Ս. Ծննդյանը նվիրված «Խորհուրդ մեծ – սքանչելի» շարականը – ընթերցում Ղուկասի Ավետարանից Քրիստոսի Ծննդյան հատվածը (Ղուկ., Բ, 8-20): Տերը, Նա, Ում երկինքն ու երկիրը չեն կարող պարփակել, աշխարհ եկավ – մտավ Բեթղեհեմի այրն ու Իր Ծնունդով սրբեց – օրհնեց այն: Եվ ինչպես հովիվները գնացին այն այրը, ուր ծնվել էր Քրիստոսը, այնպես էլ եկեղեցու հովիվները՝ քահանաները, գնում են հավատացյալների տները – Աստծու օրհնությունը տանում նրանց: Քահանան օրհնում է տան ջուրը (մկրտության խորհրդանիշը), հացը – աղը (խաղաղության, առատության, բարեպաշտության խորհրդանիշերը), ինչպես Քրիստոսը, աշխարհ գալով, օրհնեց ջուրը, երկիրը – նրա պտուղները: Քահանան օրհնված ջուրը խաչած– ցողում է տան պատերին – խնկարկում տունը: Այնուհետ– օրհնում է տան անդամներին՝ Աստծուց նրանց համար պահպանություն հայցելով: Որպես օրհնության համար տեսանելի – մնայուն նշանակ, քահանան սեղանին թողնում է տնօրհնական պատկերով նշխար, որը պահվում է ալյուրի կամ ծավարեղենի մեջ՝*

*որպես տվյալ տան ունեցվածքի առատության, բերրիության – հաջողության նշան:*

Ս. Հարության տնօրհնեքի *ժամանակ կատարվում է օրհնության նույն կարգը, սակայն երգվում է Ներսես Լամբրոնացու «Այսօր յարեաւ ի մեռելոց» զատկական շարականը – ընթերցվում Մատթեոսի Ավետարանից հարուցյալ Քրիստոսի – Նրա աշակերտների՝ Գալիլիայում հանդիպման հատվածը (Մատթ., ԻԸ(28), 16-20):*

Նորակառույց տան օրհնության *ժամանակ երգվում է Ս. Սահակ Պարթ-ի՝ հոգեգալստյան «Այսօր երկնայինքն ուրախացան» շարականը – ընթերցվում Ղուկասի Ավետարանից Հիսուսի՝ Զակքեոս մաքսապետի տուն այցելելու հատվածը (Ղուկ., ԺԹ(19), 1-10):*

*Գրիգոր Տաթ-ացու բնորոշմամբ՝ տնօրհնեքի արարողությունը Ինքը՝ Հիսուս Քրիստոսն է հաստատել, երբ Զատկի երեկոյան փակ դռների միջով մտավ Վերնատուն – օրհնեց Իր աշակերտներին (տես՝ Հովհ., Ի(20), 19-20): Այսպիսով, տնօրհնեքի արարողությամբ հավատացյալների տները Ս. Ծննդյան խորհրդով վերածվում են Բեթղեհեմյան այրի, Ս. Հարության խորհրդով՝ Վերնատան – նորակառույց տան օրհնությամբ՝ փրկության արժանացած մաքսավոր Զակքեոսի տան, որովհետ- Տերն այցելեց այնտեղ: Տնօրհնեքի արարողությամբ Հայաստանյայց Ս. Եկեղեցին նա- արժ-ռրում է ընտանիքի նվիրականությունն ու կար-որությունը: Հիրավի, «Եթե Տերը տունը չշինի, իզուր են չարչարվում այն շինողները, եթե Տերը քաղաքը չպահպանի, իզուր են հսկում պահապանները նրա» (Սաղմ., ՃԻԶ(126), 1): «Բարձրյալին քեզ ապավեն դարձրիր: Չարիքը չի հասնի քեզ, – տանջանքները չեն մոտենա քո տան հարկին» (Սաղմ., Ղ, 9-10):*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Քրիստոսի Ծննդյան նախապատրաստությունը Հին Կտակարանի միջոցով: Մարդկության՝ աստվածադիր օրենքների զանցառման հետ–անքով բարոյազուրկ վիճակը – դրանից դուրս գալու համար նրա՝ սեփական ուժերով փրկվելու անկարողությունն ու Աստծու օգնության անհրաժեշտությունը:

-Ո՞վ է Մեսիան, Նրա մասին պատկերացումները հրեաների մոտ:

-Քրիստոսի Ծննդյան պատմությունը: Մոգերի երկրպագությունն ու նվերները, դրանց խորհուրդը: Բեթղեհեմյան մանուկները որպես Քրիստոսի համար զոհված առաջին նահատակներ – նրանց հիշատակը Հայ Եկեղեցում:

-Մեսիայի, Փրկչի մասին մարդկության պատկերացումների գլխիվայր շրջումը Քրիստոսի Ծննդով: Աստծու՝ մարդու հանդեպ սերը, ողորմածությունը – Հայր ու Փրկիչ լինելը:

-Աստծու Որդին, «Հիսուս Քրիստոս» անվան բացատրությունը:

-Քրիստոսը որպես Ճշմարիտ Լույս, այսինքն՝ անգիտության խավարում տառապող մարդկության համար ճշմարիտ աստվածճանաչողության գիտության Լույս:

-Ս. Ծնունդ, Աստվածհայտնություն, Մկրտություն:

-Նախապես Ս. Ծննդյան տոնը հունվարի 6-ին տոնելու կարգը այն դեկտեմբերի 25-ին տոնելու փոփոխության պատճառը: Հայ Եկեղեցու հավատարմությունը տոնը հունվարի 6-ին նշելու կարգին:

-Ճրագալույց, դրա բացատրությունը, երեկոյան ու առավոտյան ս. Պատարագ կատարելու խորհուրդը:

-Ջրօրհնեք, խորհուրդը, կատարման կարգը:

-Ննջեցյալների հիշատակի օր՝ մեռելոց:

-Տնօրհնեք, խորհուրդը, Հայ Եկեղեցում տնօրհնեքի արարողության երեք կարգերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Հիսուս Քրիստոսի Ծնունդը շրջադարձային այն դեպքն էր մարդկության պատմության մեջ, որի շնորհիվ մարդը հասկացավ իր՝ որտեղից գալը, կյանքի իմաստը – ուր գնալը – նրա՝ փակուղի մտած ընթացքը վերադարձավ իր Ճշմարիտ հուն: Այսպիսով մեղքի պատճառով դրախտից վտարված, տառապանքի ու մահվան դատապարտված մարդկությունը Քրիստոսի գալուստով մեղքերի թողություն – Սուրբ Հոգու շնորհներն ընդունելու ու կրելու կարողություն ստացավ, ստացավ փրկության կարելիություն:

Հայ ժողովուրդը, քրիստոնեությունը պետականորեն առաջինն ընդունելով, Ս. Ծննդյան ու Աստվածհայտնության տոնը բոլոր ժամանակներում (բացառությամբ խորհրդային պետության) նշել է նա– պետականորեն: Այսպես, Հայաստանի առաջին Հանրապետության պետական տոնակարգում ընդգրկված էր Ս. Ծննդյան տոնը (տե՛ս Հանրապետության տոն (մայիս): Դա պայմանավորված էր Հայ Եկեղեցի ու հայ պետություն միասնականությամբ, քանզի բոլոր ժամանակներում Եկեղեցի-պետություն կապի ամրությունը պայմանավորել է վերջինիս զորեղությունն ու բարգավաճումը: Իսկ պետականության բացակայությամբ Հայ Եկեղեցու ուսերին են ծանրացել ժողովրդի պահպանության բոլոր հոգսերը:

Քրիստոնեությունը ձ-ավորեց հայ մարդու կերպարը, ում համար մկրտված լինելն այլ-և նա- ազգային հատկանիշ էր: Հայ ժողովրդի մեջ մեռոնի սրբագործող զորության հանդեպ հավատն ու պատկառանքն այնքան մեծ է եղել, որ Մկրտության եկեղեցական խորհրդին զուգահեռ կատարվել են նա- ժողովրդական արարողություններ. օրինակ՝ մկրտության օրը երեխային հատուկ զգեստ են հագցրել, կամ՝ մկրտությունից հետո երեխային առաջին անգամ լողացնելը կատարվել է «մեռնահան անելու» հատուկ արարողությամբ: Եթե երեխան տղա է եղել՝ մեռոնից հանել են երեք, եթե աղջիկ՝ յոթ օր հետո, որպեսզի աղջիկն ամաչկոտ - համեստ լինի: Մեր ժողովրդի մոտ առանձնահատուկ վերաբերմունք է եղել նա- մեռնաջրի (որում լողացրել են երեխային) նկատմամբ՝ կապված դարձյալ նրանում մեռոնի առկայության հետ, - այժմ էլ անթույլատրելի է համարվում այն ցանկացած տեղ պարզապես թափելը, հնում լցրել են թոնիրը կամ օջախը՝ որպես սրբություն, իսկ այժմ՝ որ-է «անշառ» տեղ՝ ծառի տակ, ծաղիկների մեջ - այլն:

Ս. մեռոնը եղել - մնում է հայ ժողովրդի՝ պատմական յուրօրինակ ճակատագրով բաժան-բաժան եղած աշխարհասփյուռ տարբեր հատվածները մեկտեղելու, հոգ-որ միությամբ միաձուլելու հզոր ու անփոխարինելի գործոն:

Առաքել Սյունեցին մեռնօրհնությանը նվիրված քարոզում ս. մեռոնը նկատում է որպես Հիսուս Քրիստոսի խորհրդանշական պատկեր, իսկ նրանից տարածվող սրբազան բուրմունքը՝ Սուրբ Հոգու, Ով Իր անուշահոտությամբ հավատացյալին զարդարում է հոգ-որ առաքինություններով, որոնց՝ մարդու սրտում դրոշմը նախապայմանն է նրա աստվածանմանության:

Համաձայն հայոց ազգային մի ավանդության՝ ս. Թադեոս առաքյալն իր հետ Հայաստան է բերել նա-Հիսուս Քրիստոսի օրհնած յուղից (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Կ. Պոլիս, 1912, էջ 35): Ըստ մեկ այլ ավանդազրույցի՝ Մովսես մարգարեի պատրաստած անուշահոտ յուղը հրեաները տանում են ավետյաց երկիր – պահում Երուսաղեմի տաճարում: Վերջինիս կործանումից հետո Զաքարիա մարգարեի Եղիսաբեթ կինն այն թաքցնում է ժայռերից մեկում: Հետագայում այդ յուղով ժողովրդին մկրտում էր Հովհաննես Մկրտիչը, ում գլխատումից հետո յուղն անցնում է Մարիամ Մագդաղենացուն, ինչով – վերջինս օծում է Հիսուս Քրիստոսին: Հետագայում Թադեոս առաքյալն այն իր հետ բերում է Հայաստան – թաքցնում մի ծառի փչակում: Յուղի գտնվելու վայրը բազմաթիվ տարիներ հետո միայն տեսիլքով հայտնվում է ս. Գրիգոր Լուսավորչին («Էջմիածին», 1983, ԺԱ-ԺԲ, էջ 42):

Հայ պատմիչները հիշում են հայոց համար երկու նշանակալի ջրօրհնեքի արարողություններ: Ագաթանգեղոսի վկայությամբ՝ երբ ս. Գրիգոր Լուսավորիչը, գետում մկրտելով հայոց թագավորին, արքունիքն ու ժողովրդին, նրանց օծում է սրբության յուղով՝ գետի ջրերը ետ են դառնում – սաստիկ լույս է եր–ում՝ լուսավոր սյան նման ու նրա վրա՝ տերունական խաչի կերպարանքը (Ագաթանգեղոս, «Հայոց պատմություն», Եր–ան, 1983, էջ 465): Հայ պատմիչներից Արիստակես Լաստիվերցին իր «Պատմության» մեջ նկարագրում է հայոց պատմության մեջ ամենանշանավոր ջրօրհնեքի արարողությունը, որը կատարել է Պետրոս Ա Գետադարձ կաթողիկոսը (1019-1058 թթ.):

Համաձայն Լաստիվերցու՝ Բյուզանդիայի Վասիլ 2-րդ Բուլղարասպան կայսրը 1023 թ. հունվարի 6-ին՝

Հայ Եկեղեցու Աստվածհայտնության – Հույն Եկեղեցու՝ Մկրտության տոնի օրը, հրավիրում է Պետրոս Գետադարձ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայոց եկեղեցական կարգով ջրօրհնեքի արարողություն կատարելու Տրապիզոն գետակի վրա, որը սկիզբ է առնում Խաղտյաց լեռներից – Տրապիզոն քաղաքի մոտ թափվում Սևծովը: Միաժամանակ ջրօրհնեքի արարողություն պետք է կատարեին նաև հույն հոգ-որականները՝ իրենց Եկեղեցու կարգով: Կայսրը հայոց կաթողիկոսին – հայ հոգ-որականներին կանգնեցնում է գետակի ընթացքի վերին մասում՝ մտայնությամբ, որ հայոց ս. մյուռոնով օրհնված ջուրը ներքև թափվելով, միևնույն է, նորից կօրհնվի հույն հոգ-որականների կողմից: Սակայն երբ հայոց կաթողիկոսը ս. մյուռոնը լցնում է գետը, «հանկարծակի ճառագայթող լույսի ցնցուղներ դուրս ելան ջրից. այդ տեսան առհասարակ բոլորն էլ ու փառաբանեցին Աստծուն, – մեր հավատի զորությունը բարձրացավ» (Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան, 1971, էջ 10): Նույնը կրկնում է նաև Վարդան Արևելցին՝ նույն կերպ ներկայացնելով ջրի մեջ լույսի հզոր փայլատակումներն ու հավաքվածների հիացումը: Կիրակոս Գանձակեցի, Սամուել Անեցի, Սմբատ Կոռիկոսեցի սպարապետ պատմիչները, պատմելով ջրօրհնեքի այս արարողության մասին, ս. մյուռոնը ջուրը լցվելու պահին լույսի պայծառ ցոլքերի բռնկումների հետ նշում են նաև գետի՝ մի պահ կանգ առնելը – ընթացքին հակառակ գնալը, ինչի հետևանքով – հայոց կաթողիկոսին տրվում է Գետադարձ անունը:

Այսպիսով՝ հայ ժողովրդի համար Ս. Ծնունդը, Աստվածհայտնությունը – Մկրտությունը մշտապես եղել – մնում են ամենանվիրական տոներից:

## Հայոց բանակի օր

*1991 թ. անկախության հռչակումից կարճ ժամանակ անց Հայաստանի Հանրապետությունը ստանում է միջազգային ճանաչում: Հայաստանը ձեռնամուխ է լինում շինարարությանը պետական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, ինչպես նա– ռազմական բնագավառներում: Վերջինս կար–որվում էր այդ տարիներին Արցախում – Հայաստանի սահմաններում սաստկացած ռազմական գործողություններով, ինչով պայմանավորված՝ առաջնահերթ նշանակություն ուներ ազգային պետության անվտանգության – անկախության պահպանման հարցը: Դրա միակ երաշխիքը մարտունակ բանակի ստեղծումն էր:*

*Հայոց բանակի ստեղծումն ու պատմությունը անքակտելիորեն կապված են հայոց անկախ պետականության ստեղծման ու պատմության հետ, – երկուսի համար էլ պատմությունը սկսվում է 1988 թ. փետրվարով, որն Արցախյան շարժման, պետականության վերականգնման – ազգային բանակի ստեղծման սկիզբն էր: 1988 թ. փետրվարից մինչ– 1992 թ. հայ-ադրբեջանական ծայրաստիճան սրված հարաբերությունների պայմաններում Հայաստանի – Արցախի բնակչության անվտանգության ապահովման համար տարերայնորեն ստեղծվում էին երկրապահ-կամավորական զինաջոկատներ, որոնք հիմք դարձան հետագայում հայոց բանակի կազմավորման համար:*

*1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության Հռչակագրով իրավական – գործնական հեռանկարներ են բացվում ազգային բանակի ստեղծման համար: Արդեն սեպտեմբերին կազմավորվում է Եր–անի հատուկ գունդը, հինգ վաշտեր ձ–ավորվում են Հայաստանի տարբեր*

*շրջաններում՝ Արարատում, Գորիսում, Վարդենիսում, Իջ-անում, Մեղրիում: Իսկ 1991 թ. ՀՀ կառավարության որոշմամբ Նախարարների խորհրդին առընթեր ստեղծված Պաշտպանության պետական կոմիտեն հիմք է դառնում հետագայում ՀՀ պաշտպանության նախարարության ստեղծման համար: 1991 թ. դեկտեմբերի 5-ի ՀՀ նախագահի հրամանագրով պաշտպանության առաջին նախարար է նշանակվում Վազգեն Սարգսյանը, իսկ 1992 թ. հունվարի 28-ին կառավարությունն ընդունում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, որով փաստորեն ազդարարվում է հայոց ազգային բանակի ստեղծման մասին: Եվ կանգ չառնելով ոչ մի դժվարության ու հարվածների հանդեպ՝ ՀՀ պաշտպանության նախարարը հաստատակամորեն, իր համախոհների հետ, առաջ է տանում բանակաշինության գործընթացը:*

*Նորաստեղծ պաշտպանության նախարարության ենթակայությանն են հանձնվում ներքին գործերի նախարարության միլիցիայի պարեկա-պահակային, հատուկ նշանակության օպերատիվ, քաղաքացիական պաշտպանության գնդերը, ինչպես նա-՝ հանրապետական զինվորական կոմիսարիատը: 1992 թ. մայիսին ՀՀ պաշտպանության նախարարությունը հանրապետության տարածքում իրականացնում է առաջին զորակոչը՝ հիմք դնելով ժամկետային զինծառայությանը Հայաստանում: 1992-1993 թթ. երկրապահ-կամավորական զորաջոկատների - բանակ զորակոչվածների միավորումով ստեղծվում է լավ կազմակերպված, շարժունակ ու կարգապահ բանակ, որի կանոնավոր զորամիավորումները, զորատեսակները, սպայական կազմը, սպառազինությունն ու ռազմական տեխնիկան ձ-ավորվում*

*են խորհրդային բանակի հիմքի վրա՝ ոչ բռնի գրավման, այլ այդ սպառազինության օրինականորեն Հայաստանին հասնող չափաբաժնի՝ պայմանագրային հիմունքներով հատկացման միջոցով:*

*1992 թ. հունիսից 1994 թ. հունիս ժամանակաշրջանում մի կողմից՝ ընթանում էր բանակային կառուցվածքի ձ-ավորման, նրա իրավական ամրագրման գործընթացը, մյուս կողմից՝ Հայաստանը - Արցախը փաստորեն գտնվում էին չհայտարարված պատերազմի պայմաններում, - նորաստեղծ բանակային կազմավորումները մասնակցում էին այդ պարտադրված պատերազմական գործողություններին: Այս բարդ - դժվարին ժամանակահատվածում բանակի ստեղծման գործընթացում ամրագրվում է անհրաժեշտ իրավական դաշտը, ձ-ավորվում են ղեկավարման օղակները՝ գլխավոր շտաբով, ստեղծվում են թիկունքի - սպառազինության ծառայությունները, հիմնադրվում են զորատեսակներն ու մասնագիտացված զորամասերը, կազմավորվում են առաջին սահմանապահ զորամասերը, ձ-ավորվում են զորամասերի ստորաբաժանումները՝ դասակները, վաշտերը, գումարտակները - այլն: Միջոցներ են ձեռնարկվում Հայաստանում առկա ռազմարդյունաբերական համալիրի գիտատեխնիկական - տեխնոլոգիական բարձր մակարդակը պահպանելու - առավել զարգացնելու ուղղությամբ, շուտով աճում է բանակի թվաքանակը, հատուկ ուշադրություն է դարձվում նա- մարտական պատրաստականության բարձրացմանն ու կատարելագործմանը: Խորհրդային բանակի տարբեր զորամիավորումներում ծառայող հազարավոր հայ սպաներ վերադառնում են Հայաստան - լծվում հայրենիքի անվտանգության ապահովման ու բանակաշինության գործին:*

Հայոց նորաստեղծ բանակն արդեն 1992 թվականից տանում է իր առաջին հաղթանակները իսկական պատերազմի վերաճած – ահագնացող ծավալներով ռազմական գործողություններում Հայաստանի սահմաններում: Ադրբեջանական մարտական ուժերի – ռազմական տեխնիկայի, զենքի ու զինամթերքի գերակշռությունը չի խոչընդոտում հայկական բանակին, որը մինչ– 1994 թ. մայիս ամիսը մի շարք փայլուն հաղթանակներից հետո ստիպում է Ադրբեջանի իշխանություններին մայիսի 16-ին Հայաստանի հետ կնքել հրադադարի մասին համաձայնագիր:

1994 թվականի մայիսից Ադրբեջանի հետ հաստատված հրադադարի պայմաններում մինչ– այսօր շարունակվում է բանակաշինության գործընթացը: Այս ընթացքում, արդեն խաղաղ պայմաններում, երկրի իշխանությունները հնարավորություն ստացան ուշադրություն դարձնելու հատկապես բանակի ներքին խնդիրներին – աշխատանքներ տանելու ռազմապաշտպանական համակարգի ձ–ավորման, անհրաժեշտ ստորաբաժանումների ստեղծման, կադրային սպայական կազմի պատրաստման ու վերապատրաստման, ինչպես նա–՝ զորքերի մարտունակության բարձրացման, կարգապահության ամրապնդման – այլ խնդիրների լուծման ուղղությամբ: Կադրերի պատրաստության առաջնահերթ խնդիրների լուծման նպատակով ստեղծվում են ռազմաավիացիոն թռիչքատեխնիկական ուսումնարանը, որը հետագայում վերաճում է ռազմաավիացիոն ինստիտուտի, պաշտպանության նախարարության բարձրագույն զինվորական բազմաբնույթ հրամանատարական ուսումնարանը, որն այսօր Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ է, ինչպես նա–՝ Եր–անի Մխիթար Հերացու ան-

*վան պետական բժշկական համալսարանի ռազմաբժշկական ֆակուլտետը: Հայ սպաները պատրաստություն - վերապատրաստություն են ստանում նա- արտասահմանյան երկրներում՝ Ռուսաստանի Դաշնությունում, Հունաստանում - այլն, ինչպես նա-՝ գործում է սպաների որակավորման բարձրացման կենտրոնը: Զինված ուժերի կառուցվածքի հետագա կատարելագործման նպատակով մի քանի ուղղություններով ստեղծվել են բանակային զորամիավորումներ, որոնցում համախմբվել են համապատասխան տարածաշրջանների զորամասերը: Կոմպլեկտավորվում են կենտրոնական ապարատի վարչությունները, բաժիններն ու ծառայությունները, կազմավորվում են հրետանային, հակաօդային պաշտպանության, օդուժի զորատեսակները, հետախուզության, կապի, ինժեներական զորքերը:*

*Հայոց բանակն աստիճանաբար զինվում է ժամանակակից ռազմական տեխնիկայով, ձեռք է բերում սպառազինության նոր տեսակներ, ամրապնդում է իր նյութատեխնիկական բազան, այսօր արդեն հայկական բանակն ունի զենք-զինամթերքի, վառելիքաքսուկային նյութերի, սննդամթերքի - իրային ապահովության միջոցների զգալի պաշարներ: Ձեռք առնված այս - բազմաթիվ այլ միջոցառումների շնորհիվ հայկական բանակն աստիճանաբար դառնում է տարածաշրջանում հզոր ուժ - ամուր պատվարում անկախ Հայաստանի սահմանները:*

*Հայկական զինված ուժերի հիմնադրման առաջին իսկ օրերից դաշնակցային - գործընկերային հարաբերություններ են հաստատվել բարեկամ երկրների զինված ուժերի հետ: Առաջնահերթ նշանակություն ունի դաշնակցային հարաբերությունների հաստատումը*

*Ռուսաստանի Դաշնության հետ, պաշտպանության - անվտանգության ոլորտում հայ-ռուսական համագործակցությունը շարունակ զարգանում - ընդլայնվում է՝ ընդգրկելով կար-որ բոլոր ուղղություններն ու բնագավառները: Ընդլայնվում է ռազմական համագործակցությունը Հունաստանի - Չինաստանի, ինչպես նա-՝ գործուն են դառնում շփումները ԱՄՆ-ի հետ: Հարաբերություններ են հաստատվել նա- ՆԱՏՕ-ի հետ, 1994 թ. Հայաստանը միացել է ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրին, իսկ 1995 թվականից՝ Եվրաատլանտյան գործընկերության խորհրդին:*

*Հունվարի 28-ը, որպես Հայոց բանակի օր, պաշտոնապես առաջին անգամ նշվեց 2002 թ.:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Հայոց բանակի ստեղծման ու պատմության անքակտելի կապը հայոց անկախ պետականության ստեղծման ու պատմության հետ: Դրանց պատմության սկիզբը 1988 թ. փետրվարով՝ Արցախյան շարժման, պետականության վերականգնման - ազգային բանակի ստեղծման սկզբով:

-Երկրապահ-կամավորական ջոկատները որպես հայկական բանակի ստեղծման հիմք:

-1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության Հռչակագրի ընձեռած իրավական ու գործնական հնարավորությունները հայոց բանակի ստեղծման համար:

-1992 թ. հունվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության մասին» պատմական որոշումը, որով փաստորեն հիմք դրվեց հայոց բանակի ստեղծմանը:

-1992 թ. առաջին զորակոչը: Բանակաշինության գործընթացի առաջին քայլերը պատերազմական գործողությունների պայմաններում:

-1992 թ. առաջին հաջողություններից մինչ– 1994 թ. փայլուն հաղթանակները – մայիսի 16-ի զինադադարը:

-Բանակաշինության գործընթացը հրադադարի պայմաններում: Դաշնակցային – գործընկերային հարաբերությունները բարեկամ երկրների զինված ուժերի հետ:

-Պաշտոնապես առաջին անգամ Հայոց բանակի օրը 2002 թ. նշումը:

-Հայոց բանկը որպես տարածաշրջանում հզոր ռազմական ուժ:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Յուրաքանչյուր պետության անվտանգության ու անկախության երաշխիքը հզոր ու կայուն բանակի առկայությունն է: Եվ խաղաղության ձգտող ժողովուրդն իր զինվորի համար սիրող ու հոգ տանող ծնող է: Ինչպես – մյուս ժողովուրդները, հայերը նույնպես ունեցել են իրենց պետությունը թշնամիներից պատվարող զորեղ բանակ, որը պատմության տարբեր ժամանակահատվածներում պաշտպանել ու ամուր պատվարել հայրենյաց սահմանները:

Դարեր շարունակ պետականությունից զուրկ հայ ժողովրդի համար զինվորի կերպարը մշտապես կապված է եղել հայրենիքի կերպարի հետ՝ որպես վերջինիս անվտանգ ու ապահով, անկախ, խաղաղ, ամբողջական ու հզոր ապագայի երաշխիք: Եվ Հայոց բանակի օրը տոն է ոչ միայն զինվորականների, այլ– ողջ հայ ժողովրդի համար, որովհետ– վերջինս լավ գիտի, որ այն երկրում, որ-

տեղ բանակն ու ժողովուրդը հավատում, վստահում են միմյանց, որտեղ «սուրբ կրոն, ազգ միաբան, ազատ կամքով ու խղճով»[19] համախումբ են, ապահովված է մշտատ– խաղաղ ապագա: Հայոց բանակը ծնունդ առավ Արցախյան հերոսամարտերի բովում՝ շարունակություն տալով Ավարայրների, Սարդարապատների, Բաշ-Ապարանների, Երկրորդ համաշխարհայինի ու Շուշիի փառավոր հաղթանակներին: Հայ զինվորի հայրենապաշտության, հավատի ու սիրո հրաշալի միասնությունը ծնունդ տվեց մեր նորանկախ պետականությանը՝ ս. Վարդանի պատգամով՝ երբեք «արիության ու քաջությանը վատություն չխառնելով»:

[19] Սմբատ Շահազիզի բանաստեղծությունից:

ՓԵՏՐՎԱՐ

## Պահք, պահքի տեսակները, Առաջավորաց պահք

*Պահքը կամ պասը հրաժարումն է որոշակի կերակուրից՝ հանուն հոգու զորացման: Աստված պահք սահմանեց մարդու համար դեռ-ս դրախտում. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող եք ուտել, բայց բարու - չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետայն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք» (Ծննդ., Բ, 16): Սակայն մարդը անհնազանդ գտնվեց, - կարիք ունի պահեցողության, քանի որ մարդկային՝ ադամական մեղավոր մեր վիճակը հաղթահարելու, նորոգվելու զորավոր միջոց է պահքը:*

*Համաձայն Աստվածաշնչի, պահեցողությունը մարդկային մեղավոր վիճակի գիտակցությունից բխող ցավի, տխրության ու սգի - ինքնազրկանքի շրջան է, որն արտահայտվում է որոշ ժամանակ ուտելուց, խմելուց, ինչպես նա- հաճույքներից հրաժարվելով: Առաջնային - կար-որ է հատկապես պահեցողության կրոնական ապրումը: Պահքից անբաժան են աղոթքը - ապաշխարանքը. «Բարի են աղոթքները՝ պահեցողություններով, ողորմություններով - արդարություններով» (Տոբիթ, ԺԲ(12), 8): Պահքի ընթացքում հանձնարարվում է հրաժարվել կենդանական ծագում ունեցող կերակուրներից - սնվել միայն բուսական կերակուրներով, բայց մանավանդ՝ ողորմած գտնվելով, ներողամիտ լինելով, բարի գործեր կատարելով - մեղքից հեռու մնալով, քանզի կերակրի պահքի պատվիրան տարվա բոլոր օրերի համար չկա, սակայն մեղքերից հեռու մնալու պատվիրան յուրաքանչյուր օրվա համար է տրված:*

*Նոր Կտակարանում նույնպես հիմնական տեղ է հատկացված պահքին: «Լեռան քարոզում» Հիսուսը սովորեցնում է, թե ինչ ոգով պետք է պահք կատարել. «Երբ ծոմ պահեք, տրտմերես մի՛ լինեք կեղծավորների նման, որոնք իրենց երեսները այլանդակում են, որպեսզի մարդկանց այնպես երևան, թե ծոմ են պահում. ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը: Այլ երբ դու ծոմ պահես, օծի՛ր քո գլուխը – լվա՛ քո երեսը, որպեսզի չերևաս մարդկանց որպես ծոմ պահող, այլ քո Հորը՝ գաղտնաբար, – քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ» (Մատթ., Զ, 16–18): Պահքը զորացնում է հոգին՝ ընդդեմ մարդկային թուլությունների ու մեղքի – մանավանդ՝ անսանձ ցանկությունների: Այսպիսով, պահքի նպատակը ապաշխարությունն է՝ մեղքի կապանքներից, հոգեկան ծուլությունից ազատվելու ճիգը, նորոգությունը մարդու հոգ-որ ուժերի՝ միշտ բարին խորհելու ու բարին գործելու: Պահքի օրերը հոգ-որ դաստիարակության ու կրթության, գործած հանցանքների, սխալների ու մեղքերի քավության ու թողության ժամանակահատված են: Պահքի ընթացքում զղջումը, աղոթքն ու ապաշխարությունը պայմաններ են ստեղծում, որպեսզի պահեցողի կյանքում գործել սկսի Աստծու ապաքինող, մխիթարող ու քավող զորությունը, Աստծու օրհնությունը: «...թեպետ– մեր այս արտաքին մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդը նորոգվում է օրըստօրե. որովհետ– մեր թեթ– նեղության առժամանակյա հաճախանքը մեր մեջ առաջ է բերում հավիտենական փառք, որ գերազանցում է ամեն ինչ» (Բ Կորնթ., Դ, 16–17):*

*Զուտ առողջապահության տեսակետից՝ պահքի ընթացքում կենդանական սնունդից, ճարպային ուտելիքներից հրաժարումը մարդկային օրգանիզմի համար*

*ոչ միայն օգտակար, այլ նա– որոշ հիվանդությունների դեպքում կանխարգելող ու բուժիչ նշանակություն ունեն: Այսպիսով, պահքի օրեր սահմանելով՝ Եկեղեցին հոգում է իր հավատացյալի նախ – առաջ՝ հոգ–որ, բայց նա–՝ մարմնական առողջության մասին:*

*Հայաստանյայց Ս. Եկեղեցում պահքի օրերը կարելի է ներկայացնել որպես՝* օրական պահք, շաբաթապահք, նավակատիքի պահք, Առաջավորաց պահք – Քառասնօրյա կամ Մեծ պահք*:*

ՕՐԱԿԱՆ ՊԱՀՔԻ *օրեր են սահմանված ընդհանրապես յուրաքանչյուր շաբաթվա չորեքշաբթի – ուրբաթ օրերը՝ ըստ առաքելական կանոնների: Չորեքշաբթին՝ ի հիշատակ Քրիստոսի մատնության, ուրբաթ՝ ի հիշատակ Նրա չարչարանքների*[20]*:*

*Քրիստոնեության վաղ շրջանում Ս. Ծննդյան տոնի համար, ինչպես այժմ Ս. Հարության տոնի պարագայում է, սահմանված էր պահքի երկարատ– շրջան, որը տ–ում էր 50 օր, կոչվում էր* ՀԻՍՆԱԿ *– սկսվում էր Ս. Ծննդյան տոնը նախորդող 50-րդ օրվա մերձավոր երկուշաբթի օրը: Այժմ 50-օրյա այդ շրջանը բաժանված է երեք* ՇԱԲԱԹԱՊԱՀՔԵՐԻ *՝ երկու շաբաթների ժամանակամիջոցներով միմյանցից առանձնացված: Շաբաթապահքերից առաջինն սկսվում է հիսնակի՝ Ս. Ծննդյան տոնը նախորդող 50-րդ օրվա մերձավոր երկուշաբթի օրը, երկրորդը Ս. Հակոբ Մծբնացի Հայրապետի տոնը նախորդող – երրորդը Ս. Ծննդյան տոնը նախորդող շաբաթապահքերն են, որոնք տ–ում են մեկ շաբաթ: Ս. Ծննդյան տոնի շաբաթապահքը սկսվում է դեկտեմբերի 30-ին:*

---

20 Կանոնագիրք Հայոց, Սահմանք և կանոնք զոր եդին աշակերտքն Քրիստոսի Եկեղեցւոյ սրբոյ յետ վերանալոյ Տեառն, ԼԴ, 1964, հ. Ա, էջ 30:

ՆԱՎԱԿԱՏԻՔԻ ՊԱՀՔԵՐԸ *տաղավար տոների համար սահմանված պահքերն են. Աստվածհայտնության - Հարության տոների ութական, Պայծառակերպության, ս. Աստվածածնի վերափոխման - Խաչվերացի տոների հնգական օրերը:*

ՄԵԾ ՊԱՀՔԸ *հիշատակությունն է մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի՝ անապատում քառասնօրյա ծոմապահության - տ-ում է Բուն բարեկենդանից մինչ- Ս. Զատիկ:*

ԱՌԱՋԱՎՈՐԱՑԸ *ս. Գրիգոր Լուսավորչի սահմանած առաջին պահքն է: Խոր վիրապից դուրս գալուց հետո երբ ս. Գրիգորը գնում է հայոց այն ժամանակվա մայրաքաղաք Վաղարշապատ, նրան ընդառաջ են գալիս հայոց Տրդատ թագավորը, արքունիքն ու ժողովուրդը - իրենց մեղքերին թողություն հայցում, քանի որ քրիստոնյա կույսերին սպանելուց հետո տառապում էին մոլագարությամբ: Ս. Գրիգորը 60 օր քարոզում է մարդկանց Ավետարանի խոսքը, բացատրում Հին - Նոր Կտակարանների ճշմարտությունները ու ապաշխարության համար սահմանում հնգօրյա պահք - այնուհետ- Արածանիի ջրերում մկրտում է Տրդատ արքային, Աշխեն թագուհուն, Խոսրովիդուխտ արքայաքրոջը, ողջ արքունիքը, զորքն ու բազմահազար ժողովրդին, 301 թ. Հայաստանը դառնում է առաջին քրիստոնյա պետությունը:*

*Այս պահքն այսօր էլ պահպանվում է Հայաստանյայց Ս. Եկեղեցում - կոչվում «Առաջավորաց»: Պահքը այդպես է կոչվում առաջինը կամ Մեծ պահքի առաջընթացը լինելու համար:*

*Առաջավորաց պահքը նա- Ադամի անկման խորհուրդն ունի, որովհետ- հիշատակն է նա- դրախտում Աստծու կողմից սահմանված առաջին պահքի:*

*Առաջավորաց պահքը հատուկ է միայն Հայաստանյայց Ս. Եկեղեցուն: Այն նախորդում է ս. Սարգիս զորավարի տոնին, որը նշվում է Առաջավորաց պահքի շաբաթ օրը - այդ պատճառով հաճախ շփոթվում է այդ տոնի հետ - թյուրիմացաբար կոչվում ս. Սարգսի պահք: Հայաստանյայց Ս. Եկեղեցու կանոնով սրբերի տոների համար պահք չի սահմանված, հետ-աբար ս. Սարգսի տոնը չի կարող պահք ունենալ:*

*Ինչպես - մյուս բոլոր պահքերի դեպքում, Առաջավորաց պահքին նախորդող կիրակի օրը բարեկենդան է:*

*Առաջավորաց պահքը սկսվում է Բուն բարեկենդանի կիրակիից՝ 3 - Ս. Զատկից տասը շաբաթ առաջ հանդիպած կիրակիի հաջորդ երկուշաբթի օրը - տ-ում հինգ օր:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ի՞նչ է պահքը:

-Պահքի սահմանումը Աստծու կողմից դեռ-ս դրախտում:

-Մեղքից հրաժարումը - ապաշխարությունը որպես պահքի նպատակ:

-Պահքը որպես հոգ-որ դաստիարակության միջոց, ինչպես նա- առողջարար մարմնի համար:

-Պահքի տեսակները:

-Առաջավորաց պահք:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Պահքը, կենդանական սննդից հրաժարում լինելով հանդերձ, զուտ առողջապահական սննդակարգ կամ դիետա չէ, որոնք կիրառում են որոշ հիվանդությունների դեպքում կամ նիհարել ցանկանալիս: Պահքը

նախ – առաջ մեղքերի գիտակցման, զղջումի – ապաշխարության մի շրջան է, որը դրս–որվում է աղոթելով ու ինքնազրկումի որոշակի պայմաններով: Այս ամենով հանդերձ՝ պահքը ինքնամաքրումի ու հոգ–որ դաստիարակության լավագույն միջոց է:

Բարսեղ Կեսարացու բնորոշմամբ՝ «Պահքը դրախտում օրինադրվեց – հասակակից է մարդկությանը»: Այսինքն՝ մարդկությանը վաղնջական ժամանակներից է հայտնի պահքի բուժիչ ազդեցությունը թե՛ հոգու – թե՛ մարմնի վրա:

Պահքի կար–որությունը մարդու համար այնքան մեծ է համարվել, որ այն դարձել է եկեղեցական ժողովների նյութ, – դրա համար մշակվել են որոշակի կանոններ, օրինակ, Առաքելական 34 – 85 կանոններում, Լավոդիկեի 365 թ., Դվինի 555 թ. ժողովներում, ինչպես նա- ս. Հովհան Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսի հաստատած կանոններում:

Հայ Եկեղեցու օրացույցում տարվա 158 օրերը պահքի օրեր են, որոնցից 48-ը Մեծ պահքինն են, մնացած օրերը հավասարապես կիսվում են 11 շաբաթապահքերի – չորեքշաբթի ու ուրբաթ օրերի պահքերի վրա:

Պահքի հետ կապված՝ Հայաստանի տարբեր շրջաններում ժամանակի ընթացքում ձ–ավորվել են տարբեր սովորություններ – սահմանվել կերակուրներ: Օրինակ՝ հայ կանայք չորեքշաբթի – ուրբաթ օրերի պահքերի նախօրյակին՝ երեկոյան, հրաժարվել են որ–է աշխատանք կատարելուց՝ հավատալով, որ չորեքշաբթի օրվա աշխատանքը «բարաքյաթ» չի ունենա, իսկ ուրբաթ օրվա աշխատելու հետ–անքով կարող են այր-

վել, կրակի բաժին դառնալ կայքն ու հագուստները[21]: Իսկ Առաջավորաց պահքը ունի նա- իր նվիրական կերակուրը՝ փոխինդը, որվ լուծվում է պահքը:

### Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի եւ նրան հավատարիմ 14 զինվորների տոն

Երիտասարդների օրհնության օր

*Ս. Սարգիսը հայոց մեջ սիրելի – ժողովրդականություն վայելող սրբերից է: Ըստ «Հայսմավուրքների», ս. Սարգիսն ազգությամբ «հոռոմ» էր՝ Կեսարիայից, Հռոմեական կայսրության նշանավոր զորավարներից մեկը: Կոստանդիանոս Մեծ (305ՎԵ337 թթ.) կայսեր կողմից նա ստրատելատ ու իշխան էր կարգված Կապադովկիայում: Մանկուց ծանոթ լինելով քրիստոնեությանը՝ շնորհաշատ զորավարը խոսքով ու իր առաքինի օրինակով շատերին էր առաջնորդել դեպի Քրիստոսի Ավետարանը: Քրիստոնեությունը ազատորեն դավանել թույլատրած Կոստանդիանոս կայսեր օրոք նա կառուցում էր եկեղեցիներ, օգնում աղքատներին ու կարոտյալներին: Շարականագիրը ս. Սարգսին անվանում է «երագահաս»՝ արագ օգնության հասնող: Զորավոր հավատի համար Աստված հաջողությամբ էր պսակում նրա բոլոր ձեռնարկումները:*

*Գալով իշխանության՝ Հուլիանոս Ուրացող կայսրը (361ՎԵ363 թթ.) հալածանքներ է սկսում քրիստոնյաների դեմ, որոնց ընթացքում նահատակվում են բազմաթիվ մարդիկ, շատերն էլ ստիպված հեռանում են կայսրությունից: Հեռանում է նա- Սարգիս զորավարը*

[21] Արտակ Արքեպիսկոպոս Մանուկեան, «Հայ Եկեղեցու տօները», Տպարան «Նայիրի», Թեհրան, 1984:

*որդու՝ Մարտիրոսի հետ: Նրանք անցնում են Հայաստան, որտեղ մնում են կարճ ժամանակ՝ ընդունվելով հայոց Տիրան (338ՎՆ350 թթ.) թագավորի կողմից: Հայոց թագավորը, սակայն, անհանգստանում էր Հուլիանոս կայսեր դժգոհությունից – խորհուրդ է տալիս Սարգիս զորավարին անցնել Պարսկաստան: Վերջինս ծառայության է մտնում Շապուհ Բ (309ՎՆ379 թթ.) արքայի մոտ – շուտով մեծ համբավ ձեռք բերում իբր– քաջ ու գիտակ զորավար: Իր ռազմական հաջողություններով նա աչքի է ընկնում նա– Հուլիանոսի դեմ պատերազմում – դառնում Շապուհ արքայի սիրելին: Սակայն Պարսկաստանում –ս Սարգիս զորավարը շարունակում էր լինել հավատարիմ հետ–որդը Քրիստոսի՝ ուսուցանելով մարդկանց – օգնելով նեղյալներին: Պարսից բանակի շատ զորականներ նրա քարոզության շնորհիվ դառնում են քրիստոնյաներ: Տեսնելով Սարգսի հեղինակությունը՝ արքայի մոտ ամբաստանում են նրան՝ իբր միաբանած հռոմեացիների հետ, դավաճանում է Շապուհին: Արքայի հրամանով Սարգիսը որդու – իրեն հավատարիմ զորականների հետ ներկայանում է նրան: Որոշ ժամանակ անց, կուռքերի տոնի օրը, Շապուհը նրան – որդուն հրամայում է տաճարում զոհ մատուցել ատրուշանում վառվող կրակին – խնկարկել կուռքերի տասներկու արձանների առաջ: Սակայն Սարգիսն անվարան մերժում է՝ պատասխանելով, որ ինքը հավատում է միակ ճշմարիտ Աստծուն՝ Սուրբ Երրորդությանը, Ով Արարիչն ու Տերն է ամենի – ամենայնի, հետ–աբար, կրակը պաշտել որպես Աստծու չի կարող, այլ, որպես հողեղեն մարդ, կարող է ոչնչացնել այն: Եվ խոսքը գործի վերածելով՝ կործանում է բագինն ու հանգցնում կրակը: Մոլեգնած մոգերը հարձակվում են Սարգսի – նրա որդու վրա: Մարտիրոսը հարվածնե-*

*րից նահատակվում է, - նրա անունը այսուհետ դառնում է նահատակության հոմանիշ: Շապուհը հույս ուներ, որ Սարգիսը հետ կկանգնի քրիստոնեական հավատից - հրամայում է նրան բանտ նետել, սակայն տեսնելով վերջինիս հաստատակամությունն ու աներերությունը՝ գլխատման հրաման է արձակում: Կառափնարանում Սարգիսն աղոթում է Աստծուն - խնդրում, որ ովքեր նեղության պահին հիշեն իր անունը - իր նահատակության հիշատակը կատարեն ուխտով, պահքով ու պատարագով՝ Աստված շնորհի նրանց իրենց խնդրածը: Աղոթքի պահին երկնքից հրեշտակ է իջնում՝ ձեռքում լուսաշող պսակ, - մի ձայն երկինք է հրավիրում սրբին, իսկ գլխատելուց հետո նրա մարմնին լույս է իջնում: Դրան ականատես 14 պարսիկ զորականները, ովքեր քրիստոնյա էին դարձել ս. Սարգսի քարոզության շնորհիվ, ավելի են զորանում իրենց հավատի մեջ - նույնպես ընդունում նահատակության պսակը: Քրիստոնյաները, օգտվելով, որ Շապուհը զբաղված է պատերազմով, վերցնում են նահատակների մարմինները - թաղում: Ըստ հայոց «Հայսմավուրքների», ս. Սարգիսը, Մարտիրոսը - 14 զինվորները նահատակվել են Պարսկաստանի Մազանդարան նահանգի Դաղման քաղաքի - թաղվել Համիան քաղաքի մոտ: Հետագայում ս. Մեսրոպ Մաշտոցը ս. Սարգսի մասունքները տեղափոխում է Հայաստան, ամփոփում Կարբի գյուղում (Աշտարակի մոտ) - այստեղ կառուցում մեծ եկեղեցի: Սրբի ատամներից մեկը ս. Մեսրոպ Մաշտոցը տեղադրում է խաչափայտի մեջ - օծում այն: Հետագայում խաչափայտը իր հետ տանում է Վրաստան - կանգնեցնում Գագա բլրի վրա, որտեղ այն գործում է բազմաթիվ հրաշագործություններ - կատարում բժշկություններ:*

*Ս. Սարգսի՝ «Ամենասուրբ Երրորդության ընտրյալ - հավատարիմ ծառայի» հանդեպ հայ ժողովրդի առանձնահատուկ սերը արտահայտվում է նա- նրա մասին հյուսված, նրան մեծարող ավանդություններով: Մեր ժողովուրդը սրբի կերպարում խտացրել է քաջության, անձնազոհության, արդարության մարտիկի իր պատկերացումը: Հայկական մի շարք գավառներում հավատում էին, որ սպիտակ ձի հեծած Սուրբ Սարգիսը ութ օր կռվում է թշնամիների դեմ, իսկ վերջին օրը, երբ ձեռքը գրպանն է տանում, տեսնում է, որ պաշար վերցրած աղանձը իր կրած նեղություններից հարվել, փոխինդ է դարձել: Այն լցնում է բերանը եւ կռիվը շարունակում: Սրանով էլ բացատրվում է ս. Սարգսի տոնի նախորդ ուրբաթ օրը փոխինդ շաղախելու - նույն երեկոյան դրանով թաթախվելու ու պահքը լուծելու սովորությունը՝ չնայած որ Առաջավորաց հնգօրյա պահքը, որը նախորդում է տոնին, չի կապվում Սուրբ Սարգսի տոնի հետ: Եվ, ճիշտ է, ընդհանրապես սրբերի տոները պահք չունեն, սակայն հավատացյալի կամքից է կախված պահք պահելը կամ չպահելը: Օրինակ՝ ում անունը որ-է սրբի անուն է, նա կարող է տվյալ սրբի տոնից առաջ պահք պահել:*

*Ժողովրդական մտածողության մեջ ս. Սարգիսը չի զոհվել, այլ լույս է դարձել - արագահաս է ինչպես լույս: Բոլոր նեղյալներին, գերիներին, որբերին, ճամփորդներին, վշտահարներին «հարեհաս» անվանված սուրբը օգնում է Աստծու առաջ իր բարեխոսությամբ: Շատ գավառներում հավատում էին, որ սուրբը ուրբաթ երեկոյան - գիշերը այցելում է մարդկանց տները: Հաճախ տան տարեց կանայք սկուտեղի վրա փոխինդ էին մաղում, դնում դռան ետ-ում, կողքը մոմ կամ կանթեղ վառում՝ հուսալով, որ սուրբ Սարգիսը կայցելի իրենց -*

*նրա ձիու ոտնահետքը կմնա փոխինդի վրա: Շաբաթ առավոտյան եկեղեցում պատարագի մասնակցելուց հետո շաղախում – ուտում էին այդ փոխինդը:*

*Սակայն առավելաբար ս. Սարգիսը ժողովրդի մեջ դիտվում է զինվորականների – երիտասարդների հովանավոր ու նրանց նպատակներն իրականացնող սուրբ: Տոնի նախորդ ուրբաթ երեկոյան, համաձայն ժողովրդական սովորության, երիտասարդները աղի բլիթ են ուտում, որպեսզի սրբի բարեխոսությամբ երազում տեսնեն իրենց ջուր տվող կյանքի ապագա ընկերոջը: Այս ամենից առավել, անշուշտ, էականը – կար-որը աղոթքով ս. Սարգսի՝ Տիրոջ առաջ մեզ համար արված բարեխոսությանն ապավինելն է:*

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ ու հրահանգով ս. Սարգսի տոնը հռչակվել է որպես* Երիտասարդների օրհնության օր*: Այդ օրը պարմանիներն ու պարմանուհիները գնում են եկեղեցի, մասնակցում ս. Պատարագին՝ աղոթելով ու խնդրելով ս. Սարգսի բարեխոսությունը, որից հետո ստանում են քահանայի օրհնությունը՝ միշտ ապես Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի պահպանության տակ լինելու, Նրա սուրբ կամքի համաձայն ընթանալու – Հայ Եկեղեցու հավատարիմ զավակը լինելու:*

*Ս. Սարգսի, Մարտիրոսի – 14 զինվորների նահատակությունը, ըստ «Հայսմավուրքների», տեղի է ունեցել հունվարի 31-ին, իսկ ս. Սարգսի տոնը հայոց Տոնացույցով նշվում է Առաջավորաց պահքի շաբաթ օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ո՞վ էր ս. Սարգիսը:

-Նրա անսահման հավատը ճշմարիտ Աստու հանդեպ:

-Ո՞վ էր Մարտիրոսը, նրա նահատակությունը: «Մարտիրոս» անունը որպես նահատակության հոմանիշ:

-Կառափնարանում ս. Սարգսի աղոթքը Աստծուն՝ նեղության մեջ իր բարեխոսությանը դիմողների խնդրանքը կատարելու:

-Ս. Մեսրոպ Մաշտոցի կողմից ս. Սարգսի մասունքների տեղափոխումն ու ամփոփումը Կարբի գյուղում – եկեղեցու կառուցումը:

-Հայոց մեջ տարածված բազմաթիվ ավանդազրույցները ս. Սարգսի մասին՝ որպես ապացույց նրա՝ հայ ժողովրդի կողմից սիրված լինելու: Տոնի օրվա հետ կապված ժողովրդական սովորությունները:

-Ս. Սարգիսը որպես երիտասարդների ու զինվորականների հովանավոր սուրբ: Ս. Սարգսի տոնի օրը Հայ Եկեղեցու կողմից որպես Երիտասարդների օրհնության օր հռչակելու մասին: Աստծու առաջ սրբի բարեխոսությանը աղոթքով դիմելու կար–որությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ս. Սարգսի անհաղթ ու քաջասիրտ ռազմիկի մեծ հռչակին գերազանցում էր նրա գթասիրտ քրիստոնյայի առավել մեծ համբավը, ինչի դրս–որումներից էր իր ունեցվածքը կարոտյալներին բաժանելը:

Ս. Սարգիսը թե– ծագումով հռոմեացի էր, սակայն մեր Եկեցու սրբերի դասին է պատկանում – շատ սիրված է հայ ժողովրդի կողմից: Պատճառը նրա աներեր հավատն է Աստծու հանդեպ – իր կյանքի զոհաբերումը հանուն Աստծու ու հավատի, ինչը մեր ժողովրդի համար կյանքի կերպ էր – բազմիցս ապացուցվել է նրա պատմական դժվարին ուղու ընթացքում:

Ս. Սարգսի բարեխոսությանը դիմելու - նրանից արագ օգնություն ստանալու հավատը հայերի շրջանում այնքան մեծ է եղել, որ նրա բարեխոսությանն են դիմել -՛ ճանապարհին փորձանքի հանդիպածներն ու բքի մեջ ընկածները, -՛ երտասարդ սիրահարները, -՛ զորականները, բոլորը, ովքեր նեղության ժամին մշտապես հիշել են ս. Սարգսի, նրա որդի Մարտիրոսի ու նրա հավատարիմ զինակիցների կրած ծանր փորձությունները ու հալածանքները: Ովքեր իրենց անսասան հավատի ուժով դիմացել ու տարել են դրանք, կյանքը զոհել, սակայն երբեք չեն երկնչել իրենց հավատից - չեն երկմտել Աստծու հանդեպ վստահությունից:

Տյառնընդառաջ կամ՝ քառասուն օրական
Հիսուսի գալուստը տաճար
Նորապսակների օրհնության օր

*Տյառնընդառաջի տոնը Հայ Առաքելական - Ար-ելյան Եկեղեցիները համարում են տերունական տոն, որովհետ- այն հիշատակությունն է քառասուն օրական Հիսուսի՝ տաճար բերվելու:*

*Քրիստոսի Ծնունդից քառասուն օր հետո, համաձայն առաջնածինների - մայրերի մաքրագործման մասին հրեական օրենքի, Հովսեփն ու Մարիամը Նրան տանում են Երուսաղեմի տաճար՝ Աստծուն ներկայացնելու (Ղուկ., Բ, 22): Ըստ մովսիսական օրենքի՝ ծննդաբերությունից հետո կանայք որոշ ժամանակ համարվում էին անմաքուր: Եթե նորածինը տղա էր, ապա մաքրության համար սահմանված էր 40, իսկ եթե աղջիկ՝ 80 օր: Այս օրերը լրանալուց հետո նորածնի ծնողները գնում էին տաճար՝ իրենց հետ տանելով մեկ տարեկան գառ ողջակեզի - մի զույգ աղավնի կամ տատ-*

*րակ՝ մեղքերի քավության համար: Աղքատ ընտանիքները, ինչպիսին Հիսուսի ընտանիքն էր, կարող էին ընծայաբերել երկու տատրակ կամ աղավնու երկու ձագ՝ մեկը ողջակեզի - մյուսը՝ մեղքերի քավության համար (Ղ-տ., ԺԲ(12):*

*Մարիամի - Հիսուսի համար տաճար գալը զուտ օրենքի գործադրություն էր: Նրանք ենթակա չէին օրենքին: Ս. Աստվածածնի պարագայում այս օրենքն անիմաստ էր, քանի որ նրանից Ծնվածը՝ Հիսուսը, հղացվել էր Սուրբ Հոգու զորությամբ: Ս. Աստվածածինը չուներ սրբագործվելու խորհրդի կատարման անհրաժեշտություն, ինչպես սովորական կանայք: Հիսուսը, Աստծու Միածին Որդին, Հոր անդրանիկ ծնունդը ժամանակից դուրս՝ հավիտյանս հավիտենից, - Մարիամի անդրանիկ ծնունդը ժամանակի մեջ, տաճար էր գնում Իր իսկ սահմանած օրենքը կատարելու (ինչպես - թլփատության դեպքում էր)՝ դրանով հաստատելով Իր ճշմարիտ մարդեղությունը - օրինակ տալով հնազանդության ու խոնարհության, հաստատելով օրինավորության անհրաժեշտությունը - մերժելով օրինազանցությունը:*

*Սրբազան ավանդության համաձայն՝ երբ Հիսուսն ու Մարիամը մոտենում են տաճարին, ար-ելյան դուռը, որն Աստծու հրամանով փակ էր, մեծ դղրդյունով բացվում է: Համաձայն Եզեկիելի մարգարեության՝ «այդ դուռը փակ է մնալու ու չի բացվելու, նրանով ոչ ոք չի անցնելու, որպեսզի Իսրայելի Տեր Աստվածը մտնի այդտեղով... Նա մտնելու է դռան կամարի տակի ճանապարհով - նույն տեղով էլ դուրս է գալու» (Եզեկիել, ԽԴ(44), 1-3): Երուսաղեմի բնակիչները ջահերով ու ճրագներով շտապում են տեսնելու տաճար Եկողին՝ միմյանց ձայն տալով. «Տերն անցավ այս դռնով»: Տեղ*

*հասնելով՝ նրանք տեսնում են մանուկ Հիսուսին՝ ծնողների հետ:*

*Վերջիններս մտնում են տաճար, որտեղ նրանց ընդառաջ է գալիս Սիմեոն ծերունին: Ավետարանը հայտնում է, որ նա «արդար ու աստվածավախ էր» (Ղուկ., Բ, 25): Իսկ համաձայն ավանդության՝ նա եղել է այն 72 թարգմանիչ դպիրներից մեկը, ովքեր Եգիպտոսի Պտղոմեոս II (Ք. ա. 285-247 թթ.) թագավորի նախաձեռնությամբ Ալեքսանդրիայում եբրայերենից հունարեն են թարգմանում Հին Կտակարանի գրքերը: Ըստ թարգմանիչների թվի՝ անգերազանցելի այս թարգմանությունը կոչվում է «Յոթանասնից»:*

*Թարգմանական աշխատանքների ժամանակ Սիմեոնը Եսայու գրքում հանդիպում է «Ահա կույսը պիտի հղանա ու որդի ծնի» (Եսայի, Է, 14) նախադասությանը – տարակուսելով, որ դա սխալմունք է, ու ոչ ոք դրան չի հավատա, ջնջում է այն: Սակայն դրա շուրջ երկար մտորելուց – նիրհելուց հետո արթնանում – տեսնում է իր ջնջած տողերը նորից ոսկե տառերով նույն տեղում գրված: Սիմեոնը փառաբանում է Աստծուն – երանի տալիս նրանց, ովքեր պիտի տեսնեին Կուսածին Մանկանը – գրկեին Նրան: Աստծուն տեսնելու այդ անմար փափագի համար Աստծու Սուրբ Հոգին նրան խոստանում է, որ նա մահ չի տեսնի, մինչ- Տիրոջ Օծյալին տեսնելը: Իր հավատի շնորհիվ Սիմեոնը, առաքյալների նման, արժանանում է այն երանությանը, որի մասին Տերն է ասում. «Երանի՜ է ձեր աչքերին, որ տեսնում են, ու ձեր ականջներին, որ լսում են: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ շատ մարգարեներ ու արդարներ ցանկացան տեսնել, ինչ որ դուք տեսնում եք, բայց չտեսան» (Մատթ., ԺԳ(13), 16-17): տաճարում տեսնելով Հիսուսին՝ Սիմեոն ծերունին օրհնում է Աստծուն – խնդրում*

*Նրանից. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությամբ արձակիր Քո ծառային՝ ըստ Քո խոսքի, որովհետ- աչքերս տեսան փրկությունը Քո, որ պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ, լույս, որ կլինի հայտնություն հեթանոսների համար – փառք՝ Իսրայելի Քո ժողովրդի համար»: Եվ դիմելով Աստվածամորը՝ շարունակում է. «Ահա՛ սա Նա է, որ պատճառ է դառնալու Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման – նշան՝ հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերի խորհուրդներ հայտնի դառնան» (Ղուկ., Բ, 29-35): Այդ ժամանակ Սիմեոնը խոր ծերության մեջ էր[22]: Այդ պատճառով նա, հոգնած այս աշխարհից, Տիրոջից խնդրում է արձակել իրեն, որովհետ- այն, ինչի համար նա այդքան երկար տարիներ ապրել էր, իրականացել էր՝ նրա աչքերը տեսել էին Փրկությունը աշխարհի: Այստեղ ակնարկ կա նա- գալիք դեպքերի, որոնք պետք է կատարվեին խաչի վրա: Սիմեոնի մարգարեացումով հայտնի է դառնում Հիսուսի՝ խոստացված Փրկիչ, աշխարհի Լույս լինելը ոչ միայն հրեաների, այլ- բոլոր հեթանոս ժողովուրդների համար, որոնք իրենց հավատի շնորհիվ Աբրահամի զավակներ կոչվեցին – միավորվելով Քրիստոսով՝ մեկ հոտ դարձան մեկ Հովվի շուրջ: Ինչպես Հովհաննես Ավետարանիչն է ասում. «Այն լույսն է, ճշմարիտ Լույսը, որ լուսավորում է ամեն մարդու, որ գալու է աշխարհ» (Հովհ., Ա, 9): Իր օրհնությամբ Սիմեոնն ավելացնում է, որ շատերը պետք է արժանանան աստվածային շնորհներին – ընդունեն Աստծու մարդանալը, Ով ազատեց մեզ մեղքերի, օրենքների ու հողեղեն կյանքի կապանքներից՝ տա-*

---

[22] Ըստ Եկեղեցու Հայրերի Հաշվարկների՝ Նա ապրել է 344 տարի:

*նելով դեպի արդարություն – պարգ-ելով հավիտենական կյանք:*

*Ղուկասի Ավետարանում հիշատակվում է նա– Աննա մարգարեուհին՝ 84-ամյա մի բարեպաշտ այրի, ով ողջ ժամանակն անցկացնում էր տաճարում՝ պահքով ու աղոթքով (Ղուկ., Բ, 37): Տեսնելով մանուկ Հիսուսին՝ նա -ս օրհնում է Աստծուն – ներկաների հետ խոսում Նրա մասին: Այսպիսով, ըստ Եկեղեցու Հայրերի, Սիմեոնը – Աննան խորհրդանշում են Փրկչին ընդառաջ դուրս եկած Հին Ուխտի ողջ մարդկությանը: Սիմեոնը նա– օրինակն է օրենքի հնության, իսկ Աննան՝ մարգարեության լրումի, – նրանց՝ Տիրոջն ընդառաջ ելնելու իրողությամբ ավարտին մոտեցող Հին Ուխտը խորհրդանշականորեն կապվում է Նոր Ուխտին:*

*Հայոց Եկեղեցին Սիմեոն ծերունուն նվիրված հատուկ տոն չունի, այլ նրա հիշատակը նշվում է Տյառնընդառաջի տոնին, իսկ Աննայի անունը հիշվում է յուղաբեր կանանց հետ:*

*Քառասուն օրական մանուկներին տաճարին ընծայելու հինկտակարանյան սովորույթը պահպանվեց նա– քրիստոնյաների մոտ՝ նոր իմաստ առնելով: Մկրտության սուրբ ավազանից ծնվող յուրաքանչյուր քրիստոնյա Մկրտության խորհրդի շնորհիվ ծնվում է որպես անդրանիկ ծնունդ՝ դառնալով որդի Աստծու: Մեր Եկեղեցու կարգի համաձայն՝ քառասուն օրական մանուկներին քրիստոնյա ծնողները տանում են եկեղեցի: Երեխայի մայրը ծնկում է եկեղեցու դռան առաջ՝ մեղքերը քահանային խոստովանելու – թողություն ստանալու: Այնուհետ– քահանան Աստծուց խնդրում է մաքրել կնոջ մարմնի ու հոգու ախտերը, որից հետո վերջինս արժանի է դառնում Հաղորդություն ստանալու՝ Տիրոջ Մարմնին ու Արյանը հաղորդվելու: Ապա*

*ծնողները երեխայի հետ մտնում են եկեղեցի, սուրբ խորանի առաջ, քահանան օրհնում է մանկանը՝ Տիրոջից պահպանություն հայցելով նրան:*

*«Տյառնընդառաջ» նշանակում է «Տիրոջն ընդառաջ գնալ» կամ «Տիրոջն ընդառաջ դուրս գալ»: Ժողովրդի մեջ օգտագործելի են նա- տոնի «Տերնդեզ» կամ «Տրնդեզ» անվանումները, որոնք «Տերն ընդ ձեզ» արտահայտության փոփոխված ձ-երն են: Տյառնընդառաջի խորհուրդը Տիրոջն ընդառաջ գնալու հրավերն է, Տիրոջ, Ով խոնարհվեց - դեպի մեզ եկավ մեր փրկության համար: Այդպես էլ մենք պետք է գնանք Նրա հետ հանդիպման:*

*Տյառնընդառաջի տոնը Հայ Եկեղեցու անշարժ տոներից է - նշվում է Քրիստոսի Ծննդից 40 օր հետո՝ փետրվարի 14-ին: Տոնի ծիսական արարողություններն սկսվում են փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությամբ, այնուհետ- կատարվում է նախատոնակ, որի ժամանակ երգվում է «Լույս զուարթ» շարականը: Նախատոնակի արարողությունը, սկսվում է եկեղեցում ջահեր, մոմեր կամ ճրագներ վառելով, որպես օրինակ Քրիստոսի՝ երեկոյան ժամին տաճար գալու: Հավատացյալները տոնին մասնակցում են ձեռքներին օրհնված մոմեր պահած, որոնք արարողության ավարտին վառում են եկեղեցու կանթեղներից - տանում տները: Այս ամենը կարծես լույսի տոնախմբություն է հիշեցնում՝ խորհրդանշելով Սիմեոնի՝ Հիսուսին տված «Լույս» անունը: Օրվա ավետարանական ընթերցվածը նվիրված է քառասուն օրական Հիսուսի՝ տաճար գալուն: Կատարվում է նա- անդաստանի արարողություն, խորհրդանշելով ձմռան ավարտը - գարնան սկիզբը: Առավոտյան ժամերգության ժամանակ եկեղեցու չորս կողմերում՝ հյու-*

*սիս, հարավ, ար-ելք, ար-մուտք, կարդացվում են չորս Ավետարանները:*

*ԽԱՐՈՒՅԿ ՎԱՌԵԼԸ - նրա շուրջ պտտվելը կամ վրայից թռչելը Տյառնընդառաջի տոնի ժողովրդական սովորույթներից է: Սա, իհարկե, հնագույն ժամանակներից մեզ հասած սովորություն է: Հնում տարբեր ժողովուրդների հեթանոսական կրոններում մեծ տեղ էր հատկացվում կրակի պաշտամունքին, որին վերագրում էին մաքրող, սրբագործող զորություն, ինչով - պայմանավորված էր դրան պաշտամունք մատուցելը, վրայից թռչելը կամ շուրջը պտտվելը: Տյառնընդառաջի խարույկներն առավելապես առնչվում էին նորապսակների - տան հաջողության հետ: Տոնի նախորդ օրը երեկոյան եկեղեցու բակում խարույկ էին վառում, որից վառած կրակով խարույկ էին վառում նա- տների բակերում կամ տանիքներին: Դրանց վրայից նախ թռչում էին նորապսակները, ապա նա- նրանց հարազատները, հար-անները - այլն: Համարվում էր, որ կրակի վրայից թռչելը հեռու է պահում հիվանդություններից, անհաջողություններից - ամեն վատ բաներից:*

*Սակայն Տյառնընդառաջի տոնի խարույկն այլ իմաստ ու խորհուրդ ունի: Նախ, ինչպես ս. Գրիգոր Տաթ-ացին է բացատրում, Տյառնընդառաջի տոնին ջահեր վառելը խորհրդանշում է Երուսաղեմի բնակիչների՝ քառասուն օրական Հիսուսին ջահերով ու ճրագներով ընդառաջ դուրս գալը, որի օրինակով - քրիստոնյաներս ենք տոնի օրը ջահեր ու մոմեր վառում - Տիրոջ գալստյան նախատոնակը կատարում: Միմյանց օրհնած մոմեր բաժանելու սովորությունը խորհրդանշում է իմաստուն կույսերի յուղը (Մատթ., ԻԵ(25), 1-13): Իսկ խարույկ վառելու, վրայից թռչելու կամ շուրջը պտտվելու սովորությունը խորհրդանշում է, որ եթե հեթանոսները*

*կրակը որպես աստված էին պաշտում, ապա քրիստոնյաներս կրակը, որպես Աստծու ստեղծագործություն, Աստծուն ենք մատուցում, Ով եկավ «երկրի վրա կրակ գցելու» (Ղուկ., ԺԲ(12), 49)՝ ի Քրիստոս մկրտվողներին մյուսներից բաժանելու: Եթե հեթանոսներն Աստծու պատիվը կրակին էին տալիս, ապա քրիստոնյաներս կրակը, որպես Քրիստոսի ծառա, բերում ենք Նրան ծառայեցնելու: Կրակի վրայից թռչելով ոտնակոխ ենք անում այն՝ ցույց տալով, որ այն աստված չէ, այլ Նա է Աստված, Ով քառասուն օրական եկավ տաճար - երկրորդ անգամ է գալու աշխարհ, - այդ ժամանակ կրակը Նրա առջ-ից է գնալու:*

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրահանգով Տյառնընդառաջի օրը՝ փետրվարի 14-ը, հռչակվել է նա-* Նորապսակների օրհնության օր*:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Տյառնընդառաջը որպես տերունական տոն:

-40-օրական Հիսուսին տաճար բերելու աստվածաշնչյան պատմությունը:

-Ինչո՞ւ մանուկ Հիսուսին բերեցին տաճար:

-Սիմեոն ծերունին, նրա խնդրանքն Աստծուն - դրա իրականացումը:

-Աննա մարգարեուհին: Ո՞ւմ էին խորհրդանշում Սիմեոն ծերունին - Աննան:

-40-օրական մանուկներին տաճարին ընծայելու սովորության նոր իմաստը Քրիստոսի՝ աշխարհ գալուց հետո:

-Տոնի «Տյառնընդառաջ» անվանման - ժողովրդական «Տերն ընդ ձեզ», «Տրնդեզ» ու այլ արտահայտությունների բացատրությունը:

-Տոնի արարողությունները, անդաստանի կարգ, դրա բացատրությունը:

-Խառույկ վառելու սովորությունը, դրա մասին ժողովրդական թյուրըմբռնումները – ճշմարիտ խորհուրդը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Տյառնընդառաջը Հայ Եկեղեցու այն տոներից է, որոնք ժողովուրդը, եկեղեցում արարողություններին մասնակցելուց հետո, մշտապես նշել է իրեն հատուկ սովորություններով ու տոնախմբություններով:

Տյառնընդառաջի խորհուրդը Տիրոջն ընդառաջ գնալն է, Տիրոջ, Ով Իր բարձունքից խոնարհվեց՝ մեզ դեպի Իրեն բարձրացնելու: Հին Ուխտի – ընդհանրապես նախաքրիստոնեական շրջանի բազմաթիվ սովորույթներ, ավանդույթներ ու պատկերացումներ Քրիստոսի՝ աշխարհ գալով բացահայտեցին իրենց ճշմարիտ, իսկական խորհուրդն ու իմաստը: Նույն կերպ – Տյառնընդառաջի տոնի օրը խարույկ վառելը:

Հուրը, կրակը, Աստվածաշնչի համաձայն, ունի նախ՝ փորձիչ նշանակություն, ինչպես եր-ում է Դանիելի մարգարեության մեջ Սեդրակի, Միսաքի ու Աբեդնագովի՝ կրակից անվնաս դուրս գալու պատմությունից, քանի որ վերջիններս անսահմանորեն հավատում էին Աստծուն ու ապավինում Նրան, – Աստված նրանց հետ էր (Դան., Գ, 8-94):

Երկրորդ՝ հուրն ունի կործանող ու պատժող նշանակություն, ինչպես, օրինակ, Եղիա մարգարեն երկնքից երկու անգամ կրակ վայր բերեց – ոչնչացրեց իրեն ձերբակալելու եկած զինվորներին (Դ Թագ., Ա, 1-11): Նա–՝ մարգարեությունների ու Նոր Կտակարանի հա-

մածայն՝ աշխարհի վերջում դատաստանը կատարվելու կրակի միջոցով:

Երրորդ՝ կրակն ունի նա– մաքրագործող ու զորացնող նշանակություն: Այն դիտվում է որպես Սուրբ Հոգուն ուղեկցող հատկություն – Աստծու ներկայության նշանակ է:

Եվ Տյառնընդառաջի կրակը Հայ Եկեղեցու ծիսակարգ է ներմուծվել՝ հավանաբար նկատի առնվելով կրակի՝ աստվածաշնչյան ա՛յս խորհրդաբանությունը:

## Սուրբ Վարդանանց տոն

### Բարի գործի եւ ազգային տուրքի օր

*Սուրբ Վարդանանց տոնը հիշատակն է հանուն հավատի – հայրենյաց Սասանյան Պարսկաստանի դեմ մղված պատերազմում 451 թ. Ավարայրի ճակատամարտում ընկած 1036 հայ նահատակների:*

*428 թ. Հայաստանում վերացվել էր Արշակունյաց թագավորությունը: Հայաստանի՝ պարսկական տիրապետությանն անցած մասը դառնում է մարզպանություն՝ կառավարվելով մարզպանների կողմից: Իշխանության գալով, պարսից Հազկերտ Բ (438ՎՆ452 թթ.) թագավորը մոլեռանդորեն ձգտում է զրադաշտական կրոնը (կրակապաշտություն) պարտադրել պարսից տերությանը հպատակ քրիստոնյա ժողովուրդներին, միաժամանակ ցանկանալով հեռու պահել նրանց հավատակից Բյուզանդական կայսրությունից: Տերության ողջ տարածքում սկիզբ են առնում հալածանքներ՝ ունեցվածքի հափշտակություններ, բանտարկություններ, չարչարանքներ, մահապատիժներ: Քրիստոնեությունը հայ ժողովրդի համար այլ–ս սեփական ինքնություն էր, ազգային կյանքի խարիսխ, ուստի հայերը հրաժարվում*

*են ուրանալ իրենց հավատը: Հալածանքների առաջին հարվածը կրում են Հայաստանից դուրս բերված, տերության տարբեր կողմերում ծառայության ուղարկված հայկական զորամասերը՝ հրամանատար նախարարներով ու զինվորներով: Ընդդիմությունը պարսից հզոր արքայի կամքին այնքան գիտակցված էր – ուժեղ, որ զարմանք էր պատճառում: Բնորոշ է Գարեգին իշխանի պատասխանը Հազկերտին, որի մոտ էին բերել հավատի մեջ անդրդվելի հայ նախարարին: Հազկերտը նրան – բոլոր քրիստոնյաներին ծաղրում է, որ հավատում են մարդկանց ձեռքով խաչված ու մեռած Աստծուն, ինչպես ինքը կարդացել է քրիստոնյաների Սուրբ Գրքում: Գարեգին իշխանը թագավորին պարզապես հարցնում է, թե ինչո՞ւ է կեսը կարդացել, եթե շարունակությունն էլ կարդար, կտեսներ, որ Խաչվածը Հարություն է առել: Նրան – ուրիշ շատերի, ովքեր չուրացան Քրիստոսին, սպանում են, չհասկանալով, թե որտեղից է նրանց ընդդիմանալու համարձակությունը: Սա դեռ սկիզբն էր գիտակցված մահերի: Հրաժարվելով ուրացությունից, Հայրենիք վերադառնալու ճանապարհին Անձ–ացյաց ու Ռշտունյաց գավառների միջ– իրենց գնդերով նահատակվում են Ատոմ Գնունին – Մանաճիհր Ռշտունին: Ատոմյանների հիշատակը Տոնացույցով նշվում է Բուն Բարեկենդանից երկու շաբաթ առաջ՝ երկուշաբթի օրը:*

*449 թ. Հազկերտը պաշտոնական հրովարտակ է ուղարկում Հայաստան՝ պահանջելով զրադաշտականություն ընդունել: Հրովարտակն առաջ է բերում խոր մտահոգություն – անհանգստություն: Արտաշատում Հովսեփ Ա Հողոցմեցի (439ՎՆ452 թթ.) կաթողիկոսի գլխավորությամբ գումարվում է ժողով՝ հոգ–որականների ու նախարարների մասնակցությամբ, որոնց*

*թվում՝ սպարապետ Վարդան Մամիկոնյանը (ս. Սահակ Ա Պարթ– կաթողիկոսի (387ՎՆ439 թթ.) դստեր որդին) – Հայաստանի մարզպան Վասակ Սյունին: Ժողովի մասնակիցները պատասխան նամակ են գրում Հազկերտին, որտեղ, մանրամասնորեն ներկայացնելով ու բացատրելով քրիստոնեական ուսմունքը, իրենց հավատի մեջ աներեր՝ մերժում են Հազկերտի պահանջը. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները – ո՛չ մարդիկ, ո՛չ սուրը – ո՛չ հուրը, ո՛չ ջուրը – ո՛չ էլ որ–է այլ դառն հարված... Եթե այս հավատի մեջ թողնես, ո՛չ երկրի վրա ուրիշ տեր կընդունենք քո փոխարեն – ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստված կընդունենք Հիսուս Քրիստոսի փոխարեն, Որից բացի ուրիշ Աստված չկա... Մեր հավատի ուխտը ո՛չ թե մարդու հետ է, որ երեխայի նման խաբվենք, այլ Աստծու հետ է անլուծելի կերպով, որ անհնար է քանդել ու հեռանալ ո՛չ այժմ – ո՛չ հետո, ո՛չ հավիտյանս – ո՛չ էլ հավիտենից հավիտյանս»[23]: Պատասխանից խիստ զայրացած Հազկերտը Պարսից տերության մայրաքաղաք է կանչում Հայաստանի տասը եր–ելի նախարարներին – բանտարկում՝ լսելով հավատուրացության պահանջին տրված նրանց մերժումը: Բանտում հայ նախարարները խորապես մտահոգված էին իրենց երկրի ու ժողովրդի ճակատագրով: Նրանք խորհում են հանձն առնել կեղծ ուրացությունը, որպեսզի հայրենիք վերադառնան – նախապատրաստվեն դիմադրության: Թեկուզ – կեղծ, բայց ուրացությանը երկար ժամանակ ընդդիմանում է Վարդան Մամիկոնյանը: Ի վերջո տեղի է տալիս մյուս նախարարների փաստարկների առաջ – առերես ուրանում:*

[23] Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 81, 83:

*Հայ նախարարները Հայաստան են վերադառնում պարսից մեծաքանակ զորքի – մոգերի մեծաթիվ բազմության հետ, ովքեր պետք է կործանեին եկեղեցիները – հայ ժողովրդին կրակապաշտ դարձնեին: Նրանք բանակ են դնում Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաքի մոտ: Մոգերը պարսկական զորքի մի մասի հետ փորձում են քանդել Անգղի եկեղեցին, սակայն նրանց դիմադրություն են ցույց տալիս 70-ամյա Ղ–ոնդ երեցը, միաբաններն ու ժողովուրդը: Նրանք փայտերով, քարերով – գործիքներով հարձակվում են մոգերի ու զինվորների վրա – ծեծելով՝ քշում:*

*Այսպես սկսվում է պարսից դեմ համաժողովրդական շարժումը, որի ոգեշնչողն էր Հայ Եկեղեցին՝ Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսի գլխավորությամբ, իրենց կեղծ ուրացությունը բացահայտած – Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ դիմադրության պատրաստվող նախարարների ուխտապահ գունդը: Իր համախոհներով նրանց կողքին չէր մարզպան Վասակ Սյունին:*

*451 թ. գարնանը պարսկական մեծաքանակ՝ 200-հազարանոց զորաբանակը Մուշկան Նյուսալավուրտի հրամանատարությամբ մտնում է Հայաստան – բանակում Արտազ գավառում՝ Տղմուտ գետի աջ ափին: Պարսկական զորքին ընդառաջ է գալիս հայոց զորքը: Նախարարների գնդերին միացել էին հոգ–որականներ – աշխարհազորայիններ: Հայոց թիվը 66000 էր: Ճակատամարտից առաջ, մայիսի 25-ին սպարապետ Վարդան Մամիկոնյանը դիմում է զորքին քաջ լինելու հորդորով: Նա հստակ գիտակցում – տարանջատում է այս ճակատամարտը մինչ այդ իրենց մղած բազում մարտերից, որոնք երկրավոր թագավորի համար էին: Այս ճակատամարտը Աստծու համար է. «Բարերար Տիրոջն*

*էլ տեսնում ենք մեզ իբր- առաջնորդ: Մեր զորավարը մարդ չէ, այլ բոլոր մարտիրոսների Զորագլուխը: Վախը թերահավատության նշան է, թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»: Զորքին դիմում է նա- Ղ-ոնդ երեցը. «Քրիստոսը Իր մահով խափանեց մահի իշխանությունը: Եթե ուրեմն մահը մեռնում է մահով, չվախենանք Քրիստոսին մահակից լինել, որովհետ- Ում հետ որ մեռնենք մենք, Նրա հետ էլ կկենդանանանք»[24]: Ողջ գիշերն անցնում է աղոթքներով, սաղմոսերգությամբ, հսկումով, Աստվածաշնչի ընթերցումով: Հայոց բանակատեղին նմանվում է շարժական Եկեղեցու՝ ս. Ավազանով, Ավետարաններով, խաչերով ու սրբերի մասունքներով: Բոլորը սուրբ Ավետարանի վրա երդումով միաբանվում են, հոգ-որականները մկրտում են չմկրտվածներին, լուսադեմին ս. Պատարագ մատուցում, - բոլորն ընդունում են ս. Հաղորդություն:*

*Մայիսի 26-ին, Տղմուտ գետի ափին՝ Ավարայր գյուղի մերձակա Շավարշան դաշտում սկսվում է ճակատամարտը: Հերոսական կռվում «Հաղթելուց ավելի տենչալի մարտիրոսության հասնելու» հրայրքով ընկնում են քաջերից քաջ - հավատարիմներից հավատարիմ Վարդանը՝ 8 նախարարների՝ Խորեն Խորխոռունու, Արտակ Պալունու, Տաճատ Գնթունու, Հմայակ Դիմաքսյանի, Ներսեհ Քաջբերունու, Վահան Գնունու, Արսեն Ընծայեցու, Գարեգին Սրվանձտյանցի - տոհմակից ազնվականների հետ՝ 296 մարդ: Զոհված -ս 740-ի հետ*

---

[24] Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1989, էջ 211, 217:

*նահատակների ընդհանուր թիվն էր 1036[25]: Թշնամու կորուստը երեք անգամ ավելի էր:*

*Ավարայրի ճակատամարտն ավարտվում է կողմերի՝ իրենց ելման դիրքերը վերադառնալով: Եղիշե պատմիչի գնահատմամբ՝ քաջերը քաջերի դեմ ելան – ոչ մի կողմը չհաղթեց: Չնայած հայոց բանակի ոգ-ո-րությունը մեծ էր, – հաջորդ օրն էլ շատերն ուզում էին մարտը շարունակել, բայց նախարարները որոշում են հետ քաշվել – ամրանալ լեռներում: Ճակատամարտում բանակը կատարել էր իր առաջադրանքը՝ այնպիսի հարված տալով պարսից զորքին, որ վերջինս արնածոր մտնի Հայաստանի խորքերը, ուր զենքը վայր չէին դնում զինված ջոկատները:*

*Անկախ նրանից, որ Ավարայրի մարտից հետո հայոց բանակը նահանջեց, ընդհանուր արդյունքում պարսից դեմ պատերազմն ավարտվեց հայ ժողովրդի հաղթանակով, որի կիզակետը Ավարայրն է, ուր հայը կյանքով վկայեց, որ քրիստոնեությունն ունի իբր– մաշկի գույն, ուր սրով հաստատեց այն, ինչ գրչով գրել էր Հազկերտի հրովարտակին ի պատասխան՝ այս հավատից մեզ ոչինչ չի կարող հանել: Տապալվեց ոչ միայն Հազկերտի ծրագիրը՝ դավանափոխ անել հայ ժողովրդին, այլ– Հազկերտն ինքը: Պարսկաստանը ստիպված եղավ վերականգնել նախորդ իրավիճակը Հայաստանում՝ հանգիստ թողնելով հայերին քրիստոնեական ի-*

---

[25] Ստեփանոս Օրբելյանը իր «Սյունիքի պատմություն» (Երևան, 1986, էջ 107) աշխ. մեջ հիշում է Վարդանանց պատերազմի դրվագներից մեկը՝ Ավարայրին մասնակից արցախցի Մարտիրեի և նրա զինվորների նահատակությունը Եղեգիսի կիրճում՝ «Եղեգիս և Մոզան գետերի միջև գտնվող քարաժայռերով պատած բլրի մոտ», ճակատամարտից հետո Արցախ վերադառնալու ճանապարհին: Մարտիրեի և նրա զինվորների նահատակության վայրը կոչվում է Անգեղաձոր:

*րենց հավատին – ճանաչելով ներքին կյանքում հայ նախարարների տնօրինությունը:*

*Վարդանանց նահատակներին են ձոնված ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսի (1166Վ1173 թթ.) «Նորահրաշ» – «Առիացեալք» շարականները: «Նորահրաշ» շարականի յուրաքանչյուր տունը նվիրված է նահատակ իշխաններից մեկին. սկսվում է «նորահրաշ պսակաւոր» Վարդանով – ավարտվում «յառաջադէմն» Գարեգինով:*

*Սուրբ Վարդանանց հավատավոր հոգով – անձնազոհ ոգով դեպի Քրիստոս ու հավերժություն իր ընթացքի մեջ զորացել է հայոց կյանքը ու դիմակայել հետագա դարերի բազմաթիվ այլ փորձությունների: Ավարայրի դաշտում սկիզբ առած «վասն հավատի, վասն հայրենյաց» գոյամարտը իր շարունակությունն ունեցավ դարերի մեջ՝ Դավիթ Բեկի, Անդրանիկի ու ֆիդայիների, Սարդարապատի ու Արցախի հերոսամարտերում:*

*Ազգասիրության ու աստվածսիրության կենդանի օրինակն են Վարդանանք: Ազգասիրությունն առաջին հերթին եղբայրասիրությունն է, – եթե չսիրենք մեր եղբորը, ում տեսնում ենք, ինչպե՞ս կարող ենք սիրել Աստծուն, Ում չենք տեսնում (Ա Հովհ., Դ, 20): Այսինքն՝ սիրելով – մեր անձերը մեր եղբայրների՝ ազգի համար զոհելով՝ հավատարիմ ենք մնում Քրիստոսի պատվիրաններին: Սուրբ Վարդանանց անձնազոհ ոգին միայն օրհասի պահին չէ, որ պիտի դրս-որվի: Վարդանանք մեզ հետ են, երբ ուն-որը բաժին է տալիս կարոտյալին, երբ իշխանավորը գերադասում է ժողովրդի՛ շահը, երբ դատավորը արդա՛ր դատն է պաշտպանում, երբ զինվորն անձնազոհ է Հայրենիքը պաշտպանելիս, իսկ հոգ-որականը՝ իր ծառայությունը կատարելիս, – երբ հասարակ*

*քաղաքացիները բարեխիղճ ու օրինապահ են իրենց պարտականությունների մեջ: Այսօր Վարդանանց պատերազմն ենք շարունակում, երբ «վասն հավատի» մերժում ենք բազում աղանդների, կրոնական տարբեր շարժումների - ուղղությունների սուտ, ազգավեր ու կործանարար գաղափարախոսությունները, որոնք բացահայտ, զենքով ու հալածանքներով չեն ուղեկցվում, այլ Հիսուսի ու Ավետարանի անունով են հանդես գալիս, սակայն բերում են միայն հավատափոխություն, ուրացում, հոգ-որ երկպառակություն, ազգային գիտակցության ու արժեքների ոչնչացում, ազգի ջլատում: «Մեզ հայր ենք ճանաչում սուրբ Ավետարանը, - մայր՝ Առաքելական Կաթողիկե Եկեղեցին, - թող ոչ ոք իբր- չար անջրպետ մեջ ընկնելով՝ մեզ սրանից չբաժանի»: Այս ընթացքը որդեգրողը ոչինչ չունի վախենալու, որովհետ- Տերն է նրա Զորագլուխը:*

*Վարդանանց պատերազմը քրիստոնեության -, ընդհանրապես, համաշխարհային պատմության մեջ հոգ-որ ազատության, հոգ-որ կյանքի անկախության, քրիստոնեական հավատի - խղճի ազատության համար մղված առաջին պատերազմն է, - Սուրբ Վարդանանց տոնը ամեն տարի նշելով՝ մենք արդեն 16 հարյուրամյակից ավելի պատասխան ենք տալիս այս անանց արժեքները կար-որելու, գնահատելու, պահպանելու ու պաշտպանելու նա՛- մերօրյա խնդիրներին:*

*Հայ Եկեղեցին Սուրբ Վարդանանց տոնը նշում է Բուն բարեկենդանը նախորդող հինգշաբթի օրը: Եթե այդ օրը համընկնում է փետրվարի 14-ին նշվող Տյառնընդառաջի տոնի հետ, Սուրբ Վարդանանց տոնը տեղափոխվում է Բուն բարեկենդանի նախորդ երկուշաբթի օրը:*

*Հայաստանյայց Ս. Եկեղեցին Ս. Վարդանանց տոնը չի նշում Ավարայրի ճակատամարտի օր՝ մայիսի 26-ին, ըստ որոշ մեկնաբանությունների, հավանաբար այն պատճառով, որ ս. Վրթանես Ա Պարթև կաթողիկոսը 4-րդ դարում տնօրինել էր տոնելու 337 թ. Պարսից տերության ներխուժման դեմ մղվող պատերազմում նահատակված Վաչե Մամիկոնյան հայոց սպարապետի - նրա զինակիցների հիշատակը՝ առաջինը հայոց տոնացույցում ազգային նահատակների տոն հաստատելով (*տե՛ս վեր-ում՝ «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տոներ» ենթավերնագիրը*): Այս տոնը, ամենայն հավանականությամբ, նշվել է հենց Բուն բարեկենդանը նախորդող հինգշաբթի օրը: 5-րդ դարում Վաչեյանների այս տոնը միավորվեց հայ ժողովրդի քրիստոնյա ինքնության հաստատման - ազատության ձգտումի առավել մեծ հնչողություն ունեցող հիշատակին՝ Վարդանանց պատերազմի նահատակների տոնին - Վարդանանց անունով հատկանշվեց, սակայն տոնի օրը մնաց անխախտ:*

*Սուրբ Վարդանանց տոնը անվանակոչության տոն է բոլոր այն անձանց, ովքեր կրում են զորավարների անուններ (Վարդան, Գարեգին, Խորեն, Տաճատ, Հմայակ, Վահան - այլն): Սուրբ Վարդանը, ինչպես ս. Սարգիսը - ս. Գ-որգը, նա- հովանավոր սուրբ է բոլոր զինվորականների համար:*

*Վաղ միջնադարից սկսած ս. Վարդան Մամիկոնյանին - նրա զինակիցներին նվիրված եկեղեցիներ ու սրբատեղիներ են կառուցվում Հայաստանում - հայկական գաղթավայրերում, հետագայում՝ նա- Սփյուռքում: Ս. Վարդանի անունով հնագույն կառույցը Զովունիի՝ 5-րդ դարում կառուցված մատուռ-դամբարանն է, որտեղ, ըստ ավանդության, թաղված է ս. Վարդանի զինակից,*

*Ավարայրում իր 19 զինվորների հետ նահատակված Տաճատ Գնթունին:*

*Վանի Ս. Վարդան եկեղեցում պահվել է ս. Վարդանի մասունքներից՝ ճկույթը: Ս. Վարդանի անունով եկեղեցիներ ու վանքեր են եղել Ռշտունիքում, Մոկսում, Հայոց ձորում, Համշենում, Նախիջ-անում, Ախալցխայում – այլուր:*

*Կոտայքի մարզի Ալափարս գյուղի Ս. Վարդան Զորավար եկեղեցու բեմի վրա դրված է ս– գույնի քար, որը, ըստ ավանդության, ներկված է ս. Վարդանի արյունով: Քարն իրենց հետ Մակու քաղաքից բերել են Պարսկաստանի գաղթած – Ալափարսում հաստատված հայերը:*

*Հայտնի է Սիսիանի շրջանի Շոռոթ գյուղի մոտ ս. Վարդանի անունով սրբավայրը: Այստեղի բնակիչները երբ գաղթել են Պարսկաստանից՝ իրենց հետ հող են վերցրել ս. Վարդան Զորավարի գերեզմանից: Հաստատվելով նոր տեղում՝ այդ հողի վրա վանք են կառուցում – անունը դնում Ս. Վարդան:*

*Ս. Վարդան Զորավարի անվան հետ է կապվում նա– Իջ-անի Սարի գյուղի վիթխարի կաղնին, որն, ըստ ավանդության, տնկել է ս. Վարդան Զորավարը: Հսկա ծառի բնի ներք-ի մասում կա մեծ բացվածք, որտեղ կարող են տեղավորվել մի քանի մարդ: Ծառի տակից հոսում է աղբյուր, որը կոչվում է Զորավարի աղբյուր: Այն համարվում է առողջություն – կյանք, ինչպես նա– պատերազմ գնացողներին պահպանություն պարգ-ող*[26]:

## Սուրբ Ղեւոնդյան քահանաների տոն

[26] Հայոց սրբերը և սրբավայրերը, Երևան, «Հայաստան», 2001, էջ 51-52:

*Սուրբ Վարդանանց հետ «վասն հավատի, վասն հայրենյաց» պատերազմի զինվորներ ու նահատակներ են սուրբ Ղ-ոնդյանները՝ ս. Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսը - յոթ այլ հոգ-որականներ, ովքեր մարտիրոսի պսակն առան ավելի ուշ՝ 454 թ.: Ավարայրի ճակատամարտից հետո երկիր մտած պարսից զորքը հայոց կաթողիկոսին - իրենց դեմ պայքարում աչքի ընկած հոգ-որականներին շղթայակապ ու չարչարանքներով տանում են Պարսկաստան, ուր բանտարկում են - փորձում անլուր տանջանքներով պարտադրել հավատափոխություն: Հայ հոգ-որականների հաստատակամությունը, ընդհակառակը, պատճառ է դառնում, որպեսզի նրանց հետ առնչվող պարսիկները քրիստոնեություն ընդունեն: Նրանց խոստովանական մահը տեղի է ունենում Պարսկաստանի Ապար աշխարհում (Խորասան), Նյուշապուհ քաղաքում:*

*Հայաստանյայց Ս. Եկեղեցին Սուրբ Ղ-ոնդյանների տոնը նշում է Բուն բարեկենդանը նախորդող երեքշաբթի օրը: Ս. Ղ-ոնդյանների հիշատակի օրը համարվում է Հայ Եկեղեցու քահանաների դասի տոնը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-1036 նահատակների հիշատակի օրը:

-Վարդանանց պատերազմի պատճառները - սկիզբը: Հալածանքներ քրիստոնյաների դեմ:

-Հազկերտի հրովարտակը հայերին - վերջիններիս պատասխանը: Հայ նախարարների բանտարկությունը, կեղծ ուրացությունը, վերադարձը Հայաստան, Անգղի դեպքերը:

-Ավարայրի ճակատամարտը՝ «վասն հավատի, վասն հայրենյաց»:

-Վարդանանց պատերազմի շարունակությունը դարերի մեջ՝ Դավիթ Բեկ, Սարդարապատի, Արցախի հերոսամարտեր – այլն:

-Ս. Վարդանանք մեր օրերում մեզ հետ են:

-Վարդանանց պատերազմը որպես հոգ–որ կյանքի, խղճի ազատության համար մղված առաջին պատերազմ:

-Տոնի՝ Ավարայրի ճակատամարտի օրը չնշելու պատճառը:

-Տոնը որպես անվանակոչության օր զորավարների անուններ կրող անձանց համար:

-Ս. Վարդանի անունով սրբավայրեր:

-Ս. Ղ–ոնդյանք:

-Հայ Եկեղեցու քահանաների դասի օր:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Պատմությունը միայն շարադրանք չէ անցյալ դեպքերի ու իրադարձությունների, այլ հատկապես՝ կազմավորողն ու ամրապնդողը ազգային հավաքական գիտակցության ու ազգային մշակույթի:

Այն օրից, երբ Հայկ նահապետը փշրեց բռնության շղթաները – հայի համար հայրենի հողի սահմանը հաստատեց, հայ հոգում դրոշմվեց ազատ ապրելու – արյան գնով նախնյաց ժառանգությունը պաշտպանելու կնիքը: Եվ ինչքան էլ հայը նվաճվեց, մի–նույն է, ներքուստ ազատ մնաց՝ իր հոգ–որ-մշակութային առաքելությունը շարունակելով:

5-րդ դարից մինչ– մեր օրերը հայոց պատմությունն իր խորքով ու էությամբ կրում է Վարդանանց պայքարի ազդեցությունը: Նրանց պայքարը հանուն քրիստոնեական հավատի, Հայ Եկեղեցու – հայրենի հողի պաշտպանության պայմանավորված էր պետակա-

նությունը կորցրած ժողովրդի հաստատ համոզումով, որ դրանք են հայոց ինքնության միակ խարիսխը:

Վարդանանք սկիզբը դրեցին հայոց պատմության ազգային դարաշրջանի, որը սկսվեց հինգերորդ դարից՝ հայ տառերի գյուտով ու Ավարայրի հերոսամարտով: «Յուր քաջ որդվոց սուրբ արյունով» արհագած հայ ժողովուրդը հազար հինգ հարյուր տարիներ շարունակեց արյունոտ, բայց ազնիվ փառքի ճանապարհը՝ մեր հինավուրց ազգի պատմությունը բարիին ու գեղեցիկին ծառայելուն, սեփական ազգ ու ազատ հայրենիք կերտելուն նվիրված կենդանի հուշարձան դարձնելով: Քրիստոսի Ավետարանով հայ ժողովուրդը հավատաց կյանքին, լույսին ու շինարար աշխատանքին – հավատաց նա–, որ «սերը երբեք չի անհետանում» (Ա Կորնթ., ԺԳ(13), 8:

Եվ ինչպես Վազգեն Ա Վեհափառ Հայրապետն է գրում՝ «Ավարայրը լրումը եղավ հայ ժողովրդի ոգեկան ուժերու արգասավորման ու պայծառ արտահայտությունը ազգային ինքնագիտակցության, – միաժամանակ սկիզբը մեր բուն ազգային պատմության, որ իր դրոշմը դրավ հետագա բոլոր դարերուն վրա: Վարդանանց – Ղ–ոնդյանց նահատակությունը դարձավ մեր ժողովրդի ճակատագիրը: Եվ այդ օրեն ի վեր, ամբողջ հազար – հինգ հարյուր տարիներ շարունակ, մեր նախնիք նույն հերոսական մարտը շարունակեցին «վասն Հիսուսի, վասն հայրենյաց», նույն «զի բարձրացի կողմն ճշմարտութեան»[27] ոգիով, միշտ մահը մահով հաղթելու հավատքով»[28]:

[27] «Որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը» (Եղիշեի խոսքերից»:
[28] Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը ապրիլյան մեծ եղեռնի առթիվ, «Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5:

Եվ այժմ էլ հայ ժողովուրդը շարունակում է իր առաքելությունը՝ հավետ հավատարիմ իր կոչումին, որը Հայկն ու Վարդանը կռեցին ու կոփեցին:

ՄԱՐՏ

*Բուն բարեկենդան եւ Մեծ պահք*

*Հայ եկեղեցու կանոնի համաձայն՝ պահքի բոլոր շաբաթների նախընթաց կիրակի օրը, միակ բացառությամբ Ս. Ծննդյան պահքի, կոչվում է բարեկենդան: Մեծ պահքը՝ ապաշխարանքի, զղջանքի ու ինքնամաքրման քառասնօրյա ժամանակահատվածն սկսող կիրակին կոչվում է Բուն բարեկենդան: «Բարեկենդան» նշանակում է «բարի կենդանություն, բարի կյանք», աշխարհիկ իմաստով՝ ուրախություն, տոնախմբություն, իսկ կրոնական իմաստով՝ երանական վիճակ: Սա հիշատակն է Ադամի՝ դրախտում երանելի ու երջանիկ այն կյանքի, որը նա վայելում էր Աստծու անմիջական ներկայությամբ: Ինչպես ս. Գրիգոր Տաթ-ացին է գրում՝ «Մարդը պատվի մեջ էր, քանզի ստեղծվեց որպես բոլոր տեսանելի արարածների թագավոր ու իշխան, - նրա համար ստեղծվեցին երկինքն ու երկիրը, բույսերն ու կենդանիները, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Ամեն ինչ նրան հնազանդ ստեղծեցիր - դրեցիր նրա ոտքերի տակ» (Սաղմ., ԽԸ(48), 3)»: Քանզի բոլոր արարածները մարդու ծառաներն ու սպասավորներն են... Իսկ մարդը ոչ ոքի ծառան չէ, այլ ազատ է - ինքնակալ»[29]: Բուն բարեկենդանը հիշեցնում է մարդուն իր երջանիկ վիճակը, իսկ Մեծ պահքը՝ խորհել տալիս, թե ինչպե՞ս է կորցրել այն - մատնանշում դրան վերադառնալու միջոցն ու ճանապարհը: «Այս պատճառով, երբ պահքով հեռու ենք մնում ավելորդ կերակուրներից ու ըմպելիքներից - տքնությամբ ու աղոթքով չարչարում ենք մեր մարմինը,*

[29] Ս. Գրիգոր Տաթեւացի, Քարոզ Բուն բարեկենդանի, Գանձասար, Երեւան, 1995:

*ազատվում ենք խառնվածքի չարունակությունից, որը դեպի մեղքն է ձգում: Եվ սրբվելով մեղքերից՝ մեր մեջ վերստին պայծառանում է Աստծու պատկերը, որն ունեինք ի սկզբանե՝ նախքան մեղանչելը դրախտում»[30]: Այսպիսով, բարեկենդանը, լինելով հակադրությունը պահքի, այնուամենայնիվ նրա նպատակն է:*

*Եկեղեցու Հայրերը բարեկենդանը համեմատում են դրախտի փափկության, իսկ նրա տնկիներն ու բողբոջները՝ Եկեղեցու մանուկների հետ: Կենաց ծառը Քրիստոսի օրինակն է Եկեղեցում, իսկ պտղաբեր ծառերն ու բուրումնավետ ծաղիկները՝ առաքյալների, մարգարեների, ավետարանիչների ու սուրբ վարդապետների, ովքեր Քրիստոսի անուշ բուրմունքն են. «Քրիստոսի անուշ բուրմունքն ենք Աստծու առջ-», ինչպես Պողոս առաքյալն է ասում (Բ Կորնթ., Բ, 15):*

*Բուն բարեկենդանը ժամանակին տոնվել է մեծահանդես տոնախմբություններով, խրախճանքներով, այդ օրը կազմակերպվել են խաղեր, մրցումներ ու դիմակահանդեսներ, որոնք ար-մտյան որոշ երկրներում գոյություն ունեն մինչ այժմ (ինչպես, օրինակ, Բրազիլիայի - Հռոմի ամեն տարի կազմակերպվող հռչակավոր դիմակահանդեսները): Նույնիսկ վանքերում այդ օրը թույլ են տրվել որոշ ազատություններ, որը կոչվել է «աբեղաթող» կամ «աբեղայաթող»:*

*Բուն բարեկենդանի երեկոյան սկսվում է պահքի քառասնօրյա շրջանը, որը պահքերից ամենաերկարատ-ն է, ինչի պատճառով էլ կոչվում է Մեծ: Ինչպես արդեն նշվեց, այն սկսվում է Բուն բարեկենդանի կիրակիով - շարունակվում մինչ- ս. Զատիկ: Իբր- պահեցողության քառասնօրյա շրջան, Մեծ պահքի համար հիմք*

---

[30] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Բուն բարեկենդանի, Գանձասար, Երևան, 1995:

*է մեր Փրկչի՝ անապատում 40-օրյա ծոմապահությունը – ապաշխարությունը: Եվ որովհետ– մարդկային սովորական բնությունը անկարող է տոկալ 40 օրվա ծոմապահությանը, ուստի Եկեղեցին տնօրինել է կատարել 40-օրյա պահեցողություն՝ օրական միայն մեկ անգամ ուտելով – կենդանական ծագում ունեցող կերակրատեսակներից հրաժարվելով: Քրիստոսը պահեց ոչ նրա համար, որ ուներ դրա կարիքը, քանի որ անմեղ էր, այլ հաստատելու համար, որ հին ու նոր օրենքները, մարգարեներն ու Քրիստոսը միմյանց հակառակ չեն, այլ լրացնում են միմյանց: Եթե Մովսեսն ու Եղիան պահեցին Աստծու Խոսքը Նրա հրեշտակի տված կերակրի զորությամբ, ապա Քրիստոսը պահեց Իր զորությամբ: Պահքով Նա ցույց տվեց Իր Աստվածությունը, իսկ քաղցելով՝ մարդկությունը:*

*Մեծ պահքի տ–ողությունը 48 օր է՝ ներառյալ նա– Ավագ շաբաթվա 8 օրերը, որոնք պահում ենք ի հիշատակ Տիրոջ չարչարանքների:*

*Մեծ պահքի նպատակը հավատացյալների նախապատրաստությունն է ս. Հաղորդությանը արժանապես մոտենալուն – Հարության տոնը առավել մեծ ուրախությամբ տոնելուն: Այն հոգ–որ նախապատրաստության, ինքնամաքրման ժամանակաշրջան է: Ինչպես Ներսես Շնորհալին է ասում. «Ժուժկալությունը բոլոր առաքինությունների ամրությունն ու հիմքն է, քանզի նա, ով իր ներսում ժուժկալ է չարի նկատմամբ, բոլոր տեսակի բարիքներն իր մեջ է կրում... Եվ այս է ժուժկալության սահմանումը. ժուժկալ լինել ամեն բանի մեջ, որոնցից աստվածային օրենքները հրամայում են հրաժարվել» (Թուղթ ընդհանրական):*

*Բուն բարեկենդանի շաբաթ օրը, երեկոյան ժամերգության ընթացքում փակվում են բոլոր եկեղեցինե-*

*րի խորանների վարագույրները, որը շարունակվում է ողջ Մեծ պահքի ընթացքում՝ մինչ- ս. Հարության ճրագալույցի պատարագը: Վարագույրը բացվում է միայն կար-որ տոների առիթով, երբ մատուցվում է ս. Պատարագ՝ Ծաղկազարդին, Ավագ հինգշաբթի՝ ոտնլվայի արարողությանը, ինչպես նա-՝ ս. Գրիգոր Լուսավորչի մուտքը վիրապ, Ավետում ս. Աստվածածնի, Տյառնընդառաջ տոներին, եթե դրանք համընկնում են Մեծ պահքի օրերին: Մեծ պահքի ընթացքում կատարվում են ապաշխարության շարականներ, որոնք վերագրվում են ս. Մեսրոպ Մաշտոցին - որոնցում նկարագրվում է ապաշխարողի ու զղջացողի վիճակը - Ամենակալ Աստծուց հայցվում քաղցրությամբ ու ներողամտությամբ դատել:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Բարեկենդանի բացատրությունը, որոնք են դրա օրերը:

-Բուն բարեկենդան, Եկեղեցու Հայրերի՝ դրան տված բնորոշումը:

-Նախկինում Բուն բարեկենդանը տոնելու կարգը, կազմակերպվող տոնակատարությունները:

-Մեծ պահք, դրա հիմքը, տ-ողությունը: Մեծ պահքի նպատակը:

-Մեծ պահքի օրերին կատարվող եկեղեցական արարողությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Բարեկենդանի օրերին Եկեղեցին իր հավատացյալներին ու քահանայական դասին արտոնում է ճոխ սեղաններ պատրաստել - տարբեր զվարճություններ՝ հիշեցնելու համար դրախտային երջանիկ ու ան-

հոգ կյանքը, որը մարդը կորցրել է մեղանչումով, սակայն դեպի որը տանող ուղին բաց է. այն անցնում է զղջումի, ինքնամաքրումի ու աղոթքի միջով, ինչին նպաստում է պահքը: Նա–՝ որպեսզի հավատացյալներն ուրախ սրտով մտնեն բարեկենդանին հաջորդող պահքի շրջան:

Քառասնօրյա պահքը կոչվում է նա– օրերն աղ ու հացով անցկացնելու, այսինքն՝ ճգնելու, աղոթքի ու խոկումի ժամանակաշրջան, քանի որ նախկինում աղն ու հացը ճգնակյացների ու անապատականների կերակուրն էր:

ՀՈԳԻՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ Է ՄԱՐՄՆԻ ՀԱՆԴԵՊ:

Այս ըմբռնումով է, որ պահքը սահմանվեց, որը ամրապնդելով հանդերձ հավատը՝ մաքրում ու զորացնում է հոգին: Պահքը Քրիստոսի Եկեղեցու կյանքի կար–որ եր–ույթներից է: Ինչպես մարմնի համար հիվանդությունն է կործանարար, այնպես էլ հոգու համար՝ մեղքը: Եվ հոգին մեղքի հիվանդությունից բուժելու միջոցը պահքն է: Պահքի նպատակը՝ ապաշխարանքը, զղջումը, մեղքից ազատվելու ճիգն է:

Եվ Պողոս առաքյալի խոսքը՝ «...Հոգո՛վ ընթացեք – մարմնի ցանկությունը մի՛ կատարեք, քանի որ մարմինը հոգու հակառակն է ցանկանում, իսկ հոգին՝ մարմնի հակառակը» (Գաղ., Ե, 17), բոլոր ժամանակների բոլոր սերունդներին է ուղղված, որոնք Աստծուց հեռացած լինելու դժբախտությանն են ենթարկված:

## Մեծ պահքի կիրակիներ

*Մեծ պահքի կիրակիներից յուրաքանչյուրն ունի իր խորհուրդը՝ բոլորը միասին ներկայացնելով դրախտից Գողգոթա տանող ճանապարհը, այսինքն՝ մարդ-*

կության փրկագործության ուղին: Հայ Եկեղեցու յուրահատկություններից են Մեծ պահքի կիրակիներին տրված հատուկ անունները, երբ մյուս եկեղեցիները դրանք զատորոշում են թվական անուններով՝ առաջին, երկրորդ, երրորդ կիրակիներ - այլն:

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻՆ Մեծ պահքի երկրորդ կիրակին է, որն իր անունն ու խորհուրդը ստացել է մարդու՝ դրախտից արտաքսվելու հինկտակարանյան պատմությունից: Ադամն ու Եվան, զանցառելով Աստծու պատվիրանը՝ չուտել բարու - չարի գիտության ծառի պտուղը, վստահելով ու հավատալով օձի հորդորներին՝ կերան այն, որի պատճառով արտաքսվեցին դրախտից - կորցրեցին Աստծու ներկայությամբ իրենց երջանիկ ու երանական կյանքը դրախտում: Ադամն ու Եվան, այսինքն՝ ողջ մարդկությունը, կերան արգելված պտուղը՝ այսինքն՝ չհնազանդվեցին Աստծու պատվիրաններին, մեղք գործեցին, հետ-ելով օձի՝ չարի խորհուրդներին՝ հեռացան իրենց երջանկության աղբյուրից՝ Աստծուց: Աստված անիծեց առաջին տղամարդուն ու կնոջը՝ նրանց համար նախապես բնական սովորությունները վերածելով պատժի. կնոջ որդեծնության հրաշալի եր-ույթը՝ ցավագին երկունքի, իսկ աշխատելու հաճելի զբաղմունքը՝ տառապանքի: Մեղքի՝ աշխարհ գալով խախտվեց Աստծու - մարդու միջ- ներդաշնակ հարաբերությունը, ինչպես նա- ներդաշնակությունը բնության ու մարդու միջ-. գազաններն ու մարդիկ դարձան թշնամիներ: Պատիժն իր լրումին հասավ մարդու՝ դրախտից արտաքսումով (Ծննդ., Գ):

Ադամի ու Եվայի պատմությունը հավերժ կրկնվում է յուրաքանչյուր մարդու ծնունդի հետ: Այն յուրաքանչյուրիս պատմությունն է, որովհետ- բոլորս էլ անցնում ենք փորձության ժամերի միջով, հրապուր-

*վում «արգելված պտղով»՝ այն հրամցնելով նա– ուրիշներին: Եվ սթափության ժամին տեսնում ենք մեզ ամեղությունից «մերկացած» – «դրախտից արտաքսված»՝ կյանքի դժվարություններին ու տառապանքներին հանձնված: Ներսես Շնորհալու շուրթերով ողջ մարդկությունն է ողբում. «Գող եղէ մեղաց, գտող կորստեան, գուք ինձ փորեցի» (Հայոց ժամագիրք, Գիշերային ժամ, «Աշխարհ ամենայն»):*

*Մեծ պահքի երրորդ – հաջորդ կիրակիներն իրենց անուն ու խորհուրդը ստացել են օրվա ավետարանական ընթերցվածի գլխավոր առակներից:*

*ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ է կոչվում Մեծ պահքի երրորդ կիրակին՝ մատնանշելով Հիսուսի պատմած Անառակ որդու առակը (Ղուկ., ԺԵ(15), 11-32): Առակը խտացնում է Քրիստոսի Ավետարանի հիմնական գաղափարը՝ Աստված հոգատար Հայր է մարդու համար, անսահման սիրող ու ներողամիտ: Անառակի կիրակիի խորհուրդը մարդու՝ անկումից վերելքը, կորստից փրկությունը, ընկած վիճակից վերականգնումն է, ինչը նա– Մեծ պահքի նպատակն է:*

*Հոր տանը երջանիկ ապրող երիտասարդը կորցնում է «դրախտային» կյանքը՝ չգնահատելով իր ունեցած հարստությունը – հոր սերն ու հոգատարությունը: Վատնելով իր ունեցվածքը, երիտասարդությունը, անմեղությունն ու ընտանեկան երջանկությունը, ոտնատակ տալով հոր սերը՝ ընկնում է հետին թշվառության մեջ – ճաշակում կյանքի ամենադառը պտուղները: Սակայն վերադարձի ճանապարհը միշտ բաց է ցանկացողի համար: Եվ ինչպես անառակ որդին զղջաց ու ներողություն հայցեց հորից – նորից ընդունվեց նրա հարկի տակ, նորից արժանացավ նախկին պատիվներին, – երջանիկ հայրը ուրախության խնջույք կազմակերպեց*

*նրա վերադարձի առիթով, այնպես էլ ընկած ու մեղանչած մարդը ապաշխարությամբ ու զղջումով կարող է վերագտնել ճանապարհը դեպի կորցրած դրախտ - վստահ լինել, որ Աստված, իբր- Հայր, երկնքում ուրախությամբ ու սիրով սպասում է Իր որդուն:*

*Առակը պատմությունն է երկու՝ ավագ - կրտսեր եղբայրների: Ավագ որդին խորհրդանշում է հրեա ժողովրդին, որը մշտապես ծառայում էր Աստծուն - Նրա պատվիրանները որպես օրենք ընդունում: Սակայն նա քարացել էր օրինապահության ու ծիսապաշտության մեջ՝ սիրուց, ներողամտությունից ու հանդուրժողականությունից հեռացած: Օրենքն ու բարոյական չափանիշները նրա համար սահմանափակվել էին «ակն ընդ ական»-ի (Ելք, ԻԱ(21), 24), գողություն ու շնություն չանելու, ինչպես նա- իր կրոնակցին սիրելու - թշնամուն ատելու շրջանակներում: Հրեական այս միջավայրում ծնվեց Հիսուսը, այստեղ քարոզեց - այստեղ էլ մերժվեց ու խաչ հանվեց: Կրտսեր որդին խորհրդանիշն է հեթանոս ժողովուրդների, որոնք Աստծուց հեռանալով՝ դուրս էին մնացել Նրա տնից - օրենքից, սակայն նրանց մեջ քարոզվեց Ավետարանը - հաստատվեց Քրիստոսի Եկեղեցին: Երկուսին էլ՝ հրեաներին - հեթանոսներին, քարոզվեց Ավետարանը, սակայն առավելապես հեթանոս ժողովուրդներն ունկն դրեցին նրա կոչին, զղջացին, ապաշխարեցին - վերադարձան իրենց Հոր տուն: Իսկ Աստծու տանը մշտապես ապրող հրեա ժողովուրդը հրաժարվեց հեթանոսների հետ Աստծու տունը մտնել - դուրս մնաց Քրիստոսի Եկեղեցուց. «Բայց ասում եմ ձեզ, որ ար-ելքից ու ար-մուտքից շատերը պիտի գան ու երկնքի արքայության մեջ սեղան պիտի նստեն Աբրահամի, Իսահակի ու Հակոբի հետ, իսկ արքայության որդիները պիտի ելնեն արտաքին խավարը. այնտեղ*

*պիտի լինի լաց - ատամների կրճտում» (Մատթ., Ը, 11-12):*

*Երկու եղբայրները ներկայացնում են նաև մարդկության երկու հիմնական բարոյական տեսակները. առաջինը մաքրակրոն է, սակայն աններող, անսեր, օրինապահ, սակայն՝ փարիսեցի, ցանկանում է պահել արդեն հաստատված կարգերը, որովհետև դա շահավետ է իրեն: Երկրորդը սանձարձակ է, սրբապիղծ ու մեղքերի մեջ թաղված, սակայն սպառված չէ սիրելու կարողությունից - ընդունակ զղջալու, ապաշխարելու ու նորը, ավելի կատարյալը կառուցելու:*

*ԱՆԻՐԱՎ ՏՆՏԵՍԻ ԿԻՐԱԿԻ է կոչվում Մեծ պահքի չորրորդ կիրակին (Ղուկ. ԺԶ(16) 1-8): Այս առակով Հիսուսը պատմում է զուտ աշխարհիկ, անիրավ - բարոյական սկզբունքներից զուրկ մի տնտեսի մասին, ով ջանք չէր խնայում իր երկրային ու ֆիզիկական կյանքը ապահովելու համար: Երբ նրան ամբաստանում են տիրոջ առաջ, որ վատնում է վերջինիս ունեցվածքը, տերը կանչում է նրան - հաշվետվություն պահանջում: Տնտեսն անհանգստանում է, որ կարող է բացահայտվել իր անազնվությունը, - կանչում է տիրոջ պարտապաններին ու նրանց հետ միասին փոխում մուրհակները: Իմանալով այս մասին՝ տերը գովում է նրան: Մերժելի արարքը չէ, սակայն, որ առակի խորհրդով գովաբանվում է: Այդ օրինակով Քրիստոսը գովում է նպատակին հասնելու մարդու աննահանջ ջանքն ու հնարամտությունը: Յուրաքանչյուր մարդ այս աշխարհում Աստծու կողմից նշանակված տնտես է, ով պետք է իմաստնաբար տնօրինի իր բաժին տնտեսությունը՝ կյանքը, խելքը, շնորհները, ինչպես նաև նյութական հարստությունն ու ունեցվածքը: «Այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են իրենց շրջանակում իրենց գործերը - հետապն-*

*դածը հաջողեցնելու համար, քան լույսի որդիները իրենց սերնդի մեջ: Անիրավ մամոնայից (դրամ) ձեզ համար բարեկամներ արեք»,-պատվիրում է Հիսուսը առակում (Ղուկ., ԺԶ(16), 8-9): Աշխարհի որդիները նրանք են, ովքեր ապրում են զուտ այս աշխարհի համար, դրա չափանիշներով – պահանջներին համապատասխան: Նրանց խորթ են բարոյական օրենքները, իսկ մյուս օրենքներն օգտակար են այնքանով, որքանով ծառայում են իրենց շահին ու հաճույքին: Չեն հավատում Աստծու գոյությանը –, բնականաբար, չեն ձգտում հավիտենական կյանքի: Սրանց բնորոշ ներկայացուցիչը առակի տնտեսն է: Հակառակ այս մարդկանց, լույսի որդիների համար երկրային կյանքը կար–որ է այնքանով, որքանով ապահովում – արդյունավորում է հավիտենական կյանքը, – նրանց բարոյական չափանիշները խարսխված են Ավետարանի պատվիրաններին: Առակում աշխարհի որդիների օրինակով Հիսուսը ցանկանում է թելադրել լույսի որդիներին, որ եթե առաջինները այդքան քաջեռանդ են իրենց ձգտումներում – նպատակների մեջ, օգտագործում են ցանկացած հնարավորություն ու միջոց, խելք ու կարողություն՝ իրենց երկրավոր ու ժամանակավոր կյանքը ապահովելու, ինչո՞ւ նույն քաջեռանդությունն ու նախանձախնդրությունը չպիտի դրս–որեն լույսի որդիները անհամեմատ արժեքավոր ու հավիտենական կյանքի համար:*

*Տնտեսի կիրակիից հետո Մեծ Պահքի 24-րդ օրը կոչվում է* ՄԻՋԻՆՔ: *Այն հիշեցնում է, որ պահքը հասել է իր կեսին: Միջինքի կապակցությամբ չկան եկեղեցական հատուկ արարողություններ:*

ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻ *է կոչվում Մեծ պահքի հինգերորդ կիրակին (Ղուկ., ԺԸ(18), 1-8): Անիրավ դատավորի ու այրի կնոջ մասին առակը պատմում է, թե ինչ-*

*պես Աստծուց չվախեցող – մարդկանցից չամաչող դատավորը՝ հոգնած այրի կնոջ անդադրում դիմումներից, նրա հարցը արդարությամբ վճռում է: Դատավորի կիրակին անձանձրույթ ու հարատ- աղոթքի խորհուրդն է ամփոփում, այն աղոթքի, որի կար-որությունը մեր Տերն Ինքն է Իր խոսքով ու կյանքով հաստատել, երբ հաճախ ամբողջ գիշերն աղոթքով էր անցկացնում, իսկ երբեմն էլ «խույս էր տալիս դեպի ամայի տեղեր – աղոթքի էր կանգնում» (Ղուկ., Ե, 16): Եթե անիրավ դատավորը այրի կնոջ անդադրում դիմումին ունկն դրեց, որքան լսելի է, ուրեմն, մարդու դիմումը՝ աղոթքը, Տիրոջը: Աղոթքը հոգ-որ կյանքի ողնուծուծն է, հոգին: Քրիստոսն ուսուցանում է, որ չպետք է աղոթել մարդկանց ցուցադրելու, եր-ալու համար, այլ Անիրավ դատավորի առակի այրի կնոջ նման՝ հարատ-, ջերմեռանդ, մաքուր սրտով ու անկեղծ հավատով, որի առաջ տեղի տվեց անգամ անիրավությունը:*

ԳԱԼՍՏՅԱՆ ԿԻՐԱԿԻ *է կոչվում Մեծ պահքի վեցերորդ կիրակին, որը նվիրված է Քրիստոսի երկրորդ Գալստյանը: Այդպես կոչելով՝ Եկեղեցին նախ հիշեցնում է Փրկչի առաջին Գալուստը՝ մարդեղությունը, որով հնարավոր դարձավ մարդու նորոգությունն, ու բացվեց նրա առջ- փրկության դուռը: Հիսուսի առաջին Գալուստը կատարվեց իբր- խոստացված Մեսիայի հայտնություն (այսինքն՝ Ս. Ծնունդը): Գալստյան կիրակիի ավետարանական հատվածները (Ղուկ., ԻԱ(21), 5-38, Մատթ., ԻԲ(22), 34-ԻԳ(23), 39) սկսվում են Հիսուսի մեսիական հանգամանքները հաստատելով – ավարտվում Նրա երկրորդ Գալստյան ակնարկով. «Ձեզ ասում եմ, որ այսուհետ- Ինձ այլ-ս չեք տեսնի, մինչ- որ ասեք՝ օրհնյալ է Նա, Ով գալիս է Տիրոջ անունով»: Քրիստոսի երկրորդ Գալստյան խորհուրդը կրող կիրակին հիշեց-*

*նում է, որ Նրա Գալստյամբ սկսվելու է նոր դարաշրջան, բացվելու է վարագույրը «նոր երկնքի ու նոր երկրի» (Բ Պետրոս, Գ, 13, Հայտն., ԻԱ(21), 1), ուր կվերանան Մեծ Պահքը, ինչպես նա– դրա անհրաժեշտությունը ծնող պատճառները, որտեղ կտիրեն ուրախությունն ու ցնծությունը – կբնակվի արդարությունը (հմմտ. Բ Պետրոս, Գ, 13), – որի բնակիչները «հաղթողները» (հմմտ. Հայտն., ԻԱ(21), 7) կլինեն:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Մեծ պահքի կիրակիները իրենց առանձին խորհուրդներով – միասին՝ որպես դրախտից Գողգոթա, այսինքն՝ մարդկության փրկագործության ուղին ներկայացնող ամբողջություն:

-Հայ Եկեցու յուրահատկությունը՝ Մեծ պահքի կիրակիներին տրված անունները:

-Արտաքսման կիրակի. մեր նախածնողների՝ դրախտից արտաքսվելու պատմությունը որպես յուրաքանչյուր մարդու հետ հավերժ կրկնվող պատմություն:

-Անառակի կիրակի. Աստված մարդու համար գթառատ ու հոգատար Հայր է, Ով մշտապես պատրաստ է ներելու – հետ ընդունելու:

-Ավագ – կրտսեր անառակները որպես հեթանոսների ու հրեաների, ինչպես նա–՝ մարդկային բարոյական երկու տեսակների խորհրդանիշ:

-Անիրավ տնտեսի կիրակի. այս աշխարհի որդիների քաջեռանդությամբ նախանձախնդիր լինել հավիտենական կյանք վաստակելու:

-Միջինք:

-Դատավորի կիրակի. հարատ–, անկեղծ հավատով աղոթքի զորությունը – այն որպես խնդրածը Աստծուց ստանալու երաշխիք:

-Գալստյան կիրակի. Քրիստոսի երկրորդ գալուստը որպես նոր դարաշրջանի սկիզբ, երբ կվերանան պահքն ու դրա անհրաժեշտությունը – հավետ կտիրեն արդարությունը, ուրախությունն ու սերը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Հայ Եկեղեցին քրիստոնյա մյուս Եկեղեցիներից զատորոշող – ինքնատիպ դիմագիծ տվող եր-ույթներից մեկն էլ Մեծ պահքի կիրակիներին տրված հատուկ անուններն են: Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի գեղեցիկ բնորոշմամբ՝ այդ կիրակիները ոսկե շղթայով գոտ-որում են Մեծ պահքը: Կիրակիներից յուրաքանչյուրը ներկայացնում է Ադամի ու Եվայի՝ դրախտից արտաքսման պատմությունը – Հիսուսի պատմած առակներից մեկը: Յուրաքանչյուրն ունի իր առանձին խորհուրդը, սակայն բոլորը միասին մի հոյակապ ամբողջությամբ մարդու փրկագործության ճանապարհին են նշում: Դրանց ամբողջությունը դրախտից Գողգոթա, այսինքն՝ անկումից փրկություն, մահվանից հարություն, արտաքսումից վերադարձ այն ճանապարհն է ներկայացնում, որը յուրաքանչյուր մարդ անցնում է յուրովի, – միաժամանակ ողջ մարդկությունն է ընթանում այդ ուղիով:

Ավագ շաբաթ

*Քրիստոսի՝ Երուսաղեմ մուտքի հաջորդ շաբաթը կոչվում է Ավագ: Այն հիշատակությունն է Նրա կյանքի վերջին յոթ օրերի իրադարձությունների – նախապատրաստությունը՝ Քրիստոսի Հարության տոնի: Շաբաթը կոչվում է Ավագ, որովհետ- ամենամեծն ու նշանակալին է ներկայացվող դեպքերի թե՛ կար-որությամբ – թե՛*

*խորհրդով: Ինչպես ողջ շաբաթը, այնպես - յոթ օրերից յուրաքանչյուրը հորջորջվում է «Ավագ» անունով: Ավագ շաբաթվա իրադարձությունները ներկայացնում են Հիսուսի՝ հանուն մարդկության սիրո ու փրկության կատարած Ինքնազոհողությունը՝ չարչարանքները, խաչին գամվելը, մահը - թաղվելը: Այդ օրերին Եկեղեցին նորից վերապրում է մարդկության անցած ողջ ուղին՝ դրախտային երանավետ կյանքից, անհնազանդության հետ-անք անկումից ու շնորհազուրկ, տառապագին կյանքից մինչ- Քրիստոսի պարգ-ած Փրկության հուսառատ պահը:*

Ավագ երկուշաբթի, Ավագ երեքշաբթի - Ավագ չորեքշաբթի *օրերին եկեղեցում հինկտակարանյան ընթերցումներն ու հիշատակությունները նվիրված են Աստծու արարչագործությանը, մարդու ստեղծմանը, Աստծու ներկայությամբ դրախտում նրա երանությանը, պատվիրանազանցությանն ու դրախտից արտաքսմանը, մեղավոր մարդկության պատուհասմանը ջրհեղեղի միջոցով, նոր մարդկության սկզբնավորմանը Նոյի ընտանիքից, Աբրահամի ջանքերին՝ Աստծու ցասումից փրկելու Սոդոմի ու Գոմորի ամբարիշտ բնակիչներին, Ղովտի ընտանիքի փրկությանը, - այս ամենը՝ հիշեցնելու համար Աստվածորդու մարդանալու, աշխարհ գալու անհրաժեշտությունը, մարդկության փրկությունը Քրիստոսով: Նորկտակարանյան ընթերցումները հիշեցնում են Հիսուսի կյանքի վերջին օրերի իրադարձությունները:*

Ավագ երկուշաբթին *հիշատակությունն է Հիսուսի՝ անպտուղ թզենուն անիծելու (Մարկ., ԺԱ(11), 12-14, 20-25, Մատթ., ԻԱ(21), 18-19) - Երուսաղեմի տաճարը լումայափոխներից ու աղավնավաճառներից մաքրա-*

*գործման (Մարկ., ԺԱ(11), 15-19, Մատթ., ԻԱ(21), 12-17, Ղուկ., ԺԹ(19), 45-48, Հովհ., Բ, 13-22):*

*Անպտուղ թզենու չորացման դրվագը օրինակն ու խորհրդանիշն է հավատի ու դրա հրաշագործ զորության. «...Եթե հավատ ունենաք - չերկմտեք, ոչ միայն կանեք այդ թզենուն պատահածը, այլ թեկուզ - այդ լեռանն ասեք՝ ելի՛ր ու ծովը ընկի՛ր, այն կկատարվի: Եվ ամեն ինչ, որ ուզեք աղոթքի մեջ հավատով, կստանաք»,-ուսուցանում է Հիսուսը (Մատթ., ԻԱ(21), 20-22): Թզենին խորհրդանշում է թերահավատ ու երկմիտ, նա-՝ հավատացող, սակայն հավատի գործեր չկատարող մարդուն: Այն պատկերն է մոլորված ու անհավատ մարդկության, ով հեռու է զղջումից ու ապաշխարությունից - այդ պատճառով դատապարտված է կորստյան:*

*Հիսուսը դուրս հանեց տաճարում առ-տուր կատարող բոլոր լումայափոխներին ու աղավնավաճառներին՝ շրջելով ու կործանելով նրանց սեղանները, - մաքրեց Աստծու տունը. «Գրված է՝ իմ տունը աղոթքի տուն պիտի կոչվի, իսկ դուք ավազակների որջ եք արել այդ» (Մատթ., ԻԱ(21), 12-13: Աստծու տաճարը երկինք է երկրի վրա - միայն աղոթքի ու պաշտամունքի տուն: Տաճարի մաքրագործումը նա- ակնարկ է աստվածային Դատաստանի:*

Ավագ երեքշաբթին *եկեղեցական Տոնացույցով նվիրված է Տասը կույսերի առակին (Մատթ., ԻԵ(25), 1-13): Առակով Հիսուսն այլաբանորեն պատասխանում է Իրեն տրված՝ Երկնքի արքայության մասին հարցերին - հայտնում այնտեղ մտնելու պայմանները. հարատ- աղոթք - հավատի արգասավոր գործեր: Տասը կույսերը քրիստոնյաներն են, ովքեր հարատ-ում են հոգ-որ արթնության մեջ - միշտ պատրաստ են Փեսայի՝ Փրկչի Գալստյանը: Հակառակ դեպքում նրանք կհայտնվեն*

*երկնքի արքայության փակ դռների հետ-ում - կլսեն Աստծու մերժումը. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզ չեմ ճանաչում» (Մատթ., ԻԵ(25), 12):*

*Հայ Եկեղեցու Ավագ երեքշաբթիի ծիսական արարողությունների շարքից է տասը կույսերին խորհրդանշող տասը մանուկների՝ վառվող մոմերով եկեղեցում, Ավետարանի ընթերցմամբ ս. խորանի առջ-կանգնելու սովորույթը:*

Ավագ չորեքշաբթին *հիշատակությունն է Բեթանիայում կնոջ ձեռքով Հիսուսի գլուխը - ոտքերը նարդոսի թանկարժեք յուղով օծման (Մատթ., ԻԶ(26), 6-13, Մարկ., ԺԴ(14), 3-9, Հովհ., ԺԲ(12), 1-11): Խորհրդանշական այս օծումը մատնանշում է Հիսուսի՝ Տեր - Թագավոր ամենայնի լինելը, ինչպես նա- նախագուշակում Նրա չարչարանքներն ու մահը. «...Իմ մարմնի վրա այդ յուղը թափելով՝ նա Իմ թաղվելը կանխանշեց»:*

Ավագ հինգշաբթի *առավոտյան Եկեղեցին նշում է ՎԵՐՋԻՆ կամ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ընթրիքի հիշատակությունը, որի ժամանակ հաստատվեց Հաղորդության խորհուրդը (Մատթ., ԻԶ(26), 17-25, Մարկ., ԺԴ(14), 12-26, Ղուկ., ԻԲ(22), 7-14, 21-23, Հովհ., ԺԳ(13), 21-30): Վերջին ընթրիքի ժամանակ Հիսուսը, աշակերտներին բաժանելով հացն ու գինին, դրանք խորհրդաբանորեն ներկայացրեց որպես Իր Մարմինը - Արյունը, այսինքն՝ Նրա կամավոր զոհաբերությունը խաչի վրա: Այսպիսով՝ զատկական գառան զոհաբերման փոխարեն Աստծու Գառը պատարագվեց հանուն մարդկության փրկության, արտաքին ծեսը վերածվեց հոգ-որ զոհաբերության: Որպես Իր Մարմնի - Արյան խորհրդանիշեր՝ Տերն ընտրեց հացն ու գինին, որովհետ-, ինչպես ս. Գրիգոր Տաթ-ացին է ասում, հացը ցորենի բազում հատիկներից է ժողովվում, - գինին խաղողի բազմաթիվ*

*պտուղներից է հավաքվում: Եվ սա մատնանշում է Քրիստոսի Մարմինը, որը բազում մասերից է ժողովվել – բոլորվել, նա–՝ սուրբ Եկեղեցին, որը Քրիստոսի խորհրդանշական մարմինն է, բազմաթիվ հավատացյալներից է համախմբվել: Այսպես Հիսուսը հաստատեց Հաղորդության խորհուրդը: Հետագայում Եկեղեցու Հայրերի կողմից այն միացվեց ս. Պատարագին:*

*Հինգշաբթի օրվա ավետարանական ընթերցումներն ամբողջովին նվիրված են Քրիստոսի Հարությանը: Այս օրը մատուցվում է պատարագ, կատարվում խոստովանություն – ցանկացողներին տրվում է հաղորդություն, սակայն՝ պահքը չլուծելու պայմանով:*

*ՈՏՆԼՎԱ: Երուսաղեմում, Վերնատանը աշակերտների հետ զատկական սեղան նստելուց առաջ Հիսուսը հերթով լվանում է աշակերտների ոտքերը: Աստված լվանում է Իր արարածների ոտքերը՝ ցույց տալով Իր կատարյալ սերը նրանց հանդեպ – խոնարհության ու հեզության օրինակ դառնալով՝ հորդորում նրանց նույն կերպ վարվել միմյանց հանդեպ:*

*Ավագ հինգշաբթի օրվա երկրորդ կեսին եկեղեցիներում կատարվում է ոտնլվայի արարողությունը: Բացվում է ս. խորանի վարագույրը, նախ օրհնվում են յուղը – ջուրը, այնուհետ– բեմի վրա բարձրաստիճան հոգ–որականը (կաթողիկոսը կամ եպիսկոպոսը – կամ քահանան) լվանում են 12 եկեղեցական սպասավորների, իսկ թեմերում՝ երեխաների ոտքերը – յուղով օծում՝ խորհրդանշելով Հիսուսի ոտքերը կնոջ կողմից յուղով օծվելը: Արարողությունից հետո օրհնված յուղը բաժանվում է հավատացյալներին: Ոտնլվայի արարողության հաստատումը վերագրվում է Եփրեմ Խուրի Ասորուն (306ՎՆ373 թթ.): Արարողությունը Հայ Եկեղեցու*

ծիսակարգ է անցել 11-րդ դարում՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի (1066–1105 թթ.) կողմից:

Ավագ հինգշաբթիի երեկոն կիզակետն է հավատի ու անհավատության, հավատարմության ու դավաճանության հավերժական պայքարի: Այդ գիշեր Տերը հայտնում է նա– Հուդայի՝ Իրեն մատնելու մասին. «Հիմա ինչ որ անելու ես, իսկույն արա» (Հովհ., ԺԳ(13), 27):

ԽԱՎԱՐՈՒՄ: Քանի որ, եկեղեցական օրացույցի համաձայն, հաջորդ օրն սկսվում է նախորդ օրվա ժամերգության ավարտից հետո, ապա Ավագ ուրբաթի արարողություններն սկսվում են հինգշաբթի օրվա ուշ երեկոյան: Քրիստոսի մատնությանը, չարչարանքներին ու խաչելությանը նվիրված Ավագ ուրբաթի արարողությունները կոչվում են Խավարման կարգ: Ավետարանական ընթերցումները հիշատակում են Հուդայի մատնությունը, Հիսուսի՝ Գեթսեմանիի այգում աղոթքը, ձերբակալությունը, քահանայապետերի կողմից հարցաքննվելը, չարչարանքներն ու խաչելությունը, Պետրոսի երեք անգամ ուրանալն ու զղջալը: Խավարման արարողության ժամանակ եկեղեցու խորանի վրա վառվում է 12 մոմ՝ խորհրդանշելով Հիսուսի աշակերտներին: Դրանց մեջտեղում վառվում է մյուսներից ավելի մեծ մոմ, որը Հիսուսին է խորհրդանշում: Հուդային խորհրդանշում է ծայրում վառվող ս– մոմը: Ավետարանական յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո հանգցնում են յուրաքանչյուր կողմից մեկական մոմ: Միայն Հիսուսին խորհրդանշող մոմն է շարունակվում վառվել՝ ի նշան ձերբակալության ժամանակ աշակերտների փախուստի – Հիսուսի՝ միայնակ մնալու:

Ավագ ուրբաթը Հիսուսի չարչարանքների ու խաչելության (Մատթ., ԻԷ(27), 32-44, Մարկ., ԺԵ(15), 21-32,

*Ղուկ., ԻԳ(23), 26-43, Հովհ., ԺԸ(18), 17-27) հիշատակության խորհուրդն է:*

*Խորհրդավոր ընթրիքից հետո, Գեթսեմանիի պարտեզում, Հուդայի առաջնորդությամբ հռոմեացի զինվորները ձերբակալում են Հիսուսին: Ենթարկվելով գանահարության, չարչարանքների ու ծաղրանքի՝ Նա դատապարտվում է մահվան – գամվում խաչին: Հիսուսի խաչելությամբ ու մահով իրականանում – լրման են հասնում հինկտակարանյան բոլոր մարգարեությունները Մեսիայի գալստյան – փրկագործական առաքելության վերաբերյալ: Հիսուսի մահվան պահին ար–ն ու լուսինը խավարում են, Երուսաղեմի տաճարի վարագույրը պատռվում է, երկիրը շարժվում է, ժայռերը ճեղքվում են, – բացվում են գերեզմանները՝ ազդարարելով հին աշխարհի ու դժոխքի մոտալուտ կործանումը:*

*Բուն Ավագ ուրբաթ օրը նշվում է Հիսուսի՝ խաչից իջեցման – թաղման հիշատակը: Այդ օրը պատարագ չի մատուցվում, որովհետ– ուրբաթ օրը Հիսուսն Ինքը պատարագվեց՝ որպես կենդանի զոհ: Առավոտյան ժամերգության ընթացքում կարդացվում են Հիսուսի՝ Պիղատոսի մոտ տարվելու, Գողգոթայի վրա խաչվելու, մահվան, ար–ի խավարման ավետարանական հատվածները: Երեկոյան կատարվում է թաղման կարգ: Եկեղեցում պատրաստվում է Հիսուսի խորհրդանշական գերեզմանը, որի առաջ ծնրադիր երգվում է «Սուրբ Աստվածը», որը վերագրվում է Հովսեփ Արիմաթացուն, ով առաջինն այն երգեց Հիսուսին խաչից իջեցնելու ժամանակ:*

*Մեռած Հիսուսին խաչից իջեցնում – պատանքի մեջ փաթաթելով՝ դնում են վիմափոր գերեզմանի մեջ ու գերեզմանի մուտքը փակում վեմ քարով. «Օրը ուրբաթ էր, ու լուսանում էր շաբաթը» (Ղուկ., ԻԴ(24), 54):*

*Ի հիշատակ այս դեպքերի՝ Ավագ ուրբաթ օրվա երեկոյան պատրաստվում է Հիսուսի խորհրդանշական ծաղկահյուս գերեզմանը, որը շարականների երգեցողությամբ, թափորով ու խնկարկությամբ տեղադրվում է եկեղեցում:*

Ավագ շաբաթ օրը *նվիրված է Հիսուսի թաղմանը – գերեզմանի կնքմանը (Մատթ., ԻԷ(27), 57-66, Մարկ., ԺԵ(15), 42-47, Ղուկ., ԻԳ(13), 50-56, Հովհ., ԺԹ(19), 38-42): Քանի որ շաբաթ օրը հրեական օրենքով հանգստյան օր էր, աշակերտները հեռանում են՝ հաջորդ օրը վերադառնալու – Հիսուսի մարմինը օծելու մտադրությամբ: Նախորդ օրերի լարվածությունը Ավագ շաբաթվա եկեղեցական արարողություններում արդեն չի զգացվում: Այս օրն իրոք հանգստի ու խաղաղության մթնոլորտով է հատկանշվում. զգացվում է Հիսուսի Հարության մոտ լինելը:*

*Շաբաթ երեկոյան, ինչպես Ս. Ծննդյան տոնի նախորդ երեկոյան, եկեղեցիներում մատուցվում է ճրագալույցի ս. Պատարագ, որի ավարտին վերջանում է նա– Մեծ պահքը: Պատարագից հետո կատարվում է Ս. Հարության նախատոնակը: Տրվում է նա– Հիսուսի Հարության ավետիսը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ավագ շաբաթը որպես Հիսուսի ինքնազոհողությունը ներկայացնող՝ Նրա կյանքի վերջին յոթ օրերը:

-«Ավագ» անվանման բացատրությունը: Ավագ շաբաթվա դեպքերի առանձնակի կար–որությունն ու խորհուրդը:

-Ավագ երկուշաթի, երեքշաբթի – չորեքշաբթի օրերի եկեղեցական արարողությունները:

-Ավագ երկուշաբթին որպես Հիսուսի՝ անպտուղ թզենին անիծելու հիշատակություն: Անպտուղ թզենին՝ թերահավատ, զղջումից ու ապաշխարումից հեռու մարդու խորհրդանիշ:

-Ավագ երեքշաբթի՝ տասը կույսերի առակի հիշատակությունը: Երկնքի թագավորություն մտնելու պայմանները:

-Ավագ չորեքշաբթի՝ Բեթանիայում կնոջ կողմից Հիսուսի գլուխը – ոտքերը նարդոսի թանկարժեք յուղով օծելու դեպքը որպես մատնանշում Հիսուսի՝ Տեր – Թագավոր ամենայնի լինելու – կանխագուշակում Նրա չարչարանքների ու մահվան:

-Ավագ հինգշաբթի՝ Վերջին կամ՝ Խորհրդավոր ընթրիքի հիշատակությունը, Հաղորդության խորհրդի հաստատումը: Հացն ու գինին որպես Քրիստոսի Մարմնի ու Արյան խորհրդանիշ: Ոտնլվա: Ավագ հինգշաբթին որպես հավատի ու անհավատության, հավատարմության ու դավաճանության կիզակետ: Հինգշաբթի երեկոյան՝ խավարման կարգ:

-Ավագ ուրբաթ՝ Հիսուսի չարչարանքների ու խաչելության հիշատակությունը: Երեկոյան Հիսուսի խորհրդանշական գերեզմանի պատրաստումը:

-Ավագ շաբաթը նվիրված է Հիսուսի թաղմանը – գերեզմանի կնքմանը: Մոտալուտ Հարության զգացողությունը: Ճրագալույցի Պատարագ:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ավագ շաբաթը հատկանշվում եկեղեցական խորհրդավոր արարողություններով: Ավագ շաբաթվա բոլոր օրերը, ինչպես Մեծ պահքի կիրակիները, ունեն իրենց հատուկ խորհուրդներ ու արարողություններ, սակայն Մեծ պահքի կիրակիների նման, Ավագ շաբաթ-

վա յոթ օրերն էլ մի ամբողջություն են: Իրենց ամբող-ջությամբ այդ օրերը ներկայացնում են Հիսուսի կյանքի վերջին՝ ամենանշանակալի իրադարձությունները: Ա-վագ շաբաթվա յուրաքանչյուր օր, ներկա գտնվելով ե-կեղեցական արարողություններին – մասնակից դառ-նալով դրանց խորհուրդներին, մենք էլ կարծես մասնա-կիցն ենք դառնում այդ իրադարձությունների. գիտակ-ցում ենք մեր թերահավատությունն ու զղջումից, ա-պաշխարությունից հեռու դատարկ ու անպտուղ կյան-քը՝ ճիշտ – ճիշտ անիծված թզենու նման: Երկնքի ար-քայության փակ դռների հետ–ում լինելու երկյուղով, տասը կույսերի նման, հարատ– աղոթքով ու հավատի արգասավոր գործերով պատրաստվում ենք Փրկչի գալստյանը: Անցնում ենք Հիսուսի չարչարանքների, խաչին գամվելու, մահվան ու թաղվելու ճանապարհը՝ մինչ– Քրիստոսի պարգ–ած Փրկության հուսառատ պահը: Հովհան Ոսկեբերանի խոսքերով՝ «Այդ շաբաթ... տրորվեց ու ոտնահարվեց մահը, ջնջվեց մեղքը, փշրվե-ցին երդումն ու դրախտի փականը, կոտրվեց երկնքի անմատչելիությունը, մարդիկ մերձեցան հրեշտակնե-րին, հեռացվեց բաժանության պատնեշը, զավթվեցին անջրպետող սահմանները, Աստված աշխարհում հաշ-տեցրեց երկնայինն ու երկրայինը»:

ԱՊՐԻԼ

## Հիսուսի մուտքը Երուսաղեմ կամ՝ Ծաղկազարդ

Երեխաների օրհնության օր

*Մեծ պահքի վերջին կիրակին կոչվում է* Ծաղկազարդի *կիրակի: Այն հիշատակությունն է Հիսուսի՝ իբր-Մեսիա, Երուսաղեմ հանդիսավոր մուտքի (Մատթ., ԻԱ(21), 1-11, Մարկոս, ԺԱ(11), 1-11, Ղուկ., ԺԹ(19), 28-40, Հովհ., ԺԲ(12), 12-19):*

*Ծաղկազարդի նախորդ երեկոյան նշվում է Ղազարոսի հարության (Հովհ., ԺԱ(11), 1-44) հիշատակը՝ որպես օրինակ – ակնարկություն համընդհանուր հարության – փրկագործության: Այն պետք է իրականանա ապագայում, սակայն միաժամանակ արդեն իսկ իրականություն է Ղազարոսի հարությամբ, – Քրիստոսն Ինքն է Հարությունն ու Կյանքը (Հովհ., ԺԱ(11), 25): Ի Քրիստոս մկրտությամբ, քրիստոնեական հավատով մարդն ընդունում է Նրան – հոգ-որ նոր ծնունդ ապրում, նորոգվում ու հարություն առնում: Նշելով Ղազարոսի հարության հիշատակը՝ Եկեղեցին փառաբանում է Հիսուսին որպես մահը հաղթողի – հավիտենական կյանք պարգ-ողի:*

*Իր աշակերտների հետ Հիսուսն ուղ-որվում է դեպի Երուսաղեմ: Մոտենալով Երուսաղեմին մերձակա՝ Ձիթենյաց լեռան մոտ գտնվող Բեթփագե գյուղին՝ Հիսուսը Պետրոս – Հովհաննես առաքյալներին պատվիրում է գնալ այնտեղ – բերել փողոցում կապված մի ավանակ՝ իր քուռակի հետ: Հիսուսը նրանց պատվիրում է նա-, որ եթե հարցնեն, թե ինչու են տանում, պատասխանեն, որ Տիրոջը պետք են: Առաքյալներն այդպես էլ անում են. գտնում – բերում են ավանակին ու նրա քու-*

*ռակին, նրանց վրա զգեստներ փռում, - Հիսուսը նստած ավանակի վրա՝ մտնում է Երուսաղեմ: Բազմաթիվ մարդիկ հանում են իրենց զգեստները - փռում Նրա ճանապարհին, իսկ մյուսները Տիրոջը դիմավորում ու ողջունում են ձիթենու կամ արմավենու կանաչ ոստերով - «Ովսաննա Բարձրյալին, օրհնյա՛լ լինի Նա, որ գալիս է Տիրոջ անունով» բացականչություններով՝ ճանաչելով Նրան որպես Թագավոր՝ հաղթական պսակը գլխին:*

*Երուսաղեմի մոտ Հիսուսին ժողովուրդը դիմավորում է որպես Մեսիայի՝ Փրկչի, համամայն մարգարեության՝ «...Նրան են սպասում ժողովուրդները: Իր ավանակը կկապի որթից, իսկ որթի ոստից՝ էշի քուռակը: Իր պատմուճանը կլվա գինով - Իր հագուստը՝ խաղողի արյամբ» (Ծննդ., ԽԹ(49), 10-11): Հիսուսի՝ ավանակի վրա նստելը խորհրդանշում է մարդկության՝ Հիսուսի լուծը կրելն ու Նրա սիրո պատվիրաններով ապրելը - Երուսաղեմ՝ Աստծո թագավորություն մտնելը, դեպի որտեղ ճանապարհը խոնարհությամբ է: Զգեստներն ավանակի վրա փռելը խորհրդանշում է մկրտությամբ մաքրվելը, երբ մերկանում ենք մեր հին՝ մեղքի հանդերձից ու նորը հագնում: Իսկ Տիրոջ ճանապարհին հագուստները փռելը Նրա ճանապարհը պատրաստելը - մեր անձերը Նրան նվիրելն է խորհրդանշում:*

*Ինչպես նշվեց, Ծաղկազարդի խորհրդով Եկեղեցին հիշատակում է Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ, որը նաև Նրա խորհրդանշական մուտքն է Վերին Երուսաղեմ: Եթե երկրային Երուսաղեմ մտնելով՝ պետք է խաչի վրա մատնվեր տառապագին մահվան, ապա երկնային Երուսաղեմում պետք է հավիտյան թագավորի: Այս իմաստով Քրիստոսի մուտքը Երուսաղեմ կոչվում է նաև Գալուստ, ինչի պատճառով Ծաղկազար-*

*դի երեկոյան կատարվում է դռնբացեքի խորհրդանշական արարողությունը: Ծեսի ընդհանուր իմաստն է, որ Քրիստոսը, վերին Երուսաղեմ մտնելով՝ մեզ -ս արժանացնի փրկության դռնից ներս մտնելու. «Բա՛ց մեզ, Տե՛ր, բա՛ց մեզ Տե՛ր, բա՛ց մեզ Տե՛ր, զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ Քեզ» աղաչանքն անպատասխան չի մնում: Աստծու ողորմության դուռը բաց է -՛ արդարների, -՛ մեղավորների առաջ, ովքեր կարող են արդարանալ մեղքերի խոստովանությամբ, ապաշխարությամբ ու զղջումով: Նախկինում դռնբացեքի արարողության ժամանակ եկեղեցու դռները փակվում էին, - արարողությունը շարունակվում էր գավթում: Սակայն այժմ փակվում է միայն խորանի վարագույրը, - արարողությունը կատարվում է եկեղեցու ատյանում:*

*Արմավենու կամ ձիթենու կանաչ ոստերով Տիրոջը Երուսաղեմի մոտ դիմավորելու հիշատակությունն է Ծաղկազարդի տոնին եկեղեցիներում ծառերի կանաչ ճյուղեր օրհնելը - տուն տանելը: Հայաստանում ընդունված է օրհնել ուռենու ոստերը, որոնք անպտուղ են - խորհրդանշում են հեթանոսներին, որոնք անպտուղ էին - պտղաբերեցին միայն Քրիստոսին ընծայվելուց հետո: Ոստերի փափկությունը Քրիստոսին հետ-ողների խոնարհության նշանակն է, իսկ ոստերի սնամեջ լինելը՝ նրանց՝ հոգով աղքատությունն է, որն ունեցողներին երանի է տալիս Տերը (Մատթ., Ե, 3):*

*Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ Ծաղկազարդի տոնը հայտարարվել է նա- որպես* Երեխաների օրհնության օր*:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ծաղկազարդը որպես Հիսուսի՝ Երուսաղեմ հաղթական մուտքի հիշատակություն:

-Ծաղկազարդի նախորդ երեկոյան՝ Ղազարոսի հարության հիշատակի նշումը:

-Հիսուսի մուտքը Երուսաղեմ, ժողովրդի դիմավորումը Նրան՝ որպես Մեսիայի, խորհուրդը:

-Երկրային Երուսաղեմ մուտքը որպես երկնային՝ Վերին Երուսաղեմ մուտքի:

-Դռնբացեք:

-Արմավենու կամ ձիթենու ճյուղերի խորհուրդը:

-Ծաղկազարդը որպես Երեխաների օրհնության օր:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Երուսաղեմը Հիսուսի երկրային կյանքի վերջին դրվագների վայրն է: Հիսուսի, որպես Մեսիայի, հանդիսավոր մուտքը Երուսաղեմ – ժողովրդի ցնծագին դիմավորումը խորհրդանշում է, որ ինչպես երկնային Թագավորը մտավ Երուսաղեմ՝ մարդու փրկության համար կամավոր Ինքնազոհողությամբ հանձն առնելու չարչարանքներն ու մահը, այնպես էլ փառքով մտնելու է Վերին Երուսաղեմ՝ նախապատրաստելու նա– մարդու ճանապարհը դեպի երկնային արքայություն:

Սուրբ Աստվածածնին նվիրված տոներ

Ս. Հովակիմի եւ ս. Աննայի, ս. Աստվածածնի՝ Աննայից ու Հովակիմից հղացման, ս. Աստվածածնի ծննդյան,
ս. Աստվածածնի՝ տաճարին ընծայման, Ս. Աստվածածնի
գոտու գյուտի, ս. Աստվածածնի տուփի գյուտի տոներ

*Նոր Կտակարանում ս. Աստվածածնի կյանքի մասին դրվագները ներկայացված են միայն Քրիստոսի կյանքի ու փրկչական գործունեության հետ կապված: Ս. Տիրամոր կենսագրության զգալի մասը ամբողջացնում են եկեղեցական հնագույն գրականության ավանդությունները: Համաձայն դրանց՝ ս. Աստվածածնի ծնողներն են Հովակիմը – Աննան: Հովակիմը սերում էր Դավթի ցեղից – մեծահարուստ ու բարեպաշտ մարդ էր: Աննան սերում էր քահանայական տոհմից – համեստ ու աստվածավախ կին էր: Երկուսն էլ հավատավոր ու առաքինի հոգիներ էին, սակայն զրկված էին զավակ ունենալու երջանկությունից: Չնայած առաջացած տարիքին, նրանք չէին հուսալքվում – անընդհատ աղոթում էին Աստծուն՝ Նրանից ողորմածություն հայցելով: Եվ մի օր Տիրոջ հրեշտակը այցելում է նրանց – հայտնում, որ շուտով զավակ կունենա, ում անունը ողջ աշխարհում պիտի տարածվի: Աննան ուխտ է անում, որ եթե զավակ ունենա, ապա նրան կնվիրի Աստծուն: Ըստ ավանդության, Հովակիմը չի ապրում այնքան, որպեսզի տեսնի Հիսուսի Ծնունդը, սակայն Աննան արժանանում է Տիրոջը տեսնելու երջանկությանը, որից հետո նա վախճանվում է խաղաղությամբ: Մինչ օրս էլ Երուսաղեմում ցույց են տալիս Աստվածամոր բարեպաշտ ծնողների տան տեղը, որտեղ հետագայում կառուցվել է եկեղեցի:*

Ս. Հովակիմի – Ս. Աննայի հիշատակը *Հայ Եկեղեցին տոնում է յուղաբեր կանանց հետ՝ Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնի իննօրյակին հաջորդող երեքշաբթի օրը:*

*Հրեշտակի՝ Հովակիմին ու Աննային հայտնվելուց ու ս. Մարիամի ծննդյան ավետումը տալուց շատ չանցած Աննան զգում է մայրանալու բերկրանքը:* Ս. Աստ-

վածածնի՝ Աննայից ու Հովակիմից հղացման տոնը *Հայ Եկեղեցին նշում է դեկտեմբերի 9-ին:*

*Ծնունդ – ծնվում է Աստծու կողմից խոստացված հրաշագեղ մանուկը: Նրան կոչում են Մարիամ, որը մեկնաբանվում է տարբեր կերպ՝ Լուսավորյալ, Տիրուհի, Հույս:* Սուրբ Կույսի ծննդյան տոնը *Հայ Եկեղեցին նշում է սեպտեմբերի 8-ին:*

*Ս. Մարիամի ծնունդից առաջ Աննան արդեն ուխտել էր իր մանկանը նվիրել Աստծու ծառայությանը: Յոթ տարեկանում Ս. Մարիամն ամբողջությամբ հանձնվում է տաճարին, որտեղ մնում է –ս յոթ տարի՝ սնվելով ու հասակ առնելով առաքինությամբ – աղոթքներով:*

Սուրբ Աստվածածնին տաճարին ընծայելու տոնը *Հայ Եկեղեցում նշվում է նոյեմբերի 21-ին:*

*Ս. Աստվածածինը Տիրոջ Կամքով մարմնով երկինք վերափոխվեց, – նրա մասունքների բացակայությունը պայմանավորեց, որ ս. Տիրամոր հանդեպ սերն ու հարգանքը դրս–որվեն նրան պատկանող իրերին փոխանցված ակնածանքի մեջ: Այն արտահայտվել է դրանց գտնվելու առիթով սահմանված տոներում:*

*Ըստ ավանդության, ս. Աստվածածինն իրեն պատկանող երկու զգեստները – գոտին վերափոխումից առաջ կտակում է երկու աղքատ քրիստոնյա կանանց, ովքեր խնամքով ու զգուշությամբ պահում են իրենց համար թանկագին այդ հիշատակները – փոխանցում սերնդից սերունդ: Հետագայում ս. Տիրամոր գոտին հայտնաբերվում է Երուսաղեմում – Արկադիոս կայսեր օրոք (395Վ408 թթ.) տեղափոխվում Կոստանդնուպոլիս, որտեղ կայսեր – նրա դստեր ջանքերով զետեղվում է թանկարժեք տապանակի մեջ – տեղադրվում Ս. Աստվածածնի անունը կրող եկեղեցում:*

Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնը *Հայ Առաքելական Ս. Եկեղեցին նշում է Ս. Աստվածածնի վերափոխման տոնին հաջորդող երկրորդ կիրակի օրը:*

*Նույն կերպ քրիստոնեական բոլոր Եկեղեցիները մեծ ակնածանքով տոնում են ս. Աստվածածնի տուփի գտնվելու հիշատակը: Նրանում պահվում էր Տիրամոր գլխանոցը: Ավանդության համաձայն՝ տուփը 5-րդ դարում գտնում են կոստանդնուպոլսեցի երկու ազնվական եղբայրներ՝ Գալիլիայի Նազարեթ գյուղում, մի ծեր կնոջ տանը: Ս. Տիրամոր տուփը տանում են Կոստանդնուպոլիս – տեղադրում ս. Աստվածածնի անունը կրող եկեղեցում:*

Ս. Աստվածածնի տուփի գյուտի տոնը *Հայ Եկեղեցին նշում է Հոգեգալուստին հաջորդող հինգերորդ կիրակի օրը:*

## Ավետում սուրբ Աստվածածնի
Մայրության եւ գեղեցկության օր

*Ղուկասի Ավետարանն սկսվում է Հովհաննես Մկրտչի – մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ծնունդների ավետումով: «Ավետում» նշանակում է «բարի լուր»: Եվ եթե Ղուկասի Ավետարանի ներածականը Հովհաննես Մկրտչի ծննդյան պատմությունն է, ապա նախերգանքը Հիսուսի Ծննդյան ավետումն է (Ղուկ., Ա, 26-38): Աստծու մարդեղության՝ մարդկության համար մեծագույն իրադարձությունն սկսվում է Գալիլիայի քաղաքներից մեկում՝ Նազարեթում: Այստեղ ապրող սուրբ Կույս Մարիամին հայտնվում է Գաբրիել հրեշտակապետը – ողջունում. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է»: Այս անսովոր ողջույնից խռովված ու շփոթված սուրբ Կույսին հրեշտակը սրտապնդում – հանդիսավոր*

*ավետում է Աստծու Որդու՝ Մարիամից Ծնվելու մասին. «Մի՛ վախեցիր, Մարիա՛մ, որովհետ- Աստծուց դու շնորհ գտար: Եվ ահա՛ դու կհղիանաս - կծնես մի Որդի ու Նրա անունը Հիսուս կդնես: Նա մեծ կլինի - Բարձրյալի Որդի կկոչվի: Եվ Տեր Աստված Նրան կտա Նրա հոր՝ Դավթի աթոռը, - Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա, - Նրա թագավորությունը վախճան չի ունենա»: Ըստ ավանդության, Գաբրիել հրեշտակապետը ս. Մարիամին հայտնվում է այն պահին, երբ նա կարդում էր Ս. Գրքի Եսայու մարգարեությունը կույսի հղիանալու - որդի ծնելու մասին (Եսայի, Է, 14):*

*Մարիամին անհնարին են թվում հրեշտակի խոսքերը, քանի որ ինքը կույս էր: Սակայն հրեշտակը հանգստացնում է նրան. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, - Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ, որովհետ- Նա, Ով ծնվելու է քեզանից, սուրբ է - Աստծու Որդի կկոչվի»: Եվ «...Աստծու համար անկարելի ոչինչ չկա»: «Ահավասիկ ես մնում եմ Տիրոջ աղախինը. թո՛ղ քո խոսքի համաձայն լինի ինձ». Սուրբ Կույսի՝ խոր հնազանդությամբ հրեշտակին տված այս պատասխանը մարդկության առաջ բացեց փրկության ճանապարհը: Աստվածային արարչագործության ժամանակ տիեզերքում հնչած «թող լինի» առաջին խոսքը երկրորդ անգամ հնչում է Աստվածամոր շուրթերից՝ որպես բարոյական ու հոգ-որ նոր աշխարհի ստեղծագործության սկիզբ, այս անգամ արդեն՝ մարդու կողմից: Մարդ, ով իր ազատ կամքով ընտրել է դեպի Աստված վերադարձի ճանապարհը: Տիեզերքի համար բախտորոշ ու վճռական պահին սուրբ Աստվածածինը, ով ներկայացուցիչն է ողջ մարդկության, սրբագրում է նախածնողների՝ Ադամի ու Եվայի սխալը՝ անտրտունջ ու սիրով հնազանդվելով Աստծու կամքին: Սա է Աստվածամոր*

*մեծության գաղտնիքը, - սրանում է նրա՝ ողջ մարդկության համար Աստծու առաջ բարեխոսելու զորությունը: Առաջին կնոջը՝ Եվային, Աստված պատժեց տառապանքներ կրելու, ցավերով երեխաներ ծնելու, իսկ սուրբ Կույսին՝ նոր Եվային, շնորհ - ուրախություն ուղարկեց: Առաջին կնոջով աշխարհ մտավ անեծքը, իսկ սուրբ Աստվածածնով՝ Շնորհը, Լույսը, Փրկությունն ու Կյանքը՝ Հիսուս Քրիստոսը:*

*Եկեղեցու Հայրերը ս. Աստվածածնին նմանեցրել են Եկեղեցու հետ. ինչպես նրանից Ծնվեց Քրիստոսը, այնպես էլ Եկեղեցու ավազանից ծնվում են քրիստոնյաները, - ինչպես սուրբ Աստվածածինը աշխարհ բերեց Կենդանի Հացը, այնպես էլ Եկեղեցին է իր զավակներին Հաղորդության միջոցով կենդանի հաց մատուցում:*

*Նոր Կտակարանում ս. Աստվածամոր մասին քիչ է պատմվում, քանի որ Ավետարանի նպատակը որ-է մեկի կենսագրությունը ներկայացնելը չէ, այլ Քրիստոսի փրկագործության ու քարոզության բարի լուրը ավանդելը: Սակայն սուրբ Կույսի մասին ավետարանական բոլոր պատմություններում նա միշտ իր Որդու՝ Քրիստոսի կողքին է. -՛ Կանայի հարսանիքում, -՛ Երուսաղեմ ուխտի գնալիս, -՛ առավել -ս Գողգոթայում, երբ նույնիսկ աշակերտները լքեցին Քրիստոսին: Սուրբ Աստվածամոր հեզությունը, խոնարհությունն ու հնազանդությունը Աստծու կամքին բոլոր ժամանակներում մայրության օրինակն է ազգերի համար: Նրա մաքուր կյանքը, առաքինի վարքը - աստվածահաճո ընթացքը օրինակ - պատգամ են մաքրակենցաղությամբ - բարոյական առողջ սկզբունքներով ապրելու: Ս. Աստվածածինը առաքինի, գթառատ, հավատավոր մոր մարմնացումն է, ով իր կյանքն ապրում է զավակի համար: Նրա*

*մեջ ամբողջանում ու խտանում է բարոյականությունը: Այսպիսին է եղել – է մոր կերպարի ընկալումը հայ ժողովրդի կողմից, ինչի պատճառով – Ս. Կույսը մշտապես պատվվել ու մեծարվել է մեզանում:*

*Հայ Առաքելական Ս. Եկեղեցին սուրբ Աստվածածնի ավետման տոնը նշում է ապրիլի 7-ին՝ որպես անշարժ տոն:*

*Վերջին տարիներին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ այդ օրը հայտարարվել է որպես* Մայրության օրհնության օր*: Տոնը նշվում է նա– պետականորեն՝ որպես Մայրության – գեղեցկության օր: Այդ օրը Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության հատուկ կարգ, որպեսզի կանանցից ամենաօրհնյալի՝ սուրբ Աստվածամոր բարեխոսությամբ Աստծու օրհնությունը մտնի յուրաքանչյուր հայ ընտանիք, – Շնորհընկալ Կույսի միջոցով բոլորը շնորհ գտնեն:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Սուրբ Աստվածածնին նվիրված տոները Հայ Եկեղեցում:

-Գաբրիել հրեշտակապետի այցը ս. Կույսին – ողջույնը՝ ավետումը. «Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տերը քեզ հետ է»:

-Ավետումը որպես մարդկության առջ– բացված փրկության ճանապարհ:

-Եկեղեցու Հայրերը՝ ս. Կույսի մասին:

-Ավետման տոնը որպես մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր, ինչպես նա–՝ Մայրության – գեղեցկության օր:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ս. Աստվածամայրը եզակի – բացառիկ դեմք է քրիստոնեական Եկեղեցու սրբերի շարքում, Եկեղեցու – քրիստոնյա ժողովուրդների սիրո ու հարգանքի արտահայտություններում նա երկրորդն է իր Աստվածային Որդուց հետո: Եկեղեցին նրա պատվին սահմանել է յոթ տոն, բացի այդ, առավոտյան ժամերգությունների ժամանակ նրան նվիրված բազմաթիվ շարականներ են երգվում, իսկ ս. Պատարագն սկսվում է նրա բարեխոսությանը դիմելով: Սուրբ Աստվածամոր խոնարհությունն ու հնազանդությունը Աստծու կամքին, նրա մաքուր կյանքը, առաքինի վարքը – աստվածահաճո ընթացքը պատգամ են մաքրակենցաղության ու բարոյական առողջ սկզբունքներով ապրելու՝ բոլոր ժամանակներում մայրության օրինակ լինելով բոլոր ժողովուրդների համար:

Առանձին մարդկանց անհատական, հոգ-որ-բարոյական հատկանիշները կերպ ու ձ– են ստանում ընտանիքներում: Որքան առողջ – ամուր է ընտանիքը, միավորված սիրով ու համաձայնությամբ, կրողը՝ որոշակի սկզբունքների ու արժեքների, այնքան իրական են բարգավաճելու, զարգանալու – գոյատ–ելու հեռանկարներն այն ժողովրդի, որն այդպիսի ընտանիքների ամբողջությունն է: Հետ–աբար, մերօրյա կյանքի ընտանեկան սրբությունների, ավանդույթների արժեզրկումը, հայ կնոջ, հայ մոր կերպարի խամրումը վտանգում է մեր ժողովրդի ապագան: Եվ ս. Աստվածամոր սուրբ ու հավատավոր կյանքը մեզ համար անկրկնելի օրինակ է իսկական կնոջ, մոր – աստվածասեր հավատացյալի:

Սուրբ Հարություն կամ՝ Զատիկ

*Քրիստոնեական տոների շարքում կար-որ - առանցքային են համարվում Ս. Ծննդյան - Ս. Հարության տոները, որոնք մեզ են ավանդվել դեռ-ս առաքելական ժամանակներից: Քրիստոսի հրաշափառ Հարությունը մարդկության պատմության ամենակար-որ ու առանցքային իրադարձությունն է:*

*Այդ գաղափարի շուրջ է, որ համախմբվեցին առաջին քրիստոնյաները, - Ս. Ծննդյան ու Ս. Հարության տոները իրավամբ համարվեցին քրիստոնեական ամենագլխավոր տոները: Դրանք տոնվել են դեռ-ս առաքելական ժամանակներից: Հետագայում տերունական տոները նշվեցին անջատ-անջատ, հաստատավեցին նա- այլ տոներ:*

*Քրիստոսի Հարությունը մանրամասն նկարագրված է չորս Ավետարաններում (Մատթ., ԻԸ(28), 1-20, Մարկ., ԺԶ(16), 1-18, Ղուկ., ԻԴ(24), 1-49, Հովհ., Ի(20), 1-29):*

*Ուրբաթ երեկոյան, երբ Քրիստոսի Մարմինը դրվեց գերեզման, խավարն արդեն համատարած տիրապետող էր դարձել: Խավար էր -՛ նյութական աշխարհում, -՛ առավել -ս մարդկանց հոգիներում: Քրիստոսի տրտում - հուսաբեկ աշակերտներն ու հետ-որդները շփոթված ու իրարամերժ զգացումներով ցրվել էին:*

*Սակայն դրա հակապատկերն է կիրակի առավոտը, երբ յուղաբեր կանայք գնում են Քրիստոսի գերեզման՝ Նրա մարմինը օծելու - խնկարկելու: Նրանք գտնում են վեմը մի կողմ գլորված - գերեզմանը՝ դատարկ: Նրանց դիմավորում են երկու լուսազգեստ հրեշտակներ, ովքեր - ավետում են Քրիստոսի հուսաբեր Հարությունը:*

*Հարության կիրակին առանձնանում է լույսի շքահանդեսով. Քրիստոսի երկրային կյանքը սկսվում է լույսով - լույսով ավարտվում: Ինչպես վեմը գլորվեց մի կողմ, - գերեզմանի խավարը փարատվեց լույսի հրավառությամբ, այնպես էլ Քրիստոսի Հարությամբ քանդվեցին առաջին մարդկանց մեղքով հավիտենական կյանքի ճանապարհը պատնեշող բոլոր արգելքները, - փրկության հույսով իմաստավորվեց ու լուսավորվեց մարդու կյանքը:*

*Գրիգոր Տաթ-ացին իր «Քարոզ սուրբ Զատիկի մասին» ճառում բերում է բոլոր փաստարկները, թե ինչո՞ւ նահապետները, մարգարեները, սրբերը - մյուս արդարները չկարողացան մարդկությանն ազատել մեղքից ու մահից, - միայն Քրիստոսը՝ Աստվածորդին էր զորու:*

*Սրբերի մահը մեզ չէր կարող ազատել, որովհետ- նրանք իրենք էլ մեր բնության մի մասն էին, - մեկի փրկությունը ամբողջապես չէր կարող տարածվել առաջինների ու վերջինների վրա: Եվ մարդկության Փրկիչ կարող էր լինել միայն Աստված, Ով բոլորի սկիզբն է: Նա-՝ մահկանացուն ու ապականելին չի կարող կյանք ու անապականություն տալ, այլ՝ անմահը - բնությամբ անապականը, ինչպես նա-՝ Ով ստեղծեց անգոյությունից, կապեց մահով - Ով ունի մշտնջենավոր կենդանություն, Նա էլ պետք է նորոգեր մեղքից, արձակեր մահվան կապանքներից - հավիտենական կյանք պարգ-եր: Ինչպես հանցանքին հետ-ում է պատիժը՝ մեղքին՝ մահը, ինչպես ծնունդով հաղորդակից ենք լինում սկզբնական մեղքին, իսկ որպես պատիժ մեռնում, այնպես էլ Քրիստոսն Իր անապական Ծնունդով ազատեց մեղքից, իսկ Իր մահով՝ մահվանից: Քրիստոսը նախ մեռավ, հետո Հարություն առավ,*

*մարդն էլ մեռնում է՝ հետագայում հարությամբ կենդանանալու համար: «Եվ եթե մեռելների հարություն չկա, ապա – Քրիստոս հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է – ձեր հավատը» (Ա Կորնթ., ԺԵ(15), 13-14):*

*«Հարություն» բառը ճշգրիտ բնորոշում է կատարված իրադարձության: «Հարության» հետ զուգահեռ օգտագործվում է նա–* «զատիկ» *բառը:*

*Զատիկը հին հրեաների մոտ եգիպտական գերությունից ազատագրվելու տոնն է, իսկ քրիստոնյաների մոտ՝ Քրիստոսի Հարության: «Զատիկ» բառին տարբեր ժամանակներում տրվել են բազմաթիվ մեկնաբանություններ:*

*Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» համաձայն՝ պարսկերեն՝ zadan, սանսկրիտով՝ han ձ-երը ծագում են հնդեվրոպական նախալեզվի gha, ghan՝ զարնել, վիրավորել արմատից, ըստ այսմ՝ «զատիկ» բառը բուն նշանակում է «զենումն, զոհ»: Նույն տեղում Հր. Աճառյանը գրում է. «Ճառընտիրն ունի. «Զատիկն ըստ եբրայեցւոցն (պասեք) անցարան. իսկ հայոց լեզուիս՝ ազատութիւն ի չարչարանաց»: Այսպես – Տաթ-ացին ՁՄ. ՃԽԲ. «Զատիկն ազատութիւն թարգմանի»: ՆՀԲ («Նոր բառգիրք հայկազեան լեզուի»)՝ «զատումն կամ ազատութիւն...»[31]:*

*«Զատիկ» բառին տրված զատվելու, բաժանվելու մեկնաբանության մեջ նկատի է առնված հրեաների՝ եգիպտական գերությունից բաժանումը, իսկ Քրիստոսի Հարությամբ՝ մեղքից ու մահից զատվելը – վերջնական իմաստով՝ դեպի Աստված վերադարձը: Այդպես – «զատիկ» բառի կապը «ազատ» բառի հետ հրեաների՝ ե-*

[31] Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Բ հատոր, Երևան, 1973, էջ 82:

*գիպտական գերությունից ազատագրումն է, իսկ Քրիստոսի Հարությամբ՝ ազատագրումը հեթանոս աշխարհի մեղքի կապանքներից:*

*«Զատիկ» բառը օգտագործվում է նաև Հին Կտակարանում գործածվող եբրայերեն «պասեք» բառին համարժեք: Հին հրեաների մոտ պասեքը կամ զատիկը Եգիպտոսի գերությունից ազատագրվելու հիշատակության տոնն է (Ելք, ԼԲ(12): Պասեքի - Զատիկի պատմական կապն այն է, որ Քրիստոսի խաչելությունը կատարվեց հրեաների պասեքի օրը, իսկ Հարությունը՝ դրա երրորդ օրը: Բացի պատմական այս զուգորդություններից, պասեքի ու Զատիկի մեջ կան նաև խմաստային առնչություններ: Ինչպես պասեքը հիշատակությունն էր հրեաների՝ չարչարանալի կյանքից ազատագրության, նույն կերպ - Քրիստոսի չարչարանքներից, մահից ու Հարությունից հետո ողջ մարդկությունը ազատագրվեց մեղսալի կյանքի տառապանքներից - հաղորդակից դարձավ հավերժական կյանքին: Հրեաների ազատագրումը կատարվեց գառան արյունը դռան փեղկերին ու վերնասեմին - պատուհանների փեղկերին քսելով, որտեղ, ըստ Գրիգոր Տաթևացու («Քարոզ սուրբ Զատիկի մասին»), տունը Աստծու արքայությունն է, դռան փեղկերը՝ մեղքը - պատիժը, իսկ վերնասեմը՝ արդար դատաստանը: Քրիստոսի՝ Աստծու Գառան արյամբ մարդկանցից վերցվեցին մեղքն ու պատիժը, իսկ արդար դատաստանը փոխարինվեց Աստծու ողորմությամբ: Առանց թթխմորի հացը խորհրդանշում է սերը, իսկ դառը խոտերը՝ աշխարհի դառը փարթամության հանդեպ արհամարհանքը:*

*Հին - Նոր Կտակարանները մեկ ամբողջություն են. Նոր Կտակարանը լրացնում է Հնին: Հին Կտակարանի մեսիական մարգարեություններն ու առանցքա-*

*յին դեպքերը իրենց խորհրդաբանական լուծումը ստացան Նոր կտակարանում մարդու փրկագործության՝ Աստվածորդու առաքելությամբ: Հետ–աքար, հրեական զատիկը նախատիպն ու նախօրինակն է Քրիստոսի Ինքնակամ զոհաբերության, ինչի մասին վկայում է նա– Պողոս առաքյալը. «Եվ այս բոլորը իբր– օրինակ պատահեց նրանց հետ, բայց որպես խրատ գրվեց մեզ համար, մեզ, որոնց համար հասել է հավիտյանների վախճանը» (Ա Կորնթ., Ժ, 11):*

*ԿԱՐՄԻՐ ՆԵՐԿՎԱԾ ՁՎԵՐ նվիրելը միմյանց՝ Ս. Զատկի տոնի սովորություններից է: Համաձայն ավանդության՝ Մարիամ Մագթաղենացին, Հռոմում ներկայանալով Տիբերիոս կայսերը (14-37 թթ.) – վկայելով իր քրիստոնեական հավատը, վերջինիս կարմիր ներկած ձու է նվիրում՝ ասելով. «Քրիստոս հարյավ ի մեռելոց»: Ձուն խորհրդանշում է նոր կյանքի սկզբնավորումը, իսկ կարմիր գույնը՝ Քրիստոսի կենդանարար արյունը:*

*Քրիստոսի խաչելությունը համընկավ գարնանային գիշերահավասարի, իսկ Հարությունը՝ հրեական զատկի լուսնի լրման հետ: Քրիստոնեության սկզբնական շրջանում Քրիստոսի Հարությունը տոնում էին հրեաների պասեքի տոնի օրը:*

*325 թ. Նիկիայի տիեզերական առաջին ժողովի սահմանած կարգի համաձայն՝ Քրիստոսի Հարության տոնը նշվում է գարնանային գիշերահավասարի լուսնի լրմանը հաջորդող կիրակի օրը, այսինքն՝ կարող է նշվել մարտի 22-ից ապրիլի 25-ն ընկած 35-օրյա ժամանակահատվածում:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հարության տոնը որպես առաքելական ժամանակներից նշվող տոն:

-Քրիստոսի Հարության պատմությունը՝ ըստ Ավետարանների:

-Լույսի կիրակին:

-Ինչո՞ւ միայն Աստվածորդին կարող էր փրկել ընկած մարդկությանը:

-«Հարություն» բառի բացատրությունը:

-«Զատիկ» բառի բացատրությունը, Պասեք:

-Նիկիայի Ա տիեզերական ժողովի որոշումը ս. Զատիկը տոնելու ժամանակի մասին:

-Կարմիր ներկած ձվի ավանդությունը – խորհուրդը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Քրիստոսի Հարությունը կյանքի հաղթանակն է մահվան դեմ, ճշմարտության հաստատումը – ստի ու կեղծիքի մերժումը, մեղքից ազատվելու – այն մերժելու մարդու հնարավորությունը հավատով, սրբության ու հոգ–որ մաքրագործումի միակ ուղիով:

Ինչպես Եսայի մարգարեն է ասում. «Այն ժողովուրդը, որն ընթանում էր խավարի միջով, տեսավ մեծ լույս. ձեզ համար էլ, որ բնակվում եք աշխարհում – մահվան ստվերների մեջ, լույս պիտի ծագի» (Եսայի, Թ, 2):

Եվ ինչպես Քրիստոսը հանուն մարդկության փրկության չարչարվեց, մեռավ – Հարություն առավ, այնպես էլ մարդն է պարտավոր Նրա հետ մեռնել – Նրա հետ հարություն առնել, ինչի պատճառով – այժմ մեռնում ու չարչարանակից ենք դառնում Քրիստոսին, իսկ հետագայում հարություն կառնենք ու Նրա փառքին հաղորդակից կլինենք:

## Ցեղասպանության զոհերի հիշատակի օր

Ապրիլի 24՝

*1914 թ. հունիսի 28-ին Սարա–յոյում (Բոսնիա) սերբ հայրենասիրական «Մլադա Բոսնա» կազմակերպության անդամ Գ. Պրինցիպայի կողմից սպանվում է Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդը: Նրա սպանությունը հարմար պատրվակ է դառնում մեծ տերությունների կողմից Առաջին համաշխարհային պատերազմը սկսելու, քանի որ դրանց միջ– հակասությունների սրումը մինչ այդ հասել էր վերջնակետին: Օգոստոսի 1-ին Գերմանիայի կողմից Ռուսաստանին պատերազմ հայտարարելով սկսվում է մարդկության պատմության մեջ մինչ այդ հայտնի ամենաարյունալի պատերազմը: Թուրքիան մինչ այդ հանդես էր գալիս իր չեզոքության մասին հայտարարություններով, սակայն պատերազմը հարմար – երկար սպասված հնարավորություն է ընձեռում նրան ոչ թուրքական բնակչությանը ձուլելու կամ լիովին ոչնչացնելու իր երկարամյա պլաններն իրականացնելու: Պանթուրքիզմը, այսինքն՝ Բոսֆորից Չինաստան հսկայական տարածքներում համաթուրքական մահմեդական պետություն ստեղծելու գաղափարը գործողության մեջ է մտնում ողջ թափով: Այդ գործին են լծվում պետական ապարատը, բանակը, ոստիկանությունը, մամուլը, լուսավորության հիմնարկները, հասարակական կազմակերպությունները, ազգային միությունները – այլն: Պանթուրքիզմի իրականացման ճանապարհին, սակայն, սեպի նման խրված էր թուրքերից մշակույթով ու տնտեսությամբ ավելի բարձր հայ ժողովուրդը, որին այդ*

*պայմաններում գոյատ-ելու հեռանկար պարզապես չէր թողնվում: Դեռ-ս 1914 թ. հոկտեմբերին Թուրքիայի ներքին գործերի նախարար Թալեաթի նախագահությամբ երիտթուրքական ղեկավար շրջանակների ժողովը որոշում է կազմել երեքի հանձնախումբը, որին հանձնում է հայկական կոտորածների կազմակերպումը: Երեքի՝ դոկտոր Նազըմի, դոկտոր Բեհաէդդին Շաքիրի, լուսավորության նախարար Միդհատ Շուքրիի կազմած ծրագիրը հանգում էր հայ բնակչությանը խումբ-խումբ գաղթեցնելուն - ճանապարհներին հատուկ զորաջոկատների միջոցով կոտորելուն: Գաղթը պատճառաբանվում էր պատերազմի սկսումով, ռուսական զորքերի առաջխաղացմամբ, ռուսական զորքերի կազմում հայ կամավորական ջոկատների առկայությամբ, ինչպես նա- նշվում էր հայերի համակրանքը ռուսների նկատմամբ - վերջիններիս հայերի կողմից հնարավոր աջակցությունը, որը կարող էր դրս-որվել պատերազմական գործողությունների ժամանակ: Հայաջնջման ծրագիրը գործողության մեջ է դրվում արդեն պատերազմի սկզբում: Դրա ակտիվ դերակատարներն են դառնում ներքին գործերի նախարար Թալեաթը, ռազմական նախարար Էնվերը, ծովային նախարար Ջեմալը - այլն:*

*Ծրագրի առաջին մասով հայ 18-45 տարեկան տղամարդկանց զորակոչում են բանակ, սակայն նրանց զենք տալու փոխարեն օգտագործում են շինարարական աշխատանքներում կամ բանեցնում որպես բեռնակիրներ: Ռուսական զորքերի առաջխաղացման պայմաններում, երբ թուրքական բանակը մասսայաբար նահանջում էր, հայ զինվորներին մեղադրում են դավաճանության մեջ - ոչնչացնում: 1915 թ. ապրիլի 15-ին Թալեաթը, Էնվերը, Նազըմը ստորագրում են հայերի*

*տեղահանության ու բնաջնջման մասին հրամանը – ուղարկում տեղական իշխանություններին: Արական բնակչության ոչնչացմանը հետ–ում է մտավորականների հավաքը Կ. Պոլսում. ապրիլի 24-ից 29-ը այստեղ ձերբակալվում են հայ մտավորականության 235 անվանի ներկայացուցիչները՝ հոգ–որականներ, ուսուցիչներ, երեսփոխաններ, բժիշկներ, արվեստագետներ, գրողներ, հասարակական-քաղաքական գործիչներ, լրագրողներ – այլն: Հաջորդ օրերին նրանց թիվը հասնում է 800-ի, իսկ այլ վայրերում ձերբակալվածների հետ՝ 3000-ի: Նրանց թվում էին Ռուբեն Ս–ակը, Ռուբեն Զարդարյանը, Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Վարուժանը, Երուխանը, Հովհաննես Թլկատինցին, բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, Տ. Քելեկյանը, Սմբատ Բյուրյանը, Կոմիտասը, Երվանդ Օտյանը – այլն, – այլն: Նրանց գնացքով տեղափոխում են դեպի Անկարա – ճանապարհին (Այաշ, Չանղըր, Չորում) փոքր խմբերով առանձնացնելով՝ ամայի անապատներում ամենավայրենի միջոցներով նահատակում: Որպես պետական հանցագործներ ձերբակալվում – Պոլսում կախաղան են բարձրացվում Հնչակյան կուսակցության 20 անդամներ, Զեյթունում, Վասպուրականում – այլ վայրերում ձերբակալում – դավադրությունների միջոցով սպանում են հայ մտավորական, հասարակական, մշակութային – հոգ–որ գործիչներին: Իր գործունեությունն է դադարեցնում Պոլսի հայոց պատրիարքարանը, Զավեն պատրիարքը աքսորվում է Մոսուլ, Բաղդադ:*

*1915 թ. գարնանից սկսվում է հայ բնակչության մասսայական տեղահանությունը: Բացի Պոլսից, Իզմիրից, Քոթահիայից, մնացած բոլոր վայրերից հայությանը զանգվածաբար քշում են Միջագետքի անապատները: Նրանց գերակշիռ մասը մեռնում է՝ զոհ գնալով գա-*

*զանաքարո սպանություններին, սովին ու հիվանդություններին, ողջ մնացած բնակչությունը աքսորվածների համարյա 10 տոկոսն էր: Տեղահանությունն անցկացվում է չափազանց արագ - կազմակերպված, այնպես, որ հայերի կողմից դիմադրության դեպքերը մասնակի էին - հիմնական նկարագիր չեն դառնում: Աքսորյալներին տեղափոխում են մաս-մաս, առանձին խմբերով, տարբեր ճանապարհներով, միմյանց ճակատագրերից անտեղյակ: Նրանց ապահովության համար տալիս էին զինված ուղեկցող ջոկատներ, հենց որոնք էլ ճանապարհներին իրենց միացող չեթեների, քրդերի ջոկատների հետ հարձակվում - ոչնչացնում էին խաղաղ հայ բնակչությանը՝ կանանց, երեխաներին, ծերերին: Զանգվածային ջարդերը Խարբերդում, Մալաթիայում, Արաբկիրում, Երզնկայում, Ակնում, Թոքատում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Էրզրումում - այլուր խլում են շուրջ 1,5 մլն հայերի կյանք, այսպես՝ Էրզրումի 150000 հայությունից փրկվում է շուրջ 200-ը: Հայերի գերեզմաններ են դառնում Միջագետքի անապատները՝ Դեր Զոր, Ռաս ուլ-Այն, Մեսքենե - այլն, Կամախի ձորը Եփրատի ափին, այդ օրերին Եփրատն ու Տիգրիսը ողողված էին մարդկային մարմինների միլիոնավոր կտորտանքներով - հոսում էին արյան ալիքներով: Ողջ մնացածների մի մասն ապաստանում է Ար-ելյան Հայաստանում, հիմնական մասը սփռվում է արաբական - աշխարհի այլ երկրներում՝ ձ-ավորելով հայկական Սփյուռքը:*

*Իհարկե, հայկական ջարդերն ու կոտորածները որոշ տեղերում ուղեկցվում էին հայերի ինքնապաշտպանական կռիվներով ու համառ դիմադրությամբ, ինչպես՝ Վանում, Մոկսում, Շատախում, Տարոնում, Սասունում, Շապին-Գարահիսարում, Սուետիայում (որ-*

*տեղ հայերը թուրքական զինված ուժերին հերոսաբար դիմադրում են՝ ապաստանելով Մուսա լեռան վրա), Ուրֆայում – այլուր: Սակայն այս բոլոր ինքնապաշտպանական մարտերը, չնայած իրենց հերոսականությանն ու համառությանը, զանգվածային կազմակերպված բնույթ չէին կրում – տեղի էին ունենում առանձին-առանձին՝ իրարից բաժան, ինչի պատճառով ընդհանուր իրավիճակը չեն փրկում:*

*Հայոց ցեղասպանությունը, ինչպես ժամանակին, այնպես էլ հետագայում, դատապարտել են համաշխարհային հասարակական-քաղաքական, մշակութային, հոգ-որ – պետական նշանավոր շատ գործիչներ: 1915 թ. Թուրքիայում Ամերիկայի դեսպան Հենրի Մորգենթաուն իր հուշերում նկարագրել է հայկական կոտորածները՝ նշելով, որ դրանք կեղծ պատրվակներով կազմակերպվել – իրականացվել են նախօրոք մշակված հատուկ ծրագրով: Նույն տեսակետն է հայտնում նա– անգլիացի պատմաբան Թոյնբին: Անգլիացի Բրայսը կազմում – իր կառավարությանն է հանձնում հայերի ցեղասպանության մասին փաստաթղթերի (թվով 150) ժողովածուն՝ նկարագրելով թուրքական կառավարության կատարած հայերի բարբարոսական կոտորածները: Թուրք ջարդարարների դեմ Մուսա լեռան հերոսամարտին է նվիրում իր «Մուսա լեռան 40 օրը» վեպը ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը: Վեպը լույս է տեսնում 1933 թ. – դառնում աշխարհում այդ տարի հրատարակված լավագույն երկը: Գերմանացի գիտնական դոկտոր Լեփսիուսը գրում է «Զեկուցագիր Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին» գիրքը, որտեղ նկարագրում է հայերի դեմ բռնություններն ու հալածանքը Թուրքիայում, հայկական ջարդերի դեմ հանդես է գալիս նա– Կարլ Լիբկնեխտը՝ հայտարարելով, որ Թուր-*

*քիան իր ձեռքերը թաթախել է հայերի արյան մեջ՝ ամենադաժան կոտորած սարքելով հայ ժողովրդի նկատմամբ: Հայկական կոտորածների դեմ հանդես են եկել ֆրանսիացի հայտնի գրողներ - հրապարակախոսներ՝ Էմիլ Բինոն, Անատոլ Ֆրանսը, Ռոմեն Ռոլանը, Հանրի Բարբին, ովքեր ներկայացնելով հայերի կորստական վիճակը - նկարագրելով «սարսափի երկրում» նրանց կրած տառապանքները, հոսող արյան գետերը՝ հայերի ցեղասպանությունը որակել են որպես մարդկության դեմ կատարված զազրելի ոճիր, որը պետք է մերժվի, դատապարտվի ու պատժվի, որպեսզի նախադեպ չդառնա որ-է այլ ժողովրդի դեմ իրականացվելու: Հայկական ջարդերի դեմ «Էմիլ Վերհարնը Հայաստանի մասին» հոդվածով հանդես է եկել նա- ռուս հայտնի գրող Վալերի Բրյուսովը, ով ներկայացնելով մեծ բելգիացու հումանիզմը, նրա համակրանքը հայ ժողովրդի հանդեպ՝ գրում է, որ ընթերցողը զգում է «...հայկական կոտորածների սարսուռը»: Հայ ժողովրդի հանդեպ իրականացված ցեղասպանության դատապարտությամբ - հայերի պաշտպանության, նրանց օգնություն կազմակերպելու կոչերով հանդես են եկել Էդգար Լոնգեն, ֆրանսիացի հայագետներ Մեյեն, Մաքլերը, գերմանացի Մարկվարտը, շվեյցարացի Լեոպոլդ Ֆավրը: Անգնահատելի է նորվեգացի հայտնի բ-եռախույզ, հասարակական գործիչ, մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի օգնությունը արհավիրքից մազապուրծ հայերին: Նա հրապարակավ ելույթներում դատապարտում է -՛ ցեղասպանությունն իրականացնողներին, -՛ վերջիններիս հովանավորողներին, -՛ նրանց լռությամբ խրախուսողներին:*

*Թուրքիայում իրականացված հայերի ցեղասպանությանը զոհ գնացած շուրջ 1,5-2 միլիոն - ավելի ան-*

*մեղ զոհերի հիշատակը մշտապես վառ է հայ ժողովրդի հիշողության մեջ ու սրտում, – ոչ մի բռնություն ու արգելք չի կարողացել մոռացնել տալ այն: Հայաստանում – Սփյուռքում ապրիլի 24-ը, որպես Հայոց ցեղասպանության օր (ինչպես վեր-ում նշվեց, այդ օրը Պոլսում – այլ վայրերում ձերբակալվեցին ու գազանաբար սպանվեցին հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները), ամեն տարի նշվել է տարբեր միջոցառումներով, ցեղասպանության զոհերի հիշատակին կանգնեցվել են խաչքարեր, կառուցվել հուշարձաններ:*

*1915 թ. Հայոց ցեղասպանությունը նոր ժամանակների պատմության մեջ մասսայական ժողովրդասպանության քաղաքականության սկիզբն էր, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, ավելի կատարելագործված մեթոդներով – հսկայածավալ մասշտաբներով, հրեա – սլավոնական ժողովուրդների նկատմամբ կիրառեցին գերմանացի ֆաշիստները: Ցեղասպանության, որպես մարդկության դեմ մեծագույն հանցագործության դատապարտումը առաջնահերթ – այլընտրանք չունեցող խնդիր է:*

*1946 թ. դեկտեմբերի 1-ին թիվ 96 (1) բանաձ-ով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան ցեղասպանությունը՝ գենոցիդը (genos՝ ցեղ, տոհմ, caedo՝ սպանում եմ), հռչակում է միջազգային իրավունքի նորմերը ոտնահարող հանցագործություն: 1948 թ. դեկտեմբերի 9-ին այս բանաձ-ի հիման վրա Գլխավոր ասամբլեան հաստատում է «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու – դրա համար պատժի մասին» կոնվենցիան, որով հայտարարվում է, որ ցեղասպանությունը վաղեմության ժամկետ չունի, – այն իրագործած յուրաքանչյուր պետություն իրավական պատասխանատվություն է կրում: 1965 թ. Հելսինկիում, Խաղաղության համաշ-*

*խարհային վեհաժողովը ընդունում է բանաձ-, որով ճանաչվում - դատապարտվում է 1915 թ. հայոց ցեղասպանությունը: Նույն թվականին, ոչ միայն Հայաստանում, նա- աշխարհի մի շարք երկրներում լայնորեն նշվում է եղեռնի 50-ամյակը, որի իրականացմանը նպաստում են մինչ այդ ԱՍԱԼԱ (Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակ) - Սփյուռքի հայկական ընդհատակյա այլ կազմակերպությունների գործողությունները: Ֆրանսիայում, Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում - այլ երկրներում մարդու իրավունքների պաշտպանության կազմակերպությունները ճնշում են գործադրում իրենց կառավարությունների վրա՝ ճանաչելու - դատապարտելու Հայոց ցեղասպանությունը: Արդյունքում միջազգային հեղինակավոր մի շարք կազմակերպություններ, պետական պաշտոնական շրջանակներ քննարկումներ են անցկացնում այն ճանաչելու - դատապարտելու ուղղությամբ: Ողջ աշխարհում սկսված այս իրադարձությունները լայն արձագանք են գտնում նա- Հայաստանում, որտեղ 1960-ական թվականների խրուշչովյան հալոցքի՝ հարաբերական ազատությունների շրջանում սկսվում է ազգային զարթոնքի նոր վերելք: Այն նշանավորվում է 1965 թ. ապրիլի 24-ին Եր-անում կազմակերպված հզոր ցույցով, որի մասնակիցները փորձում են ներխուժել Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի - բալետի պետական ակադեմիական թատրոն, որտեղ պաշտոնապես առաջին անգամ նշվում էր Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը: Ցուցարարները հանրապետության ղեկավարներից պահանջում էին դատապարտել հայերի ցեղասպանությունը - պաշտպանել հայ ժողովրդի պատմական իրավունքները: Այդ տարիներին ստեղծվում են ընդհատակյա կազմակերպություններ, որոնք հանդես էին գալիս Հայ դատի ար-*

*դարացի լուծման, ցեղասպանության դատապարտման, Ղարաբաղի ու Նախիջ-անի՝ Հայաստանի հետ վերամիավորման պահանջներով: Համազգային պայքարի կար-որ նվաճում էր այն, որ 1965-1967 թթ. Եր-անում՝ Ծիծեռնակաբերդում, կառուցվում է Թուրքիայում 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձանհամալիրը (ճարտարապետներ՝ Արթուր Թարխանյան, Սաշուր Քալաշյան, քանդակագործ՝ Հ. Խաչատրյան), որը դառնում է ուխտավայր հայ ժողովրդի համար: 1973 թ. ՄԱԿ-ի Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի «Փոքրամասնությունների խտրականության կանխման – պաշտպանության» ենթահանձնաժողովը ուսումնասիրություններ է սկսում 1915 թ. Թուրքիայում հայկական ջարդերի վերաբերյալ, որոնց մասին զեկուցումը, ի վերջո, լսվում է 1985 թ. օգոստոսի 29-ին: 1984 թ. ապրիլի 13-16-ը Փարիզում կայացած Ժողովուրդների մշտական ատյանն իր նիստերից մեկում անդրադառնում է այդ խնդրին: Իսկ 1987 թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանն ընդունում է «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձ-ը, որով Օսմանյան Թուրքիայի տարածքում 1915-1917 թթ. հայ ժողովրդի հանդեպ իրականացված բռնությունները որակվում են որպես ցեղասպանություն: Հայոց ցեղասպանությունը միջազգային կազմակերպությունների կողմից դատապարտվելու հաջորդ քայլերից մեկը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի, որի անդամ է նա- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, 1983 թ., ապա՝ 1989 թ. ընդունած բանաձ-երն են, որոնցով ճանաչվում է նա- սփյուռքահայերի հայրենիք վերադառնալու իրավունքը:*

*Հայերի ցեղասպանության ճանաչման միջազգային գործընթացն այլ հարթության վրա կլիներ, եթե Հա-*

*յաստանն ունենար անկախ պետականություն: Միայն 1988 թ. նոյեմբերի 22-ին, Արցախյան շարժման բուռն վերելքի ազդեցությամբ, Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունում է «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թ. ցեղասպանության դատապարտման մասին» օրենքը: Սակայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման – դատապարտման գործընթացում շրջադարձային կարելի է համարել 1995 թ. ապրիլի 14-ին Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի կողմից միաձայն՝ 283 կողմ, դեմ – ձեռնպահ չկա, ընդունված որոշումը՝ պաշտոնապես դատապարտել թուրքական պետության կողմից 1915-1922 թթ. գործադրված հայերի ցեղասպանությունը՝ ապրիլի 24-ը ընդունելով որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օր: 1998 թվականից սկսած՝ հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը գտնվում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գործունեության կենտրոնում:*

*Սփյուռքի հայ համայնքների անմիջական մասնակցության պայմաններում Հայաստանի արտաքին ակտիվ քաղաքականության շնորհիվ աշխարհի տարբեր պետություններ ճանաչել – դատապարտել են Օսմանյան թուրքիայում հայերի ցեղասպանությունը:*

*Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը շարունակվում է նա– այսօր: Հատկապես առանձնակի նշանակություն ունեն ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ելույթները ՄԱԿ-ի Գլխավոր նստաշրջանում՝ 1998 թ. սեպտեմբերին – 2000 թ. սեպտեմբերին, ինչպես նա– Ստամբուլի գագաթնաժողովում՝ 1999 թ. նոյեմբերին: Դրանցում շեշտվում է ցեղասպանության ոճրի վաղեմության ժամկետ չունենալը – հայ ժողովրդի վճռականությունը Մեծ եղեռնի մի-*

*ջազգային ճանաչման գործում: Հայաստանի նորանկախ Հանրապետության Ազգային ժողովը 1996 թ. փետրվարի 21-ին ընդունում է որոշում՝ ամեն տարի ապրիլի 24-ը նշել որպես Օսմանյան Թուրքիայում 1915 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Այդ օրը Ամենայն Հայոց Հայրապետը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ներկայացուցիչների հետ, Հայաստանի պետական իշխանության ներկայացուցիչները՝ նախագահը, վարչապետը, ԱԺ նախագահը, նախարարներ, մշակույթի, հասարակական-քաղաքական, կուսակցական գործիչներ, ուսանողներ, դպրոցականներ, հազարավոր հայեր Հայաստանից, Արցախից ու Սփյուռքից այցելում են Ծիծեռնակաբերդ – ծաղիկներ դնում հուշարձանին:*

*Գեորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի 1921 թ. հոկտեմբերի 30-ի կոնդակով ապրիլի 24-ը սահմանվում է որպես Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, սակայն Հայաստանի ԿԿ(բ) ԿԿ նախագահության 1926 թ. օգոստոսի 31-ի նիստի որոշումով ցեղասպանության զոհերի հիշատակի նշումը վերացվում է:*

*Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը ապրիլյան մեծ եղեռնի 50-ամյակի առիթով 1964 թ. օգոստոսի 17-ին հրապարակած կոնդակով հրահանգում է՝ Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում ապրիլի 24-ին կատարել կրոնական հատուկ արարողություններ – հոգեհանգստյան պաշտոններ, բոլոր հայ եկեղեցիներում ս. Սեղանի առջ– զետեղել մշտավառ կանթեղներ՝ նվիրված հայ նահատակների հիշատակին: Ս. Էջմիածնի Մայր Տաճարում առաջին մարտիրոս սուրբ Ստեփանոսի սեղանի մոտ մատուցել հատուկ ս. Պատարագ:*

*Ինչպես նա–՝ բոլոր հայ եկեղեցական համայնքներում – գաղութներում հայկական միությունների գործակցությամբ կազմակերպվեն համազգային հուշի ու հարգանքի հանդիսավոր հավաքույթներ, դասախոսություններ, գրական-գեղարվեստական նիստեր հայ – այլազգի հասարակությունների համար՝ նվիրված Ապրիլյան եղեռնին, հայ եկեղեցական իշխանությունները, ազգային-հասարակական կազմակերպությունները, պատմագիտական-գրական-մշակութային հիմնարկությունները – հայ մամուլը իրենց պարտքը համարեն խոսքով ու գործով ոգեկոչելու նվիրական հիշատակը մեծ եղեռնի տարիներին մարտիրոսացած հայ ժողովրդի, հայ հոգ–որականների – գրական-հասարակական մեծանուն գործիչների՝ հրապարակելով հայ – այլազգի հեղինակների պատմական վկայությունները, վավերաթղթերը, ուսումնասիրությունները, հուշերը – գրական-գեղարվեստական գործերը:*

## Սումգայիթյան ջարդեր

*Ցավոք, 1915 թ. անմեղ զոհերին 1988 թ. միացան սումգաիթյան ամեղ զոհերը: Ադրբեջանական իշխանություններն ու ԽՍՀՄ կենտրոնական մարմինները Ղարաբաղյան շարժումը կասեցնելու նպատակով, ոտնահարելով խորհրդային սահմանադրության դրույթները, մարդու – ազգային իրավունքների միջազգային բոլոր նորմերն ու համամարդկային բարոյական արժեքները, արցախահայության խաղաղ հանրահավաքներին հակադրեցին բիրտ ուժի ու բռնության քաղաքականությունը: 1988 թ. փետրվարի 27-29-ը Բաքվից 25 կմ հեռավորության վրա գտնվող Սումգաիթ քաղաքում,*

*երկրի բարձրագույն ղեկավարության անտարբերության – լուռ համաձայնության պայմաններում, կազմակերպվում է տեղի հայ բնակչության կոտորած, որի ընթացքում, ըստ պաշտոնական տվյալների, գազանաբար տանջամահ է արվել 32 մարդ, խոշտանգվել – ծանր վիրավորվել՝ շուրջ 200-ը: Սումգաիթյան ցեղասպանությունը մանրակրկիտ նախապատրաստվել էր ադրբեջանական իշխանությունների կողմից, որոնց ցուցումով նախօրոք կազմվել են հայերի բնակության վայրերի ցուցակները, նրանց տներում նախօրյակին անջատվել են հեռախոսները – այլն: Ծրագրված ջարդը, արյունահեղությունը, թալանն ու կոտորածը մեծ դժվարությամբ միայն երեք օր հետո է հաջողվում դադարեցնել քաղաք մտած ռազմական ստորաբաժանումներին, որոնք քաղաքից դուրս են հանում կենդանի մնացած շուրջ 3000 հայերի: Նրանց մեծ մասն ապաստանում է Հայաստանում, մյուսները ցրվում են տարբեր երկրներ: Սումգաիթյան ողբերգական իրադարձությունները նախերգանք էին ադրբեջանաբնակ հայերի նկատմամբ լայնածավալ հալածանքների ու բռնի տեղահանության Կիրովաբադում, Բաքվում, Շամխորում, Խանլարում, Դաշքեսանում – հայաշատ մյուս վայրերում:*

*Սումգաիթյան զոհերի հիշատակին Հայոց ցեղասպանության հուշարձան-համալիրի տարածքում տեղադրվել է խաչքար: Ապրիլի 24-ին Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներում ս. Պատարագ է մատուցվում նա– 1988 թ. սումգաիթյան Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:

-Պանթուրքիզմի քաղաքականության իրագործման նոր հնարավորությունները, ծրագրերն ու դրանց իրականացման գործնական քայլերը:

-Երեքի հանձնախումբը:

-Ապրիլի 24-ին Պոլսում – Թուրքիայի այլ վայրերում հայ անվանի 235 մտավորականների ձերբակալությունն ու ոչնչացումը:

-Հայերի տեղահանություններն ու ջարդերը Թուրքիայի ողջ տարածքում:

-Ինքնապաշտպանական կռիվները:

-Հայերի ցեղասպանության դատապարտումը միջազգային հասարակայնության կողմից:

-Ապրիլի 24-ը որպես Հայոց ցեղասպանության օր:

-Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ 1964 թ. օգոստոսի 17-ի կոնդակը ամեն տարի ապրիլի 24-ին հայ եկեղեցիներում հոգեհանգստյան պաշտոններ կատարելու մասին:

-1988 թ. Ադրբեջանի տարածքում իրականացված սումգաիթյան ջարդերը որպես 1915 թ. Հայոց ցեղասպանության ձեռագրով կատարված սոսկալի հանցագործություն:

-1988 թ. սումգաիթյան կոտորածների զոհերի հիշատակի հարգումը ապրիլի 24-ին՝ 1915 թ. թուրքական ջարդերի զոհերի հիշատակի հետ:

### ԱՄՓՈՓՈՒՄ

♦ 1915 թ. Հայոց ցեղասպանությունը նոր ժամանակների պատմության մեջ մասսայական ժողովրդասպանության քաղաքականության սկիզբն էր, որը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, ավելի կատարելագործված մեթոդներով – հսկայածավալ

մասշտաբներով, հրեա – սլավոնական ժողովուրդների նկատմամբ կիրառեցին գերմանացի ֆաշիստները: Սակայն Օսմանյան կայսրությունում իրականացված ոճիրը, հակառակ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հիտլերյան վարչակարգի կողմից կատարված հանցագործությունների, որոնք դատապարտեցին –՛ գերմանական ժողովուրդը, –՛ համաշխարհային հասարակայնությունը, դեռ–ս չի ընդունվել թուրքական պետության կողմից, ոճրագործը ըստ արժանվույն չի դատապարտվել, – հայերը հատուցում չեն ստացել, ինչպես դա կատարվեց գերմանական ֆաշիզմից մարդկային, նյութական ու բարոյական վիթխարի վնասներ կրած հրեաների – մյուս ժողովուրդների դեպքում: Գերմանական կառավարությունը մինչ այժմ էլ շարունակում է նյութական փոխհատուցումը հրեաներին – պատերազմից տուժած մյուս ժողովուրդներին, իսկ հայերի դեպքում դրան գումարվում է նա– հայաթափված ու բռնազավթված հայրենիքի վերադարձման խնդիրը:

Ցեղասպանությունը մարդկության դեմ գործված հանցագործություններից ծանրագույնն ու զազրելին է: Այն սահմաններ ու ժամանակ չի ճանաչում, – դրա դատապարտումը առաջնահերթ խնդիր է, որպեսզի սերունդները մշտապես մերժեն ու թույլ չտան այն՝ մեծագույն այդ դժբախտությունից ապահովելու համար մարդկության ապագան:

Ապրիլի 24-ը, սակայն, մեզ համար լինելով ազգային սգի ու մեր անմեղ նահատակների հիշատակի օր, այսօր չպետք է վերածվի ողբի ու հուսահատության: Քանզի այսօր ունենք անկախ պետականություն ու վերածնված Հայաստան: Եվ ինչպես Ամենայն Հայոց Հայրապետ Վազգեն Առաջինն է գրում ապրիլյան եղեռ-

նի 50-ամյակի իր կոնդակում՝ «...Այդ ս– օրերուն եկած էր պահ մը, երբ «այս աշխարհի վրայ այլ–ս անհնար էր հայ ըլլալ: Ամէն յոյս կորսուած կը թուէր, – հայոց պատմութեան գիրքը՝ փակուած ու արեան մէջ թաղուած:

Բայց ո՜վ անիմանալի խորհուրդ մահուան – կեանքի, – ո՜վ հրաշագործ ոգի հայոց պատմութեան:

Նահատակուած էր ամբողջ ժողովուրդ մը, այո՛, սակայն հայերը չէին մեռած ի սպառ, վասնզի անոնք զոհուէր էին հաւատքով ամուր, թէ «կեանք Քրիստոս է – մեռանել՝ շահ» (Փիլիպ. Ա 21):

Ինչպէս Վարդանանց հերոսամարտի օրերուն – այնուհետ– դարեր շարունակ, մահը յաղթող հայոց պատմութեան ոգին անգամ մը –ս պատռեց վարագոյրը անողոք ճակատագրին ու կեանքի կոչեց մնացորդացը մեր նահատակուած ազգին

... Հայոց նահատակութիւնը վերջնապէս պսակուած է յաղթութեան բրաբիոնով ու նոր կեանքի լուսաբացով – վերածնած է մեր հինաւուրց երկիրը Հայաստան, իբր– ազգային պետութիւն:»[32]:

[32] «Էջմիածին», 1964 թ., Ը-Թ, էջ 3-5:

ՄԱՅԻՍ

## Սուրբ Խաչի երեւման տոն

*351 թ. մայիսի 7-ին, օրվա երրորդ ժամին, այսինքն՝ առավոտյան ժամը 9-ին, Երուսաղեմի երկինքը փայլում է Տերունական Խաչի նշանով, որը հայտնվելով՝ տարածվում է Գողգոթայից մինչ– Ձիթենյաց լեռը: Խաչի պայծառ եր–ումից մթագնում է անգամ արեգակի լույսը: Խաչանշան լույսը ինչպես արդեն նշվել է, եր–ացել է դեռ–ս Քրիստոսի Խաչափայտի՝ առաջին անգամ եր–ան գալու ժամանակ: Այս անգամ նույնպես ս. Խաչի նշանը Երուսաղեմի երկնքում տեսնում են բազմաթիվ մարդիկ, – շատերը դարձի են գալիս: Երկնային այս հրաշքի առիթով Երուսաղեմի այդ ժամանակվա հայրապետ Կյուրեղ Երուսաղեմցին նամակ է ուղարկում Կոստանդին կայսրին (351ՎՆ361 թթ.), ով Կոստանդիանոս Մեծի միջնեկ որդին էր: Նամակում Երուսաղեմի հայրապետը կայսրին տեղեկացնում է կատարված հրաշքի մասին – հորդորում՝ անհողդողդ մնալ Քրիստոսի ճշմարիտ հավատի մեջ, հետ կանգնել արիոսականների[33] մոլորություններից – հավատարիմ մնալ Նիկիական դավանությանը:*

*Այս նամակը 5-րդ դարում թարգմանվում է հայերեն – մինչ օրս Ս. Խաչի եր–ման տոնին կարդացվում է հայոց եկեղեցիներում: Տոնը նշում են միայն Հայ Առաքելական – Հույն Ուղղափառ Եկեղեցիները: Հայ Եկեղե-*

[33] Արիոսը Ալեքսանդրիայում նշանավոր քահանա էր: Նա կասկածի տակ առավ Քրիստոսի՝ Հոր հետ համագոյությունը, ըստ էության՝ ճշմարիտ Աստվածությունը: Արիոսականությունը մերժվեց 325 թ. հրավիրված Ա տիեզերական ժողովում:

*ցին այն նշում է Ս. Զատկին հաջորդող հինգերորդ կիրակի օրը:*

*Հայոց պատմության մեջ էլ քիչ չեն խաչի եր-ումները: Կորյունը – Մովսես Խորենացին և Մեսրոպ Մաշտոցի մահը – թաղումը նկարագրելիս, հիշում են, որ Վաղարշապատում լուսավոր խաչանշանը մի քանի օր շարունակ փայլել է երկնքում՝ այն տան վեր-ում, ուր սուրբն ավանդել է հոգին, ինչպես նա- ուղեկցել թաղման թափորը մինչ- հուղարկավորության վայր – անհետացել միայն սրբի մարմինը գերեզման իջեցնելուց հետո[34]:*

*Խաչի լուսապայծառ եր-ումներից է նա- Վարագ լեռան վրա երկու ճգնավորների տեսիլքը, որով գտնվում է այդտեղ պահ տրված Քրիստոսի Խաչափայտի մասունքը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Տերունական ս. Խաչի եր-ումը երկնքում 351 թ. մայիսի 7-ին:

-Կյուրեղ Երուսաղեմցու նամակը Կոստանդին կայսրին – դրա հայերեն թարգմանությունը:

-Ս. Խաչի եր-ումները հայոց պատմության տարբեր ժամանակաշրջաններում:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Խաչը մարդկության հայտնագործած մահապատժի գործիքներից ծանրագույնն ու ամենաանմարդկայինն է: Հին աշխարհում այն առավելաբար կիրառվում էր Հռոմեական կայսրության մեջ՝ ավազակնե-

[34] Կորյուն, Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994, էջ 79-80: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 234-235:

րի, ապստամբ գերիների կամ ծանր հանցապարտների նկատմամբ, շրջանցելով, սակայն, հռոմեական քաղաքացիություն ունեցողներին[35]: Խաչը անիծյալ ու մահացու գործիք էր, իսկ դրան դատապարտվածը՝ անարգանքի ու նախատինքի արժանի: Հին Ուխտում –ս նույն վերաբերմունքն է դրա նկատմամբ. «Անիծված է նա, ով կախված է փայտից» (Բ Օրենք, ԻԱ(21), 23): Հիսուս Քրիստոսն էլ անարգվեց մարդկանցից, խաչվեց – մահացավ խաչի վրա: Սակայն երբ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՎ, խաչն այլ–ս մահվան խորհրդանիշը չէ, այլ կյանքի, հարության ու հաղթանակի. «Խաչը գերեզմանների կնիքն է – կյանքի հարությունը»[36]: Ս. Խաչը Քրիստոսի կենարար արյամբ պատժի նյութական գործիքից բարձրացավ մինչ– քրիստոնեական բարոյական կյանքի խորհրդանիշ, իբր– հրաշագործ զորություն չարի դեմ: Քրիստոսի ս. Խաչը նվիրագործվեց մարդկության փրկագործության մեծ խորհրդով, Աստծու՝ մարդու հանդեպ մեծագույն սիրո արտահայտությամբ, որոնք իրագործվեցին խաչի վրա: Ս. Խաչի եր–ումները պատմության տարբեր ժամանակաշրջաններում մատնանշում են Աստծու՝ մեր մեջ ներկայության – ապացույց՝ մարդկանց հանդեպ սիրո ու հոգատարության:

Երկրապահի օր

[35] Օրինակ՝ և՛ Պետրոս, և՛ Պողոս առաքյալներին Հռոմում ձերբակալեցին քրիստոնյա լինելու և քրիստոնեություն քարոզելու մեղադրանքով, սակայն Պետրոս առաքյալին խաչեցին, այն դեպքում, երբ Պողոս առաքյալին սրով գլխատեցին, քանի որ վերջինս Հռոմեական կայսրության քաղաքացի էր:

[36] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ խաչի, Ս. Էջմիածին, 1997:

*Հայաստանի Հանրապետությունում մայիսի 8-ը նշվում է որպես Երկրապահի օր:*

*1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը խորհրդային հռչակվելուց հետո նոյեմբերի 30-ին Խորհրդային Ադրբեջանի հեղափոխական կոմիտեի նախագահ Նարիման Նարիմանովը հայտարարությամբ Խորհրդային Հայաստանի անբաժան մաս է ճանաչում Զանգեզուրը, Ղարաբաղը – Նախիջ–անը: Սակայն Թուրքիայի ճնշման տակ արդեն 1921 մարտի 16-ի Մոսկվայի պայմանագրով Նախիջ–անը ճանաչվում է ինքնավար տարածք Ադրբեջանի կազմում՝ առանց երրորդ կողմին այն զիջելու իրավունքի (ակնարկվում էր Հայաստանը): Ղարաբաղի վերաբերյալ կոմունիստական կուսակցության Կովկասյան բյուրոն 1921 թ. հունիսի 3-ին այն ճանաչում է Հայաստանի մաս, սակայն Ադրբեջանի՝ հարցը վերանայելու պահանջով հուլիսի 4-ին հրավիրվում է ՌԿ(բ)Կ Կավբյուրոյի պլենում, որտեղ կրկին Ղարաբաղը ճանաչվում է Հայաստանի կազմում: Այս ամենով հանդերձ, Նարիմանովը համառորեն պահանջում է հարցը քննարկել Կենտրոնական կոմիտեում, սակայն արդեն հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, Կավբյուրոն նախորդ օրվա որոշմանը միանգամայն հակառակ որոշումով Ղարաբաղը որպես ինքնավար մարզ հանձնում է Ադրբեջանին:*

*Խորհրդային Միության տարածքում 70 տարիների ընթացքում կուտակված բազմաթիվ ազգային, սոցիալական, տնտեսական, կրթական – այլ խնդիրներով հանդերձ –՛ Ղարաբաղի, –՛ Հայաստանի, –՛ Սփյուռքի հայությանը մշտապես հուզող ու մտահոգող խնդիր մնաց Ղարաբաղի – Նախիջ–անի հարցը: Այն երբեք չմոռացվեց հայերի կողմից՝ նոր թափով բարձրանալով գորբաչովյան վերակառուցման տարիներին:*

*Վստահելով հրապարակայնության ու ժողովրդավարության մասին վերակառուցման կարգախոսներին՝ արցախահայությունը 1988 թ. որոշում է տեր կանգնել ազգային ինքնորոշման իր իրավունքներին, - փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի 20-րդ նստաշրջանում որոշվում է դիմել Հայաստանի ու Ադրբեջանի Գերագույն խորհուրդներին՝ մարզը Հայաստանին միացնելու պահանջով: Դա նոր փուլի սկիզբն էր հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության: Ադրբեջանի իշխանությունները սվիններով են դիմավորում այդ որոշումը - փորձում բռնությամբ խեղդել արցախահայության ազատագրական շարժումը: Հայաստանում հասարակական բոլոր շրջանակներն անմիջապես արձագանքում են արցախահայության արդար պահանջին - միանալով դրան՝ լայն շարժում ու գործունեություն ծավալում Ղարաբաղը Հայաստանին միացնելու ծրագիրն իրականացնելու համար: Փետրվարի 21-ին Թատերական հրապարակում տեղի է ունենում առաջին զանգվածային հանրահավաքը: Շուտով հանրահավաքներ են կազմակերպվում Հայաստանի նա- այլ վայրերում: Այսպես սկսվում է Ղարաբաղյան շարժումը, որը ծավալվելով՝ հայ ժողովրդի համար դառնում է գոյամարտի, ազգային ինքնագիտակցության արթնացումի, սեփական արժանապատվության զգացումի - հայրենասիրության ու միասնականության դրս-որման նոր օրինակ: Խորհրդային իշխանությունները, հակառակ իրենց իսկ հռչակած վերակառուցման - հրապարակայնության քաղաքականության, անհանդուրժողական դիրք են բռնում արցախահայության արդար պահանջի նկատմամբ - նրա սկսած շարժումը որակում որպես «ծայրահեղական»: Մոսկվայի իշխանությունները, սեր-*

*տորեն համագործակցելով ադրբեջանական իշխանությունների հետ, հետ–ողական պայքար են ծավալում արցախյան շարժման դեմ: Արցախահայության համար սկսվում է բռնություններին, բռնագաղթին, շրջափակմանը, ավերածություններին, պատերազմին ու ռմբակոծություններին դիմագրավելու հերոսական փորձաշրջան: Հայաստանի – Արցախի սահմաններում սաստկացած պատերազմական գործողությունները ծնեցին ու դաստիարակեցին հայրենասեր ու անձնազոհ մի նոր սերունդ՝ պատրաստ կյանքը նվիրելու սեփական ժողովրդի պաշտպանությանը:*

*1990 թ. հունվար-փետրվարից Ադրբեջանական ժողովրդական ճակատի գրոհայինները սկսում են զինված հարձակումներ իրականացնել Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանի ողջ երկայնքով: Սահմանամերձ գոտիներում ստեղծվում է զինված ընդհարումների լուրջ ճակատ: Ինքնապաշտպանական մղումով – ինքնաբուխ հայրենասիրությամբ ծնունդ են առնում հայ աշխարհազորայինների առաջին կամավորական ջոկատները, որոնց թիվը հասնում էր շուրջ 80-ի: Դրանք ռազմականացված հիմնարկություններից, հակակարկտային հրետանու կրակակետերից, ռազմագիտության ամբիոններից ու դասարաններից, որսորդական խանութներից, կազմակերպություններից –, ընդհանրապես, բոլոր հնարավոր վայրերից զենք հայթայթելով՝ կամավոր, առաջնորդվելով զուտ հայրենասիրական ու բարոյական բարձր արժեքներով, Հայաստանի սահմանի ամենաթեժ կետերում նետվում էին մարտի անհամեմատ ուժեղ հակառակորդի դեմ: Հայ երկրապահը, սակայն, արժանի հակահարված է տալիս – անձնվիրաբար կասեցնում Երասխավանի, Վայքի, Մեղրու, Կապանի, Նոյեմբերյանի, Տավուշի, Իջ–անի, ինչպես նա–*

*Գետաշենի ու Շահումյանի շրջանի վրա ադրբեջանական զինյալների ավազակային հարձակումները: Ադրբեջանական զինված խմբավորումներն այդ ընթացքում արդեն հայաթափել էին Սումգաիթը, Բաքուն, Կիրովաբադը՝ հայերի զանգվածային բռնի տեղահանություններն ուղեկցելով վայրենի կոտորածներով ու թալանով: Նրանք թիկունքում ունեին կոմունիստական վարչակարգի թույլտվությունն ու աջակցությունը – բացահայտ ռազմարշավ էին սկսել Արցախի ու Հայաստանի հայության դեմ: 1991 թ. ադրբեջանական օմոնի – խորհրդային բանակի միասնական ջանքերով իրականացված տխրահռչակ «Օղակ» գործողության արդյունքում հայաթափվում են Գետաշեն, Մարտունաշեն գյուղերը, ինչին հաջորդում են Հադրութի շրջանի շուրջ տասը գյուղերի, ինչպես նա– Բերդաձորի ողջ հայ բնակչության բռնի տեղահանությունները: Բոլոր այս ճնշումների դեմ-հանդիման կանգնած էին հայ կամավորականները: Նրանց գործողությունները թե– տարերային, անկազմակերպ էին, սակայն նրանց կամքի, վճռականության, ինքնազոհողության ու հերոսության շնորհիվ ամուր պահվեցին Հայաստանի – Արցախի սահմանները: Հայ երկրապահների մի մասը հերոսաբար նահատակվեց ինքնապաշտպանական կռիվներում, մյուս մասը, արդեն 1992 թվականից սկսած, շարունակեց պայքարը նորաստեղծ հայկական բանակի ստորաբաժանումների հետ՝ մասնակցելով պարտադրված պատերազմական գործողություններին – իրենց սխրանքով կռելով ռազմական հաղթանակները: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իր հերոս զավակների նվիրական անունները՝ Մովսես Գորգիսյան, Թաթուլ Կրպեյան, Ջիվան Աբրահամյան, Լեոնիդ Ազգալդյան, Աշոտ Ղուլյան (Բեկոր), Վլադիմիր Բալայան, Արմեն*

*Մելքումյան, Մոնթե Մելքոնյան (Ավո), Յուրա Պողոսյան, Պետրոս Ղ-ոնդյան – բազում այլ քաջեր:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը:

-1921 թ. Մոսկվայի պայմանագրով Նախիջ–անի հանձնումը Ադրբեջանին:

-1921 թ. Հուլիսի 5-ի Կավբյուրոյի որոշումը Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու մասին:

-Ղարաբաղի – Նախիջ–անի խնդիրը որպես հայությանը մշտապես հուզող խնդիր –՛ Հայաստանում, –՛ Սփյուռքում:

-Խնդրի նոր թափով բարձրացումը 1988 թ.՝ գորբաչովյան վերակառուցման տարիներին:

-Փետրվարի 21-ի ցույցը Եր–անի Թատերական հրապարակում: Ցույցեր Հայաստանի բոլոր շրջաններում, Արցախում – Սփյուռքում:

-Խորհրդային իշխանությունների անհանդուրժողական դիրքը:

-Արցախը հայաթափելու խորհրդային – ադրբեջանական իշխանությունների քաղաքականությունը: «Օղակ » գործողությունը:

-Պատերազմական գործողությունների սաստկացումը Արցախում – Հայաստանի սահմաններում: Ինքնապաշտպանական կամավորական երկրապահ ջոկատների ձ–ավորումը: Երկրապահի հերոսության շնորհիվ Հայաստանի սահմաններում – Արցախում թշնամու հարձակումների կասեցումն ու առաջին հաղթանակները:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Արցախյան հերոսամարտը սրբագործվեց «յուր քաջ որդվոց սուրբ արյունով», ովքեր արիացած «ազատատենչ Հայկի ու քրիստոսասեր Վարդանի» ոգով, Ավարայրի, Սարդարապատի, Բաշ-Ապարանի անձնազոհ նվիրումով ոտքի կանգնեցին հող հայրենին պաշտպանելու – ազգային արժանապատվությունը հաստատելու:

Ինքնապաշտպանական առաջին ջոկատներում մարտական մկրտություն ստացած անփորձ կամավոր «ֆիդայիները» վերաճեցին ռազմական փորձ, մարտական պատրաստվածություն, շատ շուտով՝ հերոսական անցյալ ունեցող – գիտակցված պայքարի ելած Երկրապահի, ում անկոտրում կամքով, հզոր բազկով ու նվիրյալ ոգով ամուր պահվեցին Հայաստանի սահմաններն ու ազատագրվեց Արցախը: Հայ կամավորական երկրապահ զորաջոկատները դարձան այն կենսունակ սաղմերը, որոնցից հետագայում ծնունդ առան հայոց բանակի ստորաբաժանումները՝ հայկական բանակը տարածաշրջանում դարձնելով հզոր ուժ:

Հիրավի՝ անիմանալի խորհուրդ մահվան – կյանքի, հրաշագործ ոգի հայոց պատմության:

### Հաղթանակի եւ խաղաղության տոն

Երկրորդ համաշխարհային եւ Հայրենական մեծ պատերազմի ավարտը (1939-1945 թթ.)

*20-րդ դարի երկրորդ կեսերին առաջատար պետությունների միջ- քաղաքական, տնտեսական, գաղափարական հակասությունների սրումը հասնում է գագաթնակետին: 30-ական թթ. երկրորդ կեսին ռազմականապես ու տնտեսապես օրեցօր հզորացող ֆաշիստական Գերմանիան, Իտալիան ու միլիտարիստական*

*Ճապոնիան բացահայտ պայքարի են դուրս գալիս աշխարհի քաղաքական – տնտեսական վերաբաժանման համար:*

*1939 թ. սեպտեմբերի 1-ին ֆաշիստական Գերմանիան սկսում է «Սպիտակ պլան» ռազմական գործողությունը Լեհաստանի դեմ, որով – սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմը: Կոչ անելով անխնա ոչնչացնել ոչ արիական ծագում ունեցող բոլոր ժողովուրդներին՝ գերմանական ֆաշիզմը գործում էր նույն մեթոդներով, ինչն արդեն թուրք ջարդարարները մշակել էին 1915 թ. հայերի ցեղասպանության ընթացքում: Մինչ– 1941 թ. գարուն գերմանական զորքերը նվաճում են Ավստրիան, Լեհաստանը, Դանիան, Նորվեգիան, Բելգիան, Հոլանդիան, Լյուքսեմբուրգը, Ֆրանսիան, Հարավսլավիան, Հունաստանը: Գերմանական բլոկին են միանում նա– Ռումինիան ու Բուլղարիան:*

*1941 թ. հունիսի 22-ին առանց պատերազմ հայտարարելու գերմանական զորքերը Բալթիկ ծովից Սծով հսկա սահմանի երկայնքով անցնում են հարձակման ԽՍՀՄ-ի դեմ՝ հիտլերյան հրամանատարության կողմից մշակված «Բարբարոսա» պլանի համաձայն: Խորհրդային Միության ժողովուրդների համար սկսվում է Հայրենական մեծ պատերազմը: Չնայած գերմանական բլոկի դեմ պատերազմում էին Անգլիան, 1941 թ. դեկտեմբերից՝ ԱՄՆ-ը, ինչպես նա– ֆրանսիական բանակը՝ Անգլիայի, ԱՄՆ-ի ու խորհրդային բանակների կազմերում, բացի այդ, օկուպանտների դեմ պայքարի էին դուրս եկել գրավված բոլոր երկրների ժողովուրդները, սակայն պատերազմի ահավոր ծանրությունն իր ուսերին տարան Խորհրդային Միության ժողովուրդները, այդ թվում – հայ ժողովուրդը: Խորհուրդների երկրի համար պատերազմն սկսվում է ամենամեծ անհաջողութ-*

*յուններով: Զորքերը նահանջում են մեծ կորուստներով – բոլոր ուղղություններով՝ հյուսիսում մինչ- Լենինգրադ (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ), կենտրոնում՝ մինչ- Մոսկվա, հարավում՝ մինչ- Վոլգա, որտեղ խորհրդային զորքերը սեղմվում են Ստալինգրադի (այժմ՝ Վոլգոգրադ) հատվածում:*

*Արդեն պատերազմի սկզբից Թուրքիան թե- հայտարարել էր իր չեզոքության մասին, սակայն իրականում ամեն կերպ օժանդակում էր Գերմանիային ու հարմար առիթի էր սպասում վերջինիս կողմից պատերազմի մեջ մտնելու – Խորհրդային Միության տարածքներ հարավից (Հայաստանի վրայով) ներխուժելու համար: Սակայն նրա ակնկալիքները ի դեր- են գալիս, երբ խորհրդային զորքերը 1942 թ. նոյեմբերից 1943 թ. փետրվար գերմանական 300000-անոց ռազմական խմբավորումները կաթսայի մեջ են առնում – ջախջախում Ստալինգրադի ահռելի ճակատամարտում: Ոչ միայն ԽՍՀՄ, այլ- ողջ համաշխարհային պատերազմի համար շրջադարձային այս ճակատամարտից հետո խորհրդային զորքերի նոր փայլուն հաղթանակն է գրանցվում 1943 թ. ամռանը՝ Կուրսկի աղեղում, որտեղ ջախջախվում է հակառակորդի 500000-անոց խմբավորումը: Խորհրդային զորքերի հաջողությունները ռազմաճակատի բոլոր ուղղություններով այլ-ս անկասելի էին: 1944 թ. նրանք անցնում են ԽՍՀՄ ար-մտյան սահմանը – քշելով գերմանական զորքերը՝ սկսում ազատագրել եվրոպական երկրները: 1944 թ. հունիսի 6-ին անգլո-ամերիկյան զորքերը բացում են երկրորդ ճակատը գերմանական զորքերի դեմ՝ ռազմական գործողությունները տեղափոխելով Գերմանիայի տարածք: 1945 թ. մայիսի 8-ին Բեռլինում Գերմանիան ստորագ-*

*րում է անվերապահ կապիտուլյացիա: Մայիսի 9-ը հայտարարվում է Հաղթանակի օր:*

*Սակայն Երկրորդ համաշխարհային պատերազմն ավարտվում է միայն 1945 թ. սեպտեմբերի 2-ին, երբ Ճապոնիան, պարտվելով Հեռավոր Արևելքում, ամերիկյան «Միսուրի» հածանավի վրա ստորագրում է վերջնական կապիտուլյացիան:*

*Համաշխարհային երկրորդ պատերազմում հայ ժողովուրդը -ս բերել է իր գործուն մասնակցությունն ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում:*

*1941 թ. հուլիսի 5-ին Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանը (հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս) նամակով դիմում է Հայաստանի – Սփյուռքի թեմերին՝ պատվիրելով բոլոր եկեղեցիներում մատուցել հանդիսավոր պատարագ ու կատարել մաղթանք խորհրդային բանակի հաղթության համար, ինչպես նա– կոչելով -՛ Հայաստանի, -՛ Սփյուռքի հայությանը՝ բոլոր միջոցներով օժանդակել ու օգնել խորհրդային բանակին գերմանական ֆաշիզմի դեմ պայքարում:*

*Այդ տարիներին, ինչպես ողջ ԽՍՀՄ տարածքում, այնպես էլ Հայաստանում տնտեսությունը վերակառուցվում է պատերազմի պահանջներին համապատասխան: Այստեղ արտադրվում է արհեստական կաուչուկ, պղինձ, կարբիդ, գինամթերք, յուրացվում է ականների, ականանետերի, հրացանների, նռնակների, պայթուցիկ նյութերի արտադրությունը, էվակուացված գործարանների հիմքի վրա վերանորոգվում են ինքնաթիռներ (հետագայում՝ էլեկտրաշինական գործարան), բազմապատկվում է գործվածքի ու հագուստեղենի արտադրությունը, կառուցվում շուրջ 20 գործարան: Հայաստանի բնակչության հավաքած 216 մլն ռուբլով*

*կազմվում են «Խորհրդային Հայաստան», «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» օդային էսկադրիլիաները, «Հայաստանի կոմերիտական», «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյուները, ժողովրդի միջոցներով ուղարկվում է 200000 ծանրոց, 45 վագոն մթերք, Հայաստանն ընդունում է օկուպացված շրջաններից էվակուացված ընտանիքներին, որբերին, օժանդակում ազատագրված մարզերի վերականգնմանը – այլն:*

*Պատերազմի առաջին իսկ օրերից կազմվում են հայկական ազգային 408, 409, 89, 390, 76 – 261-րդ դիվիզիաները, որոնք, բացի վերջինից, որը կադրեր էր պատրաստում ռազմաճակատի համար, կռվում են ռազմաճակատի ամենածանր հատվածներում: Խորհրդային բանակում կռվում էր շուրջ 450000 հայ մարտիկ, որոնցից 150000-ը պատերազմի դաշտից տուն չի վերադառնում: Հայկական ազգային դիվիզիաներից 390-րդը լիովին ոչնչանում է 1942 թ. Ղրիմի Կերչ թերակղզու համար մղված մարտերում: Ստալինգրադի դաժան մարտերին մասնակցում է նա– հայկական 76-րդ դիվիզիան, որն այստեղ կրում է մեծ կորուստներ – հետագայում վերակազմավորվում որպես 51-րդ, սակայն արդեն ոչ ազգային գվարդիական դիվիզիայի: 408-րդ հայկական դիվիզիան կռիվներով հասնում է մինչ– Դանուբի ափերը, իսկ 409-րդը հաղթական մարտերով հասնում է Ավստրիա, Չեխոսլովակիա՝ Պրագայում դիմավորելով հաղթանակը: Ամենաերկար մարտական ուղին՝ 3700 կմ, անցնում է 89-րդ հայկական դիվիզիան, որը Հյուսիսային Կովկասի Գրոզնու շրջանից մարտերով դուրս է գալիս Թաման թերակղզի, որն ազատագրելուց հետո ստանում է Թամանյան անունը – այդ անունով 1945 թ. մայիսին, միակը ազգային դիվիզիանե-*

*րից, մասնակցում է Բեռլինի մարտերին ու հաղթանակը դիմավորում Բեռլինում:*

*Հայրենական պատերազմին մասնակցած զորահրամանատարների - ԽՍՀՄ հերոսների թվով հայ ժողովուրդը ռուսներից, բելառուսներից - ուկրաինացիներից հետո չորրորդ տեղում է: Նա տվել է 60-ից ավելի գեներալներ, մարշալներ՝ Միքայել Պարսեղով, Սարգիս Մարտիրոսյան, Հայկ Մարտիրոսյան, Անդրանիկ Ղազարյան, Ասքանազ Կարապետյան, Իվան Վեքիլով, Բագրատ Առուշանյան, Հովհաննես Գալստյան, Քրիստափոր Միքայելյան, Հովհաննես Բաղրամյան, Համազասպ Բաբաջանյան, Արմենակ Խանփերցյան, ծովակալ Իվան Իսակով - այլն: 100 հայորդիներ արժանացել են ԽՍՀՄ հերոսի կոչման, որոնցից 36-ը՝ հետմահու: Հայ հերոս օդաչու Լազր Չափչախյանն առաջին ԽՍՀՄ հերոսի կոչում ստացողն է նահանջող բանակի պայմաններում: ԽՍՀՄ առաջին կրկնակի հերոսը օդաչու Նելսոն Ստեփանյանն է՝ «Բալթիկայի մրրկահավը», հերոսի «Ոսկե աստղով» պարգ-ատրվել են նա- Սերգեյ Օհանյանը, Ջահան Կարախանյանը, Աշոտ Ղազարյանը, Սուրեն Սարգսյանը, Հունան Ավետիսյանը - ուրիշներ:*

*Օկուպացված տարածքներում տեղացի հայերը, ինչպես նա- փախած հայ ռազմագերիները ներգրավվում են պարտիզանական պայքարի մեջ: Ուկրաինայի - Բելոռուսիայի տարածքներում գործող պարտիզանական միավորումներում պայքարող հայերից կազմված ջոկատներից հայտնի էին «Հաղթանակ» (հրամանատար՝ Սերգեյ Հարությունյան), «Միկոյանի անվան» 10-րդ (հրամանատար՝ Արամայիս Հովսեփյան), 41-րդ, «Կարմիր աստղ» ջոկատները: Բազմաթիվ հայ ռազմագերիներ ընդգրկվում են Եվրոպայի նվաճված երկրնե-*

*րում կազմակերպված Դիմադրության շարժման մեջ: Ֆրանսիայում գործում էր հայ ռազմագերիներից կազմված խորհրդային առաջին պարտիզանական ջոկատը, որի հրամանատարներն էին Ալեքսանդր Ղազարյանը, Բարթուղ Պետրոսյանը, Լ-ոն Տիտանյանը - այլն:*

*Ֆաշիզմի՝ մարդկության դեմ հրեշավոր այդ չարիքի ոչնչացման համար պայքարել են նա- հազարավոր սփյուռքահայեր: ԱՄՆ-ի, Ռումինիայի, Ֆրանսիայի, Լատինական Ամերիկայի երկրների, Սիրիայի, Եգիպտոսի, Լիբանանի գաղութներում կազմակերպվում են եկեղեցական, հայրենակցական, մշակութային, երիտասարդական տարբեր միություններ ու կազմակերպություններ, որոնք գործուն կերպով աջակցում են դաշնակիցների պայքարին ընդդեմ ֆաշիզմի: Արձագանքելով Գ-որգ արքեպիսկոպոս Չորեքչյանի կոչին՝ սփյուռքահայերն իրենց միջոցներով կազմում են «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը գեներալ Բաղրամյանի հրամանատարության տակ կռվում է Մերձբալթյան առաջին ռազմաճակատում: Մեկ այլ տանկային շարասյուն՝ «Գեներալ Բաղրամյան», կազմավորվում է իրանահայերի հանգանակած միջոցներով: Պատերազմի առաջին իսկ օրերից բազմաթիվ սփյուռքահայեր իրենց երկրների բանակներում կռվում էին ֆաշիզմի դեմ: Միայն ԱՄՆ-ի ռազմական ուժերում կռվում էր շուրջ 18000 հայ երիտասարդ, եգիպտահայերը կռվում էին անգլիական, Սիրիայի - Լիբանանի հայերը՝ ֆրանսիական բանակների շարքերում: Ֆրանսիայում գործող «Ստալինգրադ» ընդհատակյա դիվերսիոն ջոկատի հրամանատարն էր Միսաք Մանուշյանը, ով իր 22 ընկերների հետ 1943 թ. ձերբակալվում է - 1944 թ. մահապատժի ենթարկվում:*

*Մայիսի 9-ին տոնվող Հաղթանակի – խաղաղության տոնը հայ ժողովրդի համար կար-որվում է Երկրորդ համաշխարհային պատերազմում նրա տված զոհերով, կրած տառապանքներով, ինչպես նա– աշխարհի առաջադեմ ուժերի հետ տարած հաղթանակով:*

## Շուշիի ազատագրման օր

*Մայիսի 9-ը մեր օրերում նշանավորվում է հայկական զենքի նոր հաղթանակով՝ նոր իմաստ ու փայլ հաղորդելով խաղաղության տոնահանդես դարձած այդ հրաշալի օրվան:*

*1988 թ. Արցախի ազատագրման համար շարժումը չնայած սկսվել էր որպես խաղաղ գործընթաց, սակայն Ադրբեջանի կողմից իրականացված բռնությունների, խաղաղ բնակչության ջարդերի – տեղահանությունների պայմաններում փաստորեն վերածվում է պատերազմի: 1992-1993 թթ. նորանկախ Հայաստանի Հանրապետության համար նոր դժվարությունների ու ծանր փորձությունների տարիներ էին: Արցախում պատերազմը գնալով ավելի լայն ծավալներ ու դաժան բնույթ էր ընդունում: Ադրբեջանական զինված կազմավորումները շրջափակել էին Արցախը – Հայաստանի սահմանները: Ադրբեջանը, օգտվելով Թուրքիայի բացահայտ աջակցությունից, որը շրջափակել էր Հայաստանի սահմանները – մեծ քանակությամբ զենք, զինամթերք ու ռազմական խորհրդատուներ էր ուղարկում Ադրբեջան, ռազմական հենակետերից – օդուժի միջոցով մշտապես հրետակոծում ու ռմբակոծում էր Արցախի բնակավայրերը: Հատկապես ծանր դրության մեջ էր մայրաքաղաք Ստեփանակերտը, որը Խոջալուից, Աղդամից ու Շուշիից գրեթե օր ու գիշեր հրթիռահ-*

*րետակոծվում էր՝ մեծ ավերածություններ պատճառելով – մարդկային մեծաթիվ զոհեր տալով: Ամենօրյա ռմբակոծումները քաղաքը զրկել էին ջրից, բնակիչները ստիպված էին ապաստանել գետնանկուղներում: Խաղաղ բնակչության անվտանգության ապահովման նպատակով 1992 թ. ձմռանից ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը ձեռնամուխ են լինում հակառակորդի կրակակետերը ոչնչացնելուն: Փետրվարի վերջերին հայ ազատամարտիկների կողմից ոչնչացվում է Խոջալուում տեղակայված ադրբեջանական խոշոր ռազմական խմբավորումը:*

*Հայ ազատագրական պայքարի փայլուն էջերից է Շուշիի ազատագրումը: Շուշին հայ մշակույթի զարգացման ավանդական կենտրոններից է, որը, սակայն, ադրբեջանական իշխանությունների երկար տարիներ հայահալած քաղաքականության հետ–անքով գրեթե ամբողջությամբ հայաթափվել էր – վերածվել ադրբեջանաբնակ քաղաքի: Գտնվելով բարձունքի վրա՝ անառիկ բերդի նման իշխում է շրջապատի տեղանքի վրա, ինչը ադրբեջանցի զինյալները օգտագործում էին հատկապես Ստեփանակերտը հրթիռահրետակոծելու նպատակով: Շուրջ երկու տարի Շուշիից ուղիղ նշանառությամբ մահաբեր արկեր էին թափվում Ստեփանակերտի վրա՝ մահ ու ավեր սփռելով քաղաքում: 1992 թ. մայիսի 9-ին Արցախի ազատամարտիկները, գնդապետ Արկադի Տեր-Թադ–ոսյանի (Կոմանդոս) հրամանատարությամբ, հերոսական ջանքերի շնորհիվ ազատագրում են հայոց հինավուրց քաղաք Շուշին՝ վերացնելով Ստեփանակերտի՝ լիովին ոչնչանալու վտանգը: Զարգացնելով ռազմական հաջողությունը՝ ԼՂՀ զինված ուժերը մի քանի օր անց լիովին մաքրում են Լաչինի միջանցքը՝ ճեղքելով գրեթե 5 տարի տ–ած Արցախի շրջա-*

*փակումը – այն կապելով Հայաստանի հետ: Սկսվում է Լաչինի մարդասիրական միջանցքով Հայաստանից Արցախ սննդամթերքի, վառելանյութի – այլ անհրաժեշտ ապրանքների առաքումը: 1993 թ. գարնանից մինչ-ձմեռ մաքրվում է Մարտակերտը, ոչնչացվում են ռազմական խմբավորումները Քելբաջարում, Աղդամում, Ֆիզուլիում, Կուբաթլիում, Ջեբրաիլի, Զանգելանի շրջաններում:*

*Շուշիի ազատագրումը հայերի համար ոչ միայն ռազմական մեծ հաղթանակ էր, այլ նա– պատմական-ազգային-հոգ–որ-մշակութային արժեքների վերադարձ:*

*Շուշիի հայերին արտաքսելուց հետո քաղաքի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին վերածվել էր զինապահեստի: Ադրբեջանցիները կոտրել էին զանգակատան հրեշտակների արձանները: Շուշիի ազատագրումից հետո շարունակվում է եկեղեցու վերանորոգումը, որը կասեցվել էր 1988-ին – որն ավարտվում է 1998 թ.: Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցին հանդիսավորապես վերաբացվում – օծվում է 1998 թ. հուլիսի 19-ին՝ Քրիստոսի Պայծառակերպության տոնի օրը:*

*Այսպիսով, մայիսի 9-ը հայ ժողովրդի համար կրկնակի՛ տոն է Հաղթանակի ու խաղաղության:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-1939 թ. սեպտեմբերի 1-ին ֆաշիսկատան Գերմանիայի կողմից Լեհաստանի դեմ «Սպիտակ պլան» գործողությունը – Երկրորդ համաշխարհային պատերազմի սկիզբը:

-1941 թ. հունիսի 22-ին Գերմանիայի հարձակումը ԽՍՀՄ դեմ – Հայրենական մեծ պատերազմի սկիզբը ԽՍՀՄ ժողովուրդների համար:

- Հայաստանի տարածքի վրայով Թուրքիայի հարձակման վտանգը:

-Ստալինգրադի, Կուրսկի աղեղում վճռական ճակատամարտերը, խորհրդային զորքերի հակահարձակումը ռազմաճակատի բոլոր ուղղություններով – հաղթանակները:

-Դաշնակիցների կողմից երկրորդ ճակատի բացումը 1944 թ. հունիսի 6-ին:

-Գերմանիայի կապիտուլյացիան 1945 թ. մայիսի 8-ին, մայիսի 9-ը՝ Հաղթանակի օր:

Պատրեազմի սկզբում Գեորգ արքեպիսկոպոս Չորեքչյանի նամակ-կոչը Հայաստանի – Սփյուռքի թեմերին:

-Հայ թիկունքը՝ սատար ռազմաճակատին:

-Պատերազմին հայերի մասնակցությունը խորհրդային զորքերի կազմում, հայ հերոսները, հայկական դիվիզիաները:

-Պատերազմին հայերի մասնակցությունը դաշնակցային զորքերում:

-Հայերի պայքարը օկուպացված տարածքներում – մասնակցությունը դիմադրության շարժմանը:

-Մայիսի 9-ի նոր նշանակությունը հայ ժողովրդի համար:

-Արցախում պատերազմական գործողությունների սաստկացումը:

-Շուշին որպես Ստեփանակերտը հրթիռահրետակոծելու հենակետ: Դրա վնասազերծման առաջնահերթ անհրաժեշտությունը:

-Շուշիի ազատագրումը:

-Ս. Ամենափրկիչ եկեղեցու վերանորոգման շարունակությունը, վերաբացումն ու օծումը:

-Մայիսի 9-ը՝ կրկնակի տոն հայ ժողովրդի համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Պատմության անկանխատեսելի տրամաբանությամբ մայիս ամիսը հայ ժողովրդի համար դարձել է գոյատ–ման, հավատի, ազգային համախմբման – հայրենասիրության դրս–որման, ինչպես նա– հաղթանակներով պսակված մի ժամանակաշրջան: Ավարայրով, Սարդարապատով ու Բաշ-Ապարանով, ազգային անկախ պետականության վերականգնմամբ փառավորված մայիսը նորից նոր նշանավորվեց մեզ համար գերմանական ֆաշիզմի դեմ տարած հաղթանակով ու Շուշիի ազատագրմամբ:

Հայ ժողովուրդը, ցավոք, լավ է ճանաչում, թե ինչ է նշանակում ցեղային պատկանելության համար ոչնչանալ: Գերմանական ֆաշիզմը գործում էր նույն մեթոդներով, ինչն արդեն թուրք ջարդարարները մշակել էին 1915 թ. հայերի ցեղասպանության ընթացքում: Պատահական չեն Հիտլերի խոսքերը 1939 թ. օգոստոսին Օբերզալցբուրգում կայացած Լեհաստանի հարցերին նվիրված խորհրդակցություններից մեկում. «Այժմ, մեր ժամանակներում, այլ–ս ո՞վ է հիշում Թուրքիայում հայերի բնաջնջման մասին»: Նույն ձեռագիրը եր–ում էր նա– Արցախյան հերոսամարտի տարիներին, երբ փորձ էր արվում հայաթափելու Արցախի տարածքը: Եվ պատահական չէր հայ զինվորի աներկբա կամքը՝ ոչնչացնելու «ֆաշիզմ» կոչվող եր–ույթը:

Այսօր, երկյուղածությամբ խոնարհվելով մեր բյուրավոր զոհերի հիշատակի առջ–, աղոթում ենք նրանց անմահ հոգիների խաղաղության – երանության համար: Եվ հայցում ենք Աստծուց, որպեսզի խաղաղու-

թյուն պարգ–ի աշխարհի բոլոր սահմաններում ու բոլոր մարդկանց սրտերում: Եվ թող աշխարհում մշտապես «ողորմությունն ու ճշմարտությունը պատահեն, արդարությունն ու խաղաղությունը համբուրվեն» (տե՛ս Սաղմ. ՁԴ(84), 14):

Մայիսի 9-ը բոլորիս համար նա– աղոթքի օր է՝ համայն աշխարհի խաղաղության – ժողովուրդների իսկական եղբայրության համար, որպեսզի այլ–ս երբեք աշխարհում ոչ մի տեղ արյուն չթափվի, – մարդիկ զենք չբարձրացնեն միմյանց վրա:

Համբարձման տոն

*Համբարձման տոնը հարություն առած Հիսուսի՝ մարմնով երկինք բարձրանալու – Հոր աջ կողմում նստելու հիշատակն է: «Համբարձում» նշանակում է բարձրացում:*

*Նոր Կտակարանի վկայությամբ (Մարկ., ԺԶ(16), 19-20, Ղուկ., ԻԴ(24), 50-53, Գործք, Ա, 9-11)՝ Հիսուսն Իր Հարությունից հետո 40 օր մարդկային կերպարանքով բազմիցս հայտնվում է Իրեն հետ–ողներին՝ Մարիամ Մագթաղենացուն, յուղաբեր կանանց, Պետրոսին, Էմմավուսի ճամփորդներին, Վերնատանը՝ առաքյալներին, Գալիլիայի Տիբերիական ծովակի եզերքին՝ վերահաստատելով նրանց իրենց առաքելական կոչման – հավատի մեջ: Այս հանդիպումների ժամանակ Նա քաջալերում, մխիթարում – հուսադրում է նրանց, խոսում երկնքի արքայության, առաքյալների կոչման մասին: Հորդորում է առաքյալներին՝ չտրտմել, չերկնչել, այլ համբերությամբ, հույսով ու արիությամբ դիմակայել Ավետարանի քարոզության ընթացքում նրանց գալիք փորձություններին: Քրիստոսը՝ Աստծու Որդին, չուներ*

*ուտելու կամ խմելու կարիք, սակայն երբ հայտնվում է առաքյալներին - ուտում ու խմում նրանց հետ՝ Իրեն տեսնողների հոգիներից վերջնականապես վանում է կասկածն ու երկյուղը՝ հաստատելով Իր իրական հարությունը այն նույն մարմնով, որով խաչվել էր - գերեզման դրվել, ինչպես նա- հուսադրելով բոլոր մարդկանց՝ գալիք հարության ու հավերժական կյանքի իրողությամբ: Վերջին անգամ Տերը հայտնվում է Ձիթենյաց լեռան վրա, որտեղ օրհնում է բոլորին «...- մինչ Նա օրհնում էր, բաժանվեց նրանցից - դեպի երկինք էր վերանում»: Աշակերտների հայացքներից Նրան ծածկում է լուսեղեն ամպը, - նույն պահին լուսազգեստ հրեշտակները, եր-ալով երկնքում, ազդարարում են. «Ո՛վ գալիլիացիներ, ինչո՞ւ եք կանգնած նայում երկնքին, այն Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձ-ով, ինչպես տեսաք Նրա՝ երկինք գնալը»: Եվ Հայր Աստված, ընդունելով Իր սիրելի Որդուն, «նստեցրեց Իր աջ կողմում, երկնքի մեջ» (Եփես., Ա, 20):*

*Քրիստոսի Համբարձումը բոլոր տոների - տնօրինական խորհուրդների ամբողջացումն է՝ սկսած Տիրոջ Ս. Ծնունդից, մինչ- խաչելություն, մահ - Հրաշափառ Ս. Հարություն: Առնելով մեր բնությունը, Քրիստոսն Իր գալուստով մաքրեց ու օրհնեց անեծքով դատապարտված արարածներին, շրջելով երկրի վրա, մկրտվելով ջրում - թաղվելով գերեզմանում՝ մաքրեց հողն ու ջուրը, իսկ հարությունից հետո՝ օդն ու կրակը: Մեր բնությունը միավորեց Աստծու Խոսքին - Իր՝ երկինք Համբարձումով մարդկային անպատիվ բնությունը բարձրացրեց վեր՝ արժանացնելով անզուգական պատվի ու փառքի - ցույց տալով դեպի երկինք մարդուն խոստացված ճանապարհը. «Եթե Ես գնամ, ձեզ համար տեղ կպատրաստեմ, դարձյալ կգամ - ձեզ*

*կվերցնեմ Ինձ մոտ, որպեսզի ուր Ես եմ, այնտեղ նաև դուք լինեք» (Հովհ., ԺԴ(14), 3):*

*Քրիստոսը համբարձվեց, որպեսզի Սուրբ Հոգին առաքի մեզ. «Եթե Ես չգնամ, Մխիթարիչը ձեզ մոտ չի գա. իսկ եթե գնամ, Նրան կուղարկեմ ձեզ մոտ» (Հովհ., ԺԶ(16), 7), իսկ երբ «...Սուրբ Հոգին իջնի ձեզ վրա, զորություն կստանաք - Ինձ վկաներ կլինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում - մինչ- երկրի ծայրերը» (Գործք, Ա, 7-8): Տերը մարմնով բաժանվեց մեզանից, սակայն մշտապես մեզ հետ է Հոգու միջոցով, ուստի Տիրոջ Համբարձումը Հոգեգալուստի նախապատրաստումն էր նաև, որի արդյունքում առաքյալների քարոզությամբ ճշմարիտ Աստվածպաշտությունը ավետարանվեց ոչ միայն հրեաներին, այլ նաև բոլոր մյուս ժողովուրդներին:*

*Քրիստոսը «...երկինք վերացավ - նստեց Հոր աջ կողմը» (Մարկ., ԺԶ(16), 19): Աստված Հոգի է - չի կարող աջ կամ ձախ կողմեր ունենալ, - Քրիստոսի՝ Հոր աջ կողմում նստելը պետք չէ տառացի ընկալել: Սրանով ցույց է տրվում Նրա աստվածային փառքը, այսինքն՝ Քրիստոսն աթոռակից է Հորը - Սուրբ Հոգուն, նաև փառքով հավասար է Հոր Աստվածությանը, թագավորում է, ինչպես Հայրը - ունի դատաստանի զորություն:*

*Հայաստանյայց Ս. Եկեղեցին Համբարձման տոնը նշում է Ս. Հարության տոնից 40 օր հետո՝ հինգշաբթի:*

*ՋԱՆ ԳՅՈՒԼՈՒՄ: Համբարձման տոնի ժողովրդական սովորություններից է վիճակ գցելը, որը ժողովրդի մեջ հայտնի է նաև «Ջան գյուլում» անունով: Այն գալիս է վիճակ գցելու առիթով երգվող ժողովրդական երգերի «Ջան գյուլում, ջան, ջան» տողից, որը պարբերաբար կրկնվում էր երգի յուրաքանչյուր տնից հետո: Այդ օրը*

*երիտասարդ աղջիկները, ծաղկեփնջեր կազմելով ու* «Զան գյուղում» *կամ՝* «Համբարձում յայլա» *երգելով, ուրախ զբոսանքի են դուրս գալիս – վիճակ գցում՝ երջանիկ ապագայի ակնկալիքով: Այս սովորությունը հիշատակությունն է առաքյալների՝ Համբարձումից հետո Երուսաղեմ վերադառնալու – Վերնատանը վիճակ գցելու, որով տիրադավ Հուդա Իսկարիովտացու փոխարեն 12-րդ առաքյալ է ընտրվում Մատաթիան:*

*Հայ Առաքելական Ս. Եկեղեցին Քրիստոսի Համբարձման տոնի օրը հիշատակում է նա– 1441 թ. Հայոց Կաթողիկոսական Աթոռը Սսից տեղափոխելու – Ս. Էջմիածնում վերահաստատելու պատմական դեպքը* (տե՛ս Կաթողիկե Ս. Էջմիածնի տոն)*:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-«Համբարձում» բառի բացատրությունը.:

-Քրիստոսի համբարձման ավետարանական պատմությունը:

-Գալստյան խոստումը:

-Սուրբ Հոգու առաքման խոստումը:

-Համնմարձումը որպես բոլոր տոների ու տնօրինական խորհուրդների ամբողջացում:

-Ժողովրդակն սովորություններ:

-Կաթողիկոսական Աթոռի՝ Սսից տեղափոխման – Ս. Էջմիածնում վերահաստատման հիշատակը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Քրիստոսի Համբարձումը Նրա երկրային առաքելության ավարտն է, սակայն Նրա ամոքիչ ու հուսատու ներկայությունը զգալի է ամեն պահ. «Եվ ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում, մինչ– աշխարհի վախճանը» (Մատթ., ԻԸ(28), 20): Եվ եթե մյուս տոները հիշա-

տակություններն են Քրիստոսի մարդկային կյանքի դեպքերի, ապա Համբարձման տոնը հայտնապես Նրա Աստվածությունն է մատնանշում ու շեշտում: Համբարձումից հետո Հիսուսն այլ–ս դադարում է պատմական անձ լինելուց – դառնում է մշտակա ներկայություն. ո՛չ խորհրդանշական, այլ իրական, զգալի ներկայություն յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում՝ վերջինիս բերելով Իր զորավոր պաշտպանությունն ու հովանավորությունը: «Մի՛ վախեցիր, հոտ փոքրիկ, որովհետ– ձեր Հայրը հաճել է տալ ձեզ արքայությունը» (Մատթ., ԺԲ(12), 32): Հավատի կորստից պետք է վախենալ միայն, քանզի մարդը կարող է կորցնել Տիրոջ հովանավորությունը, հոգու փրկությունն ու հավիտենական կյանքը:

Հանրապետության տոն

Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի մայիսյան հերոսամարտերի հիշատակը

*Մայիսի 28-ին Հայաստանի Հանրապետությունում նշվում է Հանրապետության տոնը: Այդ օրը տոնվում է այն հիշարժան օրերի հիշատակը, երբ Ռուսաստանում կայսրության փլուզումից հետո ծանրագույն կացության մեջ գտնվող հայությունը իր մեջ ուժ է գտնում վերականգնելու անկախությունը – հռչակելու Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ որպես անկախ հայկական պետականություն:*

*Առաջին համաշխարհային պատերազմը իր ողջ ծանրությամբ բարդացել էր Ռուսաստանի վրա՝ բերելով բազմաթիվ աննախընթաց դժվարություններ տնտեսական, քաղաքական, սոցիալական, ռազմական բոլոր բնագավառներում: Այս բոլորը հանգեցնում են*

*1917 թ. փետրվարի 27-ին սկսված նոր հեղափոխության – միապետության տապալման՝ ավարտվում է Ռոմանովների ցարական դինաստիայի 300-ամյա իշխանությունը Ռուսաստանում: Ստեղծվում է ժամանակավոր կառավարություն, միաժամանակ տեղերում կազմվում են խորհուրդներ: 1917 թ. հոկտեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը (նոյեմբերի 6-ի լույս 7-ի) Ռուսաստանում բոլշ–իկները տապալում են ժամանակավոր կառավարությունը – իրենց ձեռքը վերցնում իշխանությունը: Ռուսաստանում սկսված ժողովրդավարական զարգացման օրինաչափ ուղին այսպիսով դադարեցվում է: Անդրկովկասում բոլշ–իկների կողմից իշխանության զավթումը միանշանակորեն չի ընդունվում: Այստեղի խորհուրդները չեն ճանաչում բոլշ–իկյան կառավարությունը: Անդրկովկասի, ինչպես նա– Ռուսաստանի ժողովրդավարական ուժերը դեռ որոշ ժամանակ հույսեր են կապում խոստացված Սահմանադիր ժողովի հետ, որտեղ պետք է կազմվեր ժողովրդավարական օրինավոր կառավարություն տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներից: Սակայն 1918 թ. հունվարի 5-ին Սահմանադիր ժողովի ցրումը կարմիրգվարդիական զորաջոկատների կողմից ի դեր– են հանում նա–այդ հույսերը: Անդրկովկասում շատ արագ հասունանում է բոլշ–իկյան Ռուսաստանից անջատվելու մտայնությունը: Թիֆլիսում ստեղծվում է իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, որը հայտարարում է խորհրդային Ռուսաստանից անջատ գործելու մասին: Այդ ընթացքում խորանում է կովկասյան ճակատից (այդ թվում նա–՝ Ար–մտյան Հայաստանի տարածքներից) ռուսական զորքերի դուրսբերման գործընթացը, որը սկսվել էր դեռ–ս ժամանակավոր կառավարության գործունեության ընթացքում: Ճակատի գիծը*

*բաց թողնելը սպառնում է հսկայական տարածքներում հայ բնակչության անվտանգությանը: 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում խորհրդային Ռուսաստանի – Քառյակ միության երկրների (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա,Բուլղարիա) միջ– կնքված պայմանագրով Ռուսաստանից անջատվում են Մերձբալթիկան, Բելոռուսիայի մի մասը, ողջ Ուկրաինան, Ար-մտյան Հայաստանի տարածքներից բոլշ–իկյան կառավարությունը պարտավորվում է 6-8 շաբաթում դուրս բերել ռուսական զորքերը՝ ապահովելով այդ տարածքների վերադարձը Թուրքիային, ինչպես նա– Ռուսաստանի հետ Թուրքիայի սահման հաստատվում է այն սահմանը, որը գոյություն ուներ մինչ– 1914 թ.: Համաշխարհային պատերազմում պարտություն կրող Քառյակ միության համար այս պայմանագիրը դառնում է փրկություն: Թուրքիայի համար՝ հատկապես, քանի որ փլուզման եզրին կանգնած այս երկիրը կարծես հրաշքով հնարավորություն է ստանում անցնելու նոր լայնածավալ հարձակման Ար-մտան Հայաստանում – Անդրկովկասում: Հրամայական է դառնում հայրենիքը պաշտպանելու համար հայկական զորամասեր կազմակերպելու հարցը: Դեռ–ս նախորդ տարվա նոյեմբերից ռուսական հրամանատարությունը թույլատրել էր ազգային զորամիավորումների կազմավորումը: Տրապիզոնից մինչ– Վան ողջ ճակատը թուրքական 7 դիվիզիաների – քրդական զինված մեծաթիվ զորաջոկատների դեմ պահում էին նոր կազմավորվող հայկական բանակի զորամիավորումները՝ Հայկական կորպուսը, որի հրամանատարն էր գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանը: Անդրկովկասում մնացած ռուս զինվորներից ու սպաներից կազմվում են կամավորական զորաջոկատներ գեներալ Դրացենկոյի հրամանատարությամբ, բացի այդ,*

*գործում են Սեբաստացի Մուրադի, Սեպուհի, Պանդուխտի, Թորգոմի – հայդուկական այլ կամավորական ջոկատներ: Միայն Բաթումի ուղղությամբ կանգնած էին վրացական փոքրաթիվ ուժեր: Եր–անի նահանգում հայտարարվում է զորահավաք, կորպուսի կազմավորման գործում մեծ դեր են խաղում նախկին ցարական բանակի հայազգի սպաները՝ գեներալ-մայոր Մովսես Սիլիկյան, գնդապետներ Չալինյան, Ղորղանյան, Վեքիլյան, Կորգանով, Դանիելբեկ, Պողոսբեկ, Հովսեփբեկ Փիրումյաններ, կորպուսի հրամանատար Դրաստամատ Կանայան – այլն: Հիմնականում ար–մտահայերից կազմավորվում է երկրապահ զորաջոկատ՝ Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ:*

*Այս ամենով հանդերձ, չնայած հայկական նոր կազմավորվող բանակի հերոսական դիմադրությանը, նա անկարող էր դիմագրավելու Երզնկայից Վան ռազմաճակատի հսկա հատվածով առաջացող թուրքական հզոր բանակին՝ առանց օգնության – աջակցության, ինչը նրան մերժում է գլխավոր զորակայանը: Այս պայմաններում 1918 թ. փետրվարի 18-ին հրավիրվում է Անդրկովկասյան սեյմը (պառլամենտը), որը որոշում է չճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը – Թուրքիայի հետ առանձին բանակցել Տրապիզոնում: Իր հերթին Թուրքիան պնդում էր, որպեսզի սեյմը Անդրկովկասն անկախ հռչակի Ռուսաստանից, ինչը նրա համար նոր հնարավորություն էր խախտելու նա– Ախուրյան-Արաքս սահմանը – ներխուժելու Անդրկովկաս: Ապրիլի 9-ին Անդրկովկասյան սեյմը որոշում է կայացնում Ռուսաստանից անջատվելու – Անդրկովկասի Ֆեդերատիվ Հանրապետություն կազմելու մասին: Ինչպես սեյմի, այնպես էլ Անդրֆեդերացիայի ներսում տիրում էր անմիաբանությունը: Թուրքալեզու ժողովուրդ-*

*ները բոլորովին նպատակ չունեին դիմագրավելու թուրքական բանակին, վրացիները ցանկանում էին հայկական տարածքները թուրքերին զիջելու հաշվին պահպանել սեփականը, ինչի հետ–անքով թուրքերին է հանձնվում Էրզրումը, Սարիղամիշը, Կարսը: Հայության համար պարզ է դառնում, որ ինքը միայնակ պետք է պայքարի իր գոյատ–ման համար: Մայիսի 11-ին Բաթումում սկսվում են բանակցությունները Թուրքիայի – Անդրֆեդերացիայի ներկայացուցիչների միջ–, որին մասնակցում է նա– հայկական պատվիրակությունը: Սակայն դրանք դեռ–ս ընթանում էին, երբ թուրքական բանակը անսպասելիորեն ներխուժում է Ալեքսանդրապոլ՝ իրեն հավատարիմ միջոցներով կոտորելով շուրջ 30000 հայերի: Թուրքական կողմի այս հաղթանակները պայմանավորված էին ոչ երբեք զինական կարողություններով, այլ բացառապես քաղաքական խարդախ խաղերով: Թուրքական «Կարս» զորախումբը բաժանվում է 4 մասի. առաջինը ձգտում էր Վորոնցովկայով (Աշոցք), Ղարախաչի լեռնանցքով դուրս գալ Բոլնիս Խաչեն, Բորչալու – Թիֆլիս, երկրորդը՝ Ղարաքիլիսա-Դիլիջան-Ղազախ-Ելիզավետպոլ ուղղությամբ շարժվում էր Բաքու, մյուս երկուսը Սարդարապատի – Արարատի ուղղություններով պետք է ներխուժեին Եր–ան: Թուրքական առաջապահ ուժերը, ներխուժելով Արարատյան դաշտավայր, մայիսի 21-ին գրավում են Սարդարապատ գյուղն ու կայարանը – Ղամշլու (Եղեգնուտ) կիսակայարանը՝ սպառնալով Եր–անին: Թուրքական մեծաթիվ – լավ զինված զորախմբերի դիմաց կանգնած էին սակավամարդ, Էրզրումից մինչ– Արաքս նահանջած հայկական զորամասերը: Հայ ժողովրդի համար կրկին ծանրանում է լինել-չլինելու խնդիրը: Հայկական զորքերը նույնպես խմբավորում են իրենց ստորաբա-*

*ժանումները: Եր-անի պաշտպանության պատասխանատվությունը կրում է գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, նրա շտաբի պետն էր գնդապետ Ալ. Վեքիլյանը: Ռազմական շտաբը տեղակայված էր Էջմիածնում՝ Գ-որգյան ճեմարանի շենքի առաջին հարկում: Դրությունը օրհասական էր, այնքան, որ գեներալ Սիլիկյանը, Եր-անի ազգային խորհրդի նախագահ Արամ Մանուկյանը - Եր-անի պարետ Արշ. Շահխաթունին դիմում են Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե Սուրենյանցին՝ առաջարկելով հեռանալ Բյուրականի ամառանոց: Սակայն վերջինս ոչ միայն հրաժարվում, այլ- կոչ է անում հուսալքված զինվորականությանն ու ժողովրդին նոր Ավարայրի - սեփական սրբությունները, արժեքներն ու արժանապատվությունը պաշտպանելու: Նրա կարգադրությամբ տագնապալի կանչով բարձր հնչում են Ս. Էջմիածնի բոլոր եկեղեցիների զանգերը, որոնք չեն լռում մինչ- Սարդարապատի ճակատամարտի հաղթական ավարտը: Դրանց կանչով Մայր Տաճարի մոտ են հավաքվում քաղաքի բնակիչները, քարդերից մազապուրծ - այստեղ փրկություն գտած կիսասոված ու տանջահար գաղթական հայերի հսկա բանակը, շրջական գյուղերի բնակիչները: Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի հոգ-որ դասի հետ ս. Պատարագ է մատուցում, այնուհետ- խրոխտ խոսքով դիմում է ժողովրդին՝ ասելով, որ եթե «հայոց զինվորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանա թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ես նահատակվեմ հենց այստեղ, շեմի վրա Մայր Աթոռի...»: Վեհափառ Հայրապետը օրհնում ու ռազմաճակատ է ուղարկում Զավեն Բաբայան - Գարեգին Հովսեփյան եպիսկոպոսներին (Գ-որգյան հոգ-որ ճեմարանի տեսուչ, Մեծի Տանն Կի-*

*լիկիո կաթողիկոսության ապագա աթոռակալ), Թադեոս վարդապետին Մշո Սուրբ Առաքելոց վանքից, Եզնիկ - Դանիել վարդապետներին Աղթամարի ուխտից, Հովհաննես քահանա Տեր-Մկրտչյանին Գրամբա գյուղից, Զաքար քահանային Կոտայքի Դազա գյուղից, շուրջ 500 հոգ-որականների, ովքեր շրջում են ճակատի տարբեր հատվածներում, հանդիպում զինվորների - սպաների, աշխարհազոր մտած հասարակ քաղաքացիների ու գյուղացիների հետ՝ օրհնելով ու ոգ-որելով նրանց - իրենք իսկ ընթանալով նրանց առջ-ից: Մայիսը -ս մեկ անգամ հայ ժողովրդի համար դառնում է մահվան ու կյանքի սահմանագիծ: Ժողովուրդը՝ ճակատ, թե թիկունք, դառնում է մեկ բռունցք, զինվորների շարքերը համալրում են աշխարհազորայինները, գյուղացիները տրամադրում են փոխադրամիջոցներ, սննդամթերք, ջուր, կառուցում ամրություններ, բոլորը՝ կին, թե տղամարդ, ծեր, թե երիտասարդ, անգամ Գ-որգյան ճեմարանի, որբանոցների սաները, դուրս են գալիս գոյամարտի հանուն հայոց հողի - ազգային արժանապատվության՝ քաջ գիտակցելով, որ նահանջի տեղ այլ-ս չկա. հետ-ում հայոց հավատի կենտրոն Ս. Էջմիածինը - Ար-ելյան Հայաստանի սիրտը՝ Եր-անն են:*

*Եր-անի ռազմական պաշտպանությունն իրականացնում էին հյուսիսից՝ Ալագյազի, կենտրոնից՝ Եր-անյան - Սարդարապատի, հարավից՝ Նախիջ-ան-Շարուրի խմբավորումները: Ալագյազի երկու հետ-ակային բրիգադների հրամանատարներն էին փոխգնդապետ Մխիթարյանը - կապիտան Շնեուրը: Եր-անյան խմբավորման հրամանատար է նշանակվում Դրաստամատ Կանայանը, ում տրամադրության տակ են դրվում գնդապետ Զալինյանի հեծյալ գունդը, գնդա-*

*պետ Դոլուխանյանի, 7-րդ – 8-րդ, Վանի 1-ին – 2-րդ հետ-ակային գնդերը, գնդապետ Սիլինի սահմանապահ – գնդապետ Կորոլկովի պարտիզանական գնդերը: Սարդարապատի խմբավորման հրամանատար է նշանակվում գնդապետ Դանիելբեկ Փիրումյանը: Այս խմբավորման մեջ են մտնում գնդապետ Պողոսբեկ Փիրումյանի գլխավորած – Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանի կողմից «Մահապարտներ» անունով կնքված 5-րդ գունդը, աշխարհազորայինների ջոկատը, գնդապետ Պերեկրեստովի պարտիզանական ջոկատը, Իգդիրի գունդը, գնդապետ Ամիրխանյանի գլխավորած հատուկ հեծյալ – Զեյթունի հեծյալ (հրամանատար՝ Սալիբեկով) գնդերը: Նախիջ-ան-Շարուր ուղղությունը պաշտպանում էր 3-րդ հետ-ակային բրիգադը՝ ոչ լրիվ կազմով, գնդապետ Բաղդասարովի հրամանատարությամբ:*

*Թուրքական զորքերը տեղաբաշխված էին հավասարապես չորս ուղղություններով, որոնք միմյանցից կտրված էին լեռներով, հետ-ապես՝ դիվիզիաները պետք է հարձակվեին միմյանցից անջատ – անկախ: Հայկական հրամանատարությունը (հատկապես գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը) հմտորեն հաշվի էր առել այս հանգամանքը – ճիշտ տեղաբաշխել իր ուժերը՝ որոշելով թշնամուն ջախջախել առանձին-առանձին:*

*Մայիսի 22-ին Դանիելբեկ Փիրումյանի Սարդարապատի խմբավորումը հարձակվում է մեկ օր առաջ թուրքերի կողմից գրավված Սարդարապատ կայարանի վրա – հետ վերցնում այն՝ ստիպելով թուրքական զորքերին խուճապահար փախչել դեպի Արաքս կայարան: Մահապարտների 5-րդ գնդի կազմում, Զավեն – Գարեգին սրբազանների գլխավորությամբ, ճակատամարտին մասնակցում – սխրանքի օրինակներ է ցույց տալիս հոգ-որականների գունդը: Հայերի շրջանում ու-*

*ժեղանում է ոգ-որությունը: Գեներալ Նազարբեկյանը մայիսի 26-ին կոչով դիմում է հայ ժողովրդին. «...եթե մենք այժմ չկարողանանք զենքը ձեռքին պաշտպանել մեր ազատությունն ու արժանապատվությունը, ապա մենք արժանի չենք լինի գոյատ-ելու իբր- ինքնուրույն ժողովուրդ... Հիշենք՝ այժմ կնվաճենք ապագան, կամ այլ-ս երբեք չենք տեսնի այն, ոչ մենք, ոչ մեր սերունդները»: Գեներալ Սիլիկյանը որոշում է բացի ճակատային գրոհներից ձեռնարկել նա- հարձակում՝ թուրքական զորքի համար ստեղծելով շրջափակման կամ կիսաշրջափակման սպառնալիք: Այդ նպատակով ստեղծված փոխգնդապետ Հասան Փաշայանի «Խզնաուզի ջոկատը» մայիսի 27-ի լուսաբացին, անցնելով Խզնաուզ (այժմ՝ Արագած) գյուղով - Կարմարաթար-Շամիրամ ձորով, Արաքս կայարանի հյուսիսային կողմից, փաստորեն՝ թուրքերի թիկունքից, գրոհում է վերջիններիս դիրքերը: Միաժամանակ հայկական ռազմական ուժերը հարձակման են անցնում նա- ճակատային գծում: Բաշ-Ապարանի ուղղությամբ հարձակումը սկսած Դրոյի զորաջոկատը, հետ քշելով թշնամուն, հասնում է Ապարանի մատույցները՝ Ալի-Քուչակ: Համառ մարտերից հետո մայիսի 29-ի երեկոյան թուրքական ուժերը գլխովին ջախջախվում - հետ են շպրտվում: Համառ ու նպատակասլաց գրոհների արդյունքում, 8-օրյա մարտերը (մայիսի 22-29) ավարտվում են թուրքերի լիակատար պարտությամբ - նրանց նահանջով մինչ- Ալեքսանդրապոլ:*

*Սարդարապատի ճակատամարտը հայ ազատագրական պայքարի հերոսական էջերից է, որն իր նշանակությամբ բոլոր ժամանակներում միայն Ավարայրի հետ է համեմատվել: 1960-ական թվականների ազգային զարթոնքի վերելքի պայմաններում - համազ-*

*գային պայքարի արդյունքում 1968 թ. կառուցվում է Սարդարապատի հերոսներին նվիրված հուշարձանհամալիրը, որի զանգերը հիշեցումն են Սարդարապատի հերոսամարտի օրերին հայ եկեղեցիների զանգերի ղողանջման, որոնք չլռեցին մինչ– մայիսյան մարտերի ավարտը: Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը 1972 թ. սեպտեմբերի 3-ի կոնդակով հրահանգում է 1973 թվականից սկսած՝ ամեն տարի մայիսի 22-ին հոգեհանգստյան հանդիսավոր պաշտոններ կատարել Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներում: Կոնդակում Վեհափառ Հայրապետը գրում է. «Հայ ազգի հերոսական մարտնչումների դրոշի վրա գրված եղավ միշտ Ավարայրի նշանաբանը՝ «Վասն հավատի, վասն հայրենյաց»: Այսպես է, որ հաճախ մարմնապես նվաճվելով հանդերձ, ներքուստ նա մնաց միշտ ազատ, միշտ անպարտելի իր հոգ-որ-մշակութային առաքելության ճանապարհի վրա – ի հեճուկս եկող ու անցնող մրրիկների, շարունակեց մնալ ոգեկան անկորնչելի արժեքներ ստեղծող ուժ: Հայ ժողովուրդը իր ողջ պատմությամբ մնաց հավատարիմ ազատատենչ Հայկին եւ քրիստոսասեր Վարդանին: Այսօր հայ ժողովուրդը, ամուր կանգնած Սարդարապատի հաղթանակի վեմի վրա... կերտում է իր ապագան, առավել ինքնավստահ, առավել խանդավառ, շարունակելով իր պատմական առաքելությունը իբրեւ մշակույթ ստեղծող ազգություն... Նոր պայմանների մեջ, նոր ներշնչումներով, նոր խոյանքներով նույն հայ ժողովուրդն է, որ շարունակում է իր առաքելությունը՝ հավետ հավատարիմ իր նախնյաց կոչումին, որ Հայկն ու Վարդանը դարբնեցին» («Էջմիածին», 1972):*

*Սարդարապատի, Բաշ-Ապարանի – Ղզլնաուզի ջոկատների մեծ հաջողությունը անչափ ոգ–որում է*

*Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր) - Դիլիջանում գտնվող հայկական զորամասերին: Մայիսի 24-ին Դիլիջանի կողմից հայկական զորքերն ու աշխարհազորային ջոկատները շարժվում են դեպի Ղարաքիլիսա: Սկսվում է Ղարաքիլիսայի հերոսական ճակատամարտը, որը տ–ում է մինչ– մայիսի 28-ը: Թշնամու գերակշռող ուժերի դեմ կռվող հայ զինվորների, սպաների ու աշխարհազորայինների հերոսությունը ապշեցնում է անգամ թուրքերին: Այստեղ իրենց անունը փառքով են պսակում գնդապետներ Բեյ-Մամիկոնյանը, Կորգանյանը, պորուչիկ Գարեգին Նժդեհը - այլն: Ղարաքիլիսայի ճակատամարտում հերոսության աննման օրինակ է տալիս շտաբս-կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը, ով, սպառելով մարտկոցի արկերը, իր հրետանավորների հետ անցնում է սվինամարտի - զոհվում: Մինչ– վերջին մարդը զոհվում են գնդապետ Սամարց-ի հայ մարտիկներն ու աշխարհազորայինները: Հայերի ցուցաբերած սխրանքը խոստովանում է նա– թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան, ով հետագայում հայտարարում է, որ Ղարաքիլիսայում «հայերը ցույց տվեցին, որ նրանք կարող են լինել աշխարհի լավագույն զինվորները: Դա հազվագյուտ մարտ էր այս պատերազմում»: Թուրքական զորամասերը կրկին Ղարաքիլիսա են մտնում մայիսի 30-ին, երբ հայերը սպառել էին իրենց զինամթերքը: Ողջ մնացածները նահանջում են Ելիզավետպոլի ուղղությամբ: Հայկական զորաջոկատների մի մասն այնուամենայնիվ ճեղքում է թուրքական օղակը - դուրս գալիս Դսեղ-Սանահինի շրջան: Թուրքական ներխուժումը Ղարաքիլիսա –ս մեկով ավելացնում է հայ ժողովրդի պատմության մռայլ էջերի թիվը:*

*

* *

*Հայ ժողովրդի մաքառման հերոսական օրերին փլուզվում է Անդրկովկասյան Դաշնային Հանրապետությունը. մայիսի 26-ին – 27-ին վրացական ու ադրբեջանական ազգային խորհուրդները հայտարարում են Վրաստանի – Ադրբեջանի անկախ հանրապետությունների ստեղծումը: Մայիսի 28-ին Թիֆլիսում նման հայտարարություն է անում նա– հայոց Ազգային խորհուրդը՝ նշելով, որ Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծարումով – Վրաստանի ու Ադրբեջանի անկախ պետությունների հռչակումով ստեղծված նոր իրադրության պայմաններում Ազգային խորհուրդը իրեն հայտարարում է բոլոր հայկական գավառների գերագույն – միակ իշխանություն՝ ժամանակավորապես ստանձնելով կառավարության բոլոր ֆունկցիաները: Հայտարարությունը ստորագրում են Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանը, վարչապետ Ալեքսանդր Խատիսյանը – արտգործնախարար Հովհաննես Քաջազնունին:*

*Հայաստանի անկախ Հանրապետությունը շուտով ընդունում է իր զինանշանը, դրոշը – հիմնը: Հայաստանի առաջին Հանրապետությունը իր գոյության (1918-1920 թթ.) կարճատ–ության պատճառով չի հասցնում ընդունել Սահմանադրություն: Որպես դրոշ ընդունվում է եռագույնը՝ կարմիրը՝ արյան, կապույտը՝ խաղաղ երկնքի – նարնջագույնը՝ ստեղծագործ աշխատանքի խորհրդանիշ: 1920 թ. ընդունվում է ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի – նկարիչ Հակոբ Կոջոյանի հեղինակած պետական զինանշանը՝ Արարատի ֆոնի վրա առյուծ – արծիվ, վահանի վրա հայոց չորս թագավորությունների՝ Արտաշեսյան, Արշակունյաց, Բագրատունյաց – Ռուբինյան, զինանշանները, ներք–ում՝*

*սուր, գրիչ, շղթա – հասկեր: Որպես օրհներգ ընդունվում է Միքայել Նալբանդյանի խոսքերով – Բարսեղ Կանաչյանի երաժշտությամբ «Մեր Հայրենիք» երգը: Հայաստանի Հանրապետությունը սահմանում է երկու շքանշան՝ «Հայրենիքին արած ծառայության համար» – «Վարդան զորավար»:*

*Մայիսի 28-ը որպես Հանրապետության օր տոնում է ողջ հայ ժողովուրդը –՛ Հայաստանում, –՛ Արցախում, –՛ Սփյուռքում: Այդ օրը իրականացավ հինգ հարյուր տարուց ավելի պետականությունը կորցրած ժողովրդի ամենանվիրական երազանքը, որի համար բազում հերոսական սերունդներ համառ պայքար էին մղել, – որն իրականություն դարձավ վիթխարի զոհերի, մեծ կորուստների, արյան ու զրկանքների շնորհիվ: Հայկական պետականության վերականգնումը հայ ժողովրդի պատմության մեջ բեկումնային իրադարձություն էր – նրա մեծագույն հաղթանակը:*

*Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետը 1989 թ. հունիսի 14-ի կոնդակով հրահանգում է բոլոր հայ եկեղեցիներին Հայաստանում – Սփյուռքում մայիսի 28-ին գոհաբանական մաղթանքներ կատարել:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Առաջին համաշխարհային պատերազմի ծանր հետ–անքները Ռուսաստանի համար:

-1917 թ. փետրվարյան հեղափոխությունը – հոկտեմբերյան հեղաշրջումը:

-Իրավիճակն Անդրկովկասում:

-1918 թ. Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը:

-Հայկական կորպուսի ձ–ավորումը:

-Թուրքական զորքերի առաջխաղացումը ողջ ռազմաճակատով, Էրզրումի, Սարիղամիշի, Կարսի գրավումը նրանց կողմից:

-Բաթումի բանակցությունները:

-Թուրքական ներխուժումն Ալեքսանդրապոլ:

-Մայիսի 21-ին Սարդարապատ գյուղի գրավումը թուրքերի կողմից: Հայ ժողովրդի համար գոյատ-ման խնդրի առաջացումը:

-Գեորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի կոչը ժողովրդին, հոգ-որականներին ու զինվորականներին:

-Ժողովրդի համախմբումը, հայկական զինված ուժերի վերադասավորումը:

-Մայիսի 22-29-ը Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերը:

-1968 թ. հուշարձան-համալիրի կառուցումը Սարդարապատի հերոսամարտի հիշատակին: 1972 թ. սեպտեմբերի 3-ի Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կոնդակը՝ ամեն տարի մայիսի 22-ին հայ եկեղեցիներում հոգեհանգստյան պաշտոններ կատարելու մասին:

-1918 թ. մայիսի 28-ին Հայաստանի անկախ Հանրապետության հռչակումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Սարդարապատը, Բաշ-Ապարանն ու Ղարաքիլիսան հայ ժողովրդի աննկուն կամքի, իր անկախության համար մինչ- վերջ, միասնական, ազգովի պայքարելու պատրաստակամության – վճռականության վկաներն են: Մայիսյան այս հերոսամարտերի շնորհիվ Ար–ևլյան Հայաստանը փրկվում է ոչնչացումից: Հայերի հերոսական ոգին, համաժողովրդական սխրանքը, հաղթանակը թուրքական բանակի դեմ ապացուցում են, որ հայ ժողովուրդը հաստատակամ է իր դարավոր

արժեքները պահպանելու: Մայիսը, լինելով հայոց գոյության, կյանքի ու մահվան վճռորոշ սահմանագիծ, դառնում է նա– հայ ազգային իղձերի իրականացման ամիս: Ազգային համախմբման – հերոսական պայքարի այս հանգրվանից սկիզբ է առնում հայոց առաջին անկախ հանրապետությունը:

Ամեն տարի այս օրը սերունդների համար ուխտի նորոգման օր է՝ սուրբ պահելու նրանց նվիրական հիշատակը ու մնալու հավատարիմ նրանց լույս հավատին, հերոսական ոգուն, հայոց ազգը մեկտեղված – հայոց երկիրը փրկված տեսնելու նրանց պայծառ երազին, ում արյան գնով նվաճվեց մեր անկախ պետականությունը:

Այսօրը նա– աղոթքի օր է բոլոր հայերի համար, որտեղ էլ նրանք գտնվեն՝ մեր ժողովրդի խաղաղ զարգացման ու բարօրության, մեր նորակերտ հայրենի երկրի անսասանության ու շինության համար, զարթոնքի շնչով ու հույսով ապրող Մայր Հայաստանի համար:

### Հոգեգալուստ

*Հոգեգալստյան տոնը խորհրդանշում է Քրիստոսի Հարությունից հիսուն օր հետո, օրվա երրորդ ժամին (առավոտյան ժամը 9-ին) Սուրբ Հոգու էջքը Քրիստոսի առաքյալների վրա, երբ նրանք գտնվում էին Վերնատանը: Այս հրաշալի եղելությունը ներկայացնում է Նոր Կտակարանի «Գործք Առաքելոց» գիրքը. «Երբ Պենտեկոստեի օրերը լրացան, բոլորը միասիրտ միատեղ էին: Եվ հանկարծակի երկնքից հնչեց մի ձայն՝ սաստիկ հողմից եկած ձայնի նման. – լցրեց ամբողջ այն տունը, ուր նստած էին: Եվ նրանց եր–ացին բաժանված լեզուներ,*

*նման բոցեղեն լեզուների, որոնք - նստեցին նրանցից յուրաքանչյուրի վրա: Եվ բոլորը լցվեցին Սուրբ Հոգով ու սկսեցին խոսել ուրիշ լեզուներով, ինչպես որ Սուրբ Հոգին նրանց խոսել էր տալիս» (Գործք, Բ, 1-4): Վերնատան առջ- հավաքված տարազգի բազմությունը զարմացած լսում է առաքյալների՝ տարբեր լեզուներով քարոզը, որը պատճառ է դառնում շատերի դարձի. «Մենք՝ պարթ-ներ, մարեր, իլամացիներ - նրանք, որ բնակվում են Միջագետքում, Հրեաստանում - Գամիրքում, Պոնտոսում - Ասիայում, Փռյուգիայում - Պամփյուլիայում, Եգիպտոսում - Կյուրենիայի հար-ան Լիբեայի շրջաններում, - Հռոմից եկածներ՝ թե՛ հրեաներ - թե՛ հրեության դարձածներ, կրետացիներ ու արաբներ, լսում ենք, որ նրանք խոսում են մեր լեզուներով Աստծու մեծագործությունների մասին» (Գործք, Բ, 9-11): 3-րդ դարի աստվածաբան Տերտուղիանոսը - Եկեղեցու հայրերից և. Օգոստինոսը (5-րդ դ.) նշված հատվածի «Հրեաստանում» բառի փոխարեն ընթերցել են «Հայաստանում»: Համաձայնելով, այս ուղղման հետ, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը բացատրում է, որ քանի որ Գործք Առաքելոցում երկրները հիշվում են աշխարհագրական հերթականությամբ, ապա Միջագետքի, Գամիրքի - Պոնտոսի հաջորդական շարքում ավելի ճիշտ է ընդունել Հայաստանը, ինչպես նա-՝ հրեերենը հրեաների համար երբեք չէր կարող նկատվել օտար լեզու, հետ-աքար - առաքյալների՝ հրեերեն խոսելը չէր կարող զարմանք պատճառել Վերնատան մոտ հավաքված տարազգի բազմությանը: Ուստի, կարող ենք ընդունել, որ Հոգեգալստյան շնորհաքեր օրը, Երուսաղեմում, Վերնատան մոտ հավաքված բազմազգ հեթա-*

*նոսների մեջ ներկա են եղել - առաքյալների շուրթերից մայրենի լեզուն լսել նա- հայեր[37]:*

*Սուրբ Հոգու աքանչելի էջքը Քրիստոսի աշակերտների վրա կատարվում է հրեական Պենտեկոստեի օրը, երբ աշակերտները Վերնատանը հավաքվել - աղոթում էին՝ սպասելով Տիրոջ Խոստումի իրականացմանը. «Դուք այս օրերից ոչ շատ հետո պիտի մկրտվեք Սուրբ Հոգով» (Գործք, Ա, 5): Պետրոս առաքյալը Սուրբ Հոգու զորությամբ քարոզում է հավաքված բազմությանը, - 3000 մարդ մկրտվում ու միանում է Քրիստոսի նորահաստատ Եկեղեցուն: Պենտեկոստեն հրեաների գլխավոր տոներից մեկն է: Տոնը նշվում էր տարվա առաջին բերքը հավաքելու - Աստծուն ընծայելու խորհրդով: Հետագայում այն նորովի իմաստավորվեց որպես օրենքի տվչության օր, որովհետ- Պենտեկոստեի օրը Մովսեսը Սինա լեռան վրա ստացավ աստվածադիր օրենքների քարե տախտակները: «Պենտեկոստե» հունարեն նշանակում է «հիսուներորդ»: Քրիստոնեության սկզբնական ժամանակաշրջանում Հոգեգալուստը անվանվում էր նա- Պենտեկոստե, որովհետ- Սուրբ Հոգու էջքը առաքյալների վրա կատարվեց Քրիստոսի Հարությունից հիսուն օր հետո - համընկավ Պենտեկոստեի օրվա հետ: Սակայն քրիստոնեությամբ Պենտեկոստեն իմաստավորվեց նոր բովանդակությամբ ու խորհրդով: Բերք քաղելու (Ելք, ԻԳ(23), 16), շաբաթների (Բ Օրենք, ԺԶ(26), 9), երախայրիքների (Թվեր, ԻԸ(28), 26) - օրենքների տվչության (Ելք, ԼԱ(31), 18) օրը Հոգեգալուստով բացահայտեց իր իսկական իմաստը՝ Քրիստոսով է փրկությունը, որ աշխարհի է եկել, - «եթե մեկը ջրից ու Հոգուց չծնվի, չի կարող Աստծու արքայություն*

[37] Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում, 1912, Հ. Ա, էջ 22:

մտնել» (Հովհ., Գ, 5): «Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում – երկրի վրա. ինչպես Հայրը Ինձ ուղարկեց, Ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացե՛ք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր ազգերին, նրանց մկրտեցե՛ք Հոր – Որդու – Սուրբ Հոգու անունով» (Մատթ., ԻԸ (28), 18-19): Առաքելության կոչելով իր աշակերտներին, Քրիստոսը հաստատեց Իր Եկեղեցին՝ իբր– Իր ներկայություն այս աշխարհում՝ շարունակելու համար փրկագործական Իր առաքելությունը: Ս. Հոգու գալուստը համարվում է Քրիստոսի Եկեղեցու ծննդյան օրը, քանզի առաքյալները Ս. Հոգու շնորհներով ստացան այն 12 երկրների լեզուներով խոսելու կարողությունը, ուր, ըստ վիճակի, պետք է քարոզեին: Նրանք աշխարհի ծագերում ավետարանեցին նոր օրենքը, որի էությունը Աստծու Սերն է մարդկանց հանդեպ՝ Քրիստոսը, Ով պահանջում է մարդկանցից սեր ունենալ միմյանց հանդեպ, քանզի «Լրումն օրինացն սեր է» (Հռոմ., ԺԳ(13), 10): Ս. Հոգու էջքով աշակերտների վրա – 3000 նորադարձների մկրտությամբ, այսինքն՝ Եկեղեցու առաջին պտուղներով, սկսվեց քրիստոնեական նորահաստատ Եկեղեցու փրկագործ առաքելությունը: Քրիստոսի 12 առաքյալներին Ս. Հոգին առաջնորդեց աշխարհի չորս ծայրերը, ինչպես հրեական 12 ցեղերին առաջնորդել էր դեպի Պաղեստին: Եվ փոխարեն Հին Կտակարանում Աստծու՝ վրանում կամ տաճարում բնակության, Ս. Հոգու գալստյամբ Աստված հաստատվեց մարդկանց սրտերում:

Քրիստոսի Հարությունից մինչ– Ս. Հոգու՝ առաքյալների վրա էջք հիսուն օրերը կազմում են յոթ շաբաթ: Յոթ թիվը խորհրդանշում է, որ Ս. Հոգին է Եկեղեցու յոթ խորհուրդները (մկրտություն, դրոշմ, հաղորդություն, ապաշխարություն, վերջին օծում, քահանայութ-

*յան կարգ - պսակ) կատարողը՝ քահանաների միջոցով: Ինչպես - խորհրդանշում է աշխարհի արարչագործությունը յոթ Օրում, նա-՝ այս կյանքի տ-ողությունը՝ յոթ Օր, իսկ ութերորդը հանդերձյալ կյանքի անվախճան Օրն է: Յոթն են նա- մահացու մեղքերը, որոնց դեմ պայքարելու համար Ս. Հոգին տալիս է Իր յոթ շնորհները. հպարտության դեմ՝ Աստծու երկյուղը, նախանձի դեմ՝ աստվածպաշտությունը, բարկության դեմ՝ գիտությունը, ծուլության դեմ՝ զորությունը, ագահության դեմ՝ խրատը, որկրամոլության դեմ՝ իմացությունը կամ հանճարը - պոռնկության դեմ՝ իմաստությունը[38]:*

*Վաղ շրջանում Հայ Եկեղեցին Հոգեգալստյան տոնը կատարում էր մեկ օր տ-ողությամբ: 12-րդ դարում ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսը, տոնի ծիսակարգը հարստացնելով շարականներով - ընթերցվածներով, Հոգեգալստյան տոնակատարությունը հաստատեց յոթ օր:*

*Հայաստանյայց Ս. Եկեղեցին Հոգեգալստյան տոնը նշում է Ս. Հարության տոնից հիսուն կամ՝ Համբարձման տոնից տասը օր հետո, այսինքն՝ տոնն ունի 35 օրվա շարժականություն՝ մայիսի 10-ից հունիսի 13[39]:*

---

[38] Տես՝ ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Սուրբ Հոգու գալստյան մասին, Գանձասար, 1995:

[39] Հոգեգալուստը ոչ մի կապ չունի ներկայիս հոգեգալստական կամ պենտեկոստեական աղանդավորական շարժման հետ, որի անդամները Սուրբ Գիրքը համարում են մեռած գիրք, իսկ իրենք, իբրև թե, ձգտում են ներքնապես լուսավորվել ու երկարատև «ինքնախոկումներից» հետո մտահափշտակության (էքստազի) մեջ տարբեր լեզուներով խոսել՝ իրենք էլ չիմանալով, թե ինչ, սակայն համարելով, որ դա Սուրբ Հոգու՝ իրենց վրա իջնամբ է կատարվում: Սա մոլորություն է, քանի որ նման գրգռված, խիստ հուզական վիճակներում նրանց մոտ նկատվում է անհասկանալի, անկապ ու անիմաստ հնչյունների արտաբերում: Այդպիսի «պայծառություն» ստացողը սկսում է «մարգարեանալ», որի խոսքերն ըն-

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հոգեգալուստի ավետարանական պատմությունը:

-Պենտեկոստե:

- Եկեղեցու հիմնարկեքը – առաջին հունձքը:

-Առաքյալների՝ աշխարհի տարբեր կողմերում քարոզության սկիզբը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Առաքյալների քարոզությամբ Ս. Հոգու կենսաբեր ու մշտանորոգ զորությունը տարածվեց երկրի բոլոր անկյուններում՝ հովիվներից ու ձկնորսներից մարգարեներ – քարոզիչներ հրաշագործելով, խուլերին լսելու – համրերին խոսելու կարողություն տալով, անմիտներին՝ իմաստուն – մանուկներին՝ զորավոր դարձնելով: Բաբելոնի աշտարակաշինությամբ (Ծննդ., ԺԱ(11), 1-9) սկիզբ առած բազմալեզու աստվածամերժ խառնաշփոթությունը Ս. Հոգու գալստյամբ միաձայնվեց ճշմարիտ աստվածպաշտությամբ, – Բաբելոնում բաժանված մարդկությունը միատեղվեց ու միակամվեց Վերնատանը՝ Քրիստոսի վարդապետությամբ, Նրա Ս. Խաչի ներքո:

ՀՈՒՆԻՍ

## Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր

---

դունվում են որպես նոր «Հայտնություն» (տե՛ս Ս. Մայիլյան, Ժամանակակից աղանդները Հայաստանում, մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2000):

*Հունիսի 1-ը Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրն է:*

*Երեխաների պաշտպանության հիմնախնդիրն իր ողջ բարդությամբ ծանրանում է պետությունների առաջ հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որի ընթացքում համակենտրոնացման ճամբարներում, պաշարված քաղաքներում, էվակուացիայի ճանապարհներին սովին, հիվանդություններին, ռմբակոծումներին զոհ գնացին միլիոնավոր անմեղ ու անպաշտպան երեխաներ:*

*Պատերազմից հետո, Փարիզում, Կանանց միջազգային ժողովրդական ֆեդերացիայի առաջին կոնգրեսի մասնակիցները երդվում են. «Մենք հանդիսավոր երդվում ենք՝ պայքարել ստեղծելու մեր երեխաների – ապագա սերունդների երջանիկ ու ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ պայմաններ... անդուլ պայքար մղել ամուր խաղաղություն հաստատելու համար ողջ աշխարհում՝ որպես միակ երաշխիք մեր երեխաների ու ընտանիքների երջանկության»: Ավելի ուշ, 1949 թ., Մոսկվայում կայացած ֆեդերացիայի հերթական նստաշրջանում որոշվում է հունիսի 1-ը հաստատել որպես Երեխաների պաշտպանության միջազգային օր, որն այդ ժամանակվանից նշվում է ամեն տարի: Առաջին անգամ հունիսի 1-ը նշվել է 1950 թ., աշխարհի 51 երկրներում:*

*Հետագա տարիներին երեխաների – նրանց իրավունքների պաշտպանությանը նվիրվել են բազմաթիվ քննարկումներ միջազգային տարբեր կազմակերպություններում. 1989 թ. նոյեմբերի 20-ին ՄԱԿ-ի կողմից ընդունվում է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիան, 1990 թ. սեպտեմբերի 30-ին, Նյու Յորքում՝ «Երեխաների պաշտպանության – զարգացման գոյա-*

*տ–ման ապահովման մասին» համաշխարհային դեկլարացիան – այլն:*

*Երեխաների պաշտպանության միջազգային օրը համաշխարհային հասարակական կարծիքի համախմբման օրն է՝ պայքարելու հանուն պատերազմի սպառնալիքներից երեխաների պաշտպանության, նրանց առողջության պահպանման, ժողովրդավարական հիմունքներով դաստիարակման – կրթության:*

*Այսօր ողջ աշխարհում բազմաթիվ երեխաներ ենթարկվում են տարբեր վտանգների՝ տառապելով պատերազմներից, բռնություններից, ռասսայական խտրականություններից – այլն: Նրանք զանազան զրկանքներ են կրում՝ որպես փախստականներ ստիպված լինելով լքել իրենց հայրենի օջախները: Միլիոնավոր երեխաներ տառապում են աղքատության աղետից – տնտեսական ճգնաժամերից, քաղցից, տանիքի բացակայությունից, համաճարակներից, տարբեր հիվանդություններից, որոնք առաջանում են սանիտարական վատ պայմաններից, թերսնումից, շրջապատող միջավայրի սարսափելի չափերի հասնող աղտոտումից – այլն: Ավելի ու ավելի է շատանում սպիրտային խմիչքներից – թմրանյութերից կախվածություն ունեցող երեխաների թիվը, ովքեր զրկված են բժշկական օգնություն, ինչպես նա– կրթություն ստանալու հնարավորությունից: Այդ պատճառով – միջազգային հասարակայնությունը, ինչպես նա– աշխարհի բոլոր պետությունները համագործակցության – համախմբվածության հիմքի վրա պետք է գործի դնեն իրենց հնարավորություններն ու միջոցները՝ ապահովելու Երկիր մոլորակի երջանիկ ապագան՝ միաժամանակ որպես գործընկեր հրավիրելով հենց իրենց՝ երեխաներին:*

*Այս ամենով հանդերձ հունիսի 1-ը ողջ աշխարհում ներկայանում է երեխաների համար կազմակերպվող զբոսանքներով, մշակութային – սպորտային բազմաթիվ միջոցառումներով, մուլտիպլիկացիոն – գեղարվեստական ֆիլմերի անվճար ցուցադրումներով, կրկեսային, տիկնիկային – թատերական ներկայացումներով, զվարճալի ատրակցիոններով, սպորտային խաղերով, ասֆալտի վրա նկարների մրցույթներով – այլն: Ամառվա առաջին օրը բուրում է անուշեղենով, քաղցրեղենով ու պաղպաղակով, փայլում է մանկական ժպտուն դեմքերով – պայթում զրնգուն, ուրախ ծիծաղից: Այս օրը տարվա միակ օրն է, երբ մեծահասակները հնարավորություն ունեն վերագտնելու դեպի մանկություն կորցրած ճանապարհը:*

*Հունիսի 1-ը հիշեցնում է ամենակար-որը՝ երեխաների պաշտպանությունը սկսվում – վերջանում է նրանով, որ աշխարհում օտար երեխաներ չկան, նրանք բոլորը մերն են:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Երեխաների պաշտպանության հիմնախնդիրների ծառացումը մարդկության առաջ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո:

-Հունիսի 1-ը Երեխաների պաշտպանության միջազգային օր հռչակելու պատմությունը:

-Հետագա տարիներին երեխաների հիմնախնդիրներին նվիրված բազմաթիվ քննարկումները:

-Հունիսի 1-ի տոնակատարությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Աշխարհի բոլոր անկյուններում երեխաները անմեղ են, բոլորից ավելի խոցելի – կախված մեծահա-

սակներից: Միաժամանակ նրանք աշխույժ են, հետաքրքրասեր – հույսերով լի: Նրանց ժամանակը հարկ է, որ լինի խաղաղության, ուրախության, խաղերի, ուսման – ներդաշնակ աճման ու զարգացման ժամանակ, – աշխարհի բոլոր պետությունների, հասարակական, քաղաքական, եկեղեցական, մշակութային – այլ կազմակերպությունների, ընդհանրապես՝ բոլոր մեծահասակների պարտքն է նրանցից յուրաքանչյուրի համար ապահովել հնարավորինս լավ ապագա: Այդ պատճառով – հունիսի 1-ը ոչ միայն աղմկալից ուրախության, տոնական միջոցառումների – ուրախ խաղերի, այլ– միջազգային հասարակայնությանը երեխաների իրավունքների պահպանման – հարգման մասին հիշեցման օրն է՝ որպես մարդասիրական, արդարացի – բարեկեցիկ հասարակության ձ–ավորման անհրաժեշտ պայման:

Սուրբ Հռիփսիմյան եւ
սուրբ Գայանյան կույսեր

*Սուրբ Հռիփսիմյանք – սուրբ Գայանյանք 37 նահատակ կույսերի նույն խումբն է, սակայն Հայ Առաքելական Ս. Եկեղեցու Տոնացույցով երկու տոն է հաստատված նրանց հիշատակին, որովհետ– նահատակվել են երկու օրվա ընթացքում – միմյանցից անջատ երկու խմբով:*

*Նրանց նահատակության մասին պատմում են հայոց պատմիչներից Ագաթանգեղոսը – Մովսես Խորենացին, նրանց լրացնում են վարքագրական այլ աղբյուրներ, ավանդություններ, ինչպես նա– «Հայսմավուրքները»:*

*Հռոմի Դիոկղետիանոս կայսրը (284Վ305 թթ.), չնայած կնոջ կենդանությանը, ցանկանում է մեկ անգամ -ս ամուսնանալ - խուզարկուներ է ուղարկում կայսրության բոլոր կողմերը՝ գտնելու - իր մոտ բերելու կանանցից գեղեցկագույնին: Խուզարկուները գտնում են նրան Ս. Պողոսի վանքում՝ հանձինս հրաշագեղ Հռիփսիմե կույսի, ով շուրջ 300 կույսերի հետ աղոթական կյանքով ապրում էր այդ վանքում: Վանքի մայրապետն էր Գայանեն՝ դաստիարակը Հռիփսիմեի: Հռիփսիմեն սերում էր Կլավդիոս կայսեր սերնդից - վզին կրում էր Քրիստոսի Խաչափայտից մի մասունք, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, նրան էր անցել Պատրոնիկե կայսրուհուց:*

*Դիոկղետիանոս կայսրը, տեսնելով չքնաղ կույսի պատկերը, որը նկարել - նրան էին բերել խուզարկուները, ցանկանում է կնության առնել Հռիփսիմեին: Իմանալով կայսեր այս մտադրության մասին՝ Գայանեն, Հռիփսիմեն - շուրջ 70 կույսեր ու քահանաներ, գիշերով թողնում են Ս. Պողոսի վանքը - հեռանում նախ՝ Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը, այնուհետ-՝ անցնում Երուսաղեմ, ուր մեկ ամիս մնալով՝ շարունակ աղոթում են ս. Աստվածածնի գերեզմանին - նրա օգնությունը հայցում: Ս. Տիրամայրը տեսիլքով պատվիրում է նրանց գնալ ս. Թադեոս առաքյալի վիճակ՝ Հայաստան: Եդեսիայի վրայով կույսերն անցնում են Վան - հաստատվում Վարագա լեռան վրա: Ճանապարհին կույսերի մի մասը մնում է Եդեսիայում, ոմանք՝ լեռներում կամ քարայրներում, Մանե անունով մի կույս հաստատվում է Բարձր Հայքի Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան քարայրներից մեկում, որը հետագայում իր համար ճգնության վայր է ընտրում ս. Գրիգոր Լուսավորիչը, - որտեղ էլ նա կնքում է իր մահկանացուն:*

*Վարագա լեռան վրա Հռիփսիմեն մի քարայրում թաքցնում է Քրիստոսի Խաչափայտի մասունքը – իրենց հետ եղող քահանաներից մի քանիսին հանձնում դրա խնամքը: Իսկ ինքը, Գայանեն – մյուս կույսերը (37 մարդ), ճանապարհը շարունակելով, հաստատվում են այդ ժամանակ Հայաստանի մայրաքաղաք Վաղարշապատի շրջակայքի հնձաններում:*

*Այս ընթացքում Դիոկղետիանոս կայսրն իր կայսրության բոլոր կողմերը սուրհանդակներ է ուղարկում՝ Հռիփսիմեին գտնելու – վերադարձնելու համար: Սուրհանդակները գալիս են նա– Հայաստան – հայոց թագավոր Տրդատ Գ-ին (287ՎՆ 298ՎՆ330 թթ.) հանձնում կայսեր նամակը, որում վերջինս խնդրում է Տրդատից՝ գտնել Հռիփսիմեին – հետ ուղարկել կամ էլ, եթե գեղանի կույսը Տրդատին հաճո եր–ա, կարող է ինքն ամուսնանալ նրա հետ: Տրդատի խուզարկուները Հռիփսիմեին գտնում են հնձաններում: Սկզբում Տրդատը ոսկեպատ գահավորակներ – սպասավորներ է ուղարկում նրան պալատ տանելու համար, սակայն հանդիպելով Հռիփսիմեի ու մյուս կույսերի անդրդվելի դիմադրությանը, սպասավորներն արդեն բռնությամբ են Հռիփսիմեին տանում թագավորական պալատ, որտեղ արգելափակում են սենյակներից մեկում: Հայոց թագավորը ցանկանում է բռնությամբ տիրանալ գեղեցկուհի կույսին, սակայն Հռիփսիմեն համառորեն դիմադրում է մինչ այդ մեծամեծ քաջագործություններով ու ահռելի ուժով համբավ ձեռք բերած Տրդատին: Վերջինիս հրամանով պալատ են բերում Գայանեին՝ հրամայելով նրան համոզել իր սանուհուն, որպեսզի ենթարկվի թագավորի կամքին: Գայանեն, ընդհակառակը, քաջալերում է Հռիփսիմեին՝ հաստատուն մնալ իր մերժումի վրա – չփոխել երկնային երջանկությունը երկրային ժա-*

*մանակավոր փառքի ու վայելքի հետ: Այդ խոսքերի համար Գայանեին գանահարում - քարերով կոտրում են բերանը, որից հետո իր երկու ընկերուհիների հետ բանտարկում են: Հռիփսիմեն, շարունակելով պաշտպանվել թագավորից, վերջին մի մաքառումով հրելով Տրդատին, դուրս է գալիս պալատից - ճեղքելով ամբոխը՝ հասնում հնձանների իրենց կացարանը: Տրդատը, շարականի խոսքերով՝ «ամաչելով դեռատի կույսից պարտվելու համար» («ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր»), խիստ կատաղության մոլուցքով բռնված, դահիճներին ուղարկում է Հռիփսիմեի հետ-ից, ովքեր - նրան գտնում են քաղաքից հյուսիս մի բարձրադիր վայրում աղոթելիս: Այստեղ -, դաժան ու անմարդկային չարչարանքներից ու կտտանքներից հետո, նահատակվում է չքնաղ կույսը: Դահիճները սրատում են նա- ս. Հռիփսիմեի մարմինը թաղել կամեցող 32 կույսերին, իսկ վերջում նրանց կացարանում սպանում են նա- Մարիանե անունով կույսին, ով հիվանդության պատճառով չէր կարողացել միանալ իր ընկերուհիներին: Հաջորդ օրը, Վաղարշապատի հարավային կողմում գտնվող մի վայրում, դարձյալ դաժան ու սարսափելի կտտանքներով նահատակում են ս. Գայանեին - նրա հետ բանտարկված երկու կույսերին:*

*Կույսերի մարմինները թագավորի հրամանով մնում են անթաղ, սակայն ոչ մի գազան կամ գիշակեր թռչուն չի մոտենում դրանց, - դրանք չեն ապականվում: Ինն օր հետո վիրապից դուրս եկած ս. Գրիգոր Լուսավորիչը ամփոփում է մարտիրոսուհիների մարմինները վկայարաններում. առաջինը՝ ս. Հռիփսիմեի - 32 կույսերի նահատակության վայրում, երկրորդը՝ ս. Գայանեի - նրա հետ երկու կույսերի, - երրորդը՝ հնձանում՝ հիվանդ կույսի նահատակության վայրում: Կույ-*

*սերի գերեզմանները փորում – մեծ քարերով վկայարաններ է կառուցում զղջացող ու ապաշխարող Տրդատ թագավորը՝ քարեր բերելով Արարատի բարձունքից: Իրենց զգեստների փեշերով հող էին տեղափոխում նախայոց թագուհին ու արքայադուստրը: Հետագայում այս վկայարանների տեղում կառուցվում են տաճարներ: Կույսերի մարմիններն ամփոփող տապանները կնքվում են ս. Լուսավորչի կնիքով: Մեկ դար հետո Սահակ Պարթ– կաթողիկոսը (387ՎՆ439 թթ.), բացելով ս. Հռիփսիմեի՝ ժամանակի ընթացքում անշքացած վկայարանը, նրա տապանին դրված ս. Լուսավորչի կնիքի վրա ավելացնում է նա– իր կնիքը – նորից թաղում, իսկ վկայարանը վերանորոգում է: Երկու դար հետո Կոմիտաս Ա Աղցեցի կաթողիկոսը (615ՎՆ628 թթ.) 618 թ. նույն տեղում կառուցում է Հռիփսիմեի հրաշալի տաճարը – դրա գետնահարկ մատուռում զետեղում սրբուհու տապանը՝ ս. Լուսավորչի – ս. Սահակ Պարթ–ի կնիքների վրա ավելացնելով նա– իրենը: Նրան է պատկանում նա– ս. Հռիփսիմյան – ս. Գայանյան կույսերին նվիրված «Անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի» շարականը: Եզր Ա Փառաժնակերտցի կաթողիկոսը (630ՎՆ641 թթ.) 7-րդ դարում ս. Գայանեի մատուռի տեղում կառուցում է նոր հրաշակերտ եկեղեցի: Իսկ Նահապետ Ա Եդեսացի կաթողիկոսի օրոք (1691ՎՆ1705 թթ.) նոր եկեղեցի է կառուցվում նա– ս. Մարիանե կույսի նահատակության վայրում՝ ստանալով Շողակաթ անունը, քանի որ Լուսավորչի տեսիլքի համաձայն՝ երկնքից իջնող լույսը այստեղից էր տարածվել մյուս վկայարանների վրա ու պալատի դիմաց, ուր իջավ Քրիստոսը:*

*1978 թ. Ս. Հռիփսիմե եկեղեցու հյուսիս-ար–ելյան պարսպի մոտ կատարվող նորոգչական աշխատանքների ընթացքում հայտնաբերվում է բազիլիկ ոճի եկե-*

*ղեցի-մատուռ, որում 1979 թ. կատարված պեղումները վեր են հանում մի շարք գերեզմաններ՝ գլխատված մարմիններով[40]: Ամենայն հավանականությամբ դրանք ս. Հռիփսիմեի մարմինը թաղել փորձող – դաhիճների կողմից գլխատված 32 կույսերի աճյուններն են: Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ ս. կույսերի նշխարների պատշաճ ամփոփման համար 1996 թ. կառուցվել է հատուկ քարաշեն խորան:*

*Համաձայն Ագաթանգեղոսի՝ ս. Հռիփսիմյան – ս. Գայանյան կույսերը նահատակվել են ս. Գրիգորի՝ վիրապից դուրս գալու տարում՝ 301 թ., հոռի ամսվա 26-ին – 27-ին: Օրմանյան սրբազանի հաշվարկով այն համապատասխանում է նոյեմբերի 6-ին – 7-ին, սակայն «Հայսմավուրքները» որպես կույսերի նահատակման օրեր նշում են հոկտեմբերի 5-ը – 6-ը:*

*Հայ Առաքելական Ս. Եկեղեցին ս. Հռիփսիմյան կույսերի հիշատակը տոնում է Հոգեգալստյան տոնից մեկ շաբաթ անց՝ երկուշաբթի օրը, իսկ ս. Գայանյան կույսերի հիշատակը՝ երեքշաբթի օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ս. Հռիփսիմյանց – ս. Գայանյանց կույսերի հիշատակը երկու օր տոնելու պատճառը:

-Ս. կույսերի՝ Հայաստան գալու – նահատակվելու պատմությունն ըստ Ագաթանգեղոս պատմիչի ու «Հայսմավուրքների»:

-Նրանց մարմինների ամփոփման տեղում վկայարանների, հետագայում՝ եկեղեցիների կառուցումը:

[40] «Էջմիածին» ամսագիր, 1979, մայիս (թիվ 5):

-1979 թ. պեղումների ընթացքում հայտնաբերված նահատակված կույսերի մարմինները – նրանց վրա քարաշեն մատուռի կառուցումը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ս. Հռիփսիմյան – ս. Գայանյան կույսերի նահատակությամբ նախապատրաստվեց հայոց մեծ դարձը, ի Քրիստոս համազգային մկրտությունը, որից հետո Քրիստոսի խաչանիշ դրոշը հաղթականորեն պարզվեց հայոց աստվածաշնչյան հողի վրա – իր հովանու տակ առավ այն: Սուրբ կույսերի բարեխոսությունը Տիրոջ առաջ մշտակա պահապանն ու հովանավորն է եղել մեր ժողովրդին նրա բազմադեպ պատմության ընթացքում:

Ս. Եկեղեցուն նվիրված տոներ

*Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր տոնական տարվա մեջ հաստատել է Քրիստոսի Եկեղեցուն նվիրված տոներ, որոնցից երկուսը կապված են Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի հետ (Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի, տոն Շողակաթի), իսկ մնացածները նվիրված են Ընդհանրական Եկեղեցուն (Նոր կիրակի, Աշխարհամատրան կիրակի, Հիշատակ հին Տապանակի – նոր Եկեղեցու):*

Տոն Շողակաթի

*Շողակաթի տոնը հիշատակն է Ս. Էջմիածնի աստվածհաստատ ու լուսավորչաշեն տաճարի նավակատիքի: Այն նշվում է Ս. Աստվածածնի վերափոխման տոնի կիրակիի նախորդ օրը՝ շաբաթ, որովհետսկզբնապես Մայր Տաճարը նվիրված է եղել ս. Աստվա-*

*ծածնին, – նրա օծումն ու սրբագործումը կատարվել է Ս. Աստվածածնի վերափոխման տոնի նախօրյակին: «Շողակաթ» նշանակում է հրաշալի լույսի «շողի կաթում», որն իրապես կաթեց, իջավ հայոց հողին և. Գրիգոր Լուսավորչի հայացքի առջ–: Տոնը նա– և. Լուսավորչի տեսիլքի հիշատակությունն է:*

*Լույսի առաջին շողը սրբին եր–ացել է հնձաններում, այն տեղում, ուր նահատակված հիվանդ կույսի՝ և. Մարիանեի գերեզմանն էր: Այնուհետ– լույսն առատացել ու տարածվել է կույսերի նահատակության մյուս վայրերի – արքայական պալատի դիմաց այն տեղի վրա, ուր իջավ Փրկիչը: Այդ պատճառով Մայր Տաճարը հայտնի դարձավ Էջմիածին (Միածնի իջման վայր) անունով, իսկ «Շողակաթ» անունը հետագայում վերագրվեց և. Մարիանեի գերեզմանի վրա կառուցված եկեղեցուն – հայոց մեջ սկսեց օգտագործվել որպես իգական անուն:*

## Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի

*Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու – հայ ժողովրդի համար առանձնակի նվիրականություն ունի Կաթողիկե[41] Սուրբ Էջմիածնի տոնը՝ որպես հիշատակություն ազգային կյանքի ամենանշանակալի իրադարձության՝ ի Քրիստոս համազգային մկրտության – 301 թ. Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու պատմական իրողությունների: Հիշատակություններ, որոնց խորհրդով մեկ անգամ –ս զգում ենք Աստծու ներկայությունը մեր մեջ, Նրա շնորհը մեզ – Բարձրյալի*

---

[41] Նշանակում է՝ ընդհանրական, տիեզերական: Որոշակի եկեղեցու կամ տաճարի համար գործածվելիս մատնանշում է դրա աթոռանիստ, կենտրոնական կամ գլխավոր լինելը:

*հանդեպ մեր հավատի կենդանացնող ու փրկարար զորությունը:*

*Հայ ժողովրդի համար շրջադարձային այդ դեպքերի մասին ականատեսի շուրթերով պատմում է Ագաթանգեղոս պատմիչը իր «Հայոց պատմություն» աշխատության մեջ:*

*Այն վճռորոշ օրերին, երբ Տրդատ Գ հայոց արքան հաջողությամբ դուրս էր մղում նվաճողներին հայրենի երկրից, նրա հետ Հայաստան է վերադառնում նա- քրիստոնեական կրթություն ստացած Գրիգոր իշխանը, ով իր հավատի զորությամբ ու կենդանի նախատակությամբ դարձավ հայոց երկրորդ Լուսավորիչը՝ Հայ Եկեղեցու հիմնադիրներ ս. Թադեոս - ս. Բարդուղիմեոս առաքյալներից մոտ 250 տարի հետո:*

*Ս. Հռիփսիմյանց - ս. Գայանյանց կույսերի հաղթական նախատակությունը նախապատրաստում է ս. Գրիգորի՝ վիրապից դուրս գալը - Հայոց աշխարհի՝ աստվածային ճշմարտությամբ լուսավորությունը: Վիրապից դուրս գալուց հետո Քրիստոսի մեծ խոստովանողը 60 օր շարունակ քարոզում - ուսուցանում է մարդկանց՝ աստվածային Սիրով, Հույսով ու Հավատով ամոքելով մեղքից վիրավոր նրանց հոգիներն ու մարմինները: Քարոզության վերջին օրը սուրբ Լուսավորչին հայտնվում է Փրկիչը: «Հանկարծակի սաստիկ ձայն եղավ, որոտման բամբյուն... Բացվեց երկնքի հաստատության խորանաշեն ծածկը... - իջավ մի այր լույսի կերպարանքով ու կանչեց իմ անունը»[42]: Վաղարշապատ քաղաքի վրա լույսի չորս սյուների մեջ՝ մեկն ավելի բարձր մյուս երեքից, Միածինն իջնում է արքունի դռան մոտ ու ձեռքի ոսկե մուրճով հարվածում Սանդա-*

[42] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 415:

*րամետ կոչված կռատան տեղում: Հրաշալի այս տեսիլքով Միածին Փրկիչը ցույց է տալիս Մայր Տաճարի հիմնադրման վայրը, իսկ լույսի երեք սյուներով պատգամվում է վկայարաններ կառուցել մարտիրոսացած ս. Գայանե, ս. Հռիփսիմե, ս. Մարիանե (Շողակաթ) կույսերի նահատակման վայրերում: Հայաստանում ամենուր հաղթականորեն հառնում է հրաշագործ ու փրկագործ Խաչը Քրիստոսի: Արածանիի ջրերում սուրբ Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատ արքային, ողջ արքունիքն ու բազմահազար ժողովրդին, 301 թ. Հայաստանը դառնում է առաջին քրիստոնյա պետությունը:*

*Այսպես Աստվածորդու կողմից Արարատի դիմաց կատարվեց հիմնարկեքը Լույս Խորանի, որը կանգնեցվեց նորադարձ ժողովրդի ձեռքով ու դարձավ հայոց հավատի կենտրոն սուրբ Տաճարը: Ինչ Աշխարհամատուռն է Քրիստոսի ընդհանրական Եկեղեցու համար, նույնն է Ս. Էջմիածինը Հայ Եկեղեցու համար:*

*Մի-նույն ժամանակ Սուրբ Էջմիածինն ունի համաքրիստոնեական նշանակություն, քանի որ այն առաջին տաճարն է, որը հաստատվեց քրիստոնեությունը առաջինը պետականորեն ճանաչած երկրում՝ կառուցվելով 303 թ., երբ քրիստոնեությունը դեռ-ս հալածական էր աշխարհի մյուս երկրներում:*

*Սուրբ Էջմիածինը՝ իբր- Աստծու Էջքի խորհուրդ, Աստծու նախախնամական տնօրինությունն է հայոց հողին, Աստծու խնամքի արտահայտությունը փոքր իր հոտի հանդեպ: Սուրբ Էջմիածնի դրոշմով իբր- քրիստոնյա ամբողջություն միավորված է համայն հայությունը աշխարհի բոլոր կողմերում՝ հայոց հավատի հայր սուրբ Լուսավորչի աստվածատես հայացքով նայելով երկինք, որտեղից իջնում է Միածին Որդին:*

*ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ:* Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը տոնն է նա– Հայ Եկեղեցու Հայրապետական իշխանության:

Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելով, հայոց Հայրապետական Աթոռը հաստատվում է Սուրբ Էջմիածնում: Պատմական – քաղաքական հանգամանքների փոփոխմամբ Հայրապետական Աթոռը փոխադրվում է՝ հանգրվան գտնելով հիմնականում ժամանակի քաղաքական իշխանության կենտրոններում (Դվին, Աղթամար, Վարագ, Արգինա, Անի, Թավբլուր, Ծամնդավ, Հոնի, Կարմիր վանք՝ Քեսունի մոտ, Ծովք, Հռոմկլա), ի վերջո՝ Կիլիկիայի հայոց թագավորության մայրաքաղաք Սսում: Երբ 1375 թ. այստեղ կործանվում է հայկական պետությունը, այլ–ս արդարացնող ոչ մի պատճառ չկար Հայրապետական Աթոռը օտարության մեջ թողնելու: Սսում մնալով՝ Կաթողիկոսական Աթոռը անկարող պիտի լիներ ծառայելու համահայկական իր նշանակությանը:

Նախորդ շրջանում արդեն, երբ Կիլիկիայում հայոց պետականությունը թուլացել էր, իր հետ բերելով ներեկեղեցական ու հասարակական կյանքի բազմաթիվ հակասություններ, Հայաստանում հետզհետե հասունանում է Հայրապետական Աթոռն իր նախնական վայրում՝ Ս. Էջմիածնում վերահաստատելու գաղափարը, որի ջատագովներն էին Ստեփանոս Օրբելյանը – ս. Գրիգոր Տաթ–ացին: Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածին վերադարձնելու գործը խանդավառությամբ ձեռնարկում ու հաջողությամբ իրականացնում են ս. Գրիգոր Տաթ–ացու աշակերտները՝ Թովմա Մեծոփեցին – Հովհաննես Հերմոնացին ու նրանց ժամանակակիցները:

*Ազգային-եկեղեցական ընդհանուր ժողովը գումարվում է 1441 թ., Համբարձման տոնին: Ամենայն Հայոց Կաթողիկոս է ընտրվում Կիրակոս Ա Վիրապեցին (1441Վ1443 թթ.): Սրանով ավարտվում են Հայրապետական Աթոռի դարավոր դեգերումները: Այն վերադարձավ իր նախնական վայր՝ Միածնակառույց Ս. Էջմիածին, իր նվիրականությամբ ու զորությամբ շարունակելով իր առաքելությունը հայ ժողովրդի կյանքում: Հայ Առաքելական Ս. Եկեղեցին 1441 թ. Հայոց Կաթողիկոսական Աթոռը Սսից տեղափոխելու – Ս. Էջմիածնում վերահաստատելու պատմական դեպքը հիշատակում է Քրիստոսի Համբարձման տոնի օրը, իսկ Սուրբ Էջմիածնի տոնը նշում է Հոգեգալուստից հետո՝ երկրորդ կիրակի օրը կամ Սուրբ Զատկից 64 օր հետո:*

*Սուրբ Էջմիածնի – Շողակաթի տոները իրենց խորհրդով սերտորեն շաղկապված են – կրում են հավատի նորոգության պատգամը: Եվ ինչպես 1700-ամյակի հոբելյանական տարում Ս. Էջմիածնի տոնին ասաց* Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը՝ *«Արդար– առաքելություն է Սուրբ Էջմիածինը... խավարից դեպի լույս, մահվանից դեպի կյանք առաջնորդող առաքելություն: Լուսե խորան լինելու առաքելություն է Սուրբ Էջմիածինը, ամեն հայի հոգում Էջքն Աստծու պատկերագրող, հայոց մյուռոնաօծ ճակատը փառապսակ լույսով զարդարող առաքելություն: Այս խորհրդով Սուրբ Էջմիածինը միավորում է աշխարհի բոլոր ծագերում սփռված հայությանը, որ կապյալ «ի վերայ Աջոյն – Սրբոյ Էջմիածնի»՝ իր հավատի ոգեշնչման ակունք մշտապես ճանաչել է Մայր Աթոռը... Այսօր Սուրբ Էջմիածնից նույն զորությամբ ճառագում է հավերժական ու փրկարար Աստվածային լույսը – ծագում ի Հայաստան, Արցախ – ի Սփյուռս համայն...»:*

*Հայ ժողովուրդը բոլոր ժամանակներում սիրել, պաշտել ու գովերգել է Ս. Էջմիածինը, – նրա լավագույն ներկայացուցիչները նրան են նվիրել չափածո ու արձակ բազմաթիվ չքնաղ տողեր: Այսպես՝*

Մկրտիչ Ա Խրիմյան Ամենայն Հայոց Կաթողիկոս.

*«Զտաճարիս վեհական՝ զհիմըն կառոյց անխախտելի*
*Այն վերին Ճարտարապետն առ ի Հօրէն Միածին Բանն:*
*Աղբիւր վերնահոսան ջրոյն կենդանի շնորհաց հոգւոյն*
*Բըղխեցաւ – աստանօր որպէս երբեմն յԵրուսաղէմ,*
*Ծաւալեալ ի յԱյրարատ լեալ աւազան մըկըրտութեան.*
*Կապուտակ – երկնագոյն ի ծով դարձան երեսք դաշտաց.*
*Յոր իջեալ հօտ ս–աթոյր ազգըն Հայոց խաւարազգած*
*Մըկըրտեալ սպիտակացան փայլեալք ի գեղմըն լուսակիզն.*
*Եւ այնպէս մաքրազարդեալք արժանացան վերին*
*կենաց»:*

Գ–որգ Զ Չորեքչյան Ամենայն Հայոց Կաթողիկոս.

*«Էջմիածնի Աթոռի – գաղափարի մէջ պատմականօրէն միաձուլուել են երկեակ գաղափար-ճշմարտութիւնը՝ ազգային-կրօնական անկախութեան գաղափարը – ազգային-քաղաքական ինքնագիտակցութիւնը: Հայաստանի – Էջմիածնի ազգային Եկեղեցու աւելի քան 1500 տարուայ պատմութիւնը իր ողբերգութեամբ – հերոսութեամբ անընդհատ – աննման մարտիրոսագրութիւն է:*

*Ահա այստեղ է պատմական գաղտնիքը – անսպառ աղբիւրը Հայ ժողովրդի անձնուէր սիրոյ – նուիրուածութեան, նոյն իսկ այլադաւան փոքրամասնութիւնների կողմից հանդէպ ազգային եկեղեցու – Ս. Էջմիածնի նախամեծար Աթոռի»:*

Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս. *«Ս. Էջմիածինը միշտ կը բաշխուի ու չի նվազեր. ինչքան կը բաշխուի՝ այնքան կը շատնայ. ինչքան լոյս կը սփռէ՝ այնքան կը շողայ: Դարեր կը գան, դարեր կ'անցնին, ան կը բարձրանայ, կը լուսավորէ, միշտ կը ներշնչէ, կեանք տալով՝ կ'ապրի...»:*

Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս. *«Մեր Հայաստան աշխարհը Վաղարշապատ անունով ճանչցուած վայրին մէջ դարձաւ Հայոց Բեթղեհէմը՝ Էջմիածին անունով: ...Ս. Էջմիածնով ամէն մէկ հայու հոգին դարձաւ մսուր Ծննդեան Քրիստոսի... Նայէ՛ հոգիիդ մէջ, ո՛վ հայ մարդ, ո՛ւր ալ գտնուիս, ի՛նչ երկինքի տակ ալ ապրիս, ի՛նչ ընկերային, մշակութային պայմաններով ալ յատկանշուած ըլլայ երկրաւոր կեանքդ, նայէ՛ հոգիիդ մէջ, այնտե՛ղ է Ս. Էջմիածինը, զոր կը ճանչնաս որպէս աւազան մկրտութեան հայկեան ազգիդ – զոր կը դաւանիս որպէս Մայր Աթոռ»: «Էջմիածինը հաստատութիւն լինելուց առաջ՝ առաքելութի՛ւն է: Էջմիածինը անցեալի պատիւ, ներբող, գովք, պարծանք ու փառաբանանք լինելուց անդին՝ առաքելութի՛ւն է, Աստծու թարգմանութիւնը, Աւետարանի քարոզութիւնը, մեր հայրերի սուրբ աւանդների կենդանի փոխանցումը մեր ժողովուրդի զաւակներին»:*

Հովհաննես Թումանյան.

*«...Հենց խոնարհես աչքերդ ցած,*
*Լայն դաշտի մեջ, առջ–դ հանկարծ,*
*Մառախուղից իր խաչի հետ*

*Կըբարձրանա մի սուր գըմբեթ,*
*Որ կըխոսի մարդու հոգուն՝*
*«Խաղաղություն ամենեցուն»...*
*Էնտեղ էն հին դարերից վեր,*
*Երկնաքարոզ հուժկու ձայներ,*
*Սահակ Պարթ– Ներսես Մեծին*
*Խաղաղություն քարոզեցին:*
*Էնտեղ լցված ահեղ հոգով,*
*Աստվածային իր տեսիլքով,*
*«Էջմիածինն ի Հորէ»,*
*Որ Հայաստան լուսավորե:*
*Ու լույսն առան ծավալեցին*
*Լուսավորիչն ու մեծ Տրդատ,*
*Ու տակավին այնտեղ կեցած*
*Կըսավառնեն հոգիացած»:*

Ավետիք Իսահակյան. *«Հայ ժողովուրդը սիրում է Էջմիածինը: Նրա մաշկը քորես՝ Էջմիածին դուրս կգա: Հայ ժողովուրդը իր պետականությունը կորցնելով՝ Հայ Եկեղեցու մեջ գտավ իր ազգային զգացմունքների հանրագումարը»:*

Պերճ Պռոշյան. *«Այս տաճարի մեջ է հայի ազգության սիրտը՝ Իջման տեղը. սիրիր Էջմիածինը, ներս մտիր, համբուրիր Իջման տեղը, ու դու համբուրած կլինես տիեզերքի վրա տարագիր ցրված ամբողջ ազգդ»:*

Ռաֆայել Պատկանյան. *«...Էջմիածինը, որ միշտ եղել է արթուն պահապան մեր սուրբ ազգությանը – մեր սուրբ կրոնին, այն Էջմիածինը, որ ազգիս տառապանաց օրերը թե՛ խոսքով – թե՛ գործքով եղել է մխիթարիչ – սփոփիչ յուր հուսահատված զավակներուն, վերջապես այն Էջմիածինը, որ օտար ազգերու վկա-*

*յությամբ անգամ միակ պարծանքն է բոլոր հայերուս»[43]:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Շողակաթի տոնի հաստատումը:

-«Շողակաթ» բառի բացատրությունը:

-Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը. Միածնի էջքը:

-Ս. Էջմիածնի համահայկական – համաքրիստոնեական նշանակությունը:

-Կաթողիկոսական Աթոռի՝ Սուրբ Էջմիածնում վերահաստատումը:

-Հայ մեծերը՝ Ս. Էջմիածնի մասին:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Քրիստոսի Եկեղեցու տեսանելի ու պատմական ծնունդն սկսվում է Սուրբ Հոգու՝ Վերնատանը առաքյալների վրա էջքով: Այստեղ էլ Պետրոս առաքյալի կողմից տրվում է քրիստոնեական առաջին քարոզը, – շուրջ 3000 նորադարձների՝ Եկեղեցուն անդամակցությամբ քաղվում Եկեղեցու առաջին հունձքը: Պողոս առաքյալը Եկեղեցին կոչում է «Մարմին Քրիստոսի» (Կող., Ա, 24, Ա Կորնթ., ԺԲ(12), 27), «Տաճար Աստծու» (Ա Կորնթ., Գ, 16, Բ Կորնթ., Զ, 16): Պետրոս առաքյալը մատնանշում է Եկեղեցու՝ մարդկանց դեպի փրկություն առաջնորդելու քահանայական առաքելությունը (Ա Պետր., Բ, 9): Քրիստոնեական Եկեղեցին մեկ է ու միասնական. նախ՝ մեկ է Քրիստոսով, Ով գլուխն ու սկիզբն է Եկեղեցու: Մեկ է վախճանով, այսինքն՝ հավի-

[43] Սուրբ Էջմիածինը տաղերի մեջ, Ս. Էջմիածին, 2003, Սուրբ Էջմիածինը Հայ մատենագրությունում, Ս. Էջմիածին, 2003, Գարեգին Ա, Հայրենիքը պատկերն է հայության, Ս. Էջմիածին, 2000, Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Գիրք Զ, Երևան, 1999, :

տենական կյանքով: Մեկ է դեպի այն առաջնորդող Եկեղեցու հետապնդած միջոցներով՝ հավատով, սիրով, խորհուրդներով – եկեղեցական օրենքներով: Մեկ է Ս. Հոգով. «Թե– կան շնորհների զանազանություններ, բայց պարգ–ող Հոգին նույնն է» (Ա Կորնթ., ԺԲ(12), 4): Մեկ է իբր– հավաքականություն. «...թվով շատ, մի մարմին ենք Քրիստոսով, բայց յուրաքանչյուրս միմյանց անդամ ենք» (Հռոմ., ԺԲ(12), 5: Ինչպես նա–՝ մեկ է վարչական ու նվիրապետական դրությամբ. «... – պիտի լինի մի հոտ – մի հովիվ» (Հովհ., Ժ, 16): Եկեղեցու միությունը Քրիստոսի – Սուրբ Երրորդության մասին միասնական դավանությունն ու վարդապետության նույնությունն է՝ ս. Հաղորդությամբ:

Եկեղեցին ընդհանրական է ըստ տ–ողության՝ կա – կմնա բոլոր ժամանակներում, մինչ– աշխարհի վերջը, ընդհանրական՝ ըստ վարդապետության՝ նրա ուսուցումները բոլոր ժամանակների բոլոր սերունդների – բոլոր ժողովուրդների համար են, ընդհանրական՝ ըստ տեղի՝ սահմանափակված չէ աշխարհագրական ոչ մի տեղանքով – սահմանված է տարածվելու աշխարհի բոլոր կողմերում:

Եկեղեցին առաքելական է ըստ ծագման՝ Քրիստոսն այն հաստատեց «... առաքյալների – մարգարեների հիմքի վրա» (Եփես., Բ, 20), ըստ վարդապետության՝ պահում է այն հավատը, որն առաքյալները քարոզեցին, ըստ հաջորդության՝ Եկեղեցու նվիրապետությունը սկսվում – շարունակվում է առաքյալներից:

Եկեղեցին սուրբ է ըստ իր Հիմնադրի ու Գլխի՝ Քրիստոսի, ըստ միջոցների, որոնք են՝ վարդապետությունը – խորհուրդները, ըստ գործունեության, որի նպատակը իր անդամներին սրբացնելը – Աստծու թագավորության արժանի դարձնելն է:

## Երկրորդ Ծաղկազարդ

*Տոնը հատուկ է միայն Հայաստանյայց Ս. Եկեղեցուն - ավանդության համաձայն՝ հաստատվել է ս. Գրիգոր Լուսավորչի կողմից:*

*Ըստ ավանդության՝ վիրապում բանտարկության 13 տարիների ընթացքում Աստծու ուղարկած հրեշտակներից մեկը իր հանապազօրյա այցելություններով մխիթարություն ու քաջալերություն էր պարգ-ում ս. Գրիգոր Լուսավորչին: Մի օր հրեշտակը չի գալիս, - ս. Լուսավորչի հարցին, թե ինչու չեկավ, պատասխանում է, որ Քրիստոսն Իր Համբարձումից հետո հաջորդող ինն օրերին հրեշտակների ինը դասերում է եղել - յուրաքանչյուր դասում մի օր հանգստացել: Այդ օրերին հրեշտակների բոլոր դասերը ցնծությամբ - ուրախությամբ ընդառաջ են եկել Տիրոջը: Ըստ այսմ՝ Համբարձման տոնի առիթով հրեշտակների 9 դասերը մի-մի օր փառաբանական հանդես են կատարում երկնքում: Այդ օրը, երբ հրեշտակը չէր այցելել ս. Գրիգոր Լուսավորչին, 4-րդ դասի (որին պատկանում էր նա- ս. Գրիգորին այցելող հրեշտակը) փառաբանության օրն էր:*

*Այս ավանդության հիշատակն է տոնվում Համբարձման տոնի չորրորդ օրը՝ կիրակի, որը նա- Հինունքի յոթերորդ կիրակին է - կոչվում է Երկրորդ Ծաղկազարդ, քանի որ առաջին Ծաղկազարդին Տերը բազում ժողովրդի ուղեկցությամբ այցելեց երկրային Երուսաղեմ, իսկ երկրորդին՝ հրեշտակների բյուրավոր բազմության հետ մտավ երկնային Երուսաղեմ: Ինն օր մնալով հրեշտակների դասերում՝ նրանց հայտնեց մարդկության փրկության խորհուրդը: Եվ եթե առաջին Ծաղկազարդին Նրան փառաբանում էին որպես Դավ-*

*թի որդի, ապա երկրորդի ժամանակ՝ որպես Աստծու Որդի:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հայոց ավանդությունը հրեշտակի՝ ս. Գրիգորին այցելելու մասին:

-Երկրորդ Ծաղկազարդը որպես Հայ Եկեղեցուն հատուկ տոն:

-Քրիստոսի մուտքը Վերին Երուսաղեմ:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Երկրորդ Ծաղկազարդի կիրակին միաժամանակ մարդկանց ու ժողովուրդների կյանքում Աստծու մշտակա ներկայության, Նրա մշտահաս օգնության ու փրկության խորհուրդն է ամփոփում: Մարդկային չափանիշներով՝ մարդկանցից – ոչ մեկն այնքան անել ու անհույս կացության մեջ չէր, որքան ս. Գրիգոր Լուսավորիչը վիրապում, – հայ ժողովուրդն էլ իր պատմության ողջ ընթացքում բազմաթիվ անգամներ հայտնվել է դժվարագույն իրավիճակներում, սակայն նույնքան – ավելի անգամներ Աստծու սրտապնդիչ ու հուսատու ներկայությամբ գտել է ելքի ճանապարհը:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ

*Հայոց երկրորդ Լուսավորիչ ս. Գրիգորի աստվածաշնորհ գործունեության, հայոց համազգային մկրտության, քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու իրողության հետ կապված տոները առանձնակի նվիրականություն ունեն Հայաստանյայց Ս. Եկեղեցու յուրաքանչյուր զավակի համար, որովհետ– դրանց խորհրդով մեկ անգամ –ս զգում ենք*

*Աստծու ներկայությունը մեր մեջ, Նրա շնորհը մեզ - Բարձրյալի հանդեպ մեր հավատի կենդանացնող ու փրկարար զորությունը:*

*301 թ. քրիստոնեությունը հաղթականորեն պարզեց իր խաչանիշ դրոշը - հովանու տակ առավ ողջ Հայաստանը: Հայոց մեծ դարձի պատմությունը ժամանակակցի ու ականատեսի խոսքով շարադրում է Ագաթանգեղոսը, ում լրացնում են Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին, Հովհան Մամիկոնյանը - այլ պատմիչներ ու սկզբնաղբյուրներ՝ առավել ընդարձակ կամ համառոտ անդրադառնալով հայ կյանքի շրջադարձային ու մեծագույն այդ իրադարձության առանձին դրվագներին:*

*Ս. Գրիգորը որդին էր Անակ իշխանի, Արշակունիների Սուրենյան պահլավից, ովքեր, ի տարբերություն Արշակունիների այլ ճյուղերի, ընդունեցին Սասանյանների իշխանության բռնի հաստատումը Պարսկաստանում 226 թ.: Տ-ական ժամանակ Արշակունիների պայքարը Սասանյանների դեմ գլխավորում էր Հայաստանը՝ հաջողությամբ ընդդիմանալով նա- առաջին Սասանյանների նվաճողական նկրտումներին: Անակը, հրապուրված Սասանյան Շապուհ Ա (ըստ մատենագիրների՝ նրա հոր՝ Սասանյան արքայատոհմի հիմնադիր Արտաշիր Ա) թագավորի խոստումներով, հայոց Խոսրով թագավորին սպանելու նպատակով գալիս է Հայաստան: Կասկածներն իրենից հեռացնելու համար Անակը, որպես Արշակունի, ձ-անում է պարսից թագավորից հալածյալ, որի պատճառով հայոց թագավորը մի գունդ է ուղարկում նրան ընդառաջ: Զորաջոկատը Անակին հանդիպում է Ատրպատականի սահմանների մոտ - ուղեկցում Արտազ գավառում այն դաշտավայրը, որտեղ ամփոփված էին ս. Թադեոս առաքյալի նշխար-*

*ները: Համաձայն Խորենացու՝ երբ Անակն ապրում էր Արտազում, նրա գիշերելու տեղը սուրբ առաքյալի գերեզմանի մոտ էր, - «...այստեղ է հղություն առել մեր սուրբ - մեծ Լուսավորիչը: Ուստի- նույն առաքյալի շնորհին ստացավ նա, որ նրա հանգստարանի մոտ գոյություն գտավ - նրա հոգ-որ մշակության պակասը լրացրեց»[44]:*

*Շահելով Խոսրովի վստահությունը՝ Անակին հաջողվում է սպանել նրան: Վերջինս մահվանից առաջ հասցնում է հրամայել՝ սրատել Անակի ընտանիքը: Կոտորածից փրկվում են միայն երկու փոքրիկ մանուկներ[45], որոնցից մեկը ապագա ս. Գրիգոր Լուսավորիչն էր, ում փախցնում են Կապադովկիայի Կեսարիա քաղաքը: Այստեղ նա ստանում է քրիստոնեական կրթություն, չափահաս դառնալով՝ ամուսնանում Մարիամ անունով մի աղջկա հետ, - ունենում երկու որդի՝ Վրթանեսին ու Արիստակեսին: Երեք տարի հետո ամուսինները փոխադարձ համաձայնությամբ բաժանվում են, - Մարիամը մտնում է վանք[46]:*

*Խոսրով թագավորի ողբերգական մահվանից հետո Հայաստանն ընկնում է պարսից տիրապետության ներքո: Շապուհի կարգադրությամբ սպանվում են Արշակունիների արքայական տան անդամները, ընդդիմադիր նախարարները: Մահվանից փրկվում - Հռոմ է տարվում մանուկ արքայազն Տրդատը:*

---

[44] «Այստեղ ես հիշում եմ սքանչելի ծերի զրույցը, որ ասում էր. «Նախնիքներից ունեմ այս զրույցները, որոնց հիշատակությունը անցել է հորից որդուն, ինչպես Ոլիմպիոդորի զրույցները Տարոնի և Սիմ լեռան մասին» (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 138-139): Ենթադրվում է, որ «սքանչելի ծեր» ասելով՝ Խորենացին նկատի ունի իր ուսուցիչ ս. Սահակ Պարթև կաթողիկոսին:

[45] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 33:

[46] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 143-144:

*287 թվականին հասունացած – նշանավոր զորական դարձած Տրդատը՝ Խոսրով արքայի որդին, հռոմեական զորքի ուղեկցությամբ վերադառնում է Հայաստան՝ ազատագրելու հայրենի երկիրը – վերատիրանալու հայոց գահին: Նրա հետ, նրա հավատարիմ զինակիցների շարքում, Հայաստան է վերադառնում նա- Գրիգորը, ով, լսելով հոր՝ Անակի ձեռքով Խոսրովի սպանվելու պատմությունը, մտել էր Տրդատի մոտ ծառայության: Պարսիկների դեմ տարած հաղթանակների կապակցությամբ Տրդատ Գ հայոց արքան գոհաբանական տոնախմբություն է կատարում դիցամայր Անահիտի հանրահայտ մեհյանում, որը գտնվում էր Եկեղյաց գավառի Երիզա ավանում: Նա հրամայում է Գրիգորին ծաղկեպսակներ դնել Անահիտի արձանին, սակայն Գրիգորը մերժում է թագավորին. «Աստծու պատիվն ու պաշտամունքը չի կարելի որ-է մեկին տալ»[47]: Տրդատը նախ հորդորներով է ցանկանում իր սիրելի զինակցին ետ դարձնել քրիստոնեությունից, ապա՝ սպառնալիքներով, վերջում՝ անմարդկային, դաժան տանջանքներով ու խոշտանգումներով (12 չարչարանքներ՝ ըստ Ագաթանգեղոսի)[48]:*

*Ըստ ս. Գրիգոր Տաթ-ացու՝ ս. Լուսավորչի 12 չարչարանքները ունեն հոգ-որ խորհուրդ: Նախ՝ մարդը ունի 12 զգայարաններ, որոնք ապականվել էին Ադամի մեղանչումով: Ըստ այդմ ս. Գրիգորը 12 չարչարանքներից յուրաքանչյուրով, որոնցից ամեն մեկը կապված է որ-է զգայարանի հետ, մաքրեց դրանք ապականությունից: Նա-՝ Քրիստոսի 12 առաքյալներից յուրաքանչյու-*

[47] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 33:

[48] Ս. Լուսավորչի չարչարանքների վայրում՝ Երզնկայից Հարավ, Մեղուցիկ գետի մոտ, լեռան ստորոտին, կառուցվել և մինչև այսօր կանգուն է Չարչարանց ս. Լուսավորիչ վանքը:

*րը նախատակվել է մյուսներից տարբերվող չարչարանքով: Եվ ս. Գրիգոր Լուսավորչը այս 12 չարչարանքներից յուրաքանչյուրը կրել է՝ դառնալով 12 առաքյալներին չարչարանակից:*

*Տրդատի փորձը՝ անմարդկային տանջանքներով կոտրելու Գրիգորի համառությունը, ապարդյուն է անցնում: Վերջինս հավատարիմ է մնում քրիստոնեական հավատին: Այդ ընթացքում իմացվում է նա- Գրիգորի՝ ում որդին լինելը: Տրդատի ցասումը հասնում է բարձրակետին, - նրա հրամանով Գրիգորին նետում են Արտաշատի մոտ մահապարտների համար նախատեսված վիրապը: Համաձայն հայոց ավանդության՝ Լուսավորչի վիրապն այնտեղ էր, ուր հազարամյակներ առաջ Արարատից իջնելով՝ Նոյը զոհասեղան է կանգնեցնում Աստծուն՝ փառաբանելով Տիրոջը իր - իր ընտանիքի փրկության համար: Քրիստոսի մեծ վկան ու խոստովանողն այստեղ մնում է 13 տարի: Բարեպաշտ այրի մի կին ամեն օր թաքուն հաց է գցում նրան: Եթե այսպես հնարավոր էր հոգալ մահապարտ բանտարկյալի կերակրի մարմնավոր պահանջը, ապա Աստվածային խնամքով - իր հավատի զորությամբ միայն Գրիգորի համար հնարավոր եղավ միայնության ծիգ տարիներին, թունավոր սողունների, ցրտի ու խոնավության մեջ պահպանել հոգու կորովը, մտքի սթափությունը - մանավանդ՝ սերը մարդկանց հանդեպ: 13 տարի սուրբ Լուսավորչի անչար հոգուց - անքեն շուրթերից առ Աստված բարձրացող աղոթքով մահվան գուբը հայոց համար դարձավ դեպի փրկություն առաջնորդող Աստվածգիտության Լույսի ճառագման ակունք: Բանտարկության բոլոր տարիներին Աստված չլքեց ու միայնակ չթողեց նրան՝ Իր հրեշտակի այցելությունների միջոցով զգալ տալով Իր հուսատու ու փրկիչ ներկայությունը:*

*Գրիգորի՝ Արտաշատի վիրապում գտնվելու հավանաբար վերջին տարում տեղի է ունենում Գայանյան - Հռիփսիմյան կույսերի տանջամահ նահատակությունը, որից հետո հայոց թագավորն ու պալատականները, մայրաքաղաքի շատ բնակիչներ բռնվում են անհասկանալի մոլագարությամբ - տանջվում ցավերից: Մարդկային բանականությունը - կերպը կորցրած թագավորը՝ լքած պալատն ու արքունի գործերը, թափառում է եղեգնուտներում: Երկրի համար այդ վշտալի օրերին թագավորի քույրը՝ Խոսրովիդուխտը, երազ է տեսնում, որ Տրդատին ու պալատականներին կարող է բժշկել միայն վիրապում գտնվող Գրիգորը: Նրան վիրապից հանում - բերում են մայրաքաղաք Վաղարշապատ: Թագավորը, արքունիքն ու ժողովուրդը դուրս են գալիս նրան ընդառաջ - իրենց մեղքերին թողություն հայցում: Հրաշք էր, որ Գրիգորը ողջ էր մնացել, բայց առավել մեծ հրաշք էր, որ նա բժշկում է զղջացող թագավորին ու ժողովրդին: Լուսավորիչը ապաշխարության համար սահմանում է հնգօրյա պահք, որն այսօր էլ պահպանվում է Հայաստանյայց Ս. Եկեղեցում - կոչվում Առաջավորաց: Այնուհետ- 60 օր քարոզում է ժողովրդին: Քարոզության վերջին օրը Լուսավորչին հայտնվում է Միածին Փրկիչը՝ լույսերի մեջ իջնելով երկնքից: Աստվածային հրաշալի տեսիլքով Լուսավորչին ցույց է տրվում Մայր Տաճարի հիմնադրման վայրը - պատգամվում վկայարաններ կառուցել մարտիրոսացած կույսերի նահատակման վայրերում: Այնուհետ- Տրդատ թագավորի գործակցությամբ ս. Գրիգորը շրջում է երկրում - տարածում քրիստոնեական հավատը: Հայաստանը պետականորեն ընդունում է քրիստոնեությունը: Սակայն ժողովուրդը դեռ-ս մկրտված չէր - չուներ Եկեղեցու խորհուրդներն ու արարողությունները*

*կատարող անհրաժեշտ թվով հոգ-որականներ ու հովվապետ: Թագավորը Վաղարշապատ մայրաքաղաքում հայոց ավագանու խորհուրդ է հրավիրում, որը միակամ որոշում է ս. Գրիգորին ուղարկել Կեսարիա՝ եպիսկոպոսական ձեռնադրություն ընդունելու - հայոց հոգ-որ իշխանության գլուխ կանգնելու[49]: Այսպիսով հաստատվում է հայոց կաթողիկոսի համազգային ընտրության՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հնավանդ օրենքը, որը պահպանվում է մինչ օրս: Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնադրությունը հանդիսավորապես - մեծ շուքով կատարվում է Կեսարիայում: Վերադարձին նա մտնում է Սեբաստիա (Փոքր Հայքում), որը, ինչպես - Կեսարիան, առանձնանում էր իր քրիստոնյա բնակչությամբ, - իր հետ Հայաստան է բերում նշանավոր հոգ-որականների՝ Հայաստանում կրոնական կյանքը կազմակերպելու նպատակով: Բերում է նա- ս. Հովհաննես Մկրտչի - ս. Աթանագինեի նշխարներից: Մտնելով Հայաստան, Լուսավորիչը - ուղեկից իշխանները գնում են Տարոն, ուր ստիպված են լինում կռվել քրմերի զորաջոկատների դեմ: Վերջիններս պարտություն են կրում, տապալվում են հեթանոսական մեհյանները: Գրիգոր Լուսավորիչը այստեղ ամփոփում է սրբերի նշխարների մի մասը: Ս. Հովհաննես Մկրտչի նշխարների վրա քիչ ժամանակ անց կառուցվում է նշանավոր Սուրբ Հովհաննես վանքը (Մշո Սուրբ Կարապետ): Տարոնից մայրաքաղաք գնալու ճանապարհին Լուսավորչին - նրա ուղեկիցներին ընդառաջ է գալիս հայոց թագավորը, արքունիքով, զորքով ու ժողովրդով: Հանդիպում են Բագր-անդ գավառի Բագավան վայրում: Այստեղ ս. Գրիգորը 303 թ. հունվարի 6-ի այգա-*

[49] Ագաթանգեղոս, Հայոց պատմութիւն, Երեւան, 1983, էջ 445:

*լույսին, Ս. Ծննդյան ու Աստվածհայտնության տոնի օրը, Նպատ լեռան ստորոտին, Արածանի գետում մկրտում է թագավորին, Աշխեն թագուհուն, Խոսրովիդուխտ արքայաքրոջը, ողջ արքունիքը, զորքն ու ժողովրդին: Թագավորն ստանում է մկրտության Հովհաննես անունը: Նշխարների մյուս մասը թաղում են Բագավանում, ուր նույնպես կառուցվում է Ս. Հովհաննես եկեղեցի, հետագայում հայոց համար դառնալով նույնքան նշանավոր ուխտատեղի: Այնուհետ- ձեռնամուխ են լինում Վաղարշապատում՝ Միածնի էջքի վայրում, Մայր Տաճարի կառուցմանը, որը դարձավ հայոց հայրապետության նստավայրը՝ Մայր Աթոռը - հայության հոգ-որ կենտրոնը: Ս. Լուսավորիչը Հայաստանի տարբեր վայրերում բազմաթիվ դպրոցներ է բացում, որտեղ սովորելու է հավաքում Հայաստանի տարբեր շրջաններից ուշիմ երեխաների, ինչպես նա- քրմերի երեխաներին, քահանայական ու եպիսկոպոսական ձեռնադրություններ կատարում, երկրի տարբեր վայրեր քարոզիչներ ուղարկում, պաշտոնյա հոգ-որականներ կարգում, երկրի պետական վարչական կառուցվածքին համապատասխան (նախարարական տներ, գավառներ, նահանգներ) ձ-ավորում Հայ Եկեղեցու նվիրապետության կառույցը, հաստատում թեմեր, Հայ Եկեղեցու տոներ, սահմանում եկեղեցական կանոններ ու ծեսեր: Ս. Լուսավորչի անունով պահպանվել են 23 կրոնաբարոյախոսական ճառերից կազմված՝ «Հաճախապատումը», ինչպես նա- մի քանի երկասիրություններ ու կանոններ:*

*Լուսավորիչը կարգավորում է նա- քրիստոնեական ծեսը հայոց մեջ - 325 թ., իր մահվանից քիչ առաջ որպես Հայ Եկեղեցու Հավատո Հանգանակ հաստատում Նիկիական հանգանակը, որում կատարում է որոշ*

*հավելումներ, – որը նրա որդին՝ ս. Արիստակեսն էր բերել՝ մասնակցելով Տիեզերական Ա ժողովին:*

*Այսպիսով, հայոց առաջին կաթողիկոսի գործունեությամբ հայոց Մայր Աթոռը հաստատվում է իր կոչման մեջ. Ընդհանրական Եկեղեցու մաս լինելով հանդերձ՝ Հայ Եկեղեցին ձ-ավորվում է որպես ինքնագլուխ ազգային-հոգ-որ ամբողջականություն՝ հայոց անկախ պետականության հովանավորությամբ:*

*Սուրբ Լուսավորչի կյանքի վերջին ժամանակահատվածն անցնում է ժողովրդից հեռու – անտես: Նրա՝ բոլորին քաջ հայտնի առանձնասիրությունն անցնում էր Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան Մանյա այր անունով հայտնի քարայրում, որտեղ ապրել էր Հռիփսիմյանց կույսերից ս. Մանեն: Ս. Գրիգորը երբեմն-երբեմն թողնում էր քարայրը – այցելում ժողովրդին: Թեր-ս նրա վերջին այցելությունը Վաղարշապատ կապված էր որդու՝ Արիստակեսի՝ 325 թ. Ա տիեզերական ժողովից վերադառնալու հետ: Նրա մահվան հանգամանքներն անհայտ են: Պատմությունը բավարարվում է հայտնելով, որ Մանյա այրի առանձնության մեջ փոխվեց առ Տեր – նույն այրում թաղվեց հովիվների ձեռքով: Սա ս. Լուսավորչի նշխարների առաջին գյուտն էր: Հետագայում նրա նշխարների մոռացության մատնված տեղը Աստված տեսիլքով հայտնում է Գառնիկ անունով մի ճգնավորի, որը ս. Լուսավորչի նշխարների երկրորդ գյուտն էր: Ս. Լուսավորչի նշխարները բերում – ամփոփում են Դարանաղյաց գավառի Թորդան ավանում, որը նրա տան սեփականությունն էր:*

*Հայտնի չէ, թե ս. Լուսավորչի՝ Թորդանում ամփոփված նշխարները որ ժամանակներից սկսած բաժանվեցին տարբեր վայրեր: Հնում սրբերի նշխարների հանդեպ եղած հատուկ երկյուղածությամբ դրանք բա-*

*ժանվում ու պահվում էին հավատացյալների մոտ: Նրա ս. Աջը, որը պահվում է Ս. Էջմիածնում, եղել – մնում է Հայրապետական Աթոռի իշխանության պաշտոնական նշանակը, ինչպես –՝ անանց գանձն ու զորությունը: Քրիստոսի ս. Խաչափայտի – ս. Գեղարդի մասունքների հետ այն ս. մեռոնի օրհնության ժամանակ գործածվող գլխավոր սրբություններից է: Ըստ որոշ տեղեկությունների՝ 5-րդ դարում Բյուզանդիայի Զենոն կայսեր (474-491 թթ.) հրամանով ս. Լուսավորչի նշխարները Թորդանից բռնությամբ տեղափոխվում են Կ. Պոլիս: Հայաստանում է թողնվում միայն ս. Լուսավորչի Աջը, որով լուսավորվեց Հայոց աշխարհը: Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչ Հայրապետի տեղեկության համաձայն՝ Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը (641Վ661 թթ.) Զվարթնոցի տաճարը կառուցելիս[50] ս. Գրիգորի ոսկորների նշխարները բաժանելով՝ դնում է չորս հաստահեղյուս սյուների տակ, իսկ գլուխը ոչ թե խորքում, այլ դրսում՝ սուրբ Սեղանի տակ զզրոցի մեջ է զետեղում՝ փափագողների հույսի ու հիվանդների բժշկության համար[51]: Վարդան պատմիչը նշում է, որ ս. նշխարները Գրիգոր Պատրիկ Մամիկոնյանը 7-րդ դարում Կ. Պոլսից է բերում, – այնուհետ– դրանք տեղադրվում են Զվարթնոցում, սակայն Մովսես Կաղանկատվացին երբ նկարագրում է Արցախի Իսրայել եպիսկոպոսի՝ ս. Գրիգորի նշխարներից ծնոտի մի մասը Գլխովանքում ամփոփելու դեպքը, գրում է, որ այն հենց Թորդանից տարվեց Արցախ: Հետագայում ս. Գրիգորի գլու-*

[50] Ըստ Սեբեոսի և նրան հաջորդող հայ պատմիչների՝ Զվարթնոցի տաճարը կառուցվել է այն տեղում, որտեղ ս. Գրիգոր Լուսավորիչը վիրապից դուրս գալուց հետո հանդիպում է Տրդատ արքային:

[51] Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 87:

*խը, որոշ ոսկորներ – տանջանքի գործիքներից շղթայի մի մասը հայ կույսերը Չվարթնոցի տաճարից տեղափոխում են Նեապոլ (Իտալիա), որտեղ եկեղեցի է կառուցվում ի պատիվ ս. Լուսավորչի: Ըստ այլ աղբյուրների՝ ս. Լուսավորչի նշխարները Նեապոլ են տեղափոխել Կ. Պոլսից՝ տեղի վանքերից մեկի միաբանության կույսերը: Դրանք մինչ այժմ էլ մեծ պատվով պահվում են ս. Գրիգոր եկեղեցում՝ մեծ ջերմեռանդությամբ հարգվելով բարեպաշտ նեապոլցիների կողմից: Նեապոլի պահապան սուրբ Գենարիոսից հետո ս. Գրիգորը ճանաչվում է քաղաքի երկրորդ պահապան սուրբը – ունի հատուկ տոն՝ սեպտեմբերի 30-ին[52]:*

*2000 թ. նոյեմբերի 8-11-ը Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց Վատիկան, որտեղից հայրենիք բերեց ս. Գրիգոր Լուսավորչի մասունքներից, որոնք ի նշանավորումն քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակի՝ Կաթոլիկ Եկեղեցին վերադարձրել էր Հայ Եկեղեցուն: Բերված մասունքները դրվեցին Եր–անի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:*

*Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ս. Գրիգոր Լուսավորչի համար սահմանել է երեք տոն: Առաջինը՝ նրա մուտքը վիրապ, տոնվում է Մեծ պահքի հինգերորդ շաբաթ օրը: Երկրորդը՝ ելքը վիրապից, տոնվում է Հոգեգալստի առաջին շաբաթ օրը: Եվ երրորդը՝ նշխարների գյուտը, տոնվում է Հոգեգալստի երրորդ շաբաթ օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

52 Մանրամասն տե՛ս Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան, Լուսավորչի լույս նշխարները, Ս. Էջմիածին, 2000:

-Հայոց մեծ դարձի պատմությունն ըստ Ագաթանգեղոսի – հայ մյուս պատմիչների:

-Ս. Գրիգորի մանկությունը, Կեսարիայում հասակ առնելը – քրիստոնեական դաստիարակությունը, Տրդատ հայոց արքայի հետ Հայաստան վերադարձը:

-Ս. Գրիգորի՝ հայոց թագավորին հավատարիմ ծառայությունը, կուռքերին ընծաներ մատուցելուց հրաժարումը – տանջանքները:

-Ս. Գրիգորի՝ վիրապում անցկացրած տարիները:

-Տրդատի մոլագարությունը:

-Ս. Գրիգորի ելքը վիրապից, քարոզությունը, Առաջավորաց պահքի հաստատումը, թագավորին ու նրա պալատականներին բժշկելը:

-Ս. Գրիգորի տեսիլքը, Մայր տաճարի – նահատակված ս. Գայանյանց ու ս. Հռիփսիմյանց կույսերի մարմինների ամփոփման վայրերում վկայարանների կառուցումը:

-Ս. Գրիգորի ձեռնադրությունը Կեսարիայում, վերադարձը Հայաստան:

-Հայոց համազգային մկրտությունը – քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հաստատումը:

-Հայաստանի տարբեր մասերում եկեղեցիների կառուցումը, դպրոցների բացումը, հոգ-որականների ձեռնադրությունները, Հայ Եկեղեցու նվիրապետական կառույցի ձ-ավորումը, թեմերի, եկեղեցական տոների հաստատումը, Եկեղեցու ծեսերի ու կանոնների սահմանումը, Նիկիական Հավատո հանգանակի հաստատումը:

-Ս. Գրիգոր Լուսավորչի գրական ժառանգությունը:

-Ս. Գրիգորի ճգնակեցությունը – առ Տեր փոխումը:
-Նշխարների գյուտը:
-Ս. Լուսավորչի մասունքները:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ս. Գրիգոր Լուսավորիչը Հայաստանյայց Ս. Եկեղեցու ավագ սրբերի դասին է պատկանում: Նրան անվանում են «Հայոց Մկրտիչ», «Հայոց երկրորդ Լուսավորիչ»՝ ս. Թադեոս – ս. Բարդուղիմեոս առաքյալներից հետո, նա–՝ քրիստոնեությունը հայերի մեջ անվանում են «Լուսավորչի լույս հավատ»: Նրան են նվիրվել բազմաթիվ ներբողներ, երգեր, շարականներ, նրա մասին հյուսվել են ավանդություններ, ինչպես, օրինակ, Լուսավորչի կանթեղի – Տրդատի հավլունի սրի մասին ավանդությունները: Ըստ դրանց՝ Արագած լեռան կատարին առանց պարանի կախված է ս. Լուսավորչի մշտավառ կանթեղը, որում այրվում են սրբի մաքրամաքուր արցունքները: Կանթեղը եր–ում է միայն հավատավոր հոգի ու մաքուր սիրտ ունեցողներին – հույս տալիս նրանց: Նա–՝ Սեպուհ լեռան վրա իր կյանքի վերջին տարիներին առանձնացել էր նա– ս. Տրդատ Գ հայոց արքան: Նրա հավլունի թուրը հայոց Հայրապետ ս. Գրիգոր Լուսավորիչը օրհնում – վեր է նետում: Աստվածային զորությամբ թուրը խաչանման կախվում է Սեպուհ լեռան կատարին – ս. Լուսավորչի մշտավառ կանթեղի լույսով ողողված՝ լույս տալիս այնտեղից: Կանթեղն ու թուրը Արագածից Սեպուհ լեռ կապվում են ոսկե կամարով՝ իրար միացնելով հայոց երկու հատվածները, ինչպես նա–՝ խորհրդանշում են Հայ Եկեղեցու – պետության, հայոց արքայի ու Հայրապետի գործակցությունը բոլոր ժամանակներում:

Ս. Լուսավորչին՝ «Մեծ hայոց սուրբ Գրիգորին» 5-րդ դարից սկսած պատվվել են նա– Բյուզանդիայում: Այժմ էլ Հունաստանի եկեղեցիներում կան ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված խորաններ, սրբապատկերներ, որմնանկարներ, խճանկարներ, ինչպես նա–՝ մասունքներ ու նշխարներ, որոնք ամփոփված են մասնատուփերում: Իսկ Ռուսաստանում՝ Կարմիր հրապարակում, Վասիլի Երանելու տաճարական համալիրի մեջ է մտնում նա– Հայոց Գրիգորի եկեղեցին՝ ԾպՐՍՏՉՓ թՐՌչՏՐՌրՈ ԸՐՎ'վրՍՏչՏ, որը կառուցվել է Իվան Ահեղի (1530-1584 թթ.) հրամանով՝ որպես երախտագիտություն Կազանի գրավման ժամանակ հայ թնդանոթաձիգների անձնազոհության: Ս. Գրիգորին նվիրված սրբապատկերներ կան նա– Կրեմլի Ավետման ու Սպասկի տաճարներում, Կոլոմնայի, Պսկովի, Ռոստովի եկեղեցիներում, ինչպես նա–՝ Նովգորոդի Ներեդիցա տաճարի պատերը զարդարված են նրա որմնանկարներով:

Հայ Եկեղեցու՝ ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված բոլոր տոների խորհուրդը խտացնում է երախտիքի մեր տուրքը հավատի մեր հորը – մեր հավատարմությունը նրա սուրբ առաքելությանը:

ՀՈՒԼԻՍ

## Սահմանադրության օր

*Մարդկության պատմության սկզբնական ժամանակներից –եթ մարդկանց միջ– փոխհարաբերությունները կարգավորվում էին որոշակի կանոններով, ինչպես, օրինակ, Աստծու տասը պատվիրանները՝ տրված Մովսեսին: Այդ կանոնները դարերի ընթացքում մարդկային հանրությունների շրջանում կիրառվելով՝ վերածվում էին սովորույթների – ավանդույթների՝ համաձայն տվյալ ժողովրդի առանձնահատկությունների: Առաջին պետությունների ձ–ավորման հետ հասարակական հարաբերությունների կարգավորման համար սկսում են գործել ոչ միայն ավանդույթներն ու սովորույթները, այլ– ստեղծվում են օրենքներ: Հետագա դարերում, պետական կառույցի կառավարման զարգացմանը զուգընթաց, այդ օրենքները կանոնակարգվելով՝ կազմում են պետության հիմնական օրենքը*՝Սահմանադրությունը*, որը յուրաքանչյուր պետության համար պարտադիր այն օրենքների ժողովածուն է, որով առաջնորդվում են պետական համակարգը, իշխանության մարմինները – ժողովուրդը:*

*Ինչպես մյուս ժողովուրդները, հայերը նույնպես պետականություն ստեղծելուց հետո առաջնորդվում էին –՛ ավանդույթներով, –՛ թագավորական հրովարտակներով, իսկ քրիստոնեություն ընդունելուց հետո՝ եկեղեցական ժողովների ընդունած որոշումներով՝ կանոններով: 8-րդ դարի առաջին տասնամյակում Հայոց կաթողիկոս Հովհան Օձնեցին հավաքում – կազմում է հայ միջնադարյան իրավաբանական ու քաղաքական փաստաթղթերի ժողովածուն՝ «Կանոնագիրք հայոցը»:*

*Հետագա դարերում այն համալրվում է նոր կանոններով՝ դրանց թիվը հասցնելով 1500-ի: «Կանոնագիրք հայոցը» ներառում է Հայ Եկեղեցու պաշտամունքին, ծիսակատարությանը, ամուսնությանը, ընտանեկան հարաբերություններին, ժառանգությանը – հասարակական կյանքի այլ բնագավառներին վերաբերող խնդիրների լայն շրջանակ: 12-րդ դարում ստեղծվում են ազգային առաջին օրենսգրքերը՝ Դավիթ վարդապետի «Կանոնախումբը» – Մխիթար Գոշի «Գիրք դատաստանին», որում ընդգրկված էին ոչ միայն կանոններ, այլ– աշխարհիկ օրենքներ: Կիլիկյան Հայաստանում առաջնորդվում էին 13-րդ դարում Սմբատ Գունդստաբլի կազմած «Դատաստանագրքով», որը գրելիս հեղինակն օգտագործել է իր ձեռքի տակ եղած իրավաբանական բոլոր աշխատություններն ու փաստաթղթերը՝ «Կանոնագիրք հայոցը», «Գիրք դատաստանին», Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», բյուզանդական կայսրության «Զինվորական օրենքները», «Անտիոքի ասսիզները», միջազգային զանազան պայմանագրեր՝ այս բոլորը հարմարեցնելով Կիլիկյան Հայաստանի հասարակական-քաղաքական հարաբերություններին:*

*Սակայն հայ իրականության մեջ Սահմանադրության առաջին նախագիծը «Որոգայթ փառաց»-ն է: Այն գրվել է 1773 թ., Հակոբ – Շահամիր Շահամիրյանների կողմից, Հնդկաստանի Մադրաս քաղաքում: Նախատեսված էր ապագա ստեղծվելիք Հայաստան պետության համար որպես Սահմանադրության նախագիծ, որի 521 հոդվածներով վերացվում էին դասակարգային բոլոր արտոնությունները, քաղաքացիներին տրվում էր խոսքի, գործունեության, դավանանքի ազատություն, կրթությունը պարտադիր էր հայտարարվում հասարակության բոլոր անդամների համար, անապա-*

*հովներին հովանավորում էր պետությունը, օրենսդիր մարմինն էր խորհրդարանը՝ Հայոց տունը, գործադիր իշխանությունն իրականացվում էր նախարարություն-ների միջոցով, իսկ Բարձրագույն կամ Մայր դատարա-նը պետք է լիներ ընտրովի մարմին, որտեղ դատավա-րությունը պետք է ունենար գրավոր արձանագրութ-յուն, – մեղադրյալը ապահովվեր դատապաշտպանով: Երկրի ղեկավարը պետության նախագահն էր, ով – պարտավոր էր վերահսկել Սահմանադրության ճիշտ կիրառումը:*

*1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Ար-եւյան Հայաստանն անցնում է Ռուսաստանի տիրապետության տակ: Ռուսաստանի կառավարութ-յունը Հայ Եկեղեցու վարչության հետ փոխհարաբե-րությունների կանոնավորման նպատակով Ար-եւյան Հայաստանը ռուսական տիրապետության տակ անց-նելուց անմիջապես հետո ձեռնամուխ է լինում Հայ Եկե-ղեցու համար իր քաղաքական շահերին համապա-տասխան կանոնադրության մշակմանը: Այդ նպատա-կով ստեղծվում է գաղտնի հանձնաժողով, որում ընդգրկվում են իշխան Բ. Հ. Բեհբութովը, Սերովբե վարդապետ Արարատյան Կարնեցին, ուսուցիչ Հակոբ Շահան Ջրպետյանը, ռուս աստիճանավոր Օչկինը: Չորսի գաղտնի հանձնաժողովը կազմում – 1930 թ. մարտին Կովկասի կառավարչապետ Ի. Ֆ. Պասկ-իչին է ներկայացնում «Բարձրագոյն կարգադրութիւն յա-ղագս կառավարութեան գործոց լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ի Ռուսաստան» անունով կանոնադրությու-նը՝ կարճ՝ «Պոլոժենիե», որով պետք է առաջնորդվեր Հայ Եկեղեցին: Պետերբուրգում այն ենթարկվում է որոշ փոփոխությունների, որից հետո 1836 թ. մարտի 11-ին Նիկոլայ Առաջին կայսրը վավերացնում է, իսկ գործադ-*

*րության մեջ է դրվում 1837 թ. հունվարի 1-ից: Առաջին անգամ «Պոլոժենիե»-ի հայերեն տարբերակում օգտագործվում է «Լուսավորչական Հայոց Եկեղեցի» (ռուսերեն տարբերակում՝ «Գրիգորյան») արտահայտությունը, որը, հակասելով հանդերձ Հայ Եկեղեցու բուն էությանը, ծագմանն ու ավանդությանը, այնուհետ– շրջանառության մեջ է մտնում – համընդհանուր տարածում գտնում: «Պոլոժենիե»-ն բաղկացած էր 10 գլխից, 141 հոդվածից: Դրանով էապես կրճատվում էին Հայ Եկեղեցու – Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավասությունները, ինչպես նա– այդ կանոնադրությունը հակասում էր հայոց ազգային իրավունքներին ու ավանդույթներին, սահմանափակում դրանք՝ ըստ էության Հայ Եկեղեցին կախման մեջ դնելով ցարական կառավարությունից: Այս ամենով հանդերձ՝ այն ինչ-որ առումով նպաստում է Հայ Եկեղեցու ներսում որոշակի կարգուկանոնի հաստատմանը, ինչպես նա– դրական դեր կատարում հոգ–որ, թեմական – ծխական դպրոցների բացման գործում: 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո «Պոլոժենիե»-ն դադարում է գործելուց:*

*Ար–մտահայերի կրոնահամայնական կյանքը կարգավորելու համար 1860 թ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը 1860 թ. մայիսի 24-ին ընդունում է «Ազգային Սահմանադրություն հայոց» փաստաթուղթը, որը սուլթանական կառավարությունը 3 տարվա ձգձգումներից – էական կրճատումներից հետո վավերացնում է 1863 թ. մարտի 17-ին: Կազմված էր 5 գլուխներից, 99 հոդվածներից: Հեղինակներն էին Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ն. Պալյանը, Ս. Վիչենյանը, Կ. Ութուճյանը, Մ. – Գ. Աղաթոն եղբայրները: Փաստաթուղթը «Սահմանադրություն» է կոչվել Ն. Ռուսինյանի առաջարկով, քանի որ գրվել էր բելգիական սահմանադ-*

*րության գլխավոր սկզբունքների հիման վրա: Կ. Պոլսի հայոց պատրիարքը հայտարարվում էր «ազգի ղեկավար» - պետք է միջնորդ լիներ ար-մտահայության ու թուրքական պետության միջ-: Սահմանադրությամբ առանձնակի կար-որություն էր տրվում Հայաստանյայց Եկեղեցու դավանանքն ու ավանդույթները անաղարտ պահելու, առանց սեռական խտրության հայ երեխաներին կրթություն տալու, հասարակական կարիքների համար նախատեսված դրամական միջոցները նպատակային օգտագործելու հարցերին - այլն: Հայոց պատրիարքարանին կից, որպես բարձրագույն օրենսդրական մարմին գործում էր Ազգային ընդհանուր ժողովը, իսկ որպես գործադիր մարմին՝ Ազգային կենտրոնական վարչությունը: Սահմանադրությամբ կանոնակարգված էին դրանցում ընտրելու - ընտրվելու պայմանները -, ընդհանրապես, ազգային ներքին կյանքի կար-որ բոլոր հարցերը: Զգալի թերթություններով հանդերձ՝ այն նոր, առաջադիմական եր-ույթ էր ար-մտահայության կյանքում - գործեց մինչ- Առաջին համաշխարհային պատերազմը: 1916 թ. երիտթուրքական կառավարությունը «Նոր կանոնադրություն հայոց պատրիարքության վերաբերյալ» օրենքով էական սահմանափակումների է ենթարկում Ազգային Սահմանադրությունը, իսկ հանրապետական Թուրքիայում դրա գործադրությունը վերջնականապես դադարեցվում է:*

*Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո - մինչ- դրանց վերացումը գործել է երեք Սահմանադրություն՝ 1922 թ., 1937 թ. - 1978 թ.:*

*1991 թ. Խորհրդային Միության փլուզումից - Հայաստանի անկախ Հանրապետության հռչակումից հետո, 1995 թ. հուլիսի 5-ին, համաժողովրդական հանրաքվեով ընդունվում է ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: Հիմ-*

*նական օրենքով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն, որտեղ իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է ընտրովի մարմինների միջոցով: Ընտրություններն ընդհանուր են, ուղղակի, գաղտնի քվեարկությամբ: Մասնակցել կարող են 18 տարին լրացած ՀՀ բոլոր քաղաքացիները: Քաղաքացիների իրավունքները հավասար են՝ անկախ ազգությունից, ռասսայից, սեռից, դավանանքից: Սահմանադրությամբ Հայաստանում պետական լեզու է հռչակվում հայերենը: Ընդունելի է բազմակուսակցականությունը, պետությունը ճանաչում - պաշտպանում է սեփականության բոլոր ձ-երն ու նպաստում դրանց զարգացմանը: Սահմանադրությամբ պահպանվում են շրջակա միջավայրի մաքրությունը, բնական հարստությունները:*

*Օրենսդիր, գործադիր - դատական իշխանությունները բաժանված են միմյանցից: Դրանց գործունեությանը հետ-ում է հանրապետության նախագահը: Նախագահ կարող է ընտրվել 35 տարին լրացած, վերջին 10 տարում Հայաստանի քաղաքացի հանդիսացող, վերջին 10 տարում Հայաստանում ապրող ցանկացած անձ: ՀՀ նախագահը հաստատում է Ազգային ժողովի ընդունած օրենքները, կարող է արձակել Ազգային ժողովը, նշանակել արտահերթ ընտրություններ, նա է նշանակում - ազատում վարչապետին, վարչապետի ներկայացմամբ հաստատում է գլխավոր դատախազին, օտար երկրներում ՀՀ դեսպաններին - ներկայացուցիչներին, ներկայացնում ՀՀ-ն միջազգային մարմիններում: Նա է ՀՀ զինված ուժերի գլխավոր հրամանատարը - նա է նշանակում զինվորական բարձր հրամանատարական կազմը, հայտարարում զորահավաք,*

*ռազմական դրություն, շնորհում պետական պարգ-- ներ, քաղաքացիության իրավունք – այլն:*

*Օրենսդիր իշխանությունը ներկայացնում է Ազգային ժողովը (խորհրդարան), որն ունի 131 պատգամավոր: ԱԺ պատգամավոր կարող են ընտրվել 25 տարին լրացած, 10 տարի ՀՀ քաղաքացի – Հայաստանում ապրող անձինք:*

*Գործադիր իշխանությունը ներկայացնում են վարչապետը – նախարարները: Կառավարության որոշումները վավերացնում է երկրի նախագահը:*

*Դատական իշխանությունն առանձնացված է, գոյություն ունեն առաջին աստիճանի, վերաքննիչ – վճռաբեկ դատարաններ: Գերագույն դատարանը Սահմանադրական դատարանն է՝ կազմված 9 անդամներից, որոնցից 5-ին ընտրում է խորհրդարանը, 4-ին նշանակում է ՀՀ նախագահը: Դատավորը – Սահմանադրական դատարանի անդամը պետական այլ պաշտոնյա լինել չեն կարող:*

*Սահմանադրությամբ ՀՀ տարածքը բաժանվում է մարզերի, վերջիններս իրենց հերթին՝ համայնքների: Տեղերում իշխանությունն իրականացնում են տեղական ընտրովի մարմինները, որոնք ընտրվում են 3 տարի ժամկետով:*

*Ներկայիս գործող Սահմանադրությամբ սահմանվում են ՀՀ պետական* զինանշանը, դրոշը – հիմնը, *որոնք պետության պաշտոնական խորհրդանիշերն են:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ժողովուրդների հասարակական կյանքի՝ սովորույթներով ու ավանդույթներով կառավարումը հնագույն ժամանակներից:

-Հայ ժողովրդի հասարակական կյանքի կառավարումը, Հովհան Օձնեցու կազմած «Կանոնագիրք հայոց»-ը 8-րդ դարում:

-Հետագա դարերի կանոնագրքերն ու դատաստանագրքերը հայ իրականության մեջ::

-Հայ իրականության մեջ սահմանադրության առաջին նախագիծը՝ «Որոգայթ փառաց»:

-«Պոլոժենիե»-ն – «Ազգային սահմանադրություն հայոց»-ը:

-Խորհրդային Հայաստանի երեք սահմանադրությունները:

-1995 թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

-ՀՀ պետական զինանշանը, դրոշը, օրհներգը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը կերտում է իր ժողովրդավարական անկախ պետությունը՝ տոնելով Սահմանադրության օրը որպես անկախ պետականության – ազգային ինքնիշխանության վերահաստատման ցնծալի իրադարձություն, որպես հայ ժողովրդի բազում սերունդների դարավոր իղձերի իրականացման մարմնացում:

ՀՀ Սահմանադրությամբ հայոց պետության պաշտոնական խորհրդանիշներն են.

ԶԻՆԱՆՇԱՆԸ (գերբ-գերմ.՝ ժառանգություն) հատուկ է պետություններին, նա–՝ իշխանական, նախարարական տներին, պետության մաս կազմող վարչատարածքային միավորներին՝ մարզերին, քաղաքներին, նահանգներին, գավառներին – այլն: Հայկական միջնադարյան մի շարք զինանշաններ պահպանվել են ե-

կեղեցիների բարձրաքանդակներում: Այսպես՝ Արծրունիների զինանշանը՝ մագիլներում թռչուն բռնած արծիվ, պատկերված է 10-րդ դարում կառուցված Ախթամարի եկեղեցու բարձրաքանդակներում, հայտնի է նա– Բագրատունիների զինանշանը նույնպես արծվի պատկերով, ինչպես նա– Կիլիկյան հայկական թագավորության զինանշանը՝ թագակիր առյուծի պատկերով: 1828 թ. Ար–եւյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո հաստատվում են Հայկական մարզի, հետագայում նա–՝ Ալեքսանդրապոլի, Կարսի, Եր–անի զինանշանները:

1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին ընդունված պետական զինանշանը խորհրդային իշխանության տարիներին փոխարինվում է Հայաստանի երկրորդ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության նոր զինանշանով, որի հեղինակն էր հայ հռչակավոր նկարիչ Մարտիրոս Սարյանը: 1995 թ. Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետության պետական զինանշան է հաստատվում 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության զինանշանը, որը հեղինակել են ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը – նկարիչ Հակոբ Կոջոյանը: Զինանշանի վահանաձ– կենտրոնը բաժանված է 4 մասի, որոնց վրա պատկերված են Արտաշեսյան թագավորական հարստության արծիվը, Արշակունյաց հարստության երկու արծիվները, որոնց մեջտեղում ար–ն է, Բագրատունյաց թագավորական արծիվը – Ռուբինյան հարստության թագակիր առյուծը՝ խաչագլուխ գավազանը թաթերի մեջ: Կենտրոնում Արարատ լեռն է, վեր–ում՝ «ՀՀ» հապավումը, ներք–ում՝ ազատության խորհրդանիշ սուրը, որը կտրում է շղթան, մտավոր – մշակութային կյանքի խորհրդանիշ գրիչը – խաղաղ

աշխատանքով ձեռք բերված առատության խորհրդանիշ հասկերը:

ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԸ պետության ինքնիշխանության պաշտոնական տարբերանշանն է, որի նկարագրությունը տրվում է Սահմանադրությամբ: Մարդկության պատմության հնագույն ժամանակաշրջաններից պետությունները, թագավորական – նախարարական տները, այդ թվում նա-՝ հայկական, ունեցել են իրենց դրոշները: Շահամիր Շահամիրյանն իր «Որոգայթ փառաց» աշխատության մեջ նկարագրում է նա– ապագա հայկական պետության դրոշը՝ կարմիր, կապույտ, դեղին, որոնք ստեղծվելիք հայոց բանակի 3 սպարապետությունների զինվորների համազգեստների գույներն էին լինելու: 1918-1920 թթ. Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին ընդունված պետական եռագույն դրոշը՝ կարմիր, կապույտ, նարնջի, խորհրդային Հայաստանի տարիներին փոխարինվում է նոր պետական դրոշով՝ կարմիր ֆոնի մեջտեղում կապույտ շերտ: 1991 թ. Հայաստանի երրորդ նորանկախ Հանրապետությունը ընդունում է առաջին հանրապետության եռագույն դրոշը՝ կարմիր (ազատության համար հայ ժողովրդի թափած արյան խորհրդանիշը), կապույտ (խաղաղ երկնքի խորհրդանիշը), նարնջի (խաղաղ, ստեղծագործ աշխատանքի խորհրդանիշը):

ՕՐՀՆԵՐԳԸ հանդիսավոր երգ է՝ գրված ծրագրային բնույթի բանաստեղծության խոսքերով: Գոյություն ունեն հոգ–որ օրհներգեր, պետական, զինվորական, հեղափոխական, որ–է անձին կամ նշանակալի իրադարձությանը նվիրված օրհներգեր – այլն: Այսպես՝ Հայաստանում քրիստոնեություն ընդունելուց հետո եկեղեցական ժամերգությունների – ս. Պատարագի մաս են կազմել հոգ–որ օրհներգեր, օրինակ՝ Ներսես Շնոր-

հալու «Յիշեսցուքը» – «Զարթիքը» նախապես գրված են եղել Հռոմկլայի ամրոցի պահապան զինվորների համար – միայն հետագայում երգվել եկեղեցում: Պետական օրհներգ ունեն ժամանակակից բոլոր պետություններն։ Հայաստանի առաջին Հանրապետության օրհներգը Միքայել Նալբանդյանի խոսքերով – Բարսեղ Կանաչյանի երաժշտությամբ գրված «Մեր հայրենիք» երգն էր: Խորհրդային Հայաստանի օրհներգի երաժշտությունը գրել էր Արամ Խաչատրյանը, խոսքերը՝ Սարմենը: 1991 թ. նորանկախ Հայաստանի երրորդ Հանրապետությունը որպես օրհներգ ընդունեց առաջին հանրապետության «Մեր հայրենիք» երգը:

## Սուրբ Սահակ, սուրբ Մեսրոպ

*Հայ ժողովուրդը մշտապես ունենալով իմացության ու ճանաչողության ծարավ ու ձգտում, առանձնակի սիրով է մեծարել հայերեն գրերը ստեղծող – թարգմանության գործի նվիրյալ իր զավակներին: Գրերի գյուտը ոչ միայն հայ դպրության, հայ մշակույթի զարգացման ու պահպանման երաշխիքն ու գրավականն է, այլ նա– հայ ազգային գաղափարախոսության ձ–ավորման սկիզբն ու պայմանը: Գրերի գյուտով հայոց ինքնությունը դրս–որվեց իր ողջ էությամբ – նոր իմաստ ու գաղափարական կերպ ձեռք բերեց:*

*Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տարվա մեջ երկու տոն է սահմանել՝ ձոնված նրանց հիշատակին, ում ջանքերով, նվիրումով ու հանճարով ստեղծվեցին հայոց գրերը, սկիզբ դրվեց հայ թարգմանական, հետագայում նա–՝ հայ ինքնուրույն գրականության, ինչպես նա– ձ–ավորվեց հայ ազգային մշա-*

*կույթի քրիստոնյա դիմագիծը: Այն դարերի հոլովույթում պահպանվեց ու զարգացավ՝ ստեղծելով հոգ-որմշակութային բարձր արժեքներ:*

*Առաջինը տոնը նվիրված է սուրբ Սահակ Հայրապետին ու սուրբ Մեսրոպ Մաշտոցին - տոնվում է Հոգեգալստից հետո երեսուներեքերորդ օրը, հինգշաբթի, տատանվում է հունիսի 11-ից հուլիսի 16-ն ընկած ժամանակահատվածում: Այդ օրը, ըստ ավանդության, Արաքս գետի ափին հանդիպել են սուրբ Սահակը - սուրբ Մեսրոպը: Տոնը նշվում է ուխտագնացությամբ դեպի Օշական՝ սուրբ Մեսրոպ Մաշտոցի գերեզման:*

*ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ: Ս. Սահակը որդին էր ս. Ներսես Մեծ Հայրապետի - Սանդուխտ Մամիկոնյանի: Ս. Գրիգոր Լուսավորչի սերնդի հինգերորդ - վերջին արու շառավիղն էր ու իր առաքինասեր վարքով նմանվեց իր հայրերին: Ծնվել է 348 թ. սեպտեմբերի 29-ին, Կեսարիայում: Հետ-ելով հորը՝ ս. Ներսես Մեծ հայրապետին, երկար տարիներ ուսանում է Կեսարիայում - Բյուզանդիայում. «..վարժվածությամբ առլեցուն՝բարձր էր հունաց շատ գիտնականներից՝ լինելով կատարելապես հմուտ հունարեն տառերի հնչյունաբանությանը - հռետորական հորդասաց մեկնաբանություններին, առավել -ս՝ ցույց էր տալիս իր տեղյակությունը փիլիսոփայական արվեստին»[53]:*

*Ս. Սահակը կատարյալ տիրապետում էր հունարենին - ասորերենին, որոնք ժամանակի Հայաստանում կրոնագիտության ու ծեսի լեզուն էին, նա-՝ պարսկերենին, որը Հայաստանի ար-եւյան - մեծագույն բաժնի պաշտոնական լեզուն էր: Նա ամուսնացած էր դեռ Կեսարիայում սովորելու շրջանում, որից ունենում է մի*

---

[53] Ղազար Փարպեցի, Հայոց պատմութիւն, Երեւան, 1982, էջ 37:

*դուստր՝ Սահականույշին, ով հետագայում դառնում է Համազասպ Մամիկոնյանի կինը՝ ունենալով երեք որդի, որոնցից մեկը Ավարայրի հերոսն ու քաջ նահատակ Վարդան Մամիկոնյանն էր:*

*Խորենացու «Հայոց պատմության» տեղեկություններից դատելով՝ ս. Սահակը հավանաբար վաղ է այրիացել կամ փոխադարձ համաձայնությամբ բաժանվելով կնոջից – իր շուրջը հավաքելով մոտ 60 աշակերտների՝ վարում է խստակրոն ճգնողական կյանք[54]:*

*Ս. Սահակը 387 թ. ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ հայոց Խոսրով Դ թագավորի (387ՎՆ389 թթ.) աջակցությամբ: Վերջինիս գահընկեցությունից հետո պաշտոնանկ է համարվում նա– ս. Սահակ Հայրապետը: Նա պարտադրված գնում է Պարսկաստան՝ Տիզբոն – ներկայանում պարսից արքային: Վերջինս նրան արժանացնում է պատվավոր ընդունելության, ճանաչվում իր պաշտոնի մեջ, իսկ Հայաստանի թագավոր է դառնում Խոսրով Դ-ի եղբայր Վռամշապուհ Արշակունին (389ՎՆ414 թթ.): Հաջորդում է շուրջ 20 տարիների խաղաղ մի ժամանակաշրջան, որի ընթացքում ս. Սահակ Հայրապետը, իր հավատարիմ գործակից ս. Մեսրոպ Մաշտոցի հետ ծավալում է հոգ–որ – մշակութային եռանդուն գործունեություն՝ ունենալով Վռամշապուհ թագավորի ու Առավան Հազարապետի հովանավորությունը: Նրա հայրապետության օրոք տեղի ունեցավ հայ կյանքի մեծագույն իրադարձություններից մեկը՝ հայ գրերի գյուտը:*

*Գողթնում քարոզելու շրջանում ս. Մեսրոպ Մաշտոցը համոզվում է, որ Աստվածաշունչը պետք է ունենալ հայերենով – առաջնային անհրաժեշտություն է*

[54] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 209:

*հայկական գրերի ստեղծումը: Խորենացու վկայությամբ՝ «...Սահակի մոտ եկավ Մեսրոպը հայերեն գրերի հարցի առիթով – տեսավ, որ նա ավելի -ս փափագում է այդ բանին»[55]: Նույնը հաստատում է նա– Կորյունը[56]: Նա– Ղազար Փարպեցին է վկայում, որ ս. Մեսրոպը «կարողացավ հայերեն այբուբենը կարգավորել-դասավորել ըստ հունարենի հնչյունային-վանկական անսայթաք դասավորության՝ հաճախ հարցնելով ու ս. Սահակ կաթողիկոսից իմանալով հունարեն տառերի օրինակները: Պարզ է, որ նրանք չէին կարող անսխալ կատարել գործը, առանց առաջնորդվելու սուրբ Հայրապետ Սահակի կողմից...»[57]: Տարբեր պատմիչների տեղեկություններն ընդհանրացնելով՝ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը եզրակացնում է, որ ս. Մեսրոպը իր շրջագայությունների ընթացքում հավաքած բոլոր տեղեկությունները, նշանագրերը – գիտելիքները հանձնում է ս. Սահակ հայրապետի քննությանը, ում ցուցումներով, ուղղումներով ու կատարելագործումներով – հայոց այբուբենը ստանում է իր վերջնական թիվն ու կարգը, ձ-և ու հնչյունային համակարգումը – հաստատվում ս. Սահակ հայրապետի գերագույն հեղինակությամբ[58]: Կաթողիկոսի – Մաշտոց վարդապետի ջանքերով Հայաստանում ծայր է առնում հայ դպրության օրինյալ ընթացքը՝ իբր– քրիստոնեության շնորհ հայ ժողովրդին:*

*Ս. Սահակ Պարթ– հայրապետը թողել է մատենագրական նշանակալի ժառանգություն՝ գրել – եղա-*

[55] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 209:
[56] Կորյուն, Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994, էջ 71:
[57] Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 35:
[58] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 313-315:

*նակավորել է շարականներ, Պատարագամատույց, ծիսական աղոթքներ, կանոնավորել է Հայ Եկեղեցու Տոնացույցը, նրա անունով «Կանոնագիրք հայոց»-ում հայտնի է կանոնների մի ողջ խումբ՝ եկեղեցական ու աշխարհիկ դասերի, ընտանիքի, ամուսնության – այլ հարցերի վերաբերյալ[59]: Ս. Մեսրոպ Մաշտոցի հետ ս. Սահակը հայ հոգ-որ ինքնուրույն երգերի սկզբնավորողն է: Ս. Սահակ կաթողիկոսի անունով պահպանվել են դավանաբանական թղթեր՝ ընդդեմ նեստորականների, բորբորիտների – մծղնեական աղանդների, ինչպես նա- նամակներ՝ ուղղված Թեոդոս Բ կայսրին, Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքին, Ատտիկոս – Ակակիոս եպիսկոպոսներին: Նրա հայրապետության շրջանում 431 թ. տեղի է ունենում Եփեսոսի երրորդ տիեզերական ժողովը, որը դատապարտում – նզովում է նեստորականներին ու նրանց ուսմունքը – որդեգրում Կյուրեղ Աղեքսանդրացու «Մի բնութիւն Բանին Մարմնացելոյ» («Մարմնացյալ Բանի մեկ Բնություն») բանաձ-ը: Ժողովի վճիռները Հայաստան են բերում ս. Սահակի – ս. Մաշտոցի՝ Բյուզանդիայում կրթվող աշակերտները՝ Եզնիկ Կողբացին, Ղ-ոնդ Երեցը, Կորյունը, Հովսեփ Պաղնացին: Հայ Եկեղեցին ճանաչում է ժողովի որոշումները: Նրանք բերում են նա- հունարեն Աստվածաշնչի լավագույն օրինակ, որի հետ համեմատությամբ լրացվում է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը, որը նախապես կատարվել էր ասորական օրինակից: Այս վճռական խմբագրությունը Ղազար Փարպեցին վերագրում է ս. Սահակին: Նրա տեղեկության համաձայն՝ ս. Մեսրոպ Մաշտոցը – մյուս թարգմանիչները հաճախակի ս. Սահակի օգնությանն էին դի-*

[59] Կանոնագիրք Հայոց, Կանոնք սրբոյն Սահակայ, ԾԵ, 1964, հ. Ա, էջ 363-421:

*մում՝ Աստվածաշունչը հունարենից հայերեն թարգմանելիս, քանի որ վերջինս ստացել էր հիմնավոր կրթություն, կատարելապես տիրապետում էր հունարենին – քաջատեղյակ էր փիլիսոփայությանը, ինչպես նա– հնչյունաբանությանը: Նրա հիմնարար խմբագրությամբ սերունդներին է թողնվում թարգմանության գլուխգործոց Աստվածաշնչի հայերեն բնագիրը: Նրա ջանքերով հայ դպրությունը տարածվում է ոչ միայն ար–ելյան (պարսկական ենթակայության), այլ– ար–մտյան (բյուզանդական ենթակայության) Հայաստանում[60]:*

*Վռամշապուհի մահից հետո ս. Սահակ կաթողիկոսի դիմումով Հազկերտ Ա-ն հայոց գահին է վերադարձնում Խոսրով Դ-ին, բայց վերջինս շուտով մահանում է: Այս անգամ գահն անցնում է պարսից արքայազն Շապուհին: Լսելով հոր մահվան մասին՝ նա 420 թ. մեկնում է Տիզբոն – այնտեղ սպանվում: Կրկին կաթողիկոսի ջանքերով հրավիրվում է հայ ավագանու ժողով, որը դիմում է պարսից արքունիք՝ թագավոր կարգելու համար Վռամշապուհի որդի Արտաշեսին: Իր կարճատ– թագավորության ընթացքում Արտաշեսը (424ՎՌ428 թթ.) ցոփ ու շվայտ կյանքով, անպատասխանատու վարքով իր դեմ է գրգռում հայ նախարարներին, ովքեր պարսից արքայից խնդրում են նրա գահընկեցությունը – ս. Սահակից պահանջում միանալ իրենց խնդրանքին: Սակայն արիասիրտ, իմաստուն ու հեռատես Հայրապետը չի համաձայնվում. «...քա՛վ լիցի, որ ես մատնիչ լինեմ – իմ հոտի մոլորյալ ոչխարը հանձնեմ անհավատներին՝ ծանակելու»[61]: Այս պատճառով – ամբաստանվում է նախարարներից – Արտաշեսի հետ կանչվում Տիզբոն: Այստեղ կազմակերպված դատավա-*

[60] Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 37-41:
[61] Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 51:

*րության ժամանակ կաթողիկոսը կրկին հրաժարվում է մեղադրել Արտաշեսին: Ընդհակառակը՝ նա համարձակվում է ասել, որ հայոց թագավորը ինչի մեջ որ մեղադրվում է, հանցանք է համաձայն քրիստոնեական հավատի ու վարդապետության, բայց պարսից օրենքի առաջ նա անմեղ է: Սակայն Վռամ Ե-ն – պարսից արքունիքը առիթը բաց չեն թողնում հայոց թագավորությունը վերացնելու: 428 թ. այն դադարում է նա– Հայաստանի պարսկական մասում: Արտաշեսը բանտարկվում է, իսկ կաթողիկոսը պաշտոնանկվում – պահվում Տիզբոնում՝ որպես աքսորական: Սակայն –´ աքսորի տարիներին, –´ հետագայում, երբ վերադարձել էր Տիզբոնից, հայ ժողովուրդը միայն նրան էր ճանաչում ու ընդունում որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս՝ հակառակ պարսից կողմից կարգված, Ս. Էջմիածնում միմյանց հաջորդող կաթողիկոսների ապօրինի գահակալության: Ս. Սահակը հաստատվել էր Բագարանում, հավանաբար՝ նշանավոր Ս. Հովհաննես վանքում:*

*439 թ. նոր իշխանության եկած Հազկերտ Բ թագավորը (438Վ452 թթ.) պատերազմ է սկսում Բյուզանդիայի դեմ: Նրա բանակներից մեկը մտնում է Հայաստան: Մերձավորները փորձում են ծերունի Հայրապետին հեռու տանել արշավող բանակի ճանապարհից, սակայն վերջինս ճանապարհին վախճանվում է Բագր–անդի Բլուր գյուղում: Նրա աճյունը Վարդան Մամիկոնյանի կինը՝ Դստրիկը, փոխադրում է Տարոն – ամփոփում Աշտիշատում:*

*ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ: Ս. Սահակ Հայրապետի անխոնջ լծակիցն ու նվիրյալ գործակիցն էր ս. Մեսրոպ Մաշտոցը: Նա ծնվել է մոտ 360 թ., Տարոնի Հացեկաց գյուղում, «կարճազատ» Վարդանի ընտանիքում: Համաձայն ս. Մաշտոցի վարքագիր Կորյունի – մյուս*

*պատմիչների՝ նա լավագույն կրթություն է ստացել՝ սովորելով Տարոնում, ըստ Ղազար Փարպեցու՝ «հելլենական» դպրոցում: Այստեղ հարկ է հիշել ս. Ներսես Մեծի բացած դպրոցները, հատկապես՝ վանքերին կից, -, ինչպես Հր. Աճառյանն է կարծում, հավանաբար սովորել է Աշտ Ս. Կարապետ վանքում: 389 թ. տեղափոխվում է Վաղարշապատ – որպես ատենադպիր՝ պաշտոնավարում արքունիքում, ապա դառնում զինվորական: Սակայն ավելի կատարյալ կյանքի կոչումով առաջնորդվելով՝ թողնում է աշխարհիկ կյանքը, ձեռնադրվում կուսակրոն հոգ-որական -, շուրջը հավաքելով շուրջ 40 աշակերտների, նվիրվում Ս. Գրքի ուսումնասիրությանն ու քարոզությանը: Իր աշակերտների հետ ս. Մեսրոպ Մաշտոցը քարոզչական գործունեություն է ծավալում Գողթն գավառում: Այստեղ զգում է Աստվածաշունչը հայերենով ունենալու ծայր անհրաժեշտությունը, որպեսզի այն հասկանալի լինելով ժողովրդին՝ ամրագրվի նրա սրտում ու կյանք դառնա: Նա գալիս է Վաղարշապատ – կաթողիկոսին ներկայացնում իր մտադրությունը՝ հայ գրեր գտնելու վերաբերյալ: Հայրապետը հավանություն է տալիս ձեռնարկին, հրավիրում ժողով, որին մասնակցում էին բոլոր եպիսկոպոսները: Ժողովը նույնպես որոշում է ձեռնարկել այդ գործը, – դիմում են Վռամշապուհ թագավորին: Պարզվում է, որ հայկական նշանագրեր կան Դանիել ասորի եպիսկոպոսի մոտ: Դրանք բերվում են, – թագավորի կարգադրությամբ մանուկներ հավաքելով՝ ս. Մաշտոցը փորձում է ուսուցանել: Բայց նշանագրերը թերի էին: Մովսես Խորենացին գրում է. «...այդ մուրացված գծագրությունը ընդունակ չէր վանկ առ վանկ ճիշտ արտա-*

հայտել հայերեն բառերի հնչյունները»[62]: Թագավորի – կաթողիկոսի հանձնարարականով ս. Մաշտոցը աշակերտների հետ մեկնում է ժամանակի հայտնի կրթօջախներ՝ Ամիդ, Եդեսիա: Եդեսիայում նա Աստծու շնորհով գտնում է հայկական տառերը: Ինչպես պատմում է Խորենացին, ապավինած Աստծուն – անձանձիր աղոթքով խնդրելով Նրա ամենախնամ տնօրինությունը՝ սուրբը «...տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին եր-ում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես, որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա: Եվ ոչ միայն երեւաց, այլ– բոլոր (գրերի) հանգամանքները նրա մտքում հավաքվեցին՝ ինչպես մի ամանում: Եվ աղոթքից վեր կենալով՝ ստեղծեց մեր նշանագիրները»[63]: Դրանք՝ թվով 36, նշանագրում է Սամոսատում՝ հույն Հռոփանես գրչի օգնությամբ: 405 թ. սահմանագծին ս. Մաշտոցը վերադառնում է Հայաստան: Արաքսի ափին, Վաղարշապատի մատույցներում հայոց թագավորը, կաթողիկոսն ու ժողովուրդը ցնծությամբ դիմավորում են հայոց գրերը բերող ս. Մեսրոպ Մաշտոցին ու նրա աշակերտներին:

Գրերի գյուտից հետո ս. Մեսրոպ Մաշտոցը – ս. Սահակ կաթողիկոսը կրթական ու մշակութային լայն գործունեություն են ծավալում: Միաժամանակ – ուսուցանում էին, – թարգմանում: Իր աշակերտների հետ ս. Մեսրոպ Մաշտոցը շրջագայում է Հայաստանով, բազմաթիվ դպրոցներ բացում երկրի տարբեր մասերում, հիմնում վանքեր, որոնք դառնում են հոգ-որ, ուսումնական, գրչության ու գիտական կենտրոններ: Նրա գործունեությունը տարածվում է նա– Հայաստանի բյու-

[62] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 213:
[63] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 214:

*զանդական մասում, որտեղ -ս բացում է հայկական դպրոցներ - կրթում աշակերտների: Նրա բեղուն գործունեությունը տարածվում է նա- հար-ան Վրաստանում ու Աղվանքում, նա ստեղծում է նա- վրացական ու աղվանական տառերը[64]:*

*Ս. Մեսրոպ Մաշտոցը նույնպես գրել է շարականներ: Լինելով հայ դպրության հիմնադիրը, նա նա- հայերենի առաջին ուսուցիչն է - հայոց լեզվի ուսուցման ձ-երի ու սկզբունքների առաջին կիրառողը: Ինչպես նա- ս. Մաշտոցը, ս. Սահակ Հայրապետի հետ, հայ հոգ-որ երաժշտության սկբնավորողն է:*

*Ս. Մեսրոպ Մաշտոցը մահանում է 440 թ. փետրվարի 17-ին: Նրա մարմինը հազարապետ Վահան Ամատունին - զորավար Հմայակ Մամիկոնյանը ժողովրդի մեծ բազմության ուղեկցությամբ ամփոփում են ներկայիս Աշտարակի շրջանի Օշական գյուղում, որտեղ 3 տարի հետո Վահան Ամատունին կառուցում է եկեղեցի: Վաղարշապատի երկնքում այդ ժամանակ եր-ում է լուսավոր խաչի նշան, որը մի քանի օր շարունակ փայլում է երկնքում՝ այն տան վեր-ում, ուր սուրբն ավանդել էր հոգին, այն ուղեկցում է թաղման թափորը մինչ- հուղարկավորության վայր - անհետանում միայն սրբի մարմինը գերեզման իջեցնելուց հետո[65]:*

*Սուրբ Մաշտոցի գերեզմանը մշտապես եղել - է՛ ուխտագնացությունների վայր: Ամեն տարի ս. Սահակին - ս. Մեսրոպ Մաշտոցին, ինչպես նա- ս. Թարգմանիչներին նվիրված տոներին այստեղ են հավաքվում Հայաստանի տարբեր մասերից եկած բազմաթիվ ուխտավորներ՝ ուսուցիչներ, դպրոցականներ, հայրենիք*

---

[64] Կորյուն, Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994, էջ 72:

[65] Կորյուն, Վարք ս. Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994, էջ 79-80: Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 234-235:

*ժամանած սփյուռքահայեր, Ս. Թարգմանիչների տոնի առիթով կազմակերպվող ամենամյա գիտաժողովների մասնակից մտավորականներ – այլն:*

*Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տարվա ընթացքում ս. Սահակի համար սահմանել է երկու տոն. առաջինը նշվում է Բուն Բարեկենդանի նախորդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը (հունվարի 24-ից փետրվարի 28), իսկ մյուսը՝ ս. Մեսրոպ Մաշտոցի հետ՝ Հոգեգալստյան չորրորդ կիրակիին հաջորդող հինգշաբթի (հունիսի 1-ից հուլիսի 16):*

*Ս. Մեսրոպ Մաշտոցի տոնը Հայ Առաքելական Ս. Եկեղեցին նշում է նա- ս. Թարգմանիչների հետ՝ հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 7 ժամանակամիջոցի երկրորդ շաբաթ օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հայ Եկեղեցու սահմանած երկու տոնը՝ նվիրված գրերի գյուտին:

-Ս. Սահակի կյանքը – գործունեությունը:

-Գրական ժառանգությունը:

-Ս. Սահակի վախճանը:

-Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործունեությունը:

-Գրերի գյուտը:

-Գրական ժառանգությունը:

-Ս. Մեսրոպ մաշտոցի վախճանը, թաղումը, լուսեղեն խաչի եր–ումը:

-Ս. Մաշտոցի գերեզմանը՝ մշտապես ուխտագնացությունների վայր:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Թե– 301 թվականից Հայաստանը քրիստոնյա պետություն էր, սակայն 5-րդ դարում Աստվածաշնչի գրքերը, եկեղեցական երկերը, ժամերգություններն ու ծեսերը դեռ–ս հունարեն կամ ասորերեն էին, քանի որ հայերեն գրեր չկային: Այդ լեզուները ժողովրդի մեծ մասի համար անհասկանալի էին: Դա նպաստում էր բազմաթիվ աղանդավորական գաղափարախոսությունների ծավալմանը: Աստվածաշնչի՝ հայերեն խոսելն անհրաժեշտություն էր:

Միաժամանակ՝ 381 թ. Բյուզանդիայի – Պարսկաստանի միջ– բաժանված Հայաստանի երկու հատվածները՝ ար–եւյան ու ար–մտյան, սկսել էին օտարանալ միմյանցից: Հայաստանի բյուզանդական մասում եկեղեցական ու պետական լեզուն հունարենն էր, իսկ պարսկական Հայաստանում պետական լեզուն պարսկերենը, եկեղեցական լեզուն՝ ասորերենն էին: Դրանով պայմանավորված՝ երկփեղկվել էր նա– Հայ Եկեղեցին, ինչպես նա– ճեղքվածք էր տալիս Եկեղեցի-պետությունն՝ հայ ժողովրդի համար մշտապես առանցքային նշանակություն ունեցող միասնությունը: Ինչպես Խորեն Ա Մուրադբեկյան Ամենայն Հայոց Կաթողիկոսն է գրում 1936 թ. հոկտեմբերի 10-ի՝ հայոց գրերի գյուտի 1500-ամյակին նվիրված կոնդակում՝ չկա ոչինչ, որ մարդկանց միմյանց զոդի ու շաղկապի այնպես, ինչպես լեզուն – կրոնը, հատկապես հայ ժողովրդի պարագայում, որը մշտապես բաժան-բաժան լինելով՝ այս երկուսով է միայն իրեն հայ – Հայ Եկեղեցու անդամ ճանաչում:

Այս պայմաններում հայերեն դպրություն ունենալու անհրաժեշտությունը հրատապ էր նա– այն առումով, որ վտանգված էր հայերի՝ որպես ժողովուրդ լինելությունը, – նա կանգնած էր ուծացման վտանգի առաջ:

Այս ամենով է պայմանավորված գրերի գյուտի նշանակությունը, որն իրականացավ ս. Սահակ Պարթ–Հայրապետի – ս. Մեսրոպ Մաշտոցի ջանքերով, նվիրումով ու հանճարով: Դա է պատճառը նրանց հիշատակի հանդեպ բոլոր դարերում հայ ժողովրդի մեծ սերը, հարգանքն ու մեծարումը:

Ս. Մեսրոպ Մաշտոցը, մշակելով հայոց լեզվի, հայ երաժշտության – հայկական դպրոցներում դասավանդվող մյուս առարկաների դասավանդման սկզբունքները, որոշել է նա– հայկական դպրոցներում դասավանդումը հայերեն գրերի – մայրենի լեզվի ուսուցմամբ սկսելու սկզբունքը, որը հետագա դարերում պահպանվել ու ավանդական է դարձել հայկական դպրոցներում: Այդ սկզբունքի համաձայն՝ բոլոր առարկաները դասավանդվում էին հայերեն, իսկ օտար լեզուները՝ հայերենի հիման վրա:

Ս. Մեսրոպ Մաշտոցը հայոց մեջ անվանվել է Երկրորդ Լուսավորիչ. ս. Գրիգորը քրիստոնեացրեց հայ ազգը, իսկ ս. Մաշտոցը ազգայնացրեց՝ հայացրեց քրիստոնեությունը:

### Հիսուս Քրիստոսի Պայծառակերպությունը կամ՝ Վարդավառ

*Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության կամ Այլակերպության տոնը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Այն հիշատակությունն է Հիսուսի՝ Թաբոր լեռան վրա Իր երեք աշակերտներին Աստվածային փառքով եր–ման, որը նկարագրում են Ավետարանները (Մատթ., ԺԷ(17), 1-13, Մարկ., Թ, 2-12, Ղուկ., Թ, 28-36):*

*Իր քարոզչության երրորդ տարվա ամռանը Հիսուսը, աշակերտներից ընտրելով Պետրոսին, Հակոբին - վերջինիս եղբորը՝ Հովհաննեսին, նրանց հետ բարձրանում է Թաբոր լեռը[66]՝ միայնության մեջ աղոթելու. «...լեռ ելավ աղոթքի կանգնելու» (Ղուկ., Թ, 28): Հիսուսն Իր երկրային ողջ կյանքն անցկացնում էր աղոթքով, առավել -ս կյանքի որոշիչ միջոցներին: Աղոթքը մեր Տիրոջ մշտական ուղեկիցն էր, ինչպես Մկրտությունից հետո կամ չարչարանքներից առաջ՝ Գեթսեմանիի պարտեզում: Այս անգամ աղոթքի պահին, այսինքն՝ երբ Նա Հոր հետ էր, հանկարծ «Նրա երեսի տեսքը այլակերպվեց» (Ղուկ., Թ, 29)՝ Հիսուսն իր աշակերտներին եր-աց Իր աստվածային փառքով: Այստեղից - տոնի անունը՝ «Այլակերպություն» կամ «Պայծառակերպություն», որ նշանակում է «կերպարանափոխություն»: Քրիստոնյա բոլոր Եկեղեցիները տոնը Այլակերպություն անունով են նշում, - միայն Հայ Եկեղեցին է այն անվանում նա- Պայծառակերպություն՝ այլակերպության իմաստի մեջ հատկապես շեշտելով Տիրոջից ճառագող աստվածային փառքն ու փայլը. «Նրա դեմքը փայլեց ինչպես արեգակը. - նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լույսը» (Մատթ., ԺԷ(17), 2): Մշտապես Աստծուն տեսանելի ներկայացնելու յուրաքանչյուր փորձի ժամանակ օգտագործվում է «լույս» բառը: Աստծու կամ Քրիստոսի անտեսանելի ներկայությունը նույնպես լույսով է խորհրդանշվում. Ավետարաններում Քրիստոսն անվանվում է «Լույս հեթանոսների համար», «Լույս աշխարհի», «Լույս ճշմարիտ» - այլն: Հետ-աբար՝ Պայծառակերպության ընթացքում Հիսուսի՝ ամ-*

[66] Տնորհք պատրիարք Գալուստյանը ավելի հավանական համարում է այն տեսակետը, ըստ որի՝ դա ոչ թե Թաբոր, այլ Հերմոն լեռն է (Տնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, «Տաղավար տոներ», Երուսաղէմ, 1976):

*բողջովին լույսով ողողվելը - Նրանից լույսի ճառագումը հավաստումն է Նրա աստվածային բնության: Եվ կարելի է ասել, որ Աստվածհայտնությունն իր տեսանելի կերպի մեջ իրականացավ լեռան վրա՝ Պայծառակերպության պահին:*

*Այդ պահին Հիսուսի կողքին հայտնվում են լույսով պարուրված Մովսեսն ու Եղիան - Նրա հետ խոսում վերահաս տառապանքների ու չարչարանքների մասին: Աքանչելի տեսարանից զմայլված Պետրոս առաքյալը բացականչում է. «Տե՛ր, լավ է, որ մենք այստեղ ենք. եթե կամենաս, երեք տաղավարներ շինենք. մեկը Քեզ համար, մեկը՝ Մովսեսի, մեկն էլ՝ Եղիայի»: Մինչ նա խոսում էր, լուսափայլ մի ամպ հովանի է դառնում նրանց, - ամպից եկող ձայնն ազդարարում է. «Դա՛ է Իմ սիրելի Որդին, որին հավանեցի, Դրա՛ն լսեցեք»: Սարսափած ու գետնամած առաքյալներին հանգստացնելով ու ոտքի կանգնեցնելով՝ Հիսուսը նրանց պատվիրում է առայժմ չհայտնել տեսածի ու լսածի մասին՝ մինչ- Աստծու Որդու խաչելությունը - Հարությունը:*

*Քրիստոսի՝ Աստծու Որդի - սպասված Մեսիա լինելը մինչ այդ արդեն հայտարարվել էր Պետրոս առաքյալի կողմից, - առաքյալները հավատացել էին դրան: Պայծառակերպությունից մի քանի օր առաջ Հիսուսը նրանց հարցրել էր, թե մարդիկ ի՞նչ են մտածում Իր մասին, Ո՞վ է Նա: Առաքյալները պատասխանում են, թե ոմանք Նրան համարում են Հովհաննես Մկրտիչը, ոմանք էլ՝ Եղիան կամ հարություն առած որ-է մարգարե: Եվ միայն Պետրոս առաքյալը, Սուրբ Հոգով ներշնչված, խոստովանում է Նրան որպես Քրիստոս՝ Աստծու Որդի: Հիսուսը պատասխանում է Պետրոսին. «Երանի՛ է քեզ, Սիմո՛ն, Հովնանի որդի, որովհետ- մարմինը - արյունը*

*չէ, որ հայտնեց քեզ, այլ Իմ Հայրը, որ երկնքում է: Եվ Ես քեզ ասում եմ, որ դու վեմ ես, – այդ վեմի վրա պիտի շինեմ Իմ Եկեղեցին, ու դժոխքի դռները այն չպիտի հաղթահարեն» (տես՝ Մատթ., ԺԶ(16), 13-19, Մարկ., Ը, 27-29, Ղուկ., Թ, 18-21): Այսպես կատարվեց Քրիստոսի Եկեղեցու հիմնարկեքը, – դրվեց առաջին քարը նրա հիմքի: Հիսուսին Աստծու Որդի ու Քրիստոս դավանությանը հավատացած առաքյալները դարձան առաջին անդամները Քրիստոսի Եկեղեցու, – նրա՛նց վրա հիմնվեց քրիստոնեական Եկեղեցին: Այդ Եկեղեցու անդամներ կարող են դառնալ միայն նրանք, ովքեր հավատում են, որ Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծու Որդին ու Մեսիան, ո՛չ այն մեսիան, ով պետք է հրեաներին վերադարձներ իրենց կորցրած քաղաքական անկախությունն ու ազատությունը – հաստատեր Դավթի կործանված թագավորությունը: Հիսուսն ուսուցանում էր ճշմարիտ Մեսիայի առաքելությունը, Ով եկավ փրկելու մարդուն հենց իրենից՝ սեփական մեղքից, որը մահացու է – կործանարար, եկավ, որպեսզի այս կյանքում նորոգվեն մարդկային հոգիները – գտնեն փրկության ճանապարհը՝ բացված Փրկչի՝ Մեսիայի չարչարանքներով, անարգանքով, խաչելությամբ ու Հարությամբ: Փրկչին հետ-ողները նրանք են, ովքեր ուժ կգտնեն ուրանալու իրենց անձը հանուն ուրիշների, ինչը նշանակում է եսը ենթարկել Աստծու Կամքին: Եվ նա, ով այսպես կուրանա իր եսը, կգտնի իր իսկական անձը:*

*Առաքյալներն, այսպիսով, հավատացել էին Հիսուսին՝ որպես Աստծու Որդու: Տերը տնօրինեց նա-, որ առաքյալներից ոմանք ականատեսը – վկաները դառնան Իր աստվածային փառքի: Այդ նպատակով երեք առաքյալներին բարձրացրեց լեռը – պայծառակերպության միջոցով ցույց տվեց Իր Աստվածությունը, որ-*

*պեսզի փարատի աշակերտների երկյուղը, ովքեր, լսելով Երուսաղեմում Նրա գալիք չարչարանքների ու մահվան մասին, երկմտել - վախեցել էին: Այդ պատճառով եր-աց նրանց Իր Աստվածային Փառքով, որպեսզի հետո հիշեն, երբ հրեաների ձեռքով Ինքը մահվան մատնվի: Եթե մինչ այդ Պետրոսը դավանել էր Նրան որպես Աստծու Որդի, այժմ հայտնապես տեսան - լսեցին Հոր վկայությունը այդ մասին:*

*Քրիստոսն Ադամի բնությամբ մարմնանալով՝ պայծառակերպությամբ ցույց տվեց այն փառքը - մեզ վերստին հագցրեց այն նույն լուսեղեն զգեստը, որն ուներ Ադամը դրախտում, - որն Աստված վերցրել էր նրանից վերջինիս մեղանչումից հետո: Հետ-աբար, ինչպես ասել էր, «...արդարները երկնքի արքայության մեջ կծագեն, ինչպես արեգակը» (Մատթ., ԺԳ(13), 43), պայծառակերպությամբ հայտնապես ցույց տվեց արդարների փառավոր կերպարանքը, որն Իր նմանությամբ է լինելու: Քրիստոսը պայծառակերպվեց նա-, որպեսզի աշակերտներին ցույց տա Իր միակամությունն ու փառակցությունը Հորը - Սուրբ Հոգուն, որպեսզի խաչի վրա Իրեն խաչված տեսնելով՝ առաքյալները չերկմտեն: Ինչպես նա-, տեսնեն, թե ինչ կերպարանքով է հայտնվելու նրանց Հարությունից հետո - նույն կերպարանքով գալու է նա- Դատաստանի օրը: Տերն Իր աշակերտներին ցույց տվեց Իր արքայությունը՝ մինչ տառապանքները, զորությունը՝ մինչ մահը, փառքը՝ մինչ անարգանքը, պատիվը՝ մինչ անպատվությունը՝ հաստատելով չարչարանքների ու մահվան գնալու Իր կամավորությունը:*

*Լույսի - աստվածայինի համադրումից զմայլված առաքյալները հոգեպարար աննկարագրելի այդ զգացողությունը պահպանելու - Տիրոջ աստվածային ներկա-*

*յության վայելքը երկարաձգելու համար են առաջարկում տաղավարներ պատրաստել Նրա, Մովսեսի ու Եղիայի համար, միաժամանակ կարծես չցանկանալով իջնել լեռից, որին հաջորդելու էին Երուսաղեմում Տիրոջ չարչարանքներն ու խաչելությունը:*

*Հիսուսի Պայծառակերպութան ժամանակ Մովսեսի՝ նախանձահույզ օրենսդիրի ու Եղիայի՝ կենդանի երկինք տեղափոխված նախանձախնդիր օրինապահի հայտնվելը խորհրդանշում է, որ Քրիստոսն է Օրենսդիրը – չի դրժում Աստծու Ուխտը: Նա է Տերը երկրի ու երկնքի, ողջերի ու մեռյալների, քանզի Մովսեսին մեռյալների միջից վեր հանեց, իսկ Եղիային՝ ողջերի[67]:*

*ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպության տոնի ժամանակ ժողովրդական սովորություններից է միմյանց վրա ջուր ցողելը – աղավնիներ բաց թողնելը: Ջուրը խորհրդանշել է մաքրություն, բերրիության միջոց – ըստ այդմ եղել է պաշտամունքի առարկա: Այն գործածվել է հմայության ու գուշակության ժամանակ, ինչպես նա– ծառայել է որպես դ–երին ու չար ոգիներին հեռացնելու միջոց:*

*Միմյանց վրա ջուր ցողելը, աղավնիներ բաց թողնելը խորհրդանշում է ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը, Նոյի աղավնուն: Այն հնում կապվել է Աստղիկի պաշտամունքի հետ, որովհետ– հայերը համարել են, որ Աստղիկը Նոյի դուստրն է: Սովորություն է նա– ծաղիկներով զարդարվելը, ինչը Տիրոջ փառքի եր–ման առիթով մեծ ուրախության արտահայտությունն է: Տոնը հայտնի է նա–* Վարդավառ *ժողովրդական անունով: Այն հավանաբար գալիս է միմյանց վրա վարդաջուր սրսկելու սովորությունից, որը հետագայում*

---

[67] Տես՝ ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Վարդավառի, Գանձասար, 1995, Եղիշե, Ճառ Տիրոջ Պայծառակերպության մասին, Ս. Էջմիածին, 1997:

*փոխվել է սովորական ջուր սրսկելու սովորությամբ: Ս. Գրիգոր Տաթ-ացին տոնի «Վարդավառ» անունը բացատրում է Տիրոջը վարդի հետ համեմատությամբ. ինչպես վարդը մինչ- բացվելը թաքնված է իր պատյանի մեջ – բացվելով՝ եր-ում է բոլորին, այնպես էլ Տերը մինչ- Այլակերպությունը Իր մեջ կրում էր Աստվածության պայծառությունը – Պայծառակերպվելով՝ հայտնեց Իր Աստվածությունը: Ս. Գրիգոր Տաթ-ացին վարդի չորս գույներանգները՝ կանաչ, կարմիր, սպիտակ, դեղին, համեմատում է՝ դեղինը՝ Քրիստոսի անմեղության, սպիտակը՝ Աստվածության, կարմիրը՝ խաչի վրա հեղված Նրա Արյան – կանաչը՝ Նրա հասակի գեղեցկության հետ[68]:*

*Տիրոջ Պայծառակերպության տոնը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշում է Ս. Հարության տոնից 14 կամ՝ Հոգեգալուստից 7 շաբաթ հետո, կիրակի: Չնայած Հիսուսի Պայծառակերպությունը կատարվեց Նրա Հարությունից առաջ, սակայն տոնը նշվում է Հարության տոնից հետո, համաձայն Հիսուսի՝ առաքյալներին տված պատվիրանի՝ չհայտնել Իր Այլակերպության մասին, մինչ- խաչելություն – Հարություն: Տոնը կարող է հանդիպել հունիսի 28-ից օգոստոսի 1 ժամանակահատվածում:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հիսուսի պայծառակերպության ավետարանական պատմությունը:

-«Պայծառակերպություն» կամ «այլակերպություն» բառերի բացատրությունը:

[68] Տես՝ ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Վարդավառի, Գանձասար, 1995:

-Տոնի «Պայծառակերպություն» անվան պատճառը:

-Տիրոջ՝ Իր առաքյալների առաջ պայծառակերպվելու պատճառները:

-Վարդավառ, միմյանց վրա ջուր ցանելու խորհուրդը:

-«Վարդավառ» բառի բացատրությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Տիրոջ Պայծառակերպությունը, հաստատելով ճշմարտությունը, որ հակառակ սպասվող չարչարանքներին, անարգանքներին ու մահվանը, Հիսուսը Աստծու «սիրելի Որդին է», պատվիրում է. «Դրա՛ն լսեցեք»: Առաքյալներին ուղղված այս խոսքը պատգամ է մարդկային բոլոր սերունդներին՝ բոլոր ժամանակներում: Սա է Պայծառակերպության տոնի թելադրանքը – դրա խորհրդի բանալին. սիրել Տիրոջը, լսել Նրա պատվիրանները, հետ–ել դրանց, կյանքի վերածել Նրա պատգամները, որոնք մարդկանց երջանկության – ժողովուրդների խաղաղության գրավականն են: Աստծու Կամքով ընթանալու զորավոր ու անշեղ միջոցը մշտական աղոթքն է, զրույցը Տիրոջ հետ, որով լուսավորվում, այլակերպվում – պայծառակերպվում է մարդու հոգին՝ վերստանալով իր աստվածային պատկերը – մասնակից լինելով Տիրոջ սքանչելի Այլակերպությանը: Եվ եթե առաքյալները տեսան Նրա փառքը կիսաբաց աչքերով, մի կարճ ժամանակահատված ցնծալով – միայն Մովսեսի ու Եղիայի հետ, ապա աղոթքով ու պատվիրանապահությամբ կարող ենք հուսալ տեսնելու Տիրոջը՝ բյուրավոր հրեշտակներով շրջապատված, հարատ– բերկրանքի ու ցնծության մեջ, պայծառության մեջ – մշտապես խոսակից Տիրոջ հետ: Ինչպես Պո-

ղոս առաքյալն է ասում. «Եվ մենք բոլորս բաց երեսով տեսնելով Տիրոջ փառքը ինչպես հայելու մեջ, նույն պատկերով ենք նորոգվում փառքից փառք, որպես թե Տիրոջ Հոգով... Եվ Նա ծագեցրեց մեր սրտերում Աստծու փառքի գիտության լույսը, որը ճառագայթում է Հիսուս Քրիստոսի դեմքից» (Բ Կորնթ., Գ, 18, Դ, 6):

ՕԳՈՍՏՈՍ

## Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնը
### Խաղողօրհնեք

*Ս. Աստվածածնի վերափոխման տոնը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հինգ տաղավար տոներից է: Այն հիշատակությունն է ս. Տիրամոր՝ առ Աստված ննջման:*

*Ս. Աստվածամայրը եզակի – բացառիկ առաքելություն ունեցող դեմք է քրիստոնեական Եկեղեցու սրբերի շարքում: «Ս. Կույսն ավելի վեր է, քան մարգարեները, նախահայրերը, մարտիրոսներն ու վարդապետները – վեր, քան իշխանություններն ու պետությունները, սերովբեներն ու քերովբեները – ավելի վեր է բարձրացել, քան երկնային բոլոր զորքերը: Զիջում է միայն Արարչին՝ Անեղ Բնությանը, գերազանց – աներ-ույթ Աստվածությանը»[69]: Ս. Աստվածածնին էր վերապահված Փրկչին աշխարհին ընծայելու աստվածային պատիվը: Նա ընտրյալ այն անոթն է, որը մասնակցում է Աստծու՝ մարդու փրկության ծրագրի իրականացմանը՝ դառնալով Մարդեղության –՛ գործիք, –՛ պայման: Ս. Կույսը Աստվածածին էր ընտրվել իր սրբության – բարոյական մաքրության պատճառով:*

*Ըստ հայոց «Հայսմավուրքի»՝ ս. Կույսը 14 տարեկանում Երուսաղեմի տաճարից վերադառնում է տուն, 15 տարեկանում ծնում Հիսուսին, իսկ Նրա Համբարձման ժամանակ 48 տարեկան էր: Քրիստոսի Համբարձումից հետո ս. Տիրամայրը Հովհաննես առաքյալի*

---

[69] Զաքարիա Զագեցի և Մովսես Քերթող, «Աստվածամոր վերափոխման և նրա պատկերի մասին», Ս. Էջմիածին, 1997:

*խնամքի ու հոգածության տակ ապրում է 12 տարի, այսինքն՝ վերափոխվել է 60 տարեկանում:*

*Քրիստոսի Համբարձումից հետո ս. Աստվածամոր կյանքն անցնում էր ճգնության ու աղոթքի մեջ: Մահից առաջ Գաբրիել հրեշտակապետը, ով ավետել էր Քրիստոսի Ծնունդը, ս. Տիրամորը հայտնում է երեք օր հետո նրա՝ երկինք փոխադրվելու մասին: Հրճվանքով լցված՝ ս. Աստվածամայրը բարձրանում է Ձիթենյաց լեռն աղոթելու, որտեղ հրեշտակը նորից է հայտնվում - կրկնում երկինք փոխադրվելու մասին լուրը: Ի հաստատումն, հրեշտակը ս. Կույսին է նվիրում բրաբիոն՝ պսակ, որը նման էր արմավենու ճյուղի: Վերադարձին ս. Աստվածամայրը հավաքում է ազգականներին ու քրիստոնյա կանանց - հայտնում հրեշտակից իմացածը: Այդ ժամանակ քարոզությունից վերադառնում է նա- Հովհաննես առաքյալը: Ս. Մարիամը նրան խնդրում է ս. Պատարագ մատուցել, որպեսզի մահվանից առաջ հաղորդություն ստանա: Շուտով, Ս. Հոգուց առաջնորդված, հավաքվում են նա- մյուս առաքյալները, ովքեր քարոզության էին մեկնել տարբեր վայրեր: Ս. հաղորդություն ստանալուց հետո ս. Տիրամայրը տեղափոխվում է իր տուն, որը Վերնատան մոտ էր, որտեղ մեկ անգամ -ս հավաքվածներին հայտնում է իր մոտալուտ մահվան մասին: Մինչ առաքյալներն արտասվում էին, Հովհաննես առաքյալը ս. Աստվածածնից խնդրում է նրա պատկերը՝ որպես մխիթարություն բաժանումից հետո, - մի տախտակ մեկնում նրան: Ս. Աստվածածինը խաչակնքում է այն, հպում դեմքին, թրջում արցունքներով - Տիրոջից խնդրում, որ Նա դրա միջոցով մարդկանց բժշկություն պարգ-ի բոլոր հիվանդություններից ու ցավերից, հատկապես բորոտությունից: Տախտակի վրա դրոշմ-*

*վում է ս. Տիրամոր կենդանագիր պատկերը: Նույն պահին լուսեղեն կամար է շրջագծվում ս. Կույսի վրա, - նա ավանդում է հոգին: Առաքյալները տեսնում են նրա պայծառ հոգին, որը, համաձայն «Հայսմավուրքի», լույսից անհամեմատ սպիտակ էր, - զարմացած հարցնում Տիրոջը. «Ո՞վ կարող է նմանվել Քո անարատ Մոր՝ արեգակի նման պայծառ հոգուն»: Տերը նրանց պատասխանում է, որ բոլոր մարդկանց հոգիներն էլ այդպիսին են ստեղծված, - միայն մեղքն է ս-ացնում ու աղտոտում այն:*

*Քրիստոնյա կանայք պատանքում են ս. Տիրամոր մարմինը, - առաքյալները նրա դագաղն ուսերին՝ տանում են Գեթսեմանի: Ողջ ճանապարհին նրանց հովանի էր պսակած- ու լուսավոր ամպը, որն իջնելով ներք-՝ ամուր պարսպի նման շրջապատում ու պաշտպանում է առաքյալներին՝ ս. Մարիամին տրվող մեծարանքներից չարացած ու հրեա քահանայապետերի դրդումով թաղման թափորը ցրել կամեցող ամբոխից: Հետապնդողներից շատերը կուրանում են, մյուսները լսում են երգերի ու քայլերի ձայները, սակայն ոչինչ չեն տեսնում: Այս հրաշքներին հետ-ում է -ս մեկը. հրեա քահանաներից մեկը տապալելու մտադրությամբ ընկնում է դագաղի վրա, սակայն դագաղին դիպչելիս նրա ձեռքերն արմունկներից կտրվում են - մնում դագաղին կպած: Սարսափած քահանան, խորապես զղջալով ու ներում հայցելով, խնդրում է Պետրոսին՝ օգնել իրեն՝ միաժամանակ հիշեցնելով վերջինիս, որ ինքն օգնել է նրան՝ Տիրոջ չարչարանքների օրը աղախնի մատնությունից ազատվելու: Պետրոսը հավատում է քահանայի անկեղծ զղջումին ու բժշկում նրա ձեռքերը, որից հետո քահանան միանում է քրիստոնյաներին ու մինչ- մահ նվիրվում Տիրոջը ծառայելուն:*

Առաքյալները ս. Աստվածածնի մարմինն ամփոփում են Գեթսեմանիի քարայրներից մեկում: Նրանք երեք օր շարունակ այցելում են Սրբուհու գերեզման, որտեղ ողջ ընթացքում լսվում են հրեշտակների երգեցողության ձայները: Չորրորդ օրը դրանք այլ-ս չեն լսվում, որովհետ- այդ օրն առավոտյան Հիսուս Քրիստոսի գլխավորությամբ հրեշտակների բանակը, լուսեղեն ամպի տեսքով, իջնում է երկնքից -, առանց տապանը խախտելու, ս. Կույսի մարմինը բարձրացնում երկինք:

Այս դեպքերին չի մասնակցում Բարդուղիմեոս առաքյալը, ով այդ ժամանակ բացակայում էր Երուսաղեմից: Նա տեղ է հասնում միայն չորրորդ օրը - մյուս առաքյալներին խնդրում՝ բացել ս. Տիրամոր գերեզմանը, որպեսզի ինքն էլ կարողանա վերջին անգամ տեսնել նրան - մխիթարվել: Առաքյալները, անսալով նրա խնդրանքներին, բացում են գերեզմանը - զարմանքով տեսնում, որ ս. Կույսի մարմինն այնտեղ չէ: Այդ պահին երկնքից լսվող ձայնն ազդարարում է, որ ս. Աստվածածնի մարմինը երկինք է տեղափոխվել, - պատվիրում՝ նրա կենդանագիր պատկերը հանձնել Բարդուղիմեոս առաքյալին, որպեսզի նա մխիթարվի դրանով - իր հետ տանի այն երկիրը, ուր պետք է քարոզության մեկներ: Բարդուղիմեոս առաքյալը ս. Տիրամոր պատկերն իր հետ բերում է Հայաստան - տեղադրում Անձ-ացյաց գավառի Դարբնաց քար կոչվող վայրում, որտեղ եկեղեցի է կառուցվում ս. Աստվածածնի անունով, որն էլ հետագայում դառնում է կուսանոց՝ կոչվելով Հոգյաց վանք: Այս օրինակով հայոց բոլոր եկեղեցիների խորաններում ս. Տիրամոր պատկերն է: Ս. Բարդուղիմեոս առաքյալի բերած ս. Տիրամոր պատկերի գտնվելու վայրի մասին այժմ տեղեկություններ չկան: Ավան-

*դությունը պահել է միայն զրույցներ այն մասին, որ սուրբ պատկերը հյուսել են պատի մեջ՝ պաշտպանելու համար զավթիչներից:*

*Ս. Աստվածամոր մարմինը գերեզմանում չգտնելով՝ առաքյալները հասկանում են, որ Քրիստոսը կատարել է նախօրոք Իր մորը տված խոստումը՝ երկինք փոխադրել նրան, - որ ս. Տիրամայրը մահացած չէր, այլ ննջած, ինչի վկայությունը հրեշտակների երգեցողությունն էր նրա գերեզմանի վրա: Այս պատճառով էլ նրա երկրավոր կյանքի վախճանը որակվում է «վերափոխում» բառով՝ մատնանշելով նրա՝ երկինք վերափոխվելը:*

*Ս. Գրիգոր Տաթ-ացին «Աստվածածնի վերափոխման քարոզում» գրում է, որ եթե առաջին կույս Եվան մարդկությանը զրկեց աստվածատուր 12 շնորհներից (Աստծուն տեսնելու, Նրա հետ զրուցելու շնորհները, լուսեղեն պատմուճանը, անչարչարելի կյանքը, անծերանալի հասակը, դրախտի՝ անաշխատ վայելումը, Աստծու անմահ տունկերի մշակությունն ու պահպանությունը, Արարչի սերն ու գութը, թագավորությունը բոլոր արարածների վրա, քահանայությունը - մարգարեությունը), ապա ս. Կույս Մարիամը, ինն ամիս Աստվածորդուն կրելով իր մեջ՝ մարդկությանը վերադարձրեց Աստծու Խոսքը լսելու շնորհը, լուսեղեն պատմուճանի փոխարեն Քրիստոսով զգեստավորեց, Նրա հավատով մարդուն վերընծայեց կորցրած անմահությունը - վերադարձրեց Աստծու սերը մարդու հանդեպ. ս. Աստվածածինը իր Որդու անապական Ծնունդով մարդուն վերադարձրեց աստվածային բոլոր պարգևները՝ նրան տալով ոչ միայն Ադամի փառքը, որը նա ուներ դրախտում, այլ- Աստծու խոստացած երկնքի արքայությունը: Եվ այժմ ս. Եկեղեցին - հավատացյալների*

*հոգիներն առավել պատվական են, քան Ադամը դրախտում, որովհետ– եթե Ադամը բոլոր արարածների նման արարվեց, ապա ս. Եկեղեցին Քրիստոսի մարդեղությամբ, չարչարանքներով, մահվամբ ու հարությամբ սրբվեց: Ադամը խոստումո՞վ ուներ երկնքի արքայությունը, իսկ արյամբ մկրտվածները նրան խոստացված հանգիստը իրենց վաստակով ձեռք բերեցին: Ադամը ստեղծվեց Աստծու պատկերով ու նմանությամբ, իսկ ս. ավազանով մկրտվածները շնորհո՞վ եղան Աստծու որդիներ ու Քրիստոսի ժառանգակիցներ: Ս. Աստվածածնի շնորհիվ է նա–, որ ս. Եկեղեցին - նրա անդամներն առավել պատիվ ունեն, քան հրեշտակները երկնքում, որովհետ– Եկեղեցին Քրիստոսի հարսն է ու Նրա անդամը, իսկ հրեշտակները Քրիստոսի ծառաներն են, Եկեղեցու անդամները հաղորդվում են Քրիստոսի չարչարանքներին - փառքին, իսկ հրեշտակները՝ ոչ, նա–՝ ս. Եկեղեցին առաքինությամբ ու ճգնությամբ ավելացնում է իր գոյակցական վարձքը, մինչդեռ հրեշտակները չեն կարող, որովհետ– անփոփոխ են իրենց ունեցած պատվի մեջ: Այսպես ս. Եկեղեցին առավել բարձրացավ երկրում, քան հրեշտակները՝ երկնքում, - այս բոլոր պարգ–ների ու բարիքների պատճառը ս. Աստվածածինն է, ով սուրբ - անապական ծնունդով ծնեց Աստծու Միածին Որդուն:*

*Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին Ս. Աստվածածնի վերափոխման տոնը նշում է օգոստոսի 15-ին մերձակա կիրակի օրը:*

*ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ: Ս. Աստվածածնի վերափոխման տոնի օրը, ս. Պատարագից հետո, կատարվում է խաղողօրհնեքի արարողություն: Նախ՝ երգվում է «Փառք Սուրբ Խաչի» շարականը, կարդացվում են հատվածներ Ս. Գրքից, այնուհետ– հաջորդում է ս. Ներ-*

*սես Շնորհալու աղոթքը՝ գրված խաղողի օրհնության համար: Աղոթքում հիշատակվում է, թե ինչպես Աստված ստեղծեց բուսականությունն ու պտուղները, Ադամին ու Եվային պարգ-եց դրախտի դյուրին ու ճոխ կյանքը, սակայն նրանք օրինազանց գտնվեցին - արտաքսվեցին դրախտից, - միայն Միածնի գալուստով մարդիկ ազատվեցին մեղքի ու մահվան տիրապետությունից: Այնուհետ- խնդրվում է Աստծու օրհնությունը նվիրաբերվող խաղողի ողկույզների ու ճաշակողների համար, որպեսզի վերջիններս առողջ լինեն մտքով ու հոգով - արժանի՝ մեղքերի թողության: Աստծու օրհնությունն է հայցվում նա- պտուղը բերողների համար, որպեսզի նրանք արժանի դառնան երկնքի վարձատրությանը: Տիրոջից խնդրում ենք նա-, որ Նա օրհնի բոլոր այգիներն ու որթատունկերը, որպեսզի նրանք բազմաբեղուն պտղաբերություն ունենան, հողը բերրի ու պարարտ լինի, ինչպես նա- անփորձանք պահվեն այգեստանները բոլոր պատահարներից ու աղետներից:*

*Խաղողօրհնեքի արարողությունը նախապես կատարվում էր այգիներում, հետագայում տեղափոխվեց եկեղեցիներ:*

*Թեպետ Խաղողօրհնեքը խորհրդի առումով չի առնչվում ս. Աստվածածնի վերափոխման դեպքի հիշատակման հետ, սակայն անպայման աղերս ունի մարդկության կյանքում ս. Աստվածածնի դերի մասին քրիստոնեական ըմբռնումի հետ: Աստվածածնի Օրհնյալ Պտուղով՝ Քրիստոսով, փրկությունը աշխարհ մտավ, - սստվածային այդ փրկարար զորությամբ տրվող օրհնությունն ենք հայցում բերքին, բերք ու բարիք ստեղծողին ու ճաշակողին: Խաղողօրհնեքին սփռվող օրհնության բարեխոսը ս. Աստվածածինն է, ով հնազանդորեն «այո» ասաց, որպեսզի փրկությունը աշ-*

*խարի մտնի: Այս պատճառով խաղողօրհնության արարողությունը դրվել է սուրբ Աստվածածնին նվիրված ամենամեծ՝ Վերափոխման տաղավար տոնի հետ:*

*Պտուղների օրհնման այս արարողությունը կատարվում է նա– քրիստոնեական մյուս եկեղեցիներում, որտեղ օրհնվում են խնձորը, մեղրը – այլն:*

*Անշուշտ, քրիստոնեությունից առաջ էլ հին ժողովուրդները, իրենց հավատալիքների համաձայն, տարվա բերքի համար երկնային օրհնություն էին խնդրում: Հին Կտակարանում էլ հաստատված օրենք էր առաջին բերքը, պտուղները, երախայրիքը տաճարին նվիրելը (Բ Օրենք, ԻԶ(26), 1-10): Որպես ընծա համարվում էին նուռը, թուզը, գարին, ցորենը, խաղողը, ձիթապտուղը, մեղրը:*

*Բերքի օրհնության սովորությունը քրիստոնեական շրջանում ստացավ նոր իմաստ, որը կապվում է Աստծու փրկագործ շնորհի հետ, պտուղներից ընտրվեց խաղողը, քանի որ Հիսուսն Իր մասին ասում էր՝ «Ես եմ ճշմարիտ որթատունկը» (Հովհ., ԺԵ(15), 1), ինչպես նա– վերջին ընթրիքի ժամանակ Նա խաղողի հյութից ստացված գինին օրհնեց – տվեց աշակերտներին՝ որպես Իր կենարար Արյան խորհրդանիշ: Ճշմարիտ Որթատունկին հաստատված մնալու հայց է Խաղողօրհնեքը՝ սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ս. Աստվածածնի առ Աստված ննջման պատմությունն ըստ «Հայսմավուրքի»:

-Հրեշտակը ս. Տիրամորը հայտնում է նրա՝ երկինք փոխադրվելու մասին:

-Ս. Աստվածածնի հրաժեշտը առաքյալներին ու մյուս քրիստոնյա հավատացյալներին:

-Ս. Տիրամոր կենդանագիր պատկերը:

-Ս. Աստվածածնի թաղումը, գերեզմանի բացումը – ս. Կույսի մարմինն այնտեղ չգտնելը:

-Ս. Աստվածածնի կենդանագիր պատկերը Հայաստանում:

-Տոնի «Վերափոխում» անվան բացատրությունը:

-Խաղողօրհնեք: Բերքի օրհնության նոր խորհուրդն ու իմաստը քրիստոնեության պարագայում:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ս. Կույսի անձը, որպես փրկագործության գերազանց միջոց, անբաժան է Հիսուս Քրիստոսի տնօրինություններից, – Եկեղեցին նախապես –եթ երկյուղած մեծարանք ունեցավ նրա հիշատակի հանդեպ: Դարեր շարունակ նկարիչները, երաժիշտներն ու բանաստեղծները մեծապես ներշնչվել են նրա կերպարով – ստեղծել նրան նվիրված բազմաթիվ մեծարժեք գործեր: Իսկ քրիստոնեական Եկեղեցին ս. Աստվածածնին նվիրել է սքանչելի շարականներ, տաղեր, մեղեդիներ, նրա անունով կառուցվել են բազմաթիվ հրաշալի եկեղեցիներ, ս. Տիրամորն են նվիրված մեր «Մեծացուսցե» շարականները, որոնք վերագրվում են Մովսես Քերթողին, ինչպես նա– Գրիգոր Նարեկացին նրան է նվիրել իր «Մատյան ողբերգության» գլուխգործոցի գլուխներից մեկը:

«Փակված պարտեզ – կնքված աղբյուր» (Երգ, Դ, 12) էր ս. Տիրամայրը, քանի որ իր կյանքի ընթացքում հոգով, մարմնով, մտքով ու զգայությամբ ամրացված էր – կնքված՝ չարի հանդեպ փակ մնալով: Այս խոսքն առավելաբար վերաբերում է ս. Աստվածածնի վերափոխմանը, «երբ բարիքներով լի պարտեզը – հորդառատ շնորհների աղբյուրը փակվեց ու կնքվեց գերեզ-

մանում»: «...Տիրամայրն իրեն Աստվածածին խոստովանողների հոգում է, սրտում – շուրթերին: Ուստի, ամեն տարի նույն օրը ցնծությամբ – հսկումով, պահքով – աղոթքով, օրհնությամբ – հոգ–որ երգերով տոնում ենք վերափոխումը: Ինչպես այն օրը առաքյալների դասն էր հրեշտակներով հանդերձ համահավաքված, այսօր էլ մենք ենք ուղեկցում Տիրամոր վերափոխմանը՝ Աստծու առատ պարգ–ներից մեր մեջ ընդունելով նրա ներողամտությունը, քավությունը – մեղքերի թողությունը, ինչպես նա– երկնավոր Հոր որդեգրության պատիվը, եղբայրակցությունը Միածին Որդու հետ – տաճարակցությունը Սուրբ Հոգուն...»[70]:

---

[70] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ Աստվածածնի վերափոխման, Գանձասար, Երևան, 1995:

ՍԵՊՏԵՄԲԵՐ

## Ս. Խաչին նվիրված տոներ

*Քրիստոնեական եկեղեցիների կողմից ս. Աստվածածնի – Քրիստոսի խաչի հանդեպ բացառիկ սերը, հարգանքն ու երկյուղածությունը ունեն միայն մեկ դրդապատճառ. երկուսն էլ սերտորեն առնչվում են Քրիստոսի հիմնական երկու տնօրինություններին, ինչով – պայմանավորվում է նրանց կար-որությունը: Ս. Աստվածածամայրը անքաժանելիորեն կապված է Աստվածորդու մարդեղության խորհրդի հետ, իսկ Խաչը՝ Քրիստոսի փրկագործության: Այնպես որ, քրիստոնյաներս պատվում ենք –՛ս. Աստվածամորը, –՛ս. Խաչը, որովհետ– երկուսի արժ-որման աղբյուրն էլ Քրիստոսն է, – երկուսի միջոցով էլ Աստված է փառավորվում: Այսինքն՝ս. Աստվածամոր – ս. Խաչի հանդեպ սերն ու հարգանքը բխում է Աստծուց – վերադառնում դեպի Աստված:*

*Ս. Խաչն այլ-ս դարձել է քրիստոնեության խորհրդանիշը՝ յուրաքանչյուր տեղում իր ներկայությամբ մատնանշելով նա– քրիստոնեության ներկայությունը:*

*«Խաչը գերեզմանների կնիքն է – կյանքի հարությունը»[71]: Ս. Խաչը «հոգ-որ զենք է ու չքթացող սուր»[72], որի անհաղթ զորությունը չարի խափանման պատճառն է, իսկ նրանով տյառնագրումը՝ մարդու զորացման ամենակարող միջոց, քանզի զորավոր է Քրիստոսի Հարությամբ: Ս. Խաչը հույսի, սիրո, հաղթանակի ու փրկության նշանն է. «Դավանում եմ խաչը, քանզի գիտեմ Հարությունը» (Կյուրեղ Երուսաղեմցի): Այն նա–*

[71] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ խաչի, Ս. Էջմիածին, 1997:
[72] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ խաչի, Ս. Էջմիածին, 1997:

*պարծանքն է յուրաքանչյուր քրիստոնյայի. «Քա՛վ լիցի, որ ես պարծենամ այլ բանով, քան մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով» (Գաղ. Զ 14), ասում է առաքյալը: «Խաչը անհավատների կուրությունն է – հավատացյալների զորությունը, որը – երկրպագուներին պայծառացնելով՝ կանգնեցնում է մեր Քրիստոս Աստծու աջ կողմում, Ում փառք հավիտյանս, ամեն»[73]:*

*Առաքելական ժամանակներից Քրիստոսի ս. Խաչը կար-որ տեղ է զբաղեցնում քրիստոնեական Եկեղեցիների պաշտամունքում: Հայաստանյայց Ս. Եկեղեցին ս. Խաչին նվիրված չորս տոն ունի: Սուրբ Խաչի եր-ման տոնի մասին խոսվել է վեր-ում:*

## Խաչի գյուտ

*Խաչելությունից – Հարությունից հետո Քրիստոսի դատարկ գերեզմանն ու Խաչը Տիրոջից մնացած միակ տեսանելի – զգալի առարկաներն էին – դրանց վրա կենտրոնացավ քրիստոնյաների մասնահատուկ ուշադրությունը, հարգանքն ու հոգածությունը:*

*Ըստ ավանդության, Հռոմի Կլավդիոս կայսեր (41-54 թթ.) կինը՝ Պատրոնիկեն, լինելով քրիստոնյա, ուխտի է գնում Երուսաղեմ, որտեղ հանդիպում է այդ ժամանակ Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Տյառնեղբայր Հակոբ առաքյալին: Կայսրուհին փափագում է տեսնել Քրիստոսի գերեզմանը, խաչափայտը – Գողգոթան, սակայն Հակոբ առաքյալից տեղեկանում է, որ հրեաները Քրիստոսի ս. Խաչը, Նրա հետ խաչ բարձրացված երկու ավազակների խաչերի հետ, դրել են Հիսուսի գերեզմանում – ծածկել հողով՝ հսկելով ու արգե-*

[73] Ս. Գրիգոր Տաթևացի, Քարոզ խաչի, Ս. Էջմիածին, 1997:

*լելով մոտենալ դրանց: Պատրոնիկե կայսրուհու միջամտությամբ խաչերը հանում են հողի տակից – որոշելու համար, թե որն է Քրիստոսինը՝ դրանց են մոտեցնում մահացած մի աղջկա: Վերջինս Քրիստոսի ս. Խաչին հպվելով՝ կենդանանում է: Հակոբ Տյառնեղբայրը բոլորին ի տես – ի մխիթարություն՝ ս. Խաչը բարձրացնում է Երուսաղեմի տաճարում –, ըստ ավանդության, այդ առթիվ երգում. «Խաչի Քո, Քրիստոս, երկրպագանեմք» (Շարական): Եկեղեցական ավանդության մեջ սա առաջին դեպքն է, երբ ս. Խաչը հանդիսավորապես կանգնեցվում է՝ փառավորվելով հավատացյալների կողմից: Նրանցից շատերը վկաներն են լինում նա– ս. Խաչափայտի վրա շողացող պայծառ լույսի:*

*Պատրոնիկե կայսրուհու խնդրանքով Հակոբ Տյառնեղբայրը նրան է նվիրում ս. Խաչից մի մաս, որը կայսրուհին տանում է Հռոմ: Նվիրական Խաչափայտի անգին այս մասունքը հետագայում անցնում է նրա ազգականուհի Հռիփսիմեին, ով – իր հետ այն բերում է Հայաստան:*

*Կլավդիոս կայսեր – Պատրոնիկե կայսրուհու մահից հետո հրեաները սպանում են Հակոբ Տյառնեղբորը – Քրիստոսի Խաչը մյուս խաչերի հետ թաղում Գողգոթային մոտ մի վայրում, վրան աղբ կուտակում՝ վայրը վերածելով աղբանոցի: 313 թ. Կոստանդիանոս Մեծ կայսեր (305Վ337 թթ.) Միլանի հրովարտակով քրիստոնեությունը ստանում է ազատորեն դավանվելու հնարավորություն: Կայսեր մայրը՝ Հեղինեն, 327 թ. գալիս է Երուսաղեմ – մեծ ջանքեր գործադրելով՝ ցանկանում գտնել Քրիստոսի ս. Խաչը: Խաչափայտի տեղը հայտնի էր միայն Հուդա անունով մի հրեայի, ով իր նախնիների գրավոր ավանդություններից գիտեր խաչերի թաղման վայրը: Սկզբում ընդդիմանալով, վեց օր*

*ցամաքած ջրհորի հատակում քաղցած մնալուց հետո նա, ի վերջո, ցույց է տալիս խաչերի թաղման տեղը: Փորելով՝ դրանք հանում են աղբի տակից, գտնվում է անգամ Պիղատոսի հրամանով Հիսուսի գլխավեր-ում ամրացված եռալեզու տախտակը, որը, սակայն, պոկված էր խաչից: Եվ նորից Քրիստոսի ս. Խաչը որոշվում է կատարած հրաշքի շնորհիվ. դրան հպվելով՝ կենդանանում է մեռած մի պատանի – հիվանդություններից բժշկվում մահամերձ մի կին: Այդ հրաշքների ազդեցությամբ շատերը քրիստոնեություն են ընդունում, որոնց թվում –՝ Հուդան, ով հետագայում նախատակվում է Քրիստոսի անվան համար:*

*Հեղինե թագուհու կողմից 335 թ. Գողգոթայում կառուցվում է Ս. Հարություն տաճարը, որտեղ – կանգնեցվում է Քրիստոսի ս. Խաչը, այն հանդիսավորապես փառավորելով արդեն երկրորդ անգամ:*

*Փրկչական ս. Խաչի գյուտի հիշատակը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնում է հոկտեմբերի 26-ին մերձակա կիրակի օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հայ Եկեղեցու՝ ս. Խաչին նվիրված չորս տոները:

-Պատրոնիկե կայսրուհու նախաձեռնությամբ հողում թաղված Քրիստոսի ս. Խաչի դուրս հանումը: Խաչափայտի մասունքը:

-Ս. Խաչի գյուտը Հեղինե թագուհու նախաձեռնությամբ:

-Ս. Հարություն տաճարի կառուցումը:

Խաչվերաց

*Գողգոթայում կառուցված Սուրբ Հարության տաճարն օծվում է սեպտեմբերի 13-ին, իսկ սեպտեմբերի 14-ին տարբեր երկրներից այստեղ են հավաքվում տարբեր եկեղեցիների եպիսկոպոսներ, ովքեր, ժողով գումարելով, որոշում են ամեն տարի, սեպտեմբերի 14-ին բոլոր եկեղեցիներում տոնել խաչի բարձրացման տոնը՝ Խաչվերացը[74]: Սակայն տոնն իր վերջնական հաստատումն է ստանում հետագայում՝ ներառելով նա– Քրիստոսի խաչափայտի գերեդարձության հիշատակը:*

*610 թ. Պարսկաստանի Խոսրով Բ Փարվեզ թագավորը վերսկսում է ռազմական գործողությունները Բյուզանդական կայսրության դեմ, որի հետ պատերազմում էր 602 թ. ի վեր՝ օգտվելով նրա խառնակ վիճակից: 614 թ. պարսկական զորքը 19-օրյա պաշարումից հետո մտնում է Երուսաղեմ: Սրի է քաշվում բնակչության զգալի մասը, մյուսները՝ գերեվարվում են: Գերվում են նա– Զաքարիա պատրիարքն ու խաչապահը: Նրանց տանջանքների մատնելով՝ պարսիկները տեղեկանում են Տիրոջ խաչափայտի տեղը – ծեռք գցած ավարի՝ ոսկու – արծաթի հետ ուղարկում պարսից արքային: Տիրոջ ս. Խաչին ուղեկցող զարմանահրաշ եր–ույթները երկյուղածությամբ են համակում Պարսկաստանի բնակչությանը, շատերը մտածում էին, որ քրիստոնյաների Աստվածն իրենց մոտ է եկել: Ինքը՝ Խոսրով թագավորը, մեծ երկյուղածությամբ է վերաբերվում ս. Խաչին՝ վախենալով անգամ այն դուրս հանել: Շատերը, դիմելով տեղի քրիստոնյաներին – նրանցից լսելով Ավետարանի խոսքը, քրիստոնեություն են ընդունում:*

---

[74] Գրաբարում «խաչվերաց» նշանակում է «խաչի վերացում», այսինքն՝ «խաչի բարձրացում»:

*Տարածքային մեծ կորուստներ կրած Բյուզանդիան Հերակլ Գ կայսեր (610ՎՆ641 թթ.) գլխավորությամբ նախապատրաստվում է հակահարձակման: Պատերազմը այսուհետ դառնում է սրբազան՝ հանուն ս. Խաչափայտի: 622 թվականից ի վեր Հերակլը հաղթական համառ մարտեր է մղում, որոնց մասնակցել է նախայկական մի զորագունդ իշխան Մժեժ Գնունու գլխավորությամբ: 628 թ. կայսերական զորքը մտնում է Տիզբոն: Քաղաքական լարված իրավիճակում պարսից մեծամեծերը գահընկեց են անում – սպանում Խոսրով թագավորին՝ գահին բերելով որդուն՝ Կավատ Շերոյին: Վերջինս հաշտություն է խնդրում, – այն կնքվում է: 629 թ. Տիրոջ ս. Խաչափայտը Պարսկաստանից հանդիսավոր թափորով վերադարձվում է Երուսաղեմ: Վերադարձի ճանապարհին անցնում էր Հայաստանով, որտեղ ժողովուրդը խանդավառությամբ ընդառաջ էր գնում – ուղեկցում ս. Խաչափայտը: Կարինում պարսիկները փորձ են անում հետ վերցնելու ս. Խաչը, սակայն հայ զորաջոկատն ու ժողովուրդը հետ են մղում նրանց հարձակումը: Մարտից հետո, վերադառնալով, տեսնում են, որ այնտեղ, ուր դրված էր ս. Խաչը, վճիտ աղբյուր է բխում: Այդ վայրը հետագայում դառնում է ուխտատեղի, իսկ Կարնո դաշտի հարավար–ելյան կողմում բարձրացող լեռնագագաթը այս դեպքերից հետո կոչվում է Խաչափայտ:*

*Գերեդարձի ողջ ճանապարհին Տիրոջ Խաչափայտն ամենուրեք վեր էր պարզվում ու փառաբանվում՝ որպես Քրիստոսի հրաշափառ Հարության խորհրդանիշ – հբր– մխիթարություն դիմավորող ժողովրդի համար: Այսպես 3-րդ անգամ հաղթականորեն բարձրացվում է Քրիստոսի ս. Խաչը՝ պայմանավորելով Խաչվերացի տոնի վերջնական հաստատումը:*

*Խաչվերացը Հայ Առաքելական Ս. Եկեղեցու հինգ տաղավար տոներից է – նշվում է սեպտեմբերի 14-ին մերձակա կիրակի օրը, այսինքն՝ սեպտեմբերի 11Վ17-ն ընկած ժամանակամիջոցում:*

*Տոնի կիրակի երեկոյան կատարվում է ս. Խաչի բարձրացման հանդիսավոր արարողություն – անդաստանի կարգ: Արարողությունն սկսվում է ռեհանով ու ծաղիկներով զարդարված Խաչը հանդիսավոր թափորով եկեղեցու բակ դուրս բերելով: Զարդարված խաչով թափորապետը խաչակնքում – օրհնում է աշխարհի արևելյան, արևմտյան, հարավային – հյուսիսային կողմերը՝ բարեկարգություն ու խաղաղություն հայցելով Աստծուց, – վարդաջուր ցողում հավատացյալների վրա, որից հետո խաչը ներս է տարվում եկեղեցի – դրվում ս. Սեղանի վրա: Արարողությունից հետո սկսվում է երեկոյան ժամերգությունը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Խաչվերացի տոնի հաստատման պատմությունը:

-«Խաչվերաց» բառի բացատրությունը:

-Խաչափայտի գերեդարձության պատմությունը:

-Հայերի մասնակցությունը պատերազմին, գերեդարձի ճանապարհի անցումը Հայաստանով:

-Տոնի երեկոյան ս. Խաչի հանդիսավոր բարձրացման արարողությունը – անդաստանի կարգի կատարումը:

## Վարագա ս. Խաչի տոն

*Վարագա ս. Խաչի տոնը հիշատակությունն է Վարագ լեռան վրա Քրիստոսի ս. Խաչի մասունքի*

*հայտնաբերման: Ինչպես արդեն նշվել է, Պատրոնիկե կայսրուհին, Հակոբ Տյառնեղբորից ստանալով Տերունական Խաչափայտից մի մաս, այն իր հետ տանում է Հռոմ: Նրա մահից հետո ս. մասունքն անցնում է նրա քրիստոնյա ժառանգորդներին, ովքեր հոգածությամբ ու երկյուղածությամբ թանկագին մասունքը փոխանցում են սերնդից սերունդ: Ի վերջո, այն անցնում է նույն տոհմից Հռիփսիմե կույսին: Նա մեկն էր Գայանյաց կույսերից, ովքեր Դիոկղետիանոս կայսեր հալածանքներից խուսափելով՝ գալիս են Հայաստան: Վարագ լեռան վրա ճգնելիս Հռիփսիմեն մասունքը թաքցնում է քարայրներից մեկում – դրա հոգածությունը հանձնում այդտեղ ճգնող քահանաներին: Սակայն վերջիններիս մահից հետո մասունքի տեղն անհայտ է մնում: 7-րդ դարում Վարագ լեռը ճգնելու վայր ընտրած Թոդիկ ճգնավորը իր աշակերտ Հովելի հետ մեծ փափագով ամեն օր աղոթում էր Աստծուն՝ Նրանից խնդրելով ցույց տալ Քրիստոսի ս. Խաչի մասունքի գտնվելու վայրը: Եվ մի գիշեր երկնքում եր–ում է խաչանիշ լույսի նշանը, որը, 12 լուսեղեն սյուներով շրջապատված, մտնում է եկեղեցի – կանգ առնում ս. Սեղանի վրա: Երկու ճգնավորները շտապում են եկեղեցի – ս. Սեղանի վրա գտնում թանկագին ս. Նշանը՝ Քրիստոսի Խաչափայտի մասունքը: Պայծառ լույսը տեսնում են նա– հեռավոր վայրերում, – հոգ–որականների ու աշխարհականների մեծաթիվ բազմությունը շտապում է եկեղեցի: Նրանց հետ՝ նա– ժամանակի կաթողիկոս Ներսես Գ Տայեցին (Շինարար) (641ՎՆ661 թթ.) – Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու որդի Վարդ սպարապետը: Այնտեղ, ուր եր–ացել էին լուսեղեն սյուները, կառուցվում է նոր եկեղեցի, իսկ այն եկեղեցին, որի ս. Սեղանի վրա իջել էր Քրիստոսի*

*խաչափայտի մասունքը, մեծացնում – բարեկարգում են: Ներսես Գ կաթողիկոսը հաստատում է Վարագա ս. Խաչի տոնը – այս առիթով գրում «Նշանաւ ամենահաղթ խաչիւդ Քո, Քրիստոս...» շարականը:*

*Ս. մասունքը Վարագի Ս. Նշան եկեղեցում մնում է մինչ– 1021 թ., երբ Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագավորն իր հետ այն տեղափոխում է Սեբաստիա: 1026 թ. նրա մահից հետո մասունքը դարձյալ վերադարձվում է Վարագ, որտեղից 1651 թ. Սուլեյման – Չոմար թուրք փաշաների կողմից կողոպտվում է, սակայն նրանց չարաչար վախճանից վախեցած Իբրահիմ բեյն այն վերադարձնում է վանեցիներին, ովքեր, ավելի ապահով նկատելով իրենց քաղաքի Ս. Տիրամոր եկեղեցին, ս. մասունքը տեղադրում են այնտեղ, որից հետո այդ եկեղեցին կոչվում է նա– Ս. Նշան: Այժմ Քրիստոսի ս. Խաչի մասունքը պահվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:*

*Վարագա Ս. Խաչի տոնը հատուկ է միայն Հայ Եկեղեցուն: Տոնը նշվում է սեպտեմբերի 28-ի մերձավոր կիրակի օրը, այսինքն՝ սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1 ժամանակամիջոցում կամ Խաչվերացի տոնից երկու շաբաթ հետո:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Վարագա ս. Խաչի տոնի զուտ հայկական լինելը:

-Ս. Խաչի մասունքի պատմությունը:

-Վարագա ս. Խաչի գտնվելու վայրի մասին ճգնավորներին հայտնվելու պատմությունը:

-Վարագա ս. Խաչի՝ տարբեր հանգամանքների բերումով տարբեր տեղերում պահվելը:

ԱՄՓՈՓՈՒՄ Ս. ԽԱՉԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՏՈՆԵՐԻ

♦ ՍՈՒՐԲ ԽԱՉ: Ս. Խաչին նվիրված տոները ոչ միայն հիշատակություններն են պատմական դեպքերի, այլ նա– քրիստոնեական կյանքի բարոյական թելադրանքներ են: Քրիստոնյայի համար Խաչը՝ լվացված Քրիստոսի անարատ արյունով, նույնացել է Տիրոջ հետ – ճանապարհին է փրկության: Ընթանալ Խաչի՝ փրկության ճանապարհով նշանակում է առաջնորդվել Ավետարանի Խոսքով, հանձնառու լինել զոհողությունների՝ հանուն քրիստոնեական սկզբունքների, պատվիրանների ու պահանջների, որոնք ի զորու են մաքրելու մարդու հոգին, հոգ–որ նոր ծնունդ տալու նրան – վերափոխելու հասարակական կյանքը, քանզի բխում են Աստծու՝ մարդու հանդեպ սիրուց – առաջադրում մարդկանց՝ միմյանց հանդեպ սեր: «Մտե՛ք նեղ դռնով. ինչքա՛ն լայն է դուռը – ընդարձակ՝ ճանապարհը, որ դեպի կորուստ է տանում, – բազմաթիվ են նրանք, որ մտնում են դրանով: Ինչքա՛ն անձուկ է դուռը – նեղ՝ ճանապարհը, որ տանում է դեպի կյանք, – սակավաթիվ են նրանք, որ գտնում են այն» (Մատթ., Է, 13-14, Ղուկ., ԺԳ(13), 24): Տիրոջ պատվիրանների այս ըմբռնումով յուրաքանչյուր քրիստոնյա մի խաչակիր է՝ պատրաստ կրելու Խաչի –՛ դժվարությունը, –՛ քաղցրությունը: Քրիստոնեական կյանքով ապրելը պահանջում է մեծ առաքինություն, ջանք, համբերություն – քաջություն, որոնց համադրությունը խաչի բարոյական իմաստն է: Եվ մարդը պարտավոր է սիրահոժար կրել իր ուսերին դրված մեծ ու փոքր խաչերը՝ այն բոլոր պարտականություններն ու հոգսերը, որոնք հանդիպում են կյանքի ընթացքում: Մերժել դրանք, նշանակում է դասալքել խաչակրությունից՝ հավատի «բարի պատերազմից» (Ա Տիմ., Ա, 18): Եվ ինչպես Հեղինեն գտավ Քրիստոսի ս.

Խաչը, այնպես էլ ամեն քրիստոնյա պարտավոր է գտնել իր խաչը, արիությամբ ու հաղթականորեն վեր բարձրացնել, պայծառ ու լուսավոր պահել այն՝ միշտ մնալով հպարտ ու խանդավառ՝ խաչ ունենալու համար: Այս գիտակցությամբ իր պատմության ողջ ընթացքը ուղենշած հայ ժողովուրդն էլ գտել ու կրել է իր խաչը, հպարտորեն վեր բարձրացրել ու պայծառ պահել՝ բազում անգամներ պատերազմելով ու նահատակվելով՝ ամուր պահած իր դավանությունը Քրիստոսին – խաչակից Նրան Հարությամբ: «Բազմիցս խաչվելով չէ, որ խաչակից ենք Քրիստոսին, այլ՝ որովհետ– հարություն ենք առել, մահը կյանքով ենք ոտնակոխել – Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի օրինակով ամոթապարտ թողել մեզ խաչողներին» (Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս, 24 ապրիլի, 2001 թ., Տեր Զորում խոսված քարոզից): Պատահական չէ, որ մեր ժողովուրդը խաչը պատկերում է հարուցյալ՝ ծաղկած՝ ի նշան նրա կենդանի ու կենդանարար զորության: «Կորստյան մատնվածների համար խաչի քարոզությունը հիմարություն է, իսկ մեզ՝ փրկվածներիս համար՝ Աստծու զորություն» (Ա Կորնթ., Ա, 18): Գողգոթայի Խաչով սկսված փրկագործությունը նույն Խաչով էլ պիտի ավարտվի աշխարհի վերջում, երբ Տիրոջ նշանը՝ Խաչը, վերջին անգամ ե-ր–ա, – տեսնեն Մարդու Որդուն, Ով գալու է զորությամբ ու բազում փառքով (Մատթ., ԻԴ(24), 30):

Անկախության տոն

*1988 թ. Հայաստանում սկիզբ առած Արցախյան շարժումը, որը նպատակաուղղված էր ազգային իղձերի ու շահերի իրականացմանը – տոգորված էր սոցիալական արդարության ու մարդասիրական գաղափար-*

*ներով, խորհրդային իշխանությունների կողմից հակադարձվեց բռնություններով: ԽՍՀՄ կոմունիստական վարչակարգի կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող ահաբեկչական քաղաքականությունը, Արցախի խնդրի արդարացի – խաղաղ կարգավորումից նրա հրաժարվելը, Ադրբեջանի տարածքում կազմակերպված հայ բնակչության արյունալի ջարդերը – բռնագաղթը, Հայաստանի – Լեռնային Ղարաբաղի պարբերական շրջափակումները, հասարակական-քաղաքական – սոցիալ-տնտեսական կյանքի բնագավառներում իրականացվող անշրջահայաց քաղաքականությունը հայ ժողովրդին հանգեցրին քաղաքական կյանքում արմատական փոփոխություններ կատարելու գաղափարին: Այսպիսի պայմաններում 1990 թ. մայիսի 20-ին Հայաստանում 70 տարվա մեջ առաջին անգամ անցկացվում են Գերագույն խորհրդի պատգամավորների այլընտրանքային ընտրություններ, որոնց մասնակցում էր նա– Արցախի հայ բնակչությունը: Հիմնական պայքարն ընթանում էր Հայոց համազգային շարժման – Հայաստանի կոմունիստական կուսակցության միջ–: Օգոստոսի 4-ին նորընտիր խորհրդարանը նախագահ է ընտրում ՀՀՇ վարչության նախագահ Լ–ոն Տեր-Պետրոսյանին, ինչով – վերջ է դրվում Հայաստանում կոմունիստական կուսակցության 70-ամյա միայնակ իշխանությանը: Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ են լինում ազգային անկախ պետականության կերտմանը: 1990 թ. օգոստոսի 23-ին ՀՀ ԳԽ-ն ընդունում է «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, որն ինքնիշխան պետություն է, – հռչակվում է անկախ պետականության*

*հաստատման գործընթացի սկիզբը: Անկախության Հռչակագիրը Հայաստանի պատմության նոր ժամանակաշրջանի սահմանագիծ հանդիսացավ: Հռչակագրով ընդգծվում էր ՀՀ օրենքների գերակայությունը ԽՍՀՄ օրենքների նկատմամբ, նշվում էր, որ երկրի տնտեսության հիմքում պետք է ընկած լինեն մասնավոր սեփականատիրական - ազատ շուկայական հարաբերությունները, հատուկ կետով արձանագրվում էր, որ Հայաստանը պետք է ունենա իր մասնաբաժինը ԽՍՀՄ զինված ուժերի միջոցներից, պետական լեզու էր հայտարարվում հայերենը, արտոնվում էր մարդու իրավունքների հարգում, խղճի, կուսակցությունների, ժողովների, մամուլի ազատություն: Անկախության Հռչակագիրը ծառայելու էր իբր- ծրագրային փաստաթուղթ մինչ- նոր Սահմանադրության ընդունումը:*

*Հանրապետության Գերագույն խորհուրդը կարճ ժամանակամիջոցում մի շարք որոշումներ է ընդունում երկրում տնտեսական հարաբերությունները կարգավորելու, պետությունը ճգնաժամից դուրս բերելու, սեփական շուկայական տնտեսական համակարգ ստեղծելու ուղղությամբ, մասնավորապես պետության բոլոր հիմնարկների, ձեռնարկությունների, կազմակերպությունների - միավորումների սեփականությունը հայտարարում է Հայաստանի սեփականություն, ինչպես նաև 1991 թ. հունվարի 29-ին ընդունում է հողի մասնավոր սեփականության մասին օրենքը: Միաժամանակ 1990 թ. նոյեմբերին որոշում է ընդունվում հանրապետության պետական մարմինները, հիմնարկ-ձեռնարկությունները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու մասին, նաև- «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օ-*

*րենքով Հայաստանում ստեղծվում է բազմակուսակցական համակարգ: Այդ ընթացքում Արցախում ծավալված զանգվածային բռնությունների ալիքն իր գագաթնակետին է հասնում 1991 թ. ապրիլ-մայիս ամիսներին, երբ Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի բնակչությանը տեղահանելու նպատակով խորհրդային զորքերի ու ադրբեջանական օմոնականների կողմից իրականացվում է «Օղակ» օպերացիան: Գետաշենից ու Մարտունաշենից հետո Ադրբեջանի իշխանությունները, կենտրոնական իշխանությունների ակտիվ աջակցությամբ, փորձում են ողջ Արցախի տարածքը բռնի ուժով հայաթափել, սակայն հանդիպում են հայ բնակչության համառ դիմադրությանը: Փաստորեն, 1991 թ. մայիս-հունիսից Արցախում հայ-ադրբեջանական ազգամիջյան իսկական պատերազմ է սկսվում, որը տարածվելով՝ ընդհուպ մոտենում է Հայաստանի սահմաններին: Հանրապետության սահմանամերձ գյուղերը անընդհատ գնդակոծվում – հրետակոծվում էին խորհրդային զորքերի – ադրբեջանական օմոնականների կողմից, որոնք հաճախ ներխուժում էին նա– հայկական գյուղեր, սպանում ու կողոպտում տեղի բնակչությանը: Հայաստանի նկատմամբ իրականացվող նման ահաբեկչական քաղաքականությունը ուներ նա– Խորհրդային Միությունը ամեն գնով պահպանելու, դրա փլուզումը կանխելու նպատակ: 1991 թ. մարտի 17-ին անցկացված ԽՍՀՄ պահպանման վերաբերյալ հանրաքվեին Հայաստանը, որպես անկախացման գործընթաց սկսած պետություն, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, Մոլդովայի – Վրաստանի հետ չի մասնակցում՝ նույն թվականի սեպտեմբերի 21-ին, ելնելով անկախության Հռչակագրի դրույթներից, անցկացնելով սեփական հանրաքվե՝ «Համաձա՞յն եք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի*

*անկախ ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ կազմից դուրս» հարցով: Շուրջ 2 միլիոն 43 հազար մարդ, քվեարկության իրավունք ունեցողների 94,39 տոկոսը, «այո» է պատասխանում անկախությանը՝ իրականություն դարձնելով հայ ժողովրդի բազմաթիվ սերունդների դարավոր երազանքը. 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակում է անկախ պետություն: Դեկտեմբերի 8-ին Բելառուսի մայրաքաղաք Մինսկի մոտ՝ Բելովեժսկ բնակավայրում Ռուսաստանը, Ուկրաինան - Բելառուսը ստորագրում են համաձայնագիր ԽՍՀՄ գոյության դադարեցման - միջազգային համագործակցության նոր սուբյեկտի՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին, որին կարող էին միանալ նա- նշված համաձայնագրի դրույթներն ընդունող այլ պետություններ: Դեկտեմբերի 21-ին Ղազախստանի մայրաքաղաք Ալմա-Աթայում 11 ինքնիշխան պետություններ՝ Ռուսաստանը, Ուկրաինան, Բելառուսը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Ղրղզստանը, Թուրքմենստանը, Մոլդովան, Հայաստանը - Ադրբեջանը ստորագրում են ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագիրը, ինչով - վերջ է դրվում ԽՍՀՄ պետության գոյությանը: Սկսվում է Հայաստանի Հանրապետության միջազգային ճանաչումը, 1992 թ. մարտի 2-ին Հայաստանը դառնում է Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) անդամ:*

*Հայ ժողովրդի պատմության բոլոր ժամանակներում իր ժողովրդի դժվարություններն ու ուրախությունները, պարտություններն ու հաղթանակները, կորուստներն ու ձեռքբերումները կիսել - մշտապես նրա կողքին է եղել, նրա ազատագրական պայքարը շատ դեպքերում նա- կազմակերպել, առաջնորդել ու գլխավորել է*

*ազգապահպանության դժվարին գործն իր ուսերին առած Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: 1988 թվականին Արցախյան շարժումով սկսված ազատագրական պայքարի նոր վերելքի ժամանակ նույնպես նա աներկբա իր ժողովրդի կողքին էր՝ ոգ-որելով, բարոյապես - նյութապես աջակցելով, ինչպես նա-՝ առաջինը ողջունելով հայոց նորանկախ պետության հռչակումը: Անկախության Հռչակագրով Հայաստանի անկախ պետականության գործընթացը սկսելու մասին հայտարարությունը 1991 փետրվարի 14-ի Հայրապետական կոնդակով ողջունում - օրհնում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը՝ գրելով. «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին օրհնում է այս հռչակումը, նրանում տեսնելով իրականացումը իր հավատամքի ու ամրապնդումը իր պատմական առաքելության, վասնզի նա իր ժողովրդի հոգ-որ ու ազգային ապրումներով լի երազանքներով է կազմավորել իր մարմինն ու հոգին, քրիստոնեական տիեզերականը ստեղծագործորեն բյուրեղացնելով իր ազգի սահմաններում, դառնալով ազգային Եկեղեցի Ար-ելքի քրիստոնյա ուղղափառ եկեղեցիների մեծ ընտանիքում («Էջմիածին», 1991, Ա-Բ-Գ, էջ 28-30): Վազգեն Ա կաթողիկոսի հրամանով Անկախության տոնի առիթով ամեն տարի հայոց բոլոր եկեղեցիներում ս. Պատարագի ընթացքում կատարվում է գոհաբանական մաղթանք:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-1988 թ. Արցախյան շարժման սկիզբը, խորհրդային իշխանությունների անհանդուրժողական դիրքը, նրանց - ադրբեջանական իշխանությունների համատեղ ուժերով Արցախը հայաթափելու քաղաքականությունը, Հայաստանի շրջափակումը, բռնագաղթը, ռազ-

մական գործողությունները Արցախում – Հայաստանի սահմաններում:

-Քաղաքական կյանքում արմատական փոփոխություններ կատարելու գաղափարի հասունացումը Հայաստանում: 1990 թ. մայիսի 20-ի Գերագույն խորհրդի ընտրությունները, Հայոց համազգային շարժման հաղթանակն ընտրություններում, Կոմկուսի միանձնյա իշխանության վերջը:

-1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության Հռչակագիրը: Անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, կրթական հաստատությունների, հիմնարկ-ձեռնարկությունների ապաքաղաքականացումը, հողի – հիմնարկ-ձեռնարկությունների սեփականաշնորհման գործընթացի, բազմակուսակցական համակարգի հաստատման սկիզբը:

-Ռազմական գործողությունների ուժեղացումը Արցախում – Հայաստանի սահմաններում: 1991 թ. մարտի 17-ի՝ ԽՍՀՄ պահպանման մասին հանրաքվեին Հայաստանի չմասնակցելը, 1991 թ. սեպտեմբերի 21-ին սեփական՝ անկախության մասին հանրաքվեի անցկացումը: Սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհրդի հռչակումը Հայաստանի անկախ պետականության մասին:

-Բելովեժսկի համաձայնագիրը, ԽՍՀՄ փլուզումը, ԱՊՀ ստեղծումը:

-Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի կոնդակը Անկախության Հռչակագրի ընդունման առիթով:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Սեպտեմբերի 21-ի հանրաքվեով ազգային անկախ պետություն ունենալու հայ ժողովրդի երազանքը իրականություն դարձավ: Այն նվաճվեց բազում հայրե-

նասեր հայորդիների արյան, մեծ կորուստների, զրկանքների ու զոհողությունների շնորհիվ, սակայն Ավարայրում ու Սարդարապատում հղկված հայոց անկուն կամքը, Վարդանանց մեզ ժառանգած անկոտրում ու հայրենասեր ոգին հայ ժողովրդի դարավոր պայքարը պսակեցին ազգային անկախության ըղձալի թագով: Սկսելով 1988 թ. փետրվարյան ազգային ազատագրական շարժումով՝ 1991 թ. հայ ժողովուրդը ավելի քան 70-ամյա ընդմիջումից հետո վերստին հռչակեց իր անկախ պետականությունը՝ արժանի տեղ զբաղեցնելով միջազգային հանրության շարքերում:

ՀՈԿՏԵՄԲԵՐ

## Սուրբ Թարգմանիչներ

*Սուրբ Թարգմանիչներին նվիրված տոնը Հայ Առաքելական Ս. Եկեղեցու մեծ տոնախմբություններից է: Այդ օրը ոգեկոչում ենք ս. Սահակ Պարթ- Հայրապետի - ս. Մեսրոպ Մաշտոցի, նրանց աշակերտների, Եղիշեի, Մովսես Քերթողի, Դավիթ Անհաղթի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Կլայեցու հիշատակը, արժ-որում նրանց հավատավոր ու առաքինասեր կյանքի օրինակը, թողած վաստակը - հաստատում այդ ամենին մեր հավատարմությունը:*

*«Թարգմանիչ» են անվանվել ս. Սահակ Պարթ-ը, ս. Մեսրոպ Մաշտոցը, նրանց անմիջապես աշակերտած շուրջ 100 սաները, ինչպես նա- նրանց աշակերտների աշակերտները, ովքեր կոչվել են «կրտսեր թարգմանիչներ»:*

*«Թարգմանիչ» նշանակել է նա- մեկնիչ, բացատրող:*

*Աստվածփնտրումի ու աստվածճանաչողության անվախճան ճանապարհին հայ ժողովուրդը աստվածային նախախնամությամբ ստացավ մեսրոպատառ գրերը, որոնք սկիզբ դրեցին մշակութային հզոր մի ընթացքի, հոգ-որ ամբողջականություն ու յուրահատկություն բերեցին մի ժողովրդի, որը երկատված հայր-ան երկու պետությունների՝ Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջ-, կանգնած էր ձուլվելու - կորչելու վտանգի առջ-՝ մանավանդ շուտով կորցնելով նա- կիսանկախ ազգային պետականությունը: Այս իմաստով քիչ է ասել, թե գրերի գյուտը կատարվեց հայ ժողովրդի պատմության վճռական պահին: Այն աստվածային*

*շնորհ եղավ մեզ ազգապահպան իր նշանակությամբ: Ս. Մեսրոպ Մաշտոցը – ս. Սահակ Հայրապետը հայոց Վռամշապուհ թագավորի աջակցությամբ հայ ժողովրդին զինեցին ապրելու ամենահաղթ ու անպարտ զենքով՝ լուսավորությամբ, որպեսզի հայոց զավակները տեսնեն ու ճանաչեն Աստծուն, սիրեն ու հավատարիմ լինեն ու կյանք ունենան: Քրիստոնեությունը խոսեց հայերեն, հիմք դրվեց հայ դպրությանը, զարգացավ հայ քրիստոսաբույր մշակույթը, իր դրս–որման մեջ հաստատվեց հայ ինքնությունն ու դիմագիծը: Հայ հոգ-որ-մշակութային կյանքը դարձավ անտեսանելի այն ոգեղեն զմբեթը, որը հանդերձի պես իջավ հայ կյանքին, պահեց ու պահպանեց իրեն ստեղծող ժողովրդին: Ս. Թարգմանիչները թարգմանական – ինքնուրույն հայ գրականության միջոցով նա– շարունակեցին գրերի գյուտով սկսված ազգայնացման գործընթացը, որի ընթացքն այլ–ս անկասելի էր:*

*Եդեսիայում գտնելով հայկական տառերը – Սամոսատում դրանք նշանագրելով՝ ս. Մեսրոպ Մաշտոցը հենց այստեղ էլ իր աշակերտների՝ Հովսեփ Պաղնացու – Հովհան Եկեղեցացու հետ առաջին փորձն է անում թարգմանության: Թարգմանված առաջին նախադասությունը Առակաց գրքից էր. «Ճանաչել զիմաստութիւն – զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Սա նա– առաջին հայ Ուսուցչի առաջին գրավոր պատգամն է իր աշակերտներին ու սերունդներին. Իմաստությունը Քրիստոսն է, հանճարի խոսքը՝ Սուրբ Գիրքը:*

*Ս. Սահակը – ս. Մեսրոպ Մաշտոցն ամենուր հիմնում են հայալեզու դպրոցներ, կրթում – պատրաստում թարգմանիչների հզոր մի բանակ, ովքեր մեծ եռանդով լծվում են Աստվածաշունչը հայերեն թարգմանելու սուրբ գործին, ինչպես նա– թարգմանում են մեծ մտա-*

*ծողների լավագույն գործերը՝ միաժամանակ գրելով ինքնուրույն աշխատանքներ: Եփեսոսի երրորդ տիեզերական ժողովի կանոնների հետ ս. Սահակի – ս. Մեսրոպ Մաշտոցի աշակերտները՝ Եզնիկ Կողբացին, Ղ-ոնդ Երեցը, Կորյունը, Հովսեփ Պաղնացին, Հայաստան են բերում նա- Աստվածաշնչի հունարեն Յոթանասնից թարգմանության ստուգված օրինակներից մեկը: Ս. Սահակ Պարթ-ը – ս. Մեսրոպ Մաշտոցը սկսում են Աստվածաշնչի՝ մինչ այդ ասորական բնագրից կատարած «Փութանակի» կոչվող հայերեն թարգմանության համեմատումը բերված հունարեն բնագրի հետ ու վերջնական խմբագրում այն՝ փաստորեն կատարելով Սուրբ Գրքի երկրորդ թարգմանությունը, որը դասական հայերենի մաքրության ու գեղեցկության չափանիշ է – համարվում է թարգմանությունների թագուհի:*

*Ս. Թարգմանիչների՝ սկզբից -եթ արգասավոր գործունեությամբ սկիզբ առավ հայ թարգմանական – ինքնուրույն գրական ժառանգությունը՝ քննելով իմաստասիրության, պատմության, բնագիտության, մարդկային հոգու – տիեզերքի խորքերը: Սակայն ս. Թարգմանիչների մեծագույն ձգտումը, նրանց կյանքի իմաստն ու առաքելությունը – նրանց գործի մեծությունը դեպի Աստված հարազատ ժողովրդի ընթացքը հաստատուն ու անվթար պահելն էր: Սրանում է ս. Թարգմանիչների ոգու բովանդակությունն ու հաղթանակող ուժը, որը փոխանցվեց հայ կյանքի բոլոր անդաստաններին:*

*Ս. Թարգմանիչների սուրբ ու նվիրական հիշատակը ոգեկոչելով՝ ձգտում ենք արթուն պահել նրանց արարող ոգին մեր կյանքում – խնդրել նրանց բարեխոսությունը՝ «լինել – մեզ Ձեզ պսակակից»:*

*Սուրբ Թարգմանիչներին նվիրված տոնը նշվում է հոկտեմբերի 3-ից նոյեմբերի 7-ը՝ երկրորդ շաբաթ օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ովքեր են սուրբ Թարգմանիչները:

-Գրերի գյուտի նշանակությունը հայ ժողովրդի համար:

-Հայերեն թարգմանության առաջին փորձերը:

-Հայալեզու դպրոցների հիմնումը – թարգմանիչների հզոր բանակի ստեղծումը:

-Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Հայ գրերի գյուտից հետո սկբնավորված թարգմանչաց հզոր շարժումը, որպես առաջին խնդիր՝ Աստվածաշունչը հայերեն թարգմանելով, հայացրեց եկեղեցական ծեսը, հայալեզու քրիստոնեական գրականություն տարածելու – հայոց դպրություն սկզբնավորելու միջոցով ոչ միայն նպաստեց Հայաստանի հոգ-որմշակութային վերածննդին, այլ– ապահովեց նրա կրոնական, մշակութային ու գաղափարաքաղաքական անկախությունը: Հայալեզու թարգմանական գրականությունը, վերացնելով հանդերձ հունարենի ու ասորերենի գերիշխանությունը, թուլացրել ու չեզոքացրել է նա– հունական ու ասորական Եկեղեցիների ազդեցությունը, ինչպես նա–՝ Հայաստանը պատնեշել այդ Եկեղեցիների թիկունքին կանգնած պետությունների գաղափարական ու քաղաքական հավակնություններից: Աստվածաշնչի հայերեն թարգմանությունն ու հայերեն գրականության ստեղծումը հզոր պայման էր նա– եր-

կու մասի բաժանված Հայաստանի հատվածները հոգ–որ-մշակութային միասնությամբ զոդելու:

Թարգմանական շարժումը շարունակվել է նահետագա բոլոր դարերում՝ իր սկզբնավորումից ի վեր խթանելով գիտությունը, կրթությունն ու լուսավորությունը: Հին հայկական թարգմանությունների շնորհիվ պահպանվել են համաշխարհային գրականության ու գիտության բազմաթիվ գրական հուշարձաններ, որոնց բնագրերը կորել են:

Սուրբ թարգմանիչների տոնն առավել առանձնանում է հայ հոգու արտահայտման ու ինքնաճանաչման յուրահատկությամբ, իմացության ձգտումի փառաբանության մեծ խորհրդով: Սուրբ թարգմանիչներին է ձոնված Վարդան Ար–ելցու «Որք զարդարեցին» շարականը: Հայոց մեջ ս. Թարգմանչաց նվիրված – նրանց անունով բազմաթիվ եկեղեցիներ, վանքեր ու կրթական հաստատություններ են հայտնի:

1979 թվականից սկսած, Հայաստանի գրողների միության նախաձեռնությամբ, երկու տարին մեկ նշվում է Թարգմանչաց տոնը՝ որպես համաժողովրդական նշանակություն ունեցող իրադարձություն:

## ՆՈՅԵՄԲԵՐ

### Սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալներ

*Քրիստոսի Համբարձումից հետո Նրա առաքյալները մեկնեցին տարբեր երկրներ՝ քարոզելու Հարուցյալ Աստծուն*[75]*: Անմիջապես Քրիստոսից՝ Մարդացյալ Աստծուց ստացած իշխանությամբ առաքյալները տարբեր երկրներում կազմակերպեցին քրիստոնեական համայնքներ, հիմնեցին եպիսկոպոսական աթոռներ: Նույն կերպ – Հայաստանում առաջին եպիսկոպոսական աթոռների հաստատմամբ ս. Թադեոս – ս. Բարդուղիմեոս առաքյալները հիմնեցին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին*[76]*:*

*Ս. ԹԱԴԵՈՍԸ հայոց առաջին լուսավորիչն է: Ղուկասի Ավետարանում (Ղուկ., Զ, 16) – Գործք առաքելոցում (Գործք, Ա, 13) նա հայտնի է որպես Հուդա Հակոբյան: Հովհաննեսի Ավետարանում հիշվում է որպես «Հուդա (ոչ Իսկարիովտացի)» (Հովհ., ԺԴ(14), 22), իսկ Մատթեոս ավետարանիչը նրան անվանում է «Ղեբեոս, որ անվանվեց Թադեոս» (Մատթ., Ժ, 3): Մարկոս ավետարանիչը նրան կոչում է Թադեոս (Մարկ., Գ, 18): Կաթոլիկ Եկեղեցին նրան նույնացնում է Հուդա Տյառնեղ-*

---

[75] Կանոնագիրք Հայոց, Սահմանք և կանոնք զոր եդին աշակերտքն Քրիստոսի Եկեղեցւոյ սրբոյ յետ վերանալոյ Տեառն, ԼԴ, 1964, հ. Ա, էջ 49-66:

[76] Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը իրավացիորեն ընդունում է, որ բացի այս երկու առաքյալներից Հայաստան են այցելել նաև Թովմաս, Շմավոն (կամ Սիմոն), Հովհաննես, Պետրոս, Մատաթիա առաքյալները (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 16):

*բոր հետ, սակայն ար-եւյան եկեղեցիները չեն ընդունում այս տեսակետը:*

*Ս. Թադեոս առաքյալի մասին հիշատակում է Փավստոս Բուզանդը՝ իր պատմությունն անմիջապես սկսելով. «Թադեոս առաքյալի քարոզությունից ու նրա մարտիրոսական վախճանից մինչ- Գրիգորի վարդապետության վերջն ու նրա վախճանը, - առաքելասպան Սանատրուկ թագավորից մինչ- Տրդատ թագավորի ակամա հնազանդելը (քրիստոնեական) կրոնին ու նրա վախճանը... բոլորը ուրիշների կողմից արդեն գրված են»[77]:*

*Լաբուբնայի անունով հայտնի է Աղդեի (Թադեոսի) վարդապետության ընդարձակ պատմությունը, համաձայն որի՝ առաքյալը Քրիստոսի Համբարձումից հետո գալիս է Եդեսիա, բժշկում Եդեսիայի հայ թագավոր Աբգարին, ապա քարոզում ու մկրտում ժողովրդին, կերպասագործ Ագգեոսին ձեռնադրում իրեն հաջորդ - տարիներ անց վախճանվում ու թաղվում Եդեսիայում: Նույն բնագրի հայերեն ոսկեդարյան թարգմանության մեջ ասվում է. որ ս. Թադեոսը Եդեսիայից գնում է Ար-ելք՝ շարունակելու Ավետարանի քարոզությունը: Ղերուբնայի (Լաբուբնա) - նրա գրվածքի մասին հիշատակում է Մովսես Խորենացին[78], որից օգտվել են ինքը ու Եվսեբիոս Կեսարացին:*

*Խորենացին - հայկական մյուս աղբյուրները միաբերան վկայում են, որ Թադեոս առաքյալը բացի Եդեսիայից Ավետարանի լույսը տարածել է նա- Հայաստանի այլ բնակավայրերում, քրիստոնյա դարձրել բազմաթիվ հայերի, նա-՝ Սանդուխտ արքայադստերը - նահատակվել Արտազ գավառի Շավարշան գյուղաքաղա-*

[77] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 13:
[78] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 103:

*քում7[79]: Նույնն է վկայում նա- Սամուել եպիսկոպոսի կողմից թարգմանված Թադեոս առաքյալի վկայաբանությունը[80]: Նրա նահատակության վայրում հետագայում կառուցվում է Ս. Թադեի վանքը:*

*Հայաստանում ս. Թադեոսի հիմնած աթոռներից է Արտազի աթոռը, որի եպիսկոպոսների հաջորդական ցանկը պահպանվել է 1330 թ. Արտազի արքեպիսկոպոս Զաքարիա Ծործորեցու կազմած գավազանագրքում, որտեղ մեջբերված է Հովհաննես գրչագրի՝ 7-րդ դարում (649 թ.) պատրաստած Արտազի աթոռի գավազանագիրքը[81]: Համաձայն վկայագրի՝ ս. Թադեոսը Շավարշավանում եպիսկոպոս է ձեռնադրել Զաքարիային, ում նահատակությունից հետո հիշատակվում են Զեմենտոս, Ատրներսեհ, Մուշե, Շահեն, Շավարշ, Ղ-ոնդիոս եպիսկոպոսները: Հայոց ավանդությունը վկայում է, որ ս. Թադեոս առաքյալը եպիսկոպոսական աթոռ է հիմնել նա- Սյունիքում՝ ձեռնադրելով Եվստաթեոսին, ում անունով էլ մեկնաբանվում է Տաթ-ի վանքի անունը, ինչպես - նրա կողմից Արցախում ձեռնադրված Դադիի անունից՝ Դադիվանքը:*

*Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ առաքյալը Ավետարանում հիշվում է որպես Քրիստոսի 12 առաքյալներից մեկը, ում մասին մեր Տերն Ինքն ասաց. «Ահա արդար- իսրայելացի, որի մեջ չկա նենգություն» (Հովհ., Ա, 47), - նա առաջինը Հիսուսին անվանեց Աստծու Որդի (Հովհ., Ա, 49) ու կոչվեց Նախադավան: Նրա՝ Հայաստանում քարոզելու մասին Խորենացին շատ համառոտ է խոսում.*

---

[79] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 97, 101:

[80] Սոփերք հայկականք, հաւաքածոյ մանր մատենագրութեանց նախնեաց, Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն քարոզութեանն և գալստեան ի Հայս և կատարմանն որ ի Քրիստոս, Ը, էջ 9-58:

[81] Արտազի աթոռի գաւազանագիրքը, «Արարատ», 1868, էջ 102-104:

*«Բայց հայերին վիճակվեց նա- Բարդուղիմեոս առաքյալը, որ նահատակվեց մեզ մոտ Արեբանոս քաղաքում»[82]: Ստեփանոս Օրբելյանը, շարադրելով Սյունիքի պատմությունը, նշում է, որ «հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով»[83]: 5-րդ դարում գրի առնված ս. Բարդուղիմեոսի վկայաբանության[84] համաձայն՝ առաքյալը սկզբում քարոզել է Պարսկաստանում՝ մինչ- Հնդկաստան, այնուհետ- անցել «Թադեի վիճակ»՝ Հայաստան, քարոզել նրա տարբեր վայրերում, Արտաշատ բլրի վրա հանդիպել ս. Թադեոս առաքյալին - նրա հետ մի գիշեր անցկացրել այնտեղ: Ժողովուրդն այդ վայրն անվանել է Օթյաց Խաչ: Այստեղից ս. Թադեոսն անցնում է Արտազ, իսկ ս. Բարդուղիմեոսը՝ Հեր - Զար-անդ գավառներ, Անձ-ացյաց գավառ, այնուհետ- Աղբակ, որտեղ նրա քարոզությունը լսում - քրիստոնյա են մկրտվում նա- Սանատրուկ թագավորի քույրը՝ Ոգուհին ու Տերենտիոս հազարապետը: Թագավորի հրամանով առաքյալը նահատակվում է փշոտ մահակների հարվածներից: Բարդուղիմեոս առաքյալի՝ Հայաստանում քարոզելու ու նա-*

[82] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 101: Մեկ այլ տեղում (Աստվածամոր պատկերի պատմությունը, Թուղթ առ Սահակ Արծրունի, Սրբոյ հօրն մերոյ Մովսեսի Խորենացւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, Ս. Ղազար, 1865, էջ 295) Խորենացին Բարդուղիմեոս առաքյալի նահատակության վայրն անվանում է Ուրբանոս: Օտար հեղինակներն այն կոչում են Ալբանոս, որն Օրմանյանը նույնացնում է Աղբակի հետ, որտեղ և, ըստ ազգային ավանդության, գտնվում է առաքյալի գերեզմանը (Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 15):

[83] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 76-77:

[84] Սոփերք հայկականք, հաւաքածոյ մանր մատենագրութեանց նախնեաց, Վկայութիւն սրբոյ առաքելոյն Բարդողոմեոսի, ԺԹ, էջ 5-30:

*հատակվելու հարցում համամիտ են նա- մյուս եկեղեցիների ավանդությունները՝ տարբերվելով լոկ նահատակության ծ-ի հարցում: Վասպուրականում՝ Աղբակում, հայտնի է ս. Բարդուղիմեոսի անունով վանք՝ կառուցված նրա գերեզմանի վրա:*

*Ստեփանոս Օրբելյանի տեղեկությամբ՝ Բարդուղիմեոս առաքյալը եպիսկոպոսական աթոռ է հիմնել Գողթնում՝ այստեղ ձեռնադրելով Կումսիին[85]:*

*Այսպիսով, առաքյալների քարոզության արդյունքում Հայաստանում առաջ եկան քրիստոնեական համայնքներ - եպիսկոպոսական աթոռներ, ծնունդ առավ Հայ Եկեղեցին, որն ապագայում՝ քրիստոնեության պաշտոնական ճանաչումից հետո, վարչական-կազմակերպական նոր ընթացք ունեցավ՝ շարունակելով զգալ իր առաքելահաստատ էությունը - իրավամբ կրելով «Առաքելական» անունը:*

*Իբր- Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հիմնադիրներ՝ ս. Թադեոսին - ս. Բարդուղիմեոսին նվիրվել են բազմաթիվ ճառեր, գանձեր, տաղեր, աղոթքներ: Նրանք իրենց տեղն են զբաղեցրել նա- հայ միջնադարյան կերպարվեստում: Ս. Թադեոսը սովորաբար պատկերվել է մի ձեռքին դաշույն, որը խորհրդանշում է դրանով սպանված լինելը, իսկ մյուս ձեռքում՝ Հիսուսի կողը խոցած գեղարդը, որն, ըստ ավանդության, սուրբն իր հետ բերել է Հայաստան: Այն սկզբում պահվել է Այրիվանքում, որի պատճառով - հետագայում վանքը կոչվել է Ս. Գեղարդ, իսկ այժմ պահվում է Ս. Էջմիածնում:*

*Ս. Բարդուղիմեոսը հայ կերպարվեստում պատկերվել է մի ձեռքին դաշույն, որով նահատակվել է,*

[85] Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 77:

*մյուս ձեռքին՝ ս. Տիրամոր պատկերը, որն, ըստ ավանդության, իր հետ բերել է Հայաստան:*

*Ս. Բարդուղիմեոս - ս. Թադեոս առաքյալների տոնը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնում է հիսնակի առաջին կիրակիի հաջորդ շաբաթ օրը՝ նոյեմբերին կամ դեկտեմբերին:*

*Ս. Թադեոսի հիշատակը Հայ Եկեղեցին տոնում է նա- ս. Սանդուխտի հետ՝ Պայծառակերպության տոնի հաջորդ շաբաթ օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ս. Թադեոսի՝ Հայաստանում քարոզությունն ու նահատակությունը:

-Ս. Բարդուղիմեոսի՝ Հայաստանում քարոզությունն ու նահատակությունը:

-Նրանց կողմից եպիսկոպոսական Աթոռների հիմնադրումը Հայաստանում:

-Նրանց նվիրված ճառեր, գանձեր, տաղեր - կերպարվեստի գործեր:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ս. Բարդուղիմեոս - ս. Թադեոս առաքյալների տոնի խորհուրդը սրբերի հիշատակ ու նրանց բարեխոսական հայց լինելով, միաժամանակ Հայ Եկեղեցու ծննդյան հիշատակությունն ու փառաբանությունն է, մեր Սուրբ Եկեղեցու առաքելության արժ-որումը մեր կյանքում:

Ս. Թադեոսը - ս. Բարդուղիմեոսը հայ ժողովրդի առաջին ուսուցիչները եղան, - պատահական չէ, որ երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետը նրանց տոնի օրը հաստատեց որպես Կրոնի ուսուցիչների օր: Ամեն տարի այս տոնի օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

անցկացվում է կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների ամենամյա հավաք:

ԴԵԿՏԵՄԲԵՐ

## Երկրաշարժի զոհերի հիշատակի օր

*1988 թ. դեկտեմբերի 7-ին, ժամը 11.41-ին Հայաստանի հյուսիսային շրջաններում մոտ 9 բալ հզորությամբ երկրաշարժը ավերեց հանրապետության տարածքի շուրջ 40%-ը: Մի ակնթարթում ավերվեցին Լենինական (Գյումրի), Սպիտակ, Կիրովական (Վանաձոր), Ստեփանավան քաղաքները, Սպիտակի, Ամասիայի, Ստեփանավանի, Ախուրյանի, Գուգարքի, Ղուկասյանի (Աշոցք), Արագածի, Կալինինոյի շրջանների հարյուրից ավելի գյուղեր ու բնակավայրեր: Երկրաշարժին զոհ գնաց, պաշտոնական տվյալներով, շուրջ 25 հազար մարդ, ավելի քան 530 հազարը մնացին անօթ-ան: Հանրապետությունը կորցրեց իր բնակֆոնդի 17%-ը: Աղետի գոտում շարքից դուրս էին եկել ջրամատակարարման, ջերմա - էներգամատակարարման համակարգերը, կենցաղ-սպասարկման, կապի ու տրանսպորտի ծառայությունները, 170 արդյունաբերական ձեռնարկություններ ու արտադրական տեղամասեր: Գյուղատնտեսության - արդյունաբերության կրած ահռելի կորուստները հանրապետությանը պատճառեցին 13 մլրդ ռուբլուց ավելի վնաս:*

*Աղետի լուրը տարածվելով ողջ աշխարհում՝ Հայաստանի վրա բ-եռեց Սփյուռքի հայության - ընդհանրապես ողջ մարդկության ուշադրությունը: Հաջորդ օրը Եր-ան ժամանեց ԽՍՀՄ կենտկոմի քաղբյուրոյի հատուկ հանձնաժողովը՝ ԽՍՀՄ Նախարարների խորհրդի նախագահ Նիկոլայ Ռիժկովի գլխավորությամբ: Դեկտեմբերի 10-ին Հայաստան ժամանած ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Միխայիլ Գորբաչովը հայտա-*

*րարեց երկրաշարժի հետ-անքները երկու տարում վերացնելու մասին, որն այդպես էլ մնաց որպես խոստում: Արդեն իսկ երկրաշարժի հաջորդ օրերից սկսած հայ ժողովրդին օգնություն ցույց տալու նպատակով ԽՍՀՄ համարյա բոլոր հանրապետություններից ու մարզերից՝ Վրաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից, Ուզբեկստանից, Ղազախստանից, Մերձբալթյան հանրապետություններից - այլն Հայաստան ժամանեցին հազարավոր բժիշկներ, փրկարարներ, շինարարներ, տարբեր մասնագետներ - պարզապես կամավորներ, որոնք իրենց հետ բերում էին շինտեխնիկա, սննդամթերք, վրաններ, տաք հագուստ, դեղորայք, բժշկական սարքավորումներ - այլն:*

*Աղետի գոտուց էվակուացվեց շուրջ 170 հազար մարդ, ովքեր ապաստանեցին Կովկասի ծովափնյա շրջաններում, Հյուսիսային Կովկասի - Միության տարբեր վայրերի հանգստյան տներում, առողջարաններում - այլուր, հազարավոր մարդիկ բուժման նպատակով մեկնեցին նա- արտասահմանյան երկրներ: Դեպի Հայաստան էին ուղ-որվում նա- արտասահմանյան երկրներից օդանավեր, գնացքներ - ավտոմեքենաների շարասյուներ: Աշխարհի տարբեր մասերից Հայաստան էր առաքվում արյուն: Համակողմանի օգնությանը մասնակցեց աշխարհի ավելի քան 113 երկիր - 7 միջազգային կազմակերպություն: Աշխարհով մեկ սփռված սփյուռքահայությունը համախմբվեց իր հայրենիքին վերահաս դժբախտության հետ-անքները վերացնելու - աղետյալներին շուտափույթ օգնություն տրամադրելու համար: Սփյուռքահայերի նախաձեռնությամբ ստեղծվեցին «Սոս Արմենի», «Ազնավուրը Հայաստանին» - այլ կազմակերպություններ, որոնք նյութական ու բարոյական հսկայական աջակցություն էին ցույց տալիս*

*Հայաստանին, տարբեր մասնագիտությունների տեր հազարավոր սփյուռքահայեր ժամանեցին հայրենիք՝ իրենց հետ բերելով վրաններ, հագուստ, սննդամթերք, դեղորայք, տնակներ, տրանսպորտի ու կապի անհրաժեշտ միջոցներ, բժշկական – այլ սարքավորումներ – այլն: Անգնահատելի է աշխարհահռչակ երգիչ, դերասան – երգահան ֆրանսահայ Շառլ Ազնավուրի կազմակերպած օգնությունը այդ ընթացքում – հետագա դժվարին տարիներին: Նրա ազգանվեր հսկայածավալ օգնությունը Հայաստանին շարունակվում է նա– մինչ այսօր:*

*Ողջ աշխարհը անսահման գթասրտությամբ ու մարդասիրությամբ անշահախնդիր օգնություն էր ցուցաբերում ծանր կացության մեջ հայտնված հայ ժողովրդին, բոլոր երկրներում կազմակերպվում էին հանգանակություններ աղետյալներին օգնելու, երկրաշարժի վնասները վերացնելու – աղետի գոտին վերականգնելու համար: Այստեղ աշխատում էին ռուսներ, վրացիներ, ուկրաինացիներ, բելառուսներ, ուզբեկներ, ղազախներ, լիտվացիներ – Խորհրդային Միության մյուս ժողովուրդների ներկայացուցիչներ, նրանց կողքին աշխատում էին գերմանացի, ավստրիացի, ամերիկացի, ֆրանսիացի, անգլիացի, շվեյցարացի, իտալացի, նորվեգացի, լեհ, շվեդ, չեխ, արաբ – այլ ազգերի տարբեր մասնագետներ: Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա իրեն օգնության շտապող հարավսլավացի 7 օդաչուներին, ովքեր օդային աղետի հետ–անքով 1988 թ. դեկտեմբերի 12-ին զոհվեցին Եր–անի մոտակայքում: Նրանց հիշատակին այդտեղ կանգնեցվել է հուշարձան, որի վրա ամեն տարի երկրաշարժի զոհերի հիշատակը նշելիս ծաղիկներ են դրվում: Նույն կերպ – չի մոռացվում խորհրդային զինծառայողների հիշատակը, ովքեր*

*օգնություն բերելիս զոհվեցին Լենինականի մոտակայքում:*

*Միաժամանակ արտասահմանյան բազմաթիվ պետություններ ու կազմակերպություններ ընդգրկվեցին աղետի գոտու վերականգնման աշխատանքներում: Նրանք որպես նվիրատվություն Հայաստանում կառուցեցին բազմաթիվ բնակելի շենքեր ու թաղամասեր, տարբեր նպատակներով օգտագործվող շինություններ, դպրոցներ՝ իրենց ամբողջ գույքով, հիվանդանոցներ՝ բոլոր հարմարություններով ու սարքավորումներով – այլն: Այսպես՝ Սպիտակ քաղաքում 1989 թվականին իտալացի մասնագետները կառուցեցին բնակիչների կողմից Իտալական անվանված թաղամասը, նորվեգացի ժողովուրդը Սպիտակին նվիրեց հիվանդանոց, որը կրում է հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրիտյոֆ Նանսենի անունը, Լենինականում անգլիացիների կողմից կառուցվեց դպրոց, իսկ ավստրիացիները կառուցեցին 110 տնակով բնակելի թաղամաս:*

*Դարերով իր ժողովրդի կողքին, 600-ամյա ապապետականացման շրջանում նրա ճակատագրին տեր կանգնած Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ինչպես 1988-ի փետրվարից փոթորկված Արցախյան շարժման առաջին օրերից հաղորդակից էր հայոց արդար պահանջատիրությանը, այնպես էլ դեկտեմբերյան երկրաշարժի աղետալի օրերին դարձավ հույսի ջահ իր սգավոր զավակների համար: Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինը կոչով դիմեց հայ ժողովրդին Հայաստանում – Սփյուռքում, որպեսզի հոգ-որ արիությամբ ու ազգային համախմբվածությամբ, մեկ սիրտ, մեկ կամք դարձած, կազմակերպված ու ծրագրված ձ-ով յուրաքանչյուրն իր աշխատանքի ու զոհողության բաժինը բերի ամոքելու համար իր աղետ-*

*յալ ազգակիցների տառապանքը: Սուրբ Էջմիածինը դարձավ մարդասիրական ծառայության կենտրոն: Հայ Եկեղեցին իր թեմերով, ժողովրդի հետ միասին -´ Հայաստանում, -´ Սփյուռքում մեկ սիրտ, մեկ հոգի դարձած՝ ձեռնամուխ եղավ երկրաշարժի ծանր վերքերի ապաքինմանը: Ամենայն Հայոց Հայրապետի՝ ողջ աշխարհով մեկ հնչեցրած տագնապի կոչն անպատասխան չմնաց ոչ միայն Հայաստանում – հայ Սփյուռքում, այլ– քույր Եկեղեցիներում: Երկրաշարժի առաջին օրերից իսկ Մայր Աթոռի անունով սկսեցին Հայաստան գալ տարբեր երկրներից ուղարկված հազարավոր տոննաներ առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ տաք հագուստ, դեղորայք, սննդամթերք, ինչպես նա– հանգանակված գումարներ: Մայր Աթոռում Վեհափառ հայրապետի տնօրինությամբ ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ օգնությունը համակարգելու – առավել նպատակասլաց բաշխելու համար: Մայր Աթոռն իր միջոցներից նախապես տրամադրեց 500000 ռուբլի, որը հետագա նվիրաբերումների հետ միասին կազմեց 1700000 ռուբլի, մինչ– 1989 թ. հունվար ամսվա վերջ Մայր Աթոռի անունով ստացվել – աղետի գոտու շինարարությանն է տրամադրվել 495460 դոլար, 1200 տոննա առաջին անհրաժեշտության ապրանքներ 12 մեծ բեռնատարներով հասցվել են աղետի գոտու կարիքավորներին, այլ մեծաքանակ օգնություններ բաշխվել են պետական բաշխիչ մարմինների միջոցով: Օգնությունը աղետի գոտուն շարունակվեց նա– հետագայում: Հայաստանյայց Ս. Եկեղեցին իր բոլոր հնարավորություններով իր ժողովրդի կողքին էր:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-1988 թ. ավերիչ երկրաշարժը Հայաստանի հյուսիսում:

-Երկրաշարժի իսկայական ավերածությունները, մարդկային մեծ կորուստները:

-Ողջ աշխարհի օգնությունը Հայաստանին:

-Հայկական Սփյուռքը՝ իր հայրենիքի կողքին:

-Ս. Էջմիածինը՝ մարդասիրական ծառայության կենտրոն:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Հայ ժողովուրդը երախտագիտության խոր զգացումով է հիշում աշխարհի անշահախնդիր օգնությունը իր համար ծանրագույն տարիներին: Այդ իսկ պատճառով 1988 թ. դեկտեմբերի 7-ը ոչ միայն հիշատակն է ավերիչ երկրաշարժի զոհերի, այլ նա– մարդկության գթասրտության, կարեկցանքի, եղբայրասիրության ու մարդասիրության հիշատակի օրն է – մշտապես հիշեցումը մարդկային այս արժեքների անանց կար–որության:

Դարերի ծանր բեռն ու դժվարություններն իր ժողովրդի հետ կիսած, նրա ուրախություններին ու դժբախտություններին մասնակից ու նրան մշտապես սատար Հայ Եկեղեցին այս անգամ էլ իր սգակիր զավակների կողքին էր:

1988 թ. դեկտեմբերի 11-ին Մայր Տաճարում՝ ավերիչ երկրաշարժի զոհերի հիշատակին մատուցված հոգեհանգստյան ս. Պատարագին ներկա էին Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Հայրապետը – Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Երկրորդը (հետագայում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա): Վերջինս ս. Խորանին է դնում կաթողիկոս ընտրվելու առիթով իրեն

տրված ոսկե արծիվը՝ այն նվիրաբերելով աղետից տուժածներին օգնություն կազմակերպելու գործին:

Ս. Պատարագի ժամանակ ժողովրդին դիմելով՝ Վազգեն Առաջին Վեհափառ Հայրապետը ասում է. «Ուխտենք այս պահին, որ մեզանից ամեն մեկը իր կարողության չափով մեկ-մեկ ծառ տնկի Շիրակի սուրբ հողի վրա՝ որպես մեր մեռելների վրա խաչափայտ, ինչպես ժամանակին Մեծ եղեռնի առիթով ծանոթ բանաստեղծն է ասել. «Մեռելներուս իբր– խաչ՝ ես այս ծառը տնկեցի»: Ահա այս ուխտով մենք զորանանք, հավաքենք մեր ուժերը – անվախ, անտրտունջ ու համառորեն առաջ ընթանանք դեպի նոր նվաճումներ՝ մանավանդ ոգեկան իմաստով («Էջմիածին» ամսագիր, 1988, ԺԱ-ԺԲ, էջ 38):

### Սուրբ Հակոբ Մծբնացի հայրապետ

*Ս. Հակոբ Մծբնացին մեծապես սիրված ու պատվելի սրբերից է ինչպես ասորիների, այնպես էլ հայերի մեջ: Նա Նիկիայի առաջին տիեզերաժողովի մասնակից 318 հայրապետներից է –, ըստ ավանդության, մեծ հարգանք էր վայելում Կոստանդիանոս Մեծ կայսեր ու ժողովականների մոտ՝ նախանձախնդրությամբ պաշտպանելով քրիստոնեական Եկեղեցու ուղղափառությունը Արիոսի – արիոսականների մոլար դավանությունից: Անգամ պահպանվել է մի ավանդություն, համաձայն որի՝ Արիոսն իր չարաչար մահը կնքել է ս. Հակոբ Մծբնացու անեծքով:*

*Ս. Հակոբ Մծբնացին ասորի է –, ըստ հայ ավանդության, ս. Գրիգոր Լուսավորչի հորաքրոջ՝ Խոսրովուհու որդին: Մանուկ հասակից ս. Լուսավորչի հետ կրթություն է ստանում Կեսարիայում, երիտասարդ*

*տարիներից հեռանում է անապատ՝ ճգնակեցության: Ճգնավորական խստակյաց վարքով ու կյանքով, հոգեշահ քարոզներով – բազմաթիվ հրաշագործություններով ս. Հակոբի համբավը շուտով տարածվում է ժողովրդի շրջանում: Այցելելով Մծբին քաղաքի մոտակա վանքերից մեկը՝ մտերմանում է վանքի վանահայր Մարուգեի հետ, ով դառնում է նրա ուսուցիչը – մարգարեանում նրա՝ Մծբինի եպիսկոպոս ընտրվելու մասին, ինչը – շատ չանցած՝ կատարվում է: Իրապես անձնդիր հովիվ ու մեծ քարոզիչ էր իր ժողովրդի համար, ինչի շնորհիվ – մեծապես հարգվում ու պատվվում է վերջինիս կողմից: Նրա մեծանուն աշակերտներից է ս. Եփրեմ Խուրի Ասորին: Նա հայտնի է եղել իր բազմաթիվ հրաշագործություններով, որոնք կատարել է Աստծուն աղոթելով: Ըստ ավանդության՝ Մծբին քաղաքը մի քանի անգամ փրկվել է պարսկական հարձակումներից ս. Հակոբի աղոթքների ու հնարամտության շնորհիվ:*

*Ս. Հակոբ Մծբնացի հայրապետը մի քանի ուղեկիցների հետ բարձրանում է Արարատ լեռը՝ Նոյյան տապանը տեսնելու մեծ փափագով: Վերելքի դժվարին ճանապարհին նրա ուղեկիցները ծարավում են, – ս. Հակոբի աղոթքի զորությամբ մի աղբյուր է բխում: Երբ ծանր վերելքից հոգնած՝ քնում են, ս. Հակոբին հայտնվում է հրեշտակը – հայտնում, որ Աստված լսել է նրա աղոթքը, այլ–ս կարիք չկա վեր բարձրանալու, քանի որ ինքը՝ հրեշտակը, Աստծու կամքով տապանի փայտից մի մաս է բերել նրան: Արթնանալով՝ ս. Հակոբը իր գլխատակին տեսնում է տապանի փայտի կտորը, որը կարծես կացնով ճեղքված-հատված էր ինչ-որ մեծ փայտից – գոհություն հայտնելով Տիրոջը՝ վերադառնում: Ետդարձի ճանապարհին Արտամետ գյուղի մոտ կանայք, անտեսելով նրա ներկայությունը, առանց ամաչե-*

*լու շարունակում են գետում կիսամերկ լողանալ - ծաղրալից խոսքեր ուղղել նրան, ինչի պատճառով - սուրբն անիծում է նրանց ու գետը: Վերջինս անմիջապես ցամաքում է, իսկ կանանց մազերը՝ ճերմակում: Նրան վերագրվող հրաշագործությունները բազմաթիվ են: Մի գյուղում գյուղացիները, իրենցից մեկին մեռած ներկայացնելով, ցանկանում են խաբեությամբ նրանից դրամ կորզել - խնդրում են թաղման ծախսը: Սուրբը տալիս է դրամը - հեռանում, իսկ մեռած ձ-ացող գյուղացին նույն պահին մեռնում է իրականում: Նրա ընկերները սարսափած՝ զղջում - ներողություն են հայցում սրբից, - նա աղոթքով նորից վերակենդանացնում է մեռածին:*

*Ս. Հակոբի մասին ավանդություններից մեկը պատմում է նա-, որ հայազգի Մանաճիհր Ռշտունյաց իշխանը գերի է տանում շրջակայքում ապրող հոգ-որականներին - արգելափակում Մանազկերտում: Ս. Հակոբի խնդրանքներին՝ ազատել հոգ-որականներին՝ քահանաներին ու սարկավագներին, Մանաճիհրը անլուր է մնում: Սուրբն անիծում է նրան - Ռշտունյաց աշխարհը, որից հետո այստեղ սկսվում է անբերրի տարիների երկարատ- շրջան: Ս. Հակոբի մահից հետո Ռշտունյաց աշխարհի բնակիչները գալիս են Մծբին - խնդրում նրա նշխարներից՝ հուսով, որ դրանց զորությամբ կհեռացնեն երկրին հասած պատուհասը: Այդպես էլ կատարվում է. ս. Հակոբի նշխարները Ռշտունյաց աշխարհ բերելուց հետո անեծքը վերանում է այդ երկրի վրայից - հողը պտղաբերվում է: Ս. Հակոբ Մծբնացի հայրապետը թողել է ինչպես աստվածաբանական, այնպես էլ կյանքին սերտորեն կապված կրոնաբարոյախոսական ճառեր ու գրվածքներ: Նա հայոց մեջ ամենաշատ ժողովրդականություն ունեցող սրբերից է: Նրա տոնը Հայ Առաքելական Ս. Եկեղեցում հաստատվել է*

*շատ վաղ շրջանում – նշվում է հիսնակի երրորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը կամ դեկտեմբերի 12-18-ը ժամանակամիջոցում հանդիպող շաբաթ օրը:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ս. Հակոբ Մծբնացի Հայրապետի կյանքն ու գործունեությունը:

-Դեպի Արարատ լեռը վերելքը – Նոյյան տապանի մասունքը:

-Ս. Հակոբ Մծբնացու մասին ավանդությունները:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Սրբերի կյանքը բոլոր ժամանակներում մարդկանց համար օրինակ են ճշմարիտ աստվածճանաչողության – դրանով իմաստավորված կյանքի ապրման: Նրանց աներեր հավատը հիշեցումն է դրա զորության շնորհիվ հրաշքներ գործելու – մարդկային իմաստազուրկ կյանքը հրաշալիորեն փոխելու կարելիության: Սրբերը մեզ համար օրինակ են սիրո, նվիրվածության, արդարամտության, նախանձախնդրության – զոհողության, այսինքն՝ հոգ–որ արժեքներով ապրելու թելադրանք ու պատգամ են սերունդների համար: Ս. Հակոբ Մծբնացի Հայրապետը նույնպես մեծապես սիրված ու պատվելի սրբերից է ինչպես ասորիների, այնպես էլ հայերի մեջ:

Ս. Էջմիածնում այժմ պահվում են ս. Հակոբի աջը – Նոյյան տապանի՝ նրա բերած մասունքը: 18-րդ դարում, երբ հայոց մեջ ուժեղացել էին հզորացող Ռուսաստանի հետ հարաբերությունները սերտացնելու – այդ քրիստոնյա երկրի հովանավորության տակ անցնելու տրամադրությունները, Սիմեոն Եր–անցի Հայոց Կաթողիկոսը –ս նամակագրություն է սկսում ռուսական Եկատերինա Երկրորդ կայսրուհու հետ: 1766 թ. օգոստոսի

1-ի՝ Եկատերինա կայսրուհուն – թագաժառանգ Պավելին ուղղված մի գրությամբ նա կայսրուհու հովանավորությունն է խնդրում Ռուսաստանում ապրող քրիստոնյա հայերի համար, ինչպես նա-՝ վերահաստատել սկզբնապես գործող կարգը, որի համաձայն՝ ռուսահայերի հոգ-որ առաջնորդ նշանակվում էր Ս. Էջմիածնի կողմից: Հիշյալ կարգը խախտվել էր 1649 թվականից: Գրության հետ Սիմեոն Եր-անցի կաթողիկոսը կայսրուհուն որպես նվեր է ուղարկում նա- ս. Կարապետի, ս. Հռիփսիմեի, ս. Գ-որգի, ինչպես նա- Նոյյան տապանի մասունքներից:

## Հայաստանի, Արցախի եւ դրանց հարակից տարածքներում թաղված հայազգի սրբեր

Ներկայիս Հայաստանի, Արցախի – դրանց հարակից տարածքներում թաղված – այժմ հայտնի սրբերից ս. Մեսրոպ Մաշտոցի, ս. Հռիփսիմյանց – ս. Գայանյանց մասին արդեն խոսվել է:

### Ս. Գրիգորիս կաթողիկոս

*Ս. Գրիգորիսը ավագ որդին էր Վրթանես կաթողիկոսի՝ ս. Գրիգոր Լուսավորչի որդու:*

*Նա ծնվել է մոտ 295 թ., Կեսարիայում: 310 թ. հոր – եղբոր՝ Հուսիկի հետ վերադառնում է Հայաստան՝ մեծանալով ու կրթվելով ս. Տրդատ Գ թագավորի պալատում: Դեռ-ս շատ երիտասարդ տարիքում հոգ-որ բարձր արժանիքների, հասունության – կարողությունների շնորհիվ ձեռնադրվում է կուսակրոն հոգ-որական – եկեղեցական ծառայության անցնում հորեղբոր՝ ս. Արիստակեսի մոտ: Արդեն 25 տարեկանում ձեռնադրվում է եպիսկոպոս – հովվության ու քարոզության ուղարկվում Վրաստանի ու Աղվանքի կողմերը, որի բնակիչները Վրթանես կաթողիկոսից խնդրել էին հոգ-որ առաջնորդ ուղարկել իրենց, որովհետ- տեղացիները հեթանոս էին – բարբարոս՝ դժգոհ իրենց առաջնորդներից ու քահանաներից:*

*Ս. Գրիգորիսը լայն գործունեություն է ծավալում Ատրպատականում, Փայտակարանում, Արցախում, կառուցում – վերակառուցում է եկեղեցիներ, քարոզում քրիստոնեական հավատը, հորդորում լինել բարի, աստվածասեր՝ իր խստակյաց, առաքինի վարքով սքանչելի օրինակ դառնալով մերձավորների – հեռա-*

*վորների համար՝ «առաջին Գրիգորի՝ իր պապի նման», ինչպես գրում է Բուզանդը: Հյուսիսային Կովկասում քարոզելիս այցելում է մազքութների Սանեսան թագավորի (նա նույնպես Արշակունի էր, ինչպես հայոց թագավորները) բանակը, որը կազմված էր կովկասյան բազմաթիվ ու այլազան ցեղերից: Նրանց քարոզում է Քրիստոսի ճշմարիտ վարդապետությունը, սակայն երբ վերջիններս պարզում են, որ ճշմարիտ Աստծուն ատելի են ավարառությունը, հափշտակությունը, սպանությունները, ագահությունը, զայրանում են ս. Գրիգորիսի վրա՝ ինչպե՞ս կարող են իրենք կերակրվել – ապրել առանց սպանելու – ուրիշի ունեցվածքը հափշտակելու: Մերժելով սրբի հորդորը՝ խաղաղ աշխատանքով ապրելու, մազքութները, նրա առաքելությունը համարելով հայոց Տրդատ թագավորի կողմից կազմակերպված դավադրություն իրենց դեմ, ս. Գրիգորիսին կապում են վայրի ձիու պոչից – ձին բաց թողնում Վատնյան դաշտում (Կասպից ծովի մերձակայքում):*

*Ս. Գրիգորիսը նահատակվել է 337 կամ 338 թ.: Նրա սարկավագները ամփոփում են սրբի մարմինը Արցախի Ամարաս գյուղում: 5-րդ դարում՝ 489 թ., Աղվանքի Վաչագան թագավորի օրոք նրա գերեզմանի վրա կառուցվում է Ամարասի հայտնի ս. Գրիգորիս եկեղեցին:*

*Ս. Գրիգորիսի հիշատակը Հայաստանյայց Ս. Եկեղեցին տոնում է տարվա մեջ երկու անգամ. առաջինը՝ ս. Գրիգոր Լուսավորչի որդիների – թոռների տոնին՝ Ս. Ծննդյան տոնի երրորդ կիրակիին հաջորդող շաբաթ օրը: Սակայն, եթե տարեգիրը, այսինքն՝ մարտի 21-ից (գարնանային գիշերահավասար) մինչ- Ս. Հարություն օրերի քանակը 25-ից պակաս է, տոնը տեղափոխվում է Պայծառակերպության տոնի երրորդ կիրակիին նախոր-*

*դող շաբաթ օրը: Երկրորդ անգամ ս. Գրիգորիսի հիշատակը տոնվում է՝ կապված նրա նշխարների գյուտի հետ՝ Խաչվերացի տոնի հինգերորդ կիրակիին հաջորդող երկուշաբթի օրը՝ 12 ուրիշ հայ ճգնավորների հետ:*

## Սուրբ Հովհաննես Իմաստասեր Օձնեցի կաթողիկոս

*Ս. Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը ս. Հովսեփ Հողոցմեցի կաթողիկոսից հետո Հայաստանյայց Ս. Եկեղեցու Հայրապետներից առաջինն է, ով անցել է տոնելի սրբերի կարգը: Նրանից հետո միայն ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսն է արժանացել տոնելի սրբերի կարգն անցնելու:*

*Ս. Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսը ծնվել է Գուգարքի Տաշիր գավառի Օձուն գյուղում՝ մոտ 650-ական թվականներին, ազնվական ընտանիքում: Կրթությունն ստացել է Այրարատի Արագածոտն գավառում՝ աշակերտելով Թեոդորոս Քռթենավոր վարդապետին, ով, իր հերթին, աշակերտն է եղել Դավիթ Անհաղթի: Ս. Հովհաննես Օձնեցին հմտացել է Սուրբ Գրքի, աստվածաբանության, իմաստասիրության, քերականության – հռետորրության մեջ: Կաթողիկոս է ընտրվել 717 թ.: Արաբական խալիֆայության տիրապետության պայմաններում ձգտելով ամրապնդել Հայաստանյայց Ս. Եկեղեցու դիրքերը՝ 719 թ. մեկնել է Դամասկոս՝ Օմար ամիրապետի մոտ: Ըստ ավանդության՝ ամիրապետը խիստ զարմանում – հիանում է՝ տեսնելով հայոց կաթողիկոսի պատկառելի ու գեղեցիկ արտաքինը – շքեղ զգեստները: Միաժամանակ իր տարակուսանքն է հայտնում, որ համեստ ու պարզ ապրելու Քրիստոսի պատվիրանին հակառակ՝ հայոց Հայրապետը ներկա-*

*յացել է ճոխ հագուստներով ու թանկագին զարդերով: Ս. Հովհաննես Իմաստասերը արաբ ամիրայապետին պատասխանում է, որ շքեղ հագուստներն ու թանկագին զարդերը զուտ արտաքին միջոցներ են ժողովրդի վրա ազդելու - տպավորություն թողնելու: Հայոց Հայրապետի ներքին՝ Աստծուն նվիրված կյանքի մասին արաբ ամիրայապետը իմանում է՝ տեսնելով այծի կոշտ մազից քուրձը, որը Հայրապետը մշտապես կրում էր շքեղ հագուստների տակ: Այս անգամ Օմար ամիրայապետը զարմանում է, թե ինչպես մարդկային մարմինը կարող է դիմանալ այդ կոշտ քուրձին - առավել հարգանքով ու պատկառանքով է լցվում ս. Հովհաննես Իմաստասերի հանդեպ: Վերջինիս խնդրանքով Օմարը Հայաստանյայց Ս. Եկեղեցին - հոգ-որականությանն ազատում է որոշ հարկերից, խալիֆայության տարածքում արտոնում է քրիստոնեության ազատ դավանումը - դադարեցնում քրիստոնյաների դեմ հալածանքները: Այս բոլոր խոստումները ամիրայապետը վավերացնում է գրավոր հրովարտակով, իսկ հայոց Հայրապետը խոստանում է հայերի հնազանդությունը արաբական խալիֆայությանը: Մի-նույն ժամանակ հայոց Հայրապետին հաջողվում է հայրենիք վերադառնալու - իրենց նախարարական ու հողատիրական իրավունքները վերականգնելու թույլտվություն ստանալ 703-705 թթ. հայերի ապստամբությանը մասնակցած - Խրամում ու Նախիջ-անում հայ նախարարների ողջակիզումից փրկված, աքսորված ու Բյուզանդիայում ապաստանած հայ իշխանների համար:*

*Դամասկոսից վերադառնալուց հետո ս. Հովհաննես իմաստասեր կաթողիկոսը ձեռնարկում է եկեղեցական բարեփոխումներ: 719 թ. կամ 720 թ. Դվինում հրավիրում է եկեղեցական ժողով, որի ընդունած 32*

*կանոնները վերաբերում են Հայ Եկեղեցու արարողակարգին, ծիսակարգին, աղանդների ու հերձվածների՝ հատկապես եր-ութականների ու պավլիկյանների դեմ պայքարին: Առանձնապես կար-որ էր 726 թ. Մանազկերտի հայ-ասորական միացյալ եկեղեցական ժողովը, որում հստակեցվում է Հայ Եկեղեցու վերաբերմունքը Քրիստոսի մարմնի անապականության խնդրի վերաբերյալ, ինչպես նա- ամբողջացվում ու վերջնական տեսքի են բերվում Հայ Եկեղեցու ընդհանուր դավանաբանական սկզբունքները:*

*Ս. Հովհաննես Իմաստասեր կաթողիկոսը, Հայաստանյայց Ս. Եկեղեցու ծիսադավանական կարգը քաղկեդոնականությունից հեռու, ինչպես նա- աղանդավորական ու հերձվածողական տարաբնույթ ազդեցություններից մաքուր պահելու նպատակով իր ձեռնարկած եկեղեցական բարեփոխումներն ամփոփում է՝ կազմելով «Կանոնագիրք հայոց»-ը, իր իսկ բնորոշմամբ՝ «որպես լուսաշավիղ ճանապարհ առ Աստված»: Բացի այդ, թողել է մեկնողական, ջատագովական, աստվածաբանական, դավանաբանական, գիտական - օրենսդրական մեծարժեք գործեր, որոնցից ամենահայտնիներն են՝ «Ատենաբանություն», «Ճառ ընդդեմ պավլիկյանների», «Ճառ ընդդեմ եր-ութականների» - այլն: Նա զբաղվել է նա- թարգմանական գործունեությամբ, նրա պատվերով է Գրիգոր Արշարունին գրել «Ընթերցվածոց մեկնությունը», ինչպես նա- նրան է վերագրվում «Գիրք թղթոց»-ի կազմումը: Մեծապես պայքարել է ժամանակի հոգ-որ մոլորությունների, հերձվածների ու աղանդավորական շարժումների դեմ: Հայ Եկեղեցու արարողակարգն ու ծիսակարգը կանոնակարգելուց բացի, հարստացնում է դրանք շարականներով ու աղոթքներով: «Սուրբ» է կոչվել իր*

*սրբակյաց վարքի ու կյանքի, բազում առաքինություն-ների պատճառով, իսկ «Իմաստասեր» անունը ստացել է իր գիտական, աստվածաբանական, դավանաբանա-կան, իմաստասիրական խորը գիտելիքների ու փայլուն պատրաստվածության համար:*

*Կյանքի վերջին տարիներին ս. Հովհաննես Ի-մաստասեր Հայրապետը առանձնանում է հայրենի Օ-ձուն գյուղում, որտեղ զբաղվում է ուսուցչությամբ, ա-ղոթքներով ու ճգնակեցությամբ: Վախճանվում է 728 թ.: «Հայսմավուրքը» որպես նրա հիշատակի օր նշում է ապրիլի 17-ը, ինչն էլ հիմք է դարձել Մաղաքիա արքե-պիսկոպոս Օրմանյանի համար ապրիլի 17-ը համարե-լու նրա մահվան օր: Թաղվել է հայրենի Օձունից 5 կմ դեպի ար-մուտք գտնվող Արդվի գյուղի Ս. Հովհաննես վանքում, ուր ճգնել է կյանքի վերջին տարում: Նրա գե-րեզմանը դարեր շարունակ համարվել է սրբատեղի – ե-ղել ուխտատեղի, իսկ նրա հանդեպ սերն ու պատկա-ռանքը ժողովուրդն արտահայտել է դեռ-ս կյանքի տա-րիներին իր մասին հյուսած բազմաթիվ ավանդազ-րույցներով, որոնցում նա հանդես է գալիս որպես հրա-շագործ, բուժող զորություն ունեցող սուրբ:*

*Ս. Հովհաննես Իմաստասեր Օձնեցի կաթողի-կոսի տոնը Հայաստանյայց Ս. Եկեղեցին նշում է Մեծ պահքի չորրորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ իրեն անվանակից ս. Հովհաննես Երուսաղեմցի Հայ-րապետի, ս. Հովհաննես Որոտնեցի – ս. Գրիգոր Տա-թ-ացի վարդապետների հետ*

*:*

## Սուրբ Գրիգոր Տաթեւացի

*Սուրբ Գրիգոր Տաթ-ացին Հայաստանյայց Ս. Ե-կեղեցու Տոնացույց անցած վերջին սուրբն է: Ծնվել է*

*1346 թ., Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ջավախք գավառի Թմոք ամրոցում, արհեստավոր Սարգսի ընտանիքում: Վաղ տարիքում դրս-որվում են նրա ուսումնատենչությունը - մեծ կարողությունները: 14 տարեկանում ուղարկվում է Տաթ-ի վանք, որտեղ աշակերտում է ս. Հովհան Որոտնեցուն՝ դառնալով նրա բազմաթիվ մեծանուն աշակերտներից ամենաականավոռուն: Ս. Գրիգոր Տաթ-ացին Սեպուհ լեռան վրա՝ ս. Գրիգոր Լուսավորչի հանգստարանում ձեռնադրվում է սարկավագ, իսկ երբ 1370-ականների սկզբին ուղեկցում է իր ուսուցչին վերջինիս՝ Երուսաղեմ կատարած ուխտագնացության ընթացքում՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց տաճարում 25 տարեկան հասակում ձեռնադրվում կուսակրոն հոգ-որական, 2-3 տարի հետո Երզնկայում ստանում է վարդապետական գավազան: Ծայրագույն վարդապետություն նրան տրվում է մոտ 40 տարեկան հասակում՝ Ապրակունյաց վանքում: Հովհան Որոտնեցու մահվանից հետո գլխավորում է Տաթ-ի - Ապրակունիսի բարձրագույն դպրոցները: Ապրակունիսում մնում է շուրջ երկու տարի - 1390 թ. իր աշակերտների հետ տեղափոխվում Տաթ-, որտեղ մինչ- իր մահը շարունակում է իր գիտամանկավարժական գործունեությունը: Նրա օրոք Տաթ-ի համալսարանը հասնում է իր ծաղկման գագաթնակետին՝ դառնալով հոգ-որ, գիտության, արվեստի ու մշակույթի համահայկական կենտրոն: Նա դասավանդել է նա- Մեծոփա վանքում, ինչպես - Սաղմոսավանքում:*

*Ս. Գրիգոր Տաթ-ացին Հայ Եկեղեցու մեծագույն ս. Հայրերից, վարդապետներից - ուսուցչապետերից մեկն է, աստվածաբան, փիլիսոփա, մանկավարժ, գիտնական: Հռչակվել է իր սրբակենցաղ վարքով, քարոզչությամբ, գիտական ու մանկավարժական գործու-*

*նեությամբ, ինչպես նա- թողել է մատենագրական հարուստ վաստակ: Ժամանակակիցների - հետագայի հեղինակների կողմից մեծարվել է որպես «եռամեծ վարդապետ», «երկրորդ Լուսավորիչ հայոց - աստվածաբան», «յոթնալույս վարդապետ», «տիեզերալույս վարդապետ», «վարդապետ ամենայն հայոց», «վարժապետ ամենայն հայոց», «խարիսխ հավատի - հիմք Եկեղեցու» - այլն: Նա կրթել - դաստիարակել է 300-ից ավելի աշակերտների, ովքեր դարձել են միջնադարյան Հայաստանի հոգ-որ, մշակութային, գիտական - հասարակական կյանքի ակնառու դեմքեր - նշանակալի ազդեցություն թողել իրենց գործունեության տարբեր բնագավառներում: Ս. Գրիգոր Տաթ-ացու մանկավարժական հայացքներն ամբողջացված են նրա «Սահմանադրություն դաստիարակության» աշխատությունում, որը միջնադարյան հայ մանկավարժական մտքի նշանակալի եր-ույթներից մեկն է: Նրա մատենագրական հարուստ ժառանգությունը հատկանշվում է հանրագիտարանային բազմակողմանիությամբ: Գրել է մեկնություններ, քարոզներ, դավանաբանական, աստվածաբանական - իմաստասիրական բազմաթիվ գործեր, որոնցից առավել կար-որներն են «Գիրք հարցմանցը», «Ոսկեփորիկը», «Գիրք քարոզությանը»՝ «Ամառան» - «Ձմեռան» հատորներով, Հոբի, Եսայու, Երգ երգոցի, Սաղմոսների, Առակների գրքերի, Հովհաննեսի - Մատթեոսի Ավետարանների մեկնությունները - այլն, - այլն:*

*Ս. Գրիգոր Տաթ-ացին գործուն մասնակցություն է ունեցել հայոց ազգային-եկեղեցական կյանքում ծագած խնդիրների լուծմանը: Հատկապես զբաղվել է Ախթամարի կաթողիկոսության խնդրով, -, ինչպես վկայում է նրա աշակերտներից Թովմա Մեծոփեցին, նրա*

*ջանքերով «Ախթամարի անհնազանդ աթոռը հնազանդության է գալիս»:*

*Ս. Գրիգոր Տաթ–ացին նա– ամենաջերմ պաշտպաններից ու կաթողիկոսական Աթոռը Սսից Ս. Էջմիածին տեղափոխելու ծրագրի առաջին մտահղացողներից էր, որն իրականացվեց 1441 թ.՝ նրա աշակերտների՝ Թովմա Մեծոփեցու – Հովհաննես Հերմոնացու նախաձեռնությամբ ու ջանքերով:*

*Հայոց եռամեծ սուրբ վարդապետը մահացել է 1409 թ. դեկտեմբերի 25-ին, Տաթ–ի վանքում, որտեղ – նրա աճյունն ամփոփված է: Նրա գերեզմանը բոլոր ժամանակներում – այսօր էլ պատվվում է որպես ուխտատեղի:*

*Հայաստանյայց Ս. Եկեղեցին ս. Գրիգոր Տաթ–ացու տոնը նշում է Մեծ պահքի չորրորդ կիրակիին նախորդող շաբաթ օրը՝ ս. Հովհաննես Իմաստասեր Օձնեցի կաթողիկոսի, ս. Հովհաննես Երուսաղեմցի Հայրապետի, ս. Հովհաննես Որոտնեցի վարդապետի հետ:*

## Սուրբ Շուշանիկ

*Սուրբ Շուշանիկը ս. Վարդան Մամիկոնյանի դուստրն էր: Նրա ավազանի անունը Վարդենի էր, իսկ Շուշանիկը փաղաքշական անունն էր, որով – պատմության ու վկայաբանության մեջ հիշվեց: Սուրբ Շուշանիկը Հայ – Վրաց եկեղեցիներում տոնելի սրբերից է:*

*451 թ. Գուգարքի Աշուշա բդեշխը պարսից Հազկերտ արքայից թույլտվություն է ստանում գերությունից ազատելու – բդեշխության կենտրոն Ցուրտավ վերադարձնելու իր կնոջ հարազատներին ու զոհված կամ գերեվարված նախարարների կանանց ու զավակներին, այդ թվում – ս. Վարդան Մամիկոնյան զորավարի*

*դստերը՝ Վարդենի-Շուշանիկին: Վերջինս ծնվել է, հավանաբար, 409 թ., մեծացել – կրթվել է տատի՝ Սահականույշի (ս. Սահակ Պարթ– Հայրապետի դստեր) քրիստոնեական բարի ու առաքինի շնչով լի տանը, որով մինչ այդ, անշուշտ, դաստիարակվել էր նա– ս. Վարդան Մամիկոնյանը: Այդ ոգին հարազատորեն պահեց մինչ– իր հավատավոր կյանքի մարտիրոսական վախճանը՝ անդավաճան սիրով մշտապես փարված մնալով Քրիստոսին:*

*Վարդենի-Շուշանիկն ամուսնանում է Աշուշայի որդի Վազգենի հետ, ով – հոր մահից հետո փոխարինում է նրան որպես բդեշխ: Պարսից Պերոզ արքայի ութերորդ տարում՝ 468 թ., Վազգենը, Տիզբոն կանչվելով, քաղաքական նկատառումներով, ինչպես նա– Պերոզին հաճոյանալու համար ուրանում է քրիստոնեական հավատը – անգամ ամուսնանում Պերոզի զոքանչի հետ: Լսելով ամուսնու ուրացության լուրը՝ ս. Շուշանիկը, ով մայր էր երեք որդիների – մեկ դստեր, զավակների հետ հեռանում է իշխանական պալատից – տեղափոխվում Ցուրտավի եկեղեցուն կից փոքրիկ մի խուց՝ հրաժարվելով վերադառնալ պալատ – ընդունել ամուսնուն: Ապարդյուն են անցնում նրան հավատուրացության մղելու բոլոր միջոցները՝ չարչարանքներ, կտտանքներ, երեխաներին տեսնելու հնարավորության վերացում, սով, շղթայակապ բանտարգելություն, խարդավանք – այլն: Նրա աննկուն հավատը չի տատանվում անգամ երբ լսում է որդիներից մեկի՝ Կուր գետում խեղդվելու մասին՝ այդպիսի մահը երջանկություն համարելով որդու համար, քան հավատուրացությունը: Բոլոր չարչարանքներն ու տանջանքները վեց տարի կրում է համբերատարությամբ՝ որպես մխիթարություն ու զորավիգ ունենալով տատի՝ Սահականույշի Ավետարանը, որը*

*վերջինիս էր անցել հորից՝ Ս. Սահակ Հայրապետից: Յոթերորդ տարում՝ հավանաբար 475 թ., մարտիրոսական սրբությամբ կնքում է իր մահկանացուն – թաղվում Տփղիսի (ներկայիս Թբիլիսին) միջնաբերդում:*

*Ինչպես ս. Հռիփսիմեի անվան հետ կապված է Վարագա ս. Խաչը, այնպես – ս. Շուշանիկի անվան հետ է կապված մեկ այլ նշանավոր խաչ: Տեսնելով, որ հավատուրաց ամուսինը հալածում է քրիստոնյաներին – քանդում եկեղեցիները, ս. Շուշանիկը Մծխեթից հանում է վրաց լուսավորիչ ս. Նունե կույսի ս. խաչը – ս. Սահակ Հայրապետի աշակերտներից մեկի՝ Մշո Սուրբ Առաքելոց վանքի աբեղա Անդրեասի հետ ուղարկում է Տարոն, որտեղ ապրում էին իր ազգականները՝ Մամիկոնյան իշխանները: Անդրեասը հասնում է Սպեր – այլ-ս չի կարողանում առաջանալ: Այս ընթացքում ս. Շուշանիկն իր մահկանացուն է կնքում, որի մասին իմանալով՝ Անդրեասը լուր է ուղարկում Գրիգոր Մամիկոնյան իշխանին: Վերջինս գալիս է Սպեր – ս. Նունեի խաչը տանում է Կապույտ ամրոց (Արտագերս): Այսուհետ հայերն այն կոչում են Շուշանիկի խաչ: Շուշանիկի խաչը Արտագերսից տեղափոխվում է Վանանդ գավառի Ս. Խաչ վանքը, ապա՝ Կարս քաղաքը, այնտեղից 1094 թ.՝ Անի, ուր մնում է 142 տարի: Թաթարների կողմից Անին գրավելուց հետո Շուշանիկի խաչի մասին տեղեկությունները բացակայում են:*

*Հայաստանյայց Ս. Եկեղեցին ս. Շուշանիկի հիշատակը տոնում է Խաչվերացի տոնի երկրորդ կիրակիին հաջորդող երեքշաբթի օրը՝ ս. Փեփրոնե – ս. Մարիանե կույսերի հետ:*

Սուրբ Մովսես Գ Տաթեւացի կաթողիկոս

*Ս. Մովսես Գ Տաթ-ացին Հայաստանյայց Ս. Եկեղեցու հիշատակելի սրբերից է:*

*Ծնվել է 1578 թ., Սյունիքի Խոտանան գյուղում: Կրթությունը ստացել է Տաթ-ի վանքում, 1592 թ. ձեռնադրվել է աբեղա, մինչ- 1606 թ. աշակերտել է Սրապիոն Եղեսացուն, ով ժամանակի նշանավոր հոգ-որականներից էր - կարճ ժամանակ՝ 1603-1606 թթ. եղել է աթոռակից կաթողիկոս: 1610 թ. մեկնում է Երուսաղեմ, որտեղ եղել է Ս. Հարություն տաճարի լուսարարը: 2-3 տարի հետո վերադառնում է Տաթ- - մտնում Սյունյաց Մեծ անապատը: Այստեղ ծավալում է մեծ գործունեություն՝ հիմնելով դպրոցներ, նշանակելով ուսուցիչներ, կարգավորելով Սյունիքի վանքերը, քարոզելով ու խրատելով ժողովրդին՝ նպատակ ունենալով վերականգնել քրիստոնեական բարոյական կենցաղը, որը մեծապես աղավաղված - տուժած էր ժամանակի ավերածությունների, ժողովրդի կրած ծախորդությունների - դրանց հետ-անքով Եկեղեցու դիրքերի անկման պատճառով: Մոտ 1620 թ., Եր-անում քարոզելով Ս. Կաթողիկե եկեղեցում, հանդիպում է տեղի պարսիկ կառավարչին, ով մեծապես տպավորված նրա ուղղամտությունից - ծավալած գործունեությունից՝ նրան պահում է Եր-անում՝ հատկացնելով Ս. Անանիա առաքյալի անապատը, որն այդ ընթացքում ավերված վիճակում էր: Իրեն հատուկ եռանդով ս. Մովսես Տաթ-ացին վերականգնում է անապատը, կարգավորում Այրարատի վանքերն ու եկեղեցիները, ինչպես նա- վերաբացում է Սաղմոսավանքի - Հովհաննավանքի վանական դպրոցները: 1623 թ. ձեռնադրվում է եպիսկոպոս: Նրա համբավը, որպես քարոզիչ - նվիրյալ հոգ-որական, տարածվում է Հայաստանի բոլոր կողմերում, - նորջուղայեցիները նրան հատուկ պատգամավորությամբ հրա-*

*փիրում են Սպահան: 1627 թ. Ս. Ծննդյան - Աստվածհայտնության տոնին եկեղեցում ս. Պատարագի արարողությանը ներկա է լինում նա- պարսից արքա Շահ Աբաս Առաջինը: Նա այնքան է տպավորվում ս. Մովսես Տաթ-ացու կատարած արարողությամբ, որ որպես պարգ- կատարում է վերջինիս խնդրանքը՝ նրան նշանակելով Ս. Էջմիածնի վանքի լուսարար - տալով այդ ընթացքում անմխիթար վիճակում գտնվող վանքը նորոգելու թույլտվություն: Ս. Մովսես Տաթ-ացին մաքրում է վանքի շրջակայքը, վերաշինում պարիսպները, նորոգում Վեհարանը, եկեղեցու տանիքն ու գմբեթը, ավելացնում միաբանական խցեր, տնտեսական նոր կառույցներ, հյուրատուն - այլն: 1628 թ. ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս - օծվում 1629 թ., նույն տարում - նրան հաջողվում է պարսից շահից ստանալ Ս. Էջմիածնի վանքի պարտքի զիջման հրովարտակը: Նրա կաթողիկոսական կարճատ- շրջանը բնորոշվում է Ար-ելյան Հայաստանի մշակութային, կրթական - գրական կյանքի վերակենդանացմամբ՝ սկիզբ դառնալով վերելքի ու բարենորոգության նոր դարաշրջանի:*

*Ս. Մովսես Տաթ-ացին մահանում է 1632 թ. - թաղվում Եր-անում, Կոզեռնի գերեզմանոցում: Նրա անունը Հայաստանյայց Ս. Եկեղեցում հիշատակվում է* յուրաքանչյուր ս. Պատարագի ընթացքում:

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ս. Գրիգորիսի կյանքը – գործունեությունը:

-Ս. Գրիգորիսի նախատակությունը, նշխարների ամփոփումը:

♦

-Ս. Հովհաննես Օձնեցու կյանքը – գործունեությունը:
-Նրա մասին ավանդությունները:
-Մատենագրական ժառանգությունը:

♦
-Ս. Գրիգոր Տաթ–ացու կյանքն ու գործունեությունը:
-Մատենագրական հարուստ ժառանգությունը:

♦
-Ս. Շուշանիկի կյանքն ու դաստիարակությունը:
-Չարչարանքներն ու մահը:
-Ս. Շուշանիկի անվան հետ կապված ս. մասունքը՝ ս. Նունեի խաչը:

♦
-Ս. Մովսես Գ Տաթ–ացի կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը:
-Ս. Էջմիածնի վանքի նորոգությունն ու վերականգնողական աշխատանքները:
-Ար–ելյան Հայաստանի մշակութային, կրթական ու գրական կյանքի վերակենդանացումը, բարենորոգության նոր դարաշրջանի սկիզբը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Հայ Առաքելական Եկեղեցին սրբացրել է այն հոգ–որականներին, հայրապետներին, պետական գործիչներին, աշխարհիկ մարդկանց, ովքեր իրենց գործունեությամբ նպաստել են քրիստոնեական հավատի պահպանմանն ու տարածմանը, ինչպես նա– նշանա-

կալի հետք թողել ազգային կյանքի տարբեր ասպարեզներում:

Կատարյալ քրիստոնյայի կյանք ապրած – սրբության պսակ ընդունած այդ ընտրյալներից են ս. Գրիգորիս, ս. Հովհաննես Օձնեցի, ս. Մովսես Գ Տաթ–ացի կաթողիկոսները, ս. Գրիգոր Տաթ–ացին – ս. Շուշանիկը:

Զուտ մարդկային չափանիշներով որ–է մարդ չի կարող սուրբ կոչվել: Սակայն նրանցում Աստծու սրբության արտացոլումը, Աստծուն իրենց հոգում կրելու – Նրա ներկայությամբ ապրելու՝ Ս. Հոգու պարգ–ած շնորհը առավե՛լ էր: Քրիստոնյային վայել՝ առաքինություններով հատկորոշված նրանց անբասիր կյանքն ու վարքը, բարոյական անարատությունը մշտապես օրինակ են սերունդների համար, թե՝ ինչպե՛ս պետք է ապրել: Նրանց հավատարմությունը իրենց հայրերի հավատին, որը նույնն է, թե՝ ժողովրդին ու հայրենիքին, նախանձախնդիր ջանքերը բարեշեն, միասնական ու միաբան պահելու Հայ Եկեղեցին ու Հայաստանը, մշտավառ հիշատակ են թողել հայ ժողովրդի կյանքում, – բոլոր ժամանակներում նրանցով սերունդներ են կրթվել ու դաստիարակվել:

Նրանց գերեզմանները բոլոր ժամանակներում ուխտագնացությունների վայր են եղել: Եվ ուրախալի է այն փաստը, որ այսօր կարող ենք այցելել նրանց գերեզմաններ – հայցել Աստծու մոտ նրանց բարեխոսությունն ու զորավոր աջակցությունը:

*Ուխտագնացություն*

*Եկեղեցական տոների հետ անմիջականորեն առնչվում - դրանց անցկացման դրս-որումներից են ուխտագնացությունները:*

*Ուխտը երդում, խոստում կամ դաշինք է՝ կնքված Աստծու - մարդու միջ-: Աստվածաշնչում հիշատակվում են հավիտենական ուխտեր, որոնք Աստված կնքում է մարդկանց հետ՝ Նոյի (Ծննդ. Թ(9), 12-17), Աբրահամի (Ծննդ., ԺԵ(15), ԺԷ(17), Մովսեսի (Ելք, ԻԴ(24), ԼԴ(34), 10-27) - այլն: Քրիստոսի գալուստով Աստված հավիտենական Նոր, Մեծագույն Ուխտ հաստատեց մարդու հետ՝ Իր Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով ավետելով փրկության լույսը: Այսպիսով, նախքան Քրիստոսը Աստծու՝ մարդու հետ հաստատած բոլոր ուխտերը Նոր Ուխտի նախօրինակներն են:*

*Սակայն կան նա- ժամանակավոր ուխտեր, որոնք մարդը կնքում է Աստծու հետ: Ուխտը պահելու, այսինքն՝ այն ճիշտ կատարելու համար Սուրբ Գրքում պատվիրվում է. «Եթե չես ցանկանում ուխտել, ապա դա մեղք չի համարվի քեզ: Ինչ որ դուրս է գալիս քո շրթունքներից, զգո՛ւյշ եղիր, որ անես այնպես, ինչպես որ ուխտել ես քո Տեր Աստծուն» (Երկրորդ օրենք, ԻԳ(23), 22-23): Ուխտ անողը խոստանում է նվիրվել ո-ր-է աստվածահաճո գործի, ծառայել եկեղեցում կամ ո-ր-է սրբության, պատերազմել հանուն հավատի, զոհաբերություններ, բարեգործություններ կատարել, եկեղեցի կամ դպրոց կառուցել, ծոմ պահել, ուխտագնացություն կատարել - այլն: Ուխտի ձ-եր են նա- կուսակրոնությունը - ճգնավորությունը: Այս ժամանակավոր ուխտերի նպատակը մաքրագործվելու միջոցով արժանանալն է աստվածային շնորհների, ողորմածության -*

*փրկության: Ուխտագնացությունը նույնպես ուխտի կատարման ձ- է, որը ավանդաբար գալիս է դեռ-ս առաջին դարից, երբ քրիստոնյաները սրբազան ճամփորդություն էին կատարում դեպի Երուսաղեմ՝ տեսնելու Քրիստոսի երկրային կյանքի հետ կապված սուրբ վայրերը – դրանց հետ շփվելու միջոցով հաղորդակցվելու Նրա հետ: Հետագայում ուխտագնացություններ էին կատարվում նա- այլ սուրբ վայրեր՝ սրբերի, մարտիրոսների կամ նահատակների գերեզմաններ, վանքեր, եկեղեցիներ, մատուռներ – այլն: Ուխտագնացություններն ուղեկցվել են այդ առիթով հորինված երգերով ու պարերով: Երգերում արտահայտվել են ուխտի նպատակը, ուխտագնացությունից սպասվող ակնկալիքը, ուխտատեղիի նկարագիրն ու գովքը: Հայոց շրջանում հատկապես տարածված ու նշանավոր են եղել Մշո Սուլթան Սուրբ Կարապետ վանքին նվիրված երգերը: Ուխտագնացություններ կատարելու հրաշալի ավանդույթը պահպանվել – գործում է նա- ներկայումս:*

*Ս. Աստվածածնին, ս. Խաչին կամ ս. Եկեղեցուն նվիրված եկեղեցական տոների, ինչպես նա- սրբերի հիշատակությունների օրերին ուխտագնացություններ են կատարվում այն վանքեր, եկեղեցիներ կամ սրբատեղիներ, որոնք կրում են տվյալ սրբի անունը կամ որ-է կերպով առնչվում են նրա հիշատակի հետ:*

ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Ի՞նչ է ուխտը – ուխտագնացությունը:

-Աստծու՝ մարդու հետ կնքած հավիտենական ուխտերը – դրանցից մեծագույնը:

- Մարդու՝ Աստծու հետ կնքված ժամանակավոր ուխտեր:

-Ուխտագնացությունների նշանակությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

♦ Ուխտագնացությունը դեպի Աստված հոգ-որ ճամփորդություն է, որն անցնում է սրբավայրերով:

Ուխտագնացությունների ժամանակ քրիստոնյան, սրբերի գերեզմաններ, պատմական - կրոնական հիշարժան դեպքերի հետ կապված սուրբ վայրեր այցելելով, հաղորդակցվում է Աստծու - սրբությունների հետ՝ հուսալով զորություն - ուժ ստանալ՝ հավատավոր ու իմաստավորված կյանք ապրելու: Հետ-աբար, ուխտավորը հավատով այցելում է սրբավայրեր՝ գիտակցելով իր մեղանչականությունը - պահանջ զգալով սրբությունների հետ հաղորդակցվելու միջոցով հասնել Աստծու հետ հաշտության, հոգ-որ խաղաղության ու ներդաշնակության: Ուստի, ուխտագնացությունը լավագույն միջոց է թե՛ անհատի, թե՛ հավաքականության հոգ-որ դաստիարակության:

Մի-նույն ժամանակ, ուխտագնացությունների միջոցով ամրապնդվում է կապը անցյալի սրբազան ժառանգության հետ, որը լավագույն միջոց է արժ-որելու ու գնահատելու անցյալը, իմաստավորելու ներկան - կառուցելու ապագան:

## Օգտագործված գրականություն

♦ *Տ. Թորգոմ Պատրիարք Գուշակեան*
*«Սուրբք – տօնք Հայաստանեայց Եկեղեցւոյ»*
*(Համառօտ տեղեկութիւններ Հայց. Եկեղեցւոյ տօնելի Սուրբերու – Տէրունական Տօներու մա-սին)*
*Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1957*

♦ *Արտակ Արքեպիսկոպոս Մանուկեան*
*«Հայ Եկեղեցու տօները»*
*Տպարան «Նայիրի», Թեհրան, 1984*

♦ *Յայսմաւուրք*
*Ի Կոստանդնուպօլիս*
*Յօրթագիւղ*
*Ի տպարանի Պօղոսի Արապեան Ապուչեխցւոյ, 1834-ՌՄՁԳ*

♦ *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան*
*«Հայոց Եկեղեցին – իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը»*
*Մոնթրէալ, 2001*

♦ *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան*
*«Ազգապատում»*
*Ս. Էջմիածին, 2001*

♦ *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան*

*«Ծիսական բառարան»*
*«Հայաստան», Եր-ան, 19992*

*♦ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան*
*Տաղաւար տօներ*
*Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1976*

*♦ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան*
*«Հայազգի սուրբեր»*
*«Գանձասար» աստուածաբանական կենտրոն*
*Եր-ան, 1997*

*♦ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան*
*«Աստուածաշունչական սուրբեր»*
*«Գանձասար» աստուածաբանական կենտրոն*
*Եր-ան, 1997*

*♦ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան*
*«Համաքրիստոնեական սուրբեր»*
*«Գանձասար» աստուածաբանական կենտրոն*
*Եր-ան, 1997*

*♦ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան*
*«Մեծ պահքի կիրակիների ոսկե շղթան»*
*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001*

*♦ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան*
*«Գունազեղ կիրակիներ - հոգեգալուստ»*
*Իսթանպուլ, 1972*
*♦ Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան*
*«Աւագ շաբաթ», Պէյրութ, 1974*

♦ Ռ. Հ. Վարդանյան
Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր), Եր-ան, 1999

♦ Գրիգոր Բրուտեան
Օրացոյց հայոց
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997

♦ Հ. Ս. Բադալյան
Հայոց տոմարի պատմություն
Եր-ան, 1976

♦ Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան
Եր-ան, 2002

♦ «Լոյս» շաբաթաթերթ
1906, թիվ 1, հունվար 4, Ղ-ոնդ վարդապետ,
«Բեթղեհէմի լուսաւորը», էջ 8, Միսաք Փանոսեան,
«Սուրբ Ստեփաննոս», էջ 12
1906, թիվ 11, մարտ 18, Որուան տօնին առթիվ:
Զրոյցներ, էջ 241
1906, թիվ 19, մայիս 13, Գուրգէն քահանայ
Շալճեան, «Երկրորդ Ծաղկազարդ: Քրիստոսի
արցունքը», էջ 443
1906, թիվ 37, սեպտեմբեր 16, Խաչվերացի առթիւ:
Բարձր կեանքը, էջ 865

♦ Հայկական վարքեր – վկայաբանություններ
V-XV դդ.

*Եր-ան, «Նաիրի», 1998*

♦ *Տօնացոյց նախապէս կարգեալ - սահմանեալ Սրբոյն Սահակայ Պարթ-ի Հայրապետին Հայոց ըստ աւանդութեան Հայաստանեայց Սրբոյ Եկեղեցւոյ եւ զկնի յոգնաջան կարգաւորութեամբ - աշխատասիրութեամբ Տեառն Սիմէոնի Սրբազան Կաթուղիկոսին յերկուս հատորս բաժանեալ Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1906*

♦ *Հայոց Եկեղեցու սրբերը - սրբակենցաղ անձինք Կազմեց Ռ. Մաթ-ոսյանը Ս. Էջմիածին, 1999*

♦ *Հայոց սրբերը - սրբավայրերը Ակունքները, տիպերը, պաշտամունքը Եր-ան, «Հայաստան», 2001*

♦ *Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյան Լուսավորչի լույս նշխարները Ս. Էջմիածին, 2000*

♦ *Գրիգոր Տաթ-ացի Քարոզ խաչի, Ս. Էջմիածին, 1997*

♦ *Գրիգոր Տաթ-ացի Քարոզ Սուրբ Հոգու գալստյան մասին*

*Ս. Էջմիածին, 1998*

♦ *Գրիգոր Տաթ-ացի*
*Քարոզ Վարդավառի, Գանձասար, 1995*

♦ *Գրիգոր Տաթ-ացի*
*Քարոզ Բուն բարեկենդանի, Գանձասար, 1995*

♦ *Գրիգոր Տաթ-ացի*
*Քարոզ Աստվածածնի վերափոխման*
*Գանձասար, 1995*

♦ *Գրիգոր Տաթ-ացի*
*Քարոզ սուրբ Զատիկի մասին, Գանձասար, 1995*

♦ *Գրիգոր Տաթ-ացի*
*Քարոզ Քրիստոսի Ծննդյան մասին*
*Գանձասար, 1995*

♦ *Եղիշե*
*Ճառ Տիրոջ Պայծառակերպության մասին*
*Ս. Էջմիածին, 1997*

♦ *Երանելի Գրիգոր Սքանչելագործի խոսքը*
*Քրիստոսի Ծնունդին մասին, Նիւ Եորք, 1991*

♦ *Հակոբ Սրճեցի*
*Ճառ Սուրբ Հարության*
*Ս. Էջմիածին, 1999*

♦ *Հովհան Ոսկեբերան*

*Ներբող Սուրբ Գրիգոր Լուսավորչին*
*Ս. Էջմիածին, 1998*

♦ *Եփրեմ Խուրի Ասորի*
*Ճառ քառասնօրյա Տիրոջ տաճար գալու –*
*Սիմեոն ծերունու մասին*
*Ս. Էջմիածին, 1998*

♦ *Զաքարիա Ջագեցի – Մովսես Քերթող*
*Աստվածամոր վերափոխման – նրա պատկերի մասին*
*Ս. Էջմիածին, 1997*

♦ *Մեծ պահքի համառոտ բացատրություն քաղված*
*մեր երանելի հայրերից*
*Գրիգորիս Արշարունի, Խոսրովիկ Թարգմանիչ,*
*Սամվել Կամրջաձորեցի, Պողոս Տարոնացի,*
*Վարդան Ար-ելցի, Գրիգոր Տաթ-ացի,*
*Մատթեոս Ջուղայեցի, Անանուն*
*Ս. Էջմիածին, 1998*

♦ *Տոն Ծննդյան – Աստվածհայտնության*
*Ս. Էջմիածին, 1999*

♦ *Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Համբարձումը*
*Ս. Էջմիածին, 1998*

♦ *Յ. Մանանդեան, Հ. Աճառեան*
*Հայոց նոր վկաները (1155-1843)*

*Գիտական հրատարակութիւն բազմաթիվ ձե-ռագրերի*
*համեմատութեամբ, ընդարձակ տեղեկութիւննե-րով –*
*ծանօթութիւններով, – ձեռագրերի, նախատակնե-րի,*
*յատուկ անունների – օտար բառերի մանրամասն*
*ցուցակներով – ցանկերով*
*Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ*
*Ս. Էջմիածնի, 1903*

*♦ Քնարիկ Տեր-Դավթյան*
*«XI-XV դարերի հայ վարքագրությունը»*
*Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն*
*Եր–ան, 1980*

*♦ Հայոց պատմություն*
*Հնագույն ժամանակներից մինչ– մեր օրերը*
*Ուսումնական ձեռնարկ*
*Եր–ան, 2000*

*♦ Հայոց պատմություն (նյութերի ժողովածու)*
*1900-1939 թթ., Եր–ան, 1993*

*♦ Ռ. Ազիզբեկյան, Գ. Գեղամյան*
*Հայաստանը 1945-1990-ական թվականներին*
*Եր–ան, 1994*

*♦ Ա. Հարությունյան*
*Թուրքական ինտերվենցիան Անդրկովկաս 1918 թ.*
*– ինքնապաշտպանական կռիվները*

*Եր-ան, 1984*

♦ *Զ. Կիրակոսյան*
*Առաջին համաշխարհային պատերազմը - ար-մտահայությունը*
*Եր-ան, 1965*

♦ *Բագրատ Ուլուբաբյան*
*Սարդարապատ*
*Եր-ան, 1989*

♦ *Արամը*
*Մահուան յիսնամեակին առթիւ*
*Եր-ան, 1991*

♦ *Սուրբ Էջմիածինը տաղերի մեջ*
*Ս. Էջմիածին, 2003*

♦ *Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում*
*Աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի - Վարդան Դ-րիկյանի*
*Ս. Էջմիածին, 2003*

♦ *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 29 հունվար, 2002, թիվ 14(2907)*

♦ *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 1 հունիս, 2002, թիվ 98(2991)*

♦ *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ 28 հունվար, 2004, թիվ 12(3391)*

# Բովանդակություն

*Տոներ...........................................................................*

*Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու տոներ, դրանց դասակարգումը......................................*

*Սրբերի հիշատակություններ.........................................*

*Հայաստանի Հանրապետության ժողովրդական տոներ եւ հիշատակի օրեր...............................................*

ՀՈՒՆՎԱՐ

*Նոր տարի կամ՝ Կաղանդ................................................*

*Սուրբ Ծնունդ եւ Աստվածհայտնություն.....................*

*Տնօրհնեք.........................................................................*

*Հայոց բանակի օր..........................................................*

ՓԵՏՐՎԱՐ

*Պահք, պահքի տեսակները, Առաջավորաց պահք......................................................*

*Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի եւ նրան հավատարիմ 14 զինվորների տոն*

*Երիտասարդների օրհնության օր....................................*
*Տյառնընդառաջ կամ՝ քառասուն օրական Հիսուսի գալուստը տաճար*
*Նորապսակների օրհնության օր.....................................*
*Սուրբ Վարդանանց տոն*
*Բարի գործի եւ ազգային տուրքի օր..............................*
*Սուրբ Ղեւոնդյան քահանաների տոն............................*

ՄԱՐՏ
*Բուն բարեկենդան – Մեծ պահք....................................*
*Մեծ պահքի կիրակինե-ր...................................................*
*Ավագ շա-բաթ....................................................................*

ԱՊՐԻԼ
*Հիսուսի մուտքը Երուսաղեմ կամ՝ Ծաղկազարդ*
*Երեխաների օրհնության օր............................................*
*Սուրբ Աստվածածնին նվիրված տո-ներ.........................*
*Ավետում սուրբ Աստվածածնի*
*Մայրության եւ գեղեցկության օր................................*
*Սուրբ Հարություն կամ՝ Զա-տիկ....................................*
*Ցեղասպանության զոհերի հիշատակի օր*

*Ապրիլի 24........................................................................*
*Սումգայիթյան ջարդեր..................................................*

ՄԱՅԻՍ
*Սուրբ Խաչի երեւման տոն..............................................*
*Երկրապահի օր.................................................................*
*Հաղթանակի եւ խաղաղության տոն*
*Երկրորդ համաշխարհային եւ*
*Հայրենական մեծ պատերազմի*
*ավարտը (1939-1945 թթ.)................................................*
*Շուշիի ազատագրման օր................................................*
*Համբարձման տոն............................................................*
*Հանրապետության տոն*
*Սարդարապատի, Ղարաքիլիսայի,*
*Բաշ-Ապարանի մայիսյան հերոսամարտերի*
*հիշատակը.......................................................................*
*Հոգեգալուստ....................................................................*

ՀՈՒՆԻՍ
*Երեխաների իրավունքների*
*պաշտպանության միջազգային օր................................*
*Սուրբ Հռիփսիմյան եւ*

*սուրբ Գայանյան կույսեր*............................................
*Ս. Եկեղեցուն նվիրված տոներ*.....................................
*Տոն Շողակաթի*...............................................................
*Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի*..................................
*Երկրորդ Ծաղկազարդ*...................................................
*Սուրբ Գրիգոր Լուսավորիչ*.........................................

ՀՈՒԼԻՍ

*Սահմանադրության օր*...................................................
*Սուրբ Սահակ, սուրբ Մեսրոպ*......................................
*Հիսուս Քրիստոսի Պայծառակերպությունը կամ՝ Վարդավառ*.............................................................

ՕԳՈՍՏՈՍ

*Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնը Խաղողօրհնեք*...................................................................

ՍԵՊՏԵՄԲԵՐ

*Ս. Խաչին նվիրված տոներ*............................................
*Խաչի գյուտ*.....................................................................

*Խաչվե-
րաց..................................................................*
*Վարագա ս. Խաչի
տոն..................................................*
*Անկախության
տոն.......................................................*

ՀՈԿՏԵՄԲԵՐ
*Սուրբ Թարգմանիչ-
ներ....................................................*

ՆՈՅԵՄԲԵՐ
*Սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս
առաքյալ-
ներ...................................................................*

ԴԵԿՏԵՄԲԵՐ
*Երկրաշարժի զոհերի հիշատակի
օր................................*
*Սուրբ Հակոբ Մծբնացի հայրա-
պետ...............................*
*Հայաստանի, Արցախի եւ դրանց հարակից
տարածքներում թաղված հայազգի սրբեր
Ս. Գրիգորիս կաթողի-
կոս.................................................*
*Սուրբ Հովհաննես Իմաստասեր Օձնե-
ցի........................*
*կաթողիկոս
Սուրբ Գրիգոր Տաթեւա-
ցի...............................................*
*Սուրբ Շուշա-
նիկ...............................................................*

*Սուրբ Մովսես Գ Տաթեւացի կաթողի-կոս......................*
*Ուխտագնացութ-յուն........................................................*
*Օգտագործված գրականութ-յուն....................................*